

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. А. ХАРАТЯН

ЗАПАДНО-АРМЯНСКАЯ
ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ И ЦЕНЗУРА
ОСМАНСКОЙ ТУРЦИИ (1857—1908)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1989

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ
ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԳԻԱՅՈՒՄ
(1857—1908)

Տպագրվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու
Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ:

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական գիտություն-
ների դոկտոր Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆԸ և պատմական գիտությունների թեկնածու
Լ. Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆԸ

Խառատյան Ա. Ա.

և 310 Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը
Օսմանյան Թուրքիայում (1857—1908)/[Պատմ. խմբ. է. Ա.
Կոստանդյան]; ՀԽՍՀ ԳԱ. Պատմ. ին-տ.—Եր.: ՀԽՍՀ ԳԱ
հրատ., 1989.— 380 էջ.

Աշխատության մեջ հետազոտված են արևմտահայ պարբերական մա-
մուլի հասարակական-քաղաքական բովանդակությունը, նրա դերն ու ա-
ռանձնահատկությունները հայ մտավոր մշակույթի պատմության մեջ:
Մամուլի ուժիմը ներկայացված է հայ, ինչպես և Օսմանյան կայսրության
մյուս ժողովուրդների (թուրքերի, հույների), Կ. Պոլսում եվրոպական բն-
գոյնիչ հրատարակված պարբերականների օրինակով: Հանգամանորեն
լուսարանվել են արևմտահայ մամուլի իրավական դրության հետ կապվող
հարցեր: Պորբերական քննարկվել է պարբերական հրատարակությունների
հասարակական զարգացման ընթացքի և Օսմանյան Թուրքիայի քաղա-
քական պատմության հետ կապը:

Գիրքը նախատեսված է գիտական, լայն հասարակության համար

ԳՄԴ 76.12(2

0502/20000

703 (2) — 69

ISBN 5-8080-0025-1

Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մամուլի օսմանյան գրաքննությունը սկիզբ է առել անցյալ դարի 50—60-ական թթ. և իր ամբողջ պատմության ընթացքում, մինչև կայսրության վախճանը, հանդես եկել սուլթանական ռեժիմի համակողմանի պաշտպանությամբ: Թուրքական բռնակալության նկարագրին միանգամայն համապատասխան՝ օսմանյան գրաքննությունը իր ձևավորման ժամանակից ի վեր բռնացել է մամուլի և հրապարակախոսության վրա, ըստ հնարավորին կաշկանդել հպատակ ժողովուրդների ազատ խօսքն ու միտքը:

Կողմնակի վերահսկողության ենթարկվելով գրատպության վերաբերյալ օրենքի (1857 թ.) շրջանակներում, Թուրքիայում թերթերն ու ամսագրերը իրավական կանոնարկման առանձին բնագավառ դարձան այն ժամանակից, երբ հրապարակվեց մամուլի մասին օրենքը (1864 թ.): Մամուլի գրաքննությունը իր ձևավորման շրջանից մինչև 1880-ական թթ. ունեցավ հետտպագրական բնույթ և դրանից հետո միայն ստացավ յնախնական գրաքննության ձև: Դա պայմանավորված էր հպատակ ժողովուրդների ազգային ինքնագիտակցության վերելքով և Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական իրավիճակով: Ըմբոստացած ժողովուրդների մեջ ազատագրական գաղափարների զարգացումն ու լայն տարածումը, որոնք դրսևորվում էին իբրև «ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության շղափարումներ»¹, օսմանյան կառավարողներին ստիպեցին ավելի սահմանափակել մամուլի և գրատպության ազատությունը: Սուլթանական բռնապետությանը ընդդիմացող օպոզիցիան և ազգային-ազատագրական տրամադրությունները մի հայտնի չափով նախապատրաստվում և խթանվում էին պարբերական հրատարակություններում, ուստի գրաքննությունը իր սուր ծայրով ուղղվեց դրանց դեմ: Գրաքննությունը որակական փոփոխություններ ապրեց 1860—1870-ական թթ., երբ էլ ավելի սրվեցին հակասությունները մի կողմից հպատակ ժողովուրդ-

ների և բռնակալության, մյուս կողմից՝ վերջինիս և կայսրության ամբողջականությանը սպառնացող տերությունների միջև:

1864 թ. դեկտեմբերի 31-ին հրապարակված մամուլի օսմանյան օրենքը, որը բավականաչափ լիբերալ կողմեր ուներ, արդեն 1867 թ. փետրվարին փոխարինվեց անհամեմատ անհանդուրժող և խիստ՝ «Ալիի որոշմամբ»: Որոշումը փաստորեն սառեցնում էր ընդունված օրենքը, ուղղվում Թուրքիայում մամուլի ամեն մի ազատության դեմ և իրավական նորմերը փոխարինում ոստիկանական կամայականություններով: Այդ որոշմամբ մամուլի իրավունքները ավարտվում էին այնտեղ, որտեղից սկսվում էին վարչական-ոստիկանական բռնությունները: Թերթերի և սագրերի տնօրեն-խմբագիրների, լրագրողների ամեն մի բայը, որ շեղվում էր պաշտոնական ուղեգծից, պատժվում էր խափանումներով, մեղանշած անձանց ձերբակալություններով ու աքսորով:

Գրաքննությունը Թուրքիայում անմիջականորեն արտացոլել է երկրում քաղաքական կուրսի փոփոխությունները: Այս իմաստով գրաքննական բռնությունները միանշանակ չպետք է հասկանալ. այսպես, 1870-ականին գրաքննության որոշ մեղմացումները, մամուլի հալածանքների սահմանափակումները, որոնք փոխնիփոխ հաջորդում էին բռնություններին, այս կամ այն չափով անդրադարձնում էին երկրի ներքին ու արտաքին քաղաքական իրավիճակը: «Նոր օսմաններին» հասարակական ակտիվացումը և սահմանադրական շարժման հաջողությունները այս ժամանակաշրջանում, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և սուլթանական ռեժիմի վրա գործադրված ճնշումը դրսից՝ իրենց կնիքն էին դնում գրաքննական քաղաքականության վրա և կանխորոշում նրա ընթացքը: Այնուհետև, գրաքննությունը միատեսակ վերաբերմունք չի ունեցել կայսրության տարածքում հրատարակվող բոլոր թերթերի ու ամսագրերի նկատմամբ: Թուրքական մամուլի հետ միասին կրելով գրաքննության ծանր լուծը, ոչ մահմեդական ժողովուրդների, այդ թվում և արևմտահայերի մամուլը ենթարկվել է հավելյալ հալածաժանցների, երբ փորձել է ընդդիմանալ ազգային ու կրոնական ճնշումներին: Մինչև 1860-ականի կեսը օսմանիզմի դոկտրինաներով ղեկավարվող գրաքննությունը արդեն խիստ վերահսկողության էր ենթարկում արևմտահայ պարբերականները՝ ազգային սահմանադրության շուրջ մղվող պայքարի, մամուլում ազգային ինքնագիտակցության վերելչի ու ազգային ինքնորոշման տրամադրությունների անհանգրստացնող դրսևորումների կապակցությամբ: Թուրքական մասնավոր մամուլի կրած հալածանքներից առաջ, հայերեն պարբերականների վրա

արդեն փլվում էր ռստիկանական վայրագությունների ալիքը: 1870-ականին գրաքննությունը մտնում է իր անբաժան իրավունքների մեջ՝ ամենուրեք ձգտելով կանխել գաղափարական անցանկալի ուղղությունները: Խափանումներն ու սպառնալի նախազգուշացումները դարձան տպագրական տեսչության առօրեական մեթոդները, հալածանքը՝ նրա հիմնական զենքը մամուլի ազատության դեմ: Մամուլից արտաքսվեցին: «Նոր օսմանները» ու սահմանադրական շարժմանը համակիր գաղափարները, հետապնդվեցին ազգային ինքնավարության, դասակարգային կոիվների ու գաղափարախոսության վերաբերյալ հրապարակումները:

1880-ական թթ. արևմտահայ մամուլի նկատմամբ գրաքննության ճնշումները անասելի չափերի հասան: Արևմտահայության բնաջնջումը պետական քաղաքականության աստիճանի բարձրացրած թուրքական բռնակալությունը դրան համապատասխան մեթոդներ էր կիրառում: Հայերեն պարբերականների դեմ: Սակավ բացառություններով վերջիններս 1885—1908 թթ. ամփոփվեցին ազգային, կրոնական ու վարչական հարցերի նեղ շրջանակներում՝ հարկադրված մոռացության մատնելով քաղաքական հրապարակախոսության ժանրը: 1890-ական թթ. երկրորդ կեսին կրած ծանր հարվածից հետո արևմտահայ պարբերականները ամբողջովին զրկվեցին քննադատական խոսքի իրավունքից նաև ազգային վարչական կյանքին վերաբերող հրապարակումներում: Արդյվ Համիդի գահակալության վերջին տասներկու տարիների ընթացքում, դեմոկրատական «Հայրենիքի» խափանումից հետո, արևմտահայ հրապարակախոսությունը զրկվեց իր զարգացման բնականոն ընթացքից:

«Նոր օսմանները» ջախջախումից հետո, 1870-ականի վերջին օսմանյան գրաքննության և թուրքական մամուլի փոխհարաբերություններում նկատվում է գաղափարագործնական որոշակի ներթափանցում, որ թերևս, պետք է համարել համիդյան գրաքննության ամենաակնառու հաջողությունը: Թուրքական մամուլը ամբողջովին ենթարկվում է գրաքննական հրահանգներին, պրոպագանդում բռնապետության տեսակետը՝ տիրապետող կրոնի և այն բովանդող ժողովրդի գերազանցության մասին, դառնալով սուլթանական ռեժիմի հլու կամակատարը: Թուրքական ծախու և վարձկան ժողնալիստիկան թշնամանք և ատելություն էր հրահրում հայ ժողովրդի նկատմամբ, վերջինիս ներկայացնում իբրև թուրք ժողովրդին ու օսմանյան պետականությանը թշնամի տարր: Գրաքննության հետ միասին այդ հետադիմական մամուլը փաստորեն հանդես էր գալիս որպես արևմտահայության կոտորածներն ու ցեղա-

ապանութիւնը նախապատրաստող ու հիմնավորող գաղափարական միջոց։ Համիդյան ռեժիմի գրաքննական ավանդները, ինչպես ցույց տվեց պատմութիւնը, հարատևեցին դրա վախճանից հետո ևս՝ երիտթուրքերի ֆեոդալարման ժամանակաշրջանում։

Օսմանյան գրաքննության և նրա զարգացման ընթացքը բացահայտելու իմաստով որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում նրա վերաբերմունքը Թուրքիայում եվրոպական լեզուներով հրատարակվող մամուլի հանդեպ։ Արտաքուստ կարող է թվալ, որ այն հրատարակութիւնները, ոչ սակավ դեպքերում ենթարկվելով խափանումների, բաժանել են երկրի ամբողջ մամուլի ճակատագիրը։ Իրականում գրաքննության գործողութիւնները ունեցել են քաղաքագիտական ցույցի ժամանակավոր բնույթ, կրել են այս կամ այն եվրոպական տերութիւն նկատմամբ Բ. Բոսն կոնկրետ փոխհարաբերութիւն կնիքը։ Եվրոպական հրատարակութիւնները Թուրքիայում միշտ էլ գաղափարական անհամեմատ լայն հնարավորութիւններ են ունեցել, քան տեղական լեզուներով հրատարակվող պարբերականները։ Չպետք է մոռանալ, որ եվրոպական լեզուներով հրատարակվող մամուլը վայելել է այն տերութիւն գործնական օժանդակութիւնը, որի շահերը պաշտպանվում էին իր էջերում։ Անտարակույս, համիդյան «զուլումի» ժամանակաշրջանում Թուրքիայի եվրոպական մամուլը ևս խիստ զրկվել է իր ազատութիւն երբեմնի չափերից, այդուհանդերձ, այն գործել է շատ ավելի լայն շրջանակներում, քան Թուրքական կամ մանավանդ, մյուս հպատակ ժողովուրդների պարբերական հրատարակութիւնները։ Եվրոպական մամուլի առավելութիւնները առավել ակնառու էին 1860—1880-ական թթ.։ Այն, ինչ արգելվում էր տեղական լեզուներով հրատարակվող պարբերականներում, բացորոշ կարող էր ի հայտ գալ այնտեղ։ Օտարալեզու մամուլի նկատմամբ ազատ հաշվհարդարի անհնարինութիւնը գրաքննությանը մղեց որոշակի մեթոդների, որոնց մեջ ամենևին էլ երկրորդական տեղ չէին գրավում կաշառքը, պետական գումարների հատկացումները և այլն։ 1880-ական թթ. սկսած Թուրքական իշխանութիւնները բուն եվրոպական թերթերն ու ամսագրերը գնելու իրենց գործելակերպը մշակել և նրբացրել են Թուրքիայի ներսում հրատարակվող եվրոպական լեզուներով լույս տեսնող մամուլի վրա։ Համիդը հասավ այն բանին, որ Թուրքասեր պարբերականների մի ամբողջ ցանց ստեղծվեց Գերմանիայում, Շվեյցարիայում, Բելգիայում, Անգլիայում և այլուր։ Առատորեն դեպի արտասահման հոսեցին պարգևներն ու շնորհաբաշխութիւնները, որոնց արդյունավետութիւնը սուլթանին մը-

դեց նույնն անել նաև երկրի ներսում հրատարակվող թուրքական մամուլի հետ։ Աբդուլ Համիդը ձգտում էր մամուլը դարձնել կրկնակի անբարոյական՝ ոչ միայն անազատ, այլև ծախու։

Մամուլի օսմանյան գրաքննությունը մինչև համիդյան գրաքննության ալանդակ ու անհեթեթ ձևերը յուրացնելը, ի սկզբանե արդեն կրում էր բուրժուական գրաքննությունների վատթար կողմերը։ Դեռևս 1840—1850-ական թթ., Թուրքիայում մամուլի զարգացման արշալույսին, վարչական իշխանությունները ինքնագլուխ դատաստան էին տեսնում մեղանշած կամ կասկած հարուցող պարբերականների նկատմամբ։ 1864 թ. մամուլի օրենքը, շնայած իր հավակնություններին, չկարողացավ փոխել այդ ավանդույթը. այդ օրենքի հրապարակումից երկու տարի անց մամուլն իրեն գտավ գրաքննության ոչնչով չկարգավորված իրավունքների ոլորտում։ Նույնիսկ 1864 թ. մամուլի օրենքով սահմանված՝ պետության, իշխանությունների, կրոնի, անհատների և այլնի դեմ ուղղված քննադատության արգելքը ոստիկանության կողմից արժանացավ ամենաքմահաճ մեկնաբանության, ուրեմն և անսանձ բռնությունների։

1830—1840-ական թթ. պրուսական գրաքննության ներքո հեծող մամուլի կացությունը, որի դիպուկ բնութագիրը տվել է Կ. Մարքսը, իր մոտավոր զուգահեռն էր գտնում 1860-ական թթ. Թուրքիայում հրատարակվող թերթերի ու ամսագրերի իրավական վիճակի մեջ։ Վերջիններս ևս իրենց գտան մի դրության մեջ, երբ, Կ. Մարքսի խոսքերով, «Ձի կարելի առանձին անհատի դիպչել. ճիշտ նույնպես չի կարելի դիպչել ոչ դասակարգի, ոչ ընդհանուր և ոչ էլ իրավաբանական անձի... իսկ դա զարմանալի դյուրություն է հանգեցնում է այն արդյունքին, որ մամուլից խլված է ամեն մի վերահսկողության հնարավորություն՝ աստիճանավորների և այն հաստատությունների նկատմամբ, որոնք գոյություն ունեն որպես անհատների մի որոշ դասակարգ»²։

Իրերի նման դրությունը ենթադրում էր նախնական գրաքննության պաշտոնական հաստատում, որ Թուրքիայում իրականացվեց 1880-ական թթ.։ Սակայն գրաքննության միահեծան տիրապետության ժամանակաշրջանում ևս Աբդուլ Համիդը հարկ համարեց ձևականորեն պահպանել 1864 թ. մամուլի օրենքը։ Գործնականում այն հիմնավորապես ոտնահարվել էր դեռևս 60-ական թթ. երկրորդ կեսից, սակայն Բ. Ղուանը անհրաժեշտ էր գրաքննության բնագավառում կեղծ օրինականություն ցուցադրել քաղաքական ու դիվանագիտական խարդավանքների համար։ Ինչ վերաբերում է թուրքական գրաքննության ոստիկանական

բնույթին, այն ամբողջովին ուստիկանության իրավասությանը հանձնելու՞ն, ապա այս դեպքում սուլթանական ռեժիմը ոչ մի տարածայնություն չունեցավ գրաքննության կիրառման բուրժուական սկզբունքների հետևանքով։ Օգտագործելով ֆրանսիական գրաքննական օրենքներն ու կանոնադրությունները և դրանց մասամբ տեղային բնույթ տալով, թուրքական կառավարությունը կարճ ժամանակ անց ինքն էր ոտնահարելու այդ օրենքի՝ իրեն լիբերալ թվացող տրամադրությունները։ Կ. Մարքսը հիմնավորապես բացահայտում էր բուրժուական պետության գրաքննության և ուստիկանության անխուսափելի սերտաճման տրամաբանությունը։ «Ոչ մի պետություն,—գրում է նա,—արիություն չունի օրենքի որոշակի ձևակերպումով աբստինյանի այն, ինչը կարող է փաստորեն իրականացնել գրաքննիչի՝ իբրև իր օրգանի միջոցով։ Եվ այդ պատճառով գրաքննության տնօրինությունը հանձնվում է ոչ թե դատարաններին, այլ ուստիկանությանը»³։

Գրաքննությունը 1890-ական թթ. արդեն դարձել էր բազմաշերտ ու ճյուղավորված մի համակարգ, որը բռնության անվտանգությունն ապահովող մի հաստատություն էր։

1880-ական թթ. մինչև երիտթուրքական հեղաշրջումը (1908) գրաքննությունը խաթարեց արևմտահայ հրապարակախոսության զարգացումը։ Այսուհանդերձ, մամուլում ջախջախված քաղաքական հրապարակախոսության ֆունկցիան մասամբ անցավ այլ ժանրի հրապարակումներին՝ Արևմտահայաստանի տնտեսական կյանքի, բարքերի ու կենցաղի նկարագրությանը, գեղարվեստական գրականությանը (այսպես կոչված գավառական գրականությանը) և գրաքննադատական հոգվածներին, իրողություն, որ այս կամ այն չափով նկատելի է Թուրքիայում հրատարակված պարբերականների համար⁴։ Դրանցում պատկերվում էին Արևմտահայաստանի սոցիալ-տնտեսական իրականության ուշագրավ կողմերը, որ և բռնակալության պայմաններում լուրջ նշանակություն ունեցավ ազգային ու քաղաքացիական գիտակցության հետագա բարձրացման համար։

Արևմտահայ մամուլի հասարակական-քաղաքական ու մշակութային արժեքի բացահայտման համար կարևոր նշանակություն ունի նրա իրավական վիճակի լուսաբանությունը։ Օսմանյան գրաքննությունը, նրա պատժիչ բնույթը և գործողության մեթոդները խոր հետք են թողել վայսրության տարածքում հրատարակվող մամուլի վրա, հաճախ

պայմանավորել նրա հրապարակումների առանձնահատկությունները և հասարակական կարծիքի հետ ունեցած առնչությունների յուրահատկությունը: Գրաքննական կաշկանդումների, պարբերականների իրավիճակից բխող կոնկրետ պայմաններով է բացատրվում այն իրողությունը, որ 1880-ականի երկրորդ կեսից արևմտահայ մամուլը հարկադրված էր խիստ սահմանափակել և ապա լիովին վերացնել Արևմտահայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճնշումները բացահայտող նյութերը: Նույն իրավական վիճակով էր թելադրված նաև հայկական կոտորածների վերաբերյալ ամենանվազագույն իսկ ինֆորմացիայի բացակայությունը 1890-ական թթ. արևմտահայ մամուլում:

Օսմանյան գրաքննությունը զգալի հարված հասցրեց մամուլում հայ գույզ հստկածների հասարակական ու քաղաքական, մշակութային ու գիտական փոխներթափանցման պրոցեսին, որ լայն թափ էր առել 1860—1870-ական թթ.: Խիստ նվազեց նրանց հրապարակախոսական համագործակցությունը: «Մասիսում» (Կ. Ություճյանի), «Բյուզանդիոնում» «Սուրհանդակում» շատ քիչ տեղ է հատկացվում արևելահայ իրականության խնդիրներին: Հայ ազգային շարժման հանդեպ թշնամանքով տրամադրված ցարական իշխանությունները ևս կասկածով էին նայում արևելահայ այն պարբերականներին, որոնք մինչև այդ ստեղծել էին արևմտահայ կյանքը լուսաբանելու ուղադրավ ավանդություններ: Այս իմաստով չափազանց անշուք էին դարձել «Մշակի», «Նոր դարի», 1890-ականի երկրորդ կեսից՝ «Արձագանքի» հրապարակախոսական բաժինները:

Համիդյան գրաքննության ազդեցությունը նույնչափ ակնառու երեւվում է նաև այն բանում, որ մամուլին արգելված էր անդրադառնալ հասարակական առաջավոր գաղափարներին ու շարժումներին: Թուրքերեն, հայերեն և այլ լեզուներով տպագրվող պարբերականներում հազվադեպ բացառություններով և այն էլ՝ գրաքննության անուշադրության հետևանքով, մերթ Եմերթ հայտնվում էին սոցիալ-դեմոկրատական բովանդակության նյութեր:

Հայ մամուլի այսպիսի իրավիճակը իր հերթին նպաստում է բնութագրելու օսմանյան գրաքննության գաղափարական ու քաղաքական նպատակաուղղվածությունը կայսրության հպատակ ժողովուրդների ազգային վերածնության ու ինքնորոշման ձգտումների դեմ: Այս տեսակետից գրաքննության ուսումնասիրությունը հրատապ նշանակություն ունի այդ ժողովուրդների հասարակական մղումների իրացման, ազգային անկախ պետություններ ստեղծելու օրինաչափությունները հետա-

զոտելու գործում: Եվ վերջապես, օսմանյան գրաքննության ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է թուրքական պետության մեջ գրաքննական ավանդույթների հաջորդանությունը, դրա խոր արմատները ըմբռնելու անհրաժեշտությամբ: Իսկապես, համիդյան գրաքննության էական կողմերը, հիմնականում իրենց բռնության բովանդակությամբ, հարատևեցին երիտթուրքական գրաքննության քաղաքականության մեջ և հետագայում սահմանված գրաքննություններում⁵:

Արևմտահայ մամուլի նկատմամբ օսմանյան գրաքննական քաղաքականությունը, չնայած մեզանում դեռևս անցյալ դարի 60—70-ական թթ. որոշակիորեն ձևավորված հետաքրքրության, շատ քիչ է ուսումնասիրված: Խնդրո առարկա պրոբլեմին հիմնականում անդրադարձել են հայ մամուլի պատմաբաններ Գր. Գալեմքյարյանը, Գ. Զարբհանալյանը, Գ. Լեոնյանը, որոնց XIX դ. օսմանյան գրաքննությունը հետաքրքրել է արևմտահայ այս կամ այն պարբերականի խափանման կամ վերջնական դադարի կապակցությամբ⁶: Այդ հեղինակների աշխատություններում բացակայում է մամուլի իրավական դրության նկատմամբ հետաքրքրությունը: Պրոբլեմը առաջագրելու, մասնավորապես հայ մամուլի հանդեպ օսմանյան իշխանությունների վերաբերմունքը պարզելու տեսակետից առաջնությունը պետք է տալ Ալ. Երիցյանին, որը «Արձագանքի» մի համառոտ տեղեկության մեջ տվել է մինչև 1882 թ. արևմրտահայ պարբերականների հետապնդումների ու հալածանքների վիճակագրություն⁷: Անկախ նրա տվյալների ստուգությունից, հրապարակումը ուշագրավ է այն իմաստով, որ ընդգծում է հայ մամուլի իրավազուրկ դրությունը Օսմանյան Թուրքիայում:

Իրենց պարունակած բազմաթիվ տեղեկություններով, ականատեսի հավաստի պատումով և վերլուծական բնույթով առանձնանում են Ա. Արփիարյանի մեծաքանակ հոդվածներն ու թղթակցությունները մամուլի և օսմանյան գրաքննության փոխհարաբերության, Կ. Պոլսի պարբերականների դեմ գրաքննության բռնացումների վերաբերյալ, որոնք տպագրվել են «Մշակ», «Նոր կյանք», «Շիրակ», «Լուսաբեր» և այլ պարբերականներում⁸: Նա առաջինն է, որ բացահայտել է համիդյան գրաքննության գործողությունների ոչ միայն գաղափարական, այլև քաղաքական շարժառիթները 1870—1900-ական թթ.: Դեմոկրատ-հրապարակախոսի և դասական գրողի բերած հարուստ փաստերն ու տրվյալները բացառիկ կարևոր նշանակություն ունեն արևմտահայ մամուլի իրավական դրության արդիական մեկնաբանության համար:

1880-ական թթ. մինչև համիդյան բռնապետության վախճանն ընկած ժամանակաշրջանի հայ մամուլի, խմբագիրների ու լրագրողների, նրանց վրա ծանրացած գրաքննական բռնությունները բացահայտելու իմաստով շատ արժեքավոր են Ե. Օտյանի հուշագրական երկերը⁹։ Իբրև արևմտահայ առաջատար հրապարակախոսներից մեկը, որի փայլուն խմբագրական տաղանդը ձևավորվել ու զարգացել է «Արևելքի», «Մասիսի», ու «Հայրենիքի» դեմոկրատների շրջանում, Ե. Օտյանը միջավայրի հավաստի ու ճշմարտացի վերարտադրության մեջ է ներկայացրել ոչ միայն Կ. Պոլսի, այլև արտասահմանի հայ հասարակական-քաղաքական գործիչների ու մամուլի նկարագիրը։

Օսմանյան գրաքննության ճնշումներին քանիցս անդրադարձել են «Մշակի» գործիչները՝ Գր. Արծրունին, Բաֆֆին, նրա թղթակիցներից՝ Մ. Փորթուզլյանը և ուրիշներ։ Բաֆֆին ուշադրությամբ հետևել է արևմտահայ մամուլի հասարակական բովանդակությանը, նրա հասարակական ներգործության խորացմանը և անվերապ քննադատության ենթարկել օսմանյան և ազգային իշխանությունների բռնացումները ազատախոս մամուլի վրա։

Գրաքննության գործողություններն ու մեթոդները ըստ ամենայնից ցուցադրված են Կ. Պոլսի «Մեղու» և «Թատրոն» դեմոկրատական պարբերականներում։ Հ. Սվաճյանը և Հ. Պարոնյանը հայ մամուլի նկատմամբ օսմանյան իշխանությունների բռնացումները գնահատել են որպես ազգային ինքնագիտակցության խորացման դեմ ուղղված քաղաքականություն, որի նպատակը կայսրության հպատակ ժողովուրդների վրա բռնապետության հավերժացումն է։ Ընդ որում, Հ. Պարոնյանը առաջինն է մերկացրել օսմանյան իշխանությունների բնութագրական վարքագիծը՝ թուրք մամուլը արևմտահայության դեմ հրահեղը, անհանդուրժող վերաբերմունքը հայ պարբերականների հանդեպ, մանավանդ, երբ հարցը վերաբերում էր ազգային ու կրոնական ճնշումների քացահայտմանը, դեզինֆորմացիայի խրախուսմանը և այլն։ Արժեքավոր ընդհանրացումների հետ միասին Հ. Պարոնյանի այս բնույթի հրապարակումները, սատիրական այլևայլ նյութերը բացահայտում են Թուրքիայում գրաքննական ընթացիկ քաղաքականությունը։ Հ. Պարոնյանի պարբերականները, ինչպես և Կ. Փանոսյանի «Մանգումեի էֆքյարը», Օ. Խոճասարյանի «Օրագիրը» և Գ. Այվազյանի «Մամուլը» տալիս են արևմտահայ հրապարակագիրների մղած սկզբունքային պայքարի օրինակներ խոսքի ազատության համար։

Օսմանյան Թուրքիայում մամուլի օրենքի, գրաքննական մեթոդների և այլնի վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ են սփռված նաև արևելահայ ու գաղութահայ պարբերական մամուլում: 1880-ականից արևմտահայ մամուլի ստրկացած վիճակի մասին տեղեկությունների կարելի է հանդիպել այդ մամուլի էջերում: 1896 թ. հետո արևելահայ և գաղութահայ պարբերականներում ևս գնալով նվազում են և ի վերջո դադարում տեղեկությունները մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ: Անընդհատ հետապնդումներից ջլատված և հասարակական կարծիքից ամբողջովին մեկուսացած մամուլը, որ կորցրել էր բռնակալությանը անմիջականորեն դիմակայելու հնարավորությունը, իր հերթին, երբեմնի հետաքրքրությունը չէր ներկայացնում: Օսմանյան գրաքննության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրի կարևորագույն արժեք ունեցող մամուլը, այսպիսով, կորցնում է իր մերկացնող նշանակությունը համիդյան բռնապետության վերջին տասնամյակին: Այս ժամանակամիջոցի գրաքննական անցուղարձի, մամուլի իրավիճակի և ալլնի վերաբերյալ ժամանակի հրատարակությունները շատ կցկտուր տեղեկություններ են հայտնում:

1850—1880-ական թթ. արևմտահայ մամուլի սկզբնաղբյուրի արժեքը ընդգծվում է այն իրողությամբ, որ պարբերականները 1864 թ. մամուլի օրենքի 28-րդ հոդվածի ուժով պարտավոր էին իրենց նկատմամբ կիրառված պաշտոնական գրաքննական վճիռը հրապարակել: Օսմանյան տպագրական տեսչության այս բնույթի ազդերում հայտնվում են, թե տվյալ թերթը կամ հանդեսը ինչ պատճառով է խափանվել, ինչ հոդվածի տպագրության առթիվ և ինչ մեղադրանքով ու որքան ժամանակ է տևելու այդ խափանումը: Դրանք պաշտոնական փաստաթղթեր են և ունեն վավերագրի արժեք: 1890-ական թթ., սակայն, նման պաշտոնական ազդերը կամ խիստ համառոտ են դառնում (հայտնվում է միայն տպագրական տեսչության որոշումը թերթը կամ հանդեսը խափանելու մասին), կամ էլ չբանում են պատժված պարբերականների էջերից: Նշված վավերագրերը որոշ չափով մեղմացնում են մեզ անմատչելի Թուրքական աղբյուրների և համապատասխան արխիվային նյութերի պակասը:

Պրոբլեմի հետազոտության համար յուրջ նշանակություն ունեն ՀեՍՁ արխիվներում պահվող համապատասխան նյութերը: Հարուստ տեղեկություններ են պարունակում ՀեՍՁ Ե. Չարենցի անվ. գրականության և և արվեստի թանգարանի հավաքածուների՝ մամուլի գործիչների, խմբագիր-հրատարակիչների (Կ. Ություճյան, Ա. Արփիաբյան,

Հ. Ասատուր, Ա. Անտոնյան, Գր. Օտյան և ուրիշներ) նամակները, հուշերը, անտիպ աշխատությունները և այլն: Կարևոր արժեք ունեն Մաշտոցի անվ. Մատենադարանի համարժեք նյութերը՝ պատրիարքարանի և մամուլի փոխհարաբերությունների, արևմտահայ խմբագիրների և կաթողիկոսների շփումների և այլնի մասին: Սկզբնաղբյուր են Կ. Պոլսի Ազգային և Քաղաքական ժողովների 1860—1870-ական թթ. արձանագրությունները, որտեղ փաստացի նյութեր կան մամուլի դեմոկրատական ազատության դեմ հետադիմության բռնությունների, ազատ խոսքի համար հրապարակախոսների մղած պայքարի և այլնի վերաբերյալ:

Արևմտահայ պարբերականների և օսմանյան իշխանությունների առնչությունների, հայ խմբագիրների գործունեության հասարակական պայմանների լուսաբանման իմաստով բացառիկ կարևոր արժեք ունեն Ա. Ալպոյաճյանի աշխատությունները: Ա. Ալպոյաճյանը, սակայն, թուղթիկ է անդրադարձել մամուլի իրավական դրությանը և դրան առնչվող հարցերը գերազանցապես կապակցել է զուտ արևմտահայ համայնքի ներսում ծավալված իրադարձությունների հետ¹⁰:

Մամուլի իրավական վիճակի, մասնավորապես համիդյան վայրագ գրաքննության ուսումնասիրության փորձերը սկսվել են անցյալ դարի վերջից և 900-ականի սկզբից, հիմնականում եվրոպական հեղինակների կողմից: Դրանք դեռևս գիտական հետազոտություններ չեն բառի իսկական իմաստով, այլ համիդյան ռեժիմի այլանդակ կողմերը բացահայտող ակնարկներ, երբեմն՝ արևելյան բռնակալության էկզոտիկան հետաքրքրասեր ընթերցողին ներկայացնելու ձգտում: Այս բնույթի հրապարակումներում, սակայն, կան ուշագրավ փաստեր, վավերագրեր և դիտողություններ¹¹:

Օսմանյան առաջին սահմանադրության (1876) ժամանակաշրջանում մամուլի հանդեպ «նոր օսմանների», Միդհատ փաշայի և Աբդուլ Համիդի վերաբերմունքը և գործելակերպը գնահատելու կողմից սկզբնաղբյուրի տեղեկություններ են պարունակում Ա. Հ. Միդհատ բեյի հուշերում տեղ գտած որոշ վավերագրական նյութերը¹²: Նույն ժամանակաշրջանի գրաքննության իրավական բնույթի, մամուլի օրենքի և օրենսդրական այլ ակտերի ու որոշումների լուրջ վերլուծությունը, առաջին անգամ տրված է Ա. Զիվելեգյանի աշխատության մեջ¹³: Ունենալով իրավագիտական վերլուծության բնույթ, նրա ուսումնասիրությունը, սակայն, գրեթե չի շոշափում հայ մամուլի իրավական դրության հարցը:

Հայ խորհրդային պատմագրության մեջ օսմանյան գրաքննության, մամուլի օրենքների և արևմտահայ պարբերականների և օսմանյան գրաքննության հարցը հատուկ հետազոտության առարկա չի դարձել¹⁴։ Հայ պատմաբանները մեկ կամ մի քանի պարբերականների պատմության, ինչպես և Կ. Պոլսի Ազգային ժողովի ու մամուլի փոխհարաբերությունների առթիվ են համառոտ անդրադարձել այդ խնդրին։ Մի շարք աշխատություններում լուսաբանված են պարբերականների նկատմամբ 1860—70-ական թթ. գրաքննության միջոցառումները և դրանց հասարակական-քաղաքական իմաստը¹⁵։

Օսմանյան Թուրքիայում մամուլի իրավական դրության, գրաքննական քաղաքականության և դրանց առնչվող խնդիրների լուսաբանումը լայն հենքով տրված են խորհրդային պատմաբաններ Ա. Դ. Ժելտյակովի և Յու. Ա. Պետրոսյանի աշխատություններում¹⁶։ Դրանցում թեև չեն քննարկվում հայ մամուլի հանդեպ գրաքննական ուղեգծի հարցերը, սակայն էական կողմերով բացահայտվում են մամուլի ուժի մի՞ որպես օսմանյան պետության անվտանգությունն ապահովող իրավական հաստատության բնույթը, դրանով թելադրվող նրա գործելակերպը, որը ալյալ պրորբեմի կարևոր կողմերից մեկն է։ Մասնավորապես, Ա. Դ. Ժելտյակովի աշխատություններում հանգամանալի քննության են ենթարկված մամուլի օրենքներն ու օրենսդրական ակտերը, որոնք բնութագրվում են կայսրության հասարակական ու քաղաքական իրականության կոնկրետ հենքի վրա։

Արտասահմանի հեղինակների աշխատություններում¹⁷ մամուլի և ապագրության ուժի մի պրորբեմը հիմնականում քննարկվել է Թուրքիայում ռեֆորմատորական շարժման, օսմանիզմի գաղափարախոսության գնահատականի տեսակետից։ Այս հեղինակները գերազանցապես քննարկում են «նոր օսմանների» և երիտթուրքերի հրատարակությունները, ինչպես և գրաքննության՝ դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքը։ Նրանց ուսումնասիրություններում ուշագրավ դիտարկումներ կան մամուլի հանդեպ քաղաքական նպատակաուղղվածության վերաբերյալ։

Եթե օսմանյան գրաքննության և ոչ մահմեդական ժողովուրդների մամուլի փոխհարաբերության հարցի անտեսումը մի հայտնի չափով հիմնավորված է վերոհիշյալ հեղինակների աշխատություններում (որքանով նրանք հատուկ քննության առարկա չեն դարձրել մամուլի իրավական դրության հարցը), ապա չի կարելի նույնը ասել մամուլի թուրքական պատմաբանների¹⁸ վերաբերյալ։ Հանգամանալի քննության են-

Թարկելով օսմանյան մամուլի օրենքները, որոշումները և այլն, մամուլի ռեժիմի ձևավորման ու զարգացման ընթացքը ընդհուպ մինչև Թուրքիայի պատմության նորագույն ժամանակաշրջանը, նրանք ամբողջովին անտեսել են կայսրության ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և արևմրտահայերի պարբերական մամուլի իրավական դրության հարցը: Այդպիսի մտեցումը անտեսել է արևմտահայ մամուլի՝ իբրև պատմական սկզբնաղբյուրի նշանակությունը հենց թուրքական մամուլի իրավական դրության լուսաբանության, օսմանյան գրաքննության ամբողջական բնութագրի համար: Բավական է նշել, որ 1840—1880-ական թթ. արևմրտահայ պարբերականներում իշխանությունների կողմից հրապարակվել են ստվարաթիվ վավերագրեր, փաստաթղթեր և փաստական նյութեր՝ օսմանյան գրաքննության, մամուլի օրենքների, ակտերի և այլնների մասին: Հրատարակվող պարբերականների վերաբերյալ:

Սույն աշխատությունը առաջին փորձն է՝ ներկայացնելու արևմտահայ մամուլի իրավական դրությունը օսմանյան գրաքննության ներքո, 1857—1908 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում: Այն թելադրված է եղել երկու շատ կարևոր հանգամանքներով՝ արևմտահայերի հասարակական-քաղաքական կացությանը և նրանց հանդեպ օսմանյան պետության վարած քաղաքականությամբ: Ոչ քիչ նշանակություն ունի այն, որ գրաքննությունը որոշակիորեն տարբերակված վերաբերմունք է ցուցաբերել տեղական տարբեր լեզուներով հրատարակվող պարբերականների, այլև նույն լեզվով ու նույն ժողովրդին պատկանող պարբերականների հանդեպ: Եթե 1880-ական թթ. և դրանից հետո հայերեն պարբերականներին ներելի էր գրել արևմտահայերի ինքնավարության մասին, ապա թուրքական թերթերին ու ամսագրերին լայն ազատություն էր տրված հերքելու նրանց նույնիսկ հայրենիք ունենալու իրավունքը: Նույն կերպ, այն, ինչ ներելի էր «Մեղվին» կամ «Թատրոնին», կարելի էր ներկայացնել «Մասիսում»՝ մինչև 1883 թվականը (օրինակ, հարցառահարությունների փաստերը): Այլ կերպ ասած, գրաքննությունը հատուկ անհանգուրժողականություն է հանդես բերել հասարակական կարծիքի հետ սերտ կապեր ունեցող և նրա վրա ներազդող պարբերականների նկատմամբ: Այդպիսի որակներ ունեին, ամենից առաջ, արևմրտահայ դեմոկրատական մամուլն ու հրապարակախոսությունը, որի դեմ և սկզբունքային իմաստով ուղղվել են գրաքննության պատասխան միջոցառումները: Դեմոկրատական մամուլի ձևավորման ու զարգացման պատմությունը իր հատկանշական կողմերով նաև պայթար է բռնակալական գրաքննության դեմ: «Գերմանիայի հոգևոր զարգացումը,—

գրում էր Կ. Մարքսը,—կատարվել է ոչ թե գրաքննության շնորհիվ, այլ ընդդեմ նրա»¹⁹։ Նույնը կարելի է ասել օսմանյան գրաքննական բռնացումների ու արգելքների դեմ տասնամյակներ ի վեր մաքառած արևմտահայ մամուլի հոգևոր ու մշակութային դերի մասին։

Ելնելով այն բանից, որ գրաքննությունը արևմտահայ մամուլի հանդեպ սանկցիաներ գործադրելիս հաշվի է առել նաև պարբերականների հասարակական բովանդակությունը, հեղինակը փորձել է ներկայացնել, թեկուզ և համառոտակի, արևմտահայ թերթերի ու ամսագրերի գաղափարական դիրքորոշումը, ուղղությունը և այլն։ Այս պատճառով էլ աշխատության մեջ մամուլի իրավական կացությունը ներկայացվում է օսմանյան գրաքննության նպատակների ու գործելակերպի, ինչպես և արևմտահայ խմբագիրների ու հրապարակախոսների հասարակական հայացքների համադրումով։

Աշխատության ժամանակագրական սահմանները ընդգրկում են արևմտահայ մամուլի հասարակական զարգացման ուղենշային փուլերը՝ 1860 թ. սահմանադրությանը անմիջապես նախորդող ժամանակաշրջանից մինչև հայկական հարցի հարուցման, դրան հետևած համիդյան «զուլումի» քաղաքականության ծավալման և ապա վախճանի ժամանակը (1908)։ Այն համընկնում է Օսմանյան Թուրքիայում մամուլի իրավական վիճակի կարգավորման առաջին փորձերի (1857) և երկրորդ քաղական հեղաշրջման միջև ընկած ժամանակաշրջանին։ 1857—1908 թթ. օսմանյան գրաքննությունը ներկայացնում է պարբերական մամուլի, մասնավորապես հայ մամուլի ազատությունը կաշկանդող, ոստիկանական բռնությունների աստիճանական ուժեղացման մի շարունակական ընթացք, որը կասեցվեց համիդյան բռնապետության տապալումով։ Դրանից հետո երիտթուրքերը մշակեցին ու կիրառեցին գրաքննական բռնությունների մի նոր համակարգ, որի ուսումնասիրությունն արդեն չի մտնում այս աշխատության նպատակների մեջ։

ՄԱՄՈՒԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԻԶՐԸ

1. Կ. ՊՈԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ԱՆԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ

Օսմանյան Թուրքիայում մամուլի գրաքննության սկիզբը կապվում է երկրում պարբերական հրատարակությունների հասարակական բովանդակության զարգացման հետ: Գրաքննությունը նշանակում էր մամուլի պարունակած գաղափարների և ուղղության վերահսկողության իրականացում պետության կողմից, պետական-պաշտոնական գաղափարախոսության պարտադրում մամուլին, որ պետք է իրագործվեր նրա գործունեության իրավական կարգավորման միջոցով: Տպագրության, գրքի և մամուլի իրավական վերահսկողության սկիզբը Թուրքիայում դրվեց Թանզիմաթի ռեֆորմներով: Նախապես հաստատվեց գրքի գրաքննություն (1857): Այս բնագավառում Բ. դուան փորձերը՝ նախապես անհետևողական և վարանոտ, կրկնվել են մի տեղական ժամանակաշրջան, մոտ մեկ և կես տասնամյակ, մինչև ստացել են իրենց վավերացումը: 1841 թ. հուլիսի 4-ի իրադեով հայտնվում էր, որ գիրք կարելի է հրատարակել միայն կառավարության թույլտվությամբ: Տպագրական գործի պետական վերահսկողությունը հետամտում էր օրինապատշաճ հունի մեջ դնել կայսրության ժողովուրդների գրատպությունը, մասնավորապես՝ եվրոպական լեզուներով գրքերի հրատարակությունը: Զգտելով գրատպության որոշակի ստատուսի հաստատմանը, Բ. դուռը 1840—1850-ական թթ. ցանկանում էր դիմակայել եվրոպական տերությունների ֆինանսատնտեսական ճնշմանը ուղեկցող գաղափարական արշավանքին, որ կոչված էր հիմնավորելու կայսրության տնտեսական ու քաղաքական կախվածությունը Արևմուտքից: 1849 թ. հունիսի 18-ին Բ. դուռը տերություններին ուղղած հուշագրով իր բացասական վերաբերմունքը հայտնեց Օսմանյան կայսրության մեջ կրոնական գրքերի տպագրության անարգել, ոչ մի բանով չսահմանափակված

հնարավորությունների նկատմամբ: Հայտնվում էր, որ գրքերի, ինչպես և թերթերի հրատարակության համար պետք է ստանալ իշխանությունների համաձայնությունը: Օտարահպատակի գերազանցությունը թուրքահպատակի նկատմամբ՝ դրսևորվում էր նաև իրավական բնագավառում²: Այս պատճառով հարցի լուծումը շարունակ ձգձգվում էր, որովհետև օտարերկրացիները շրջանցում էին կառավարության որոշումները՝ վկայակոչելով իրենց իրավունքները: 1852 թ. ապրիլի 28-ին կառավարությունը կրկին դիմեց դեսպաններին՝ օտարահպատակներին առանց թույլտվության գիրք կամ գրքույկ տպագրելն արգելելու պահանջով: Այս առթիվ «Նոյյան աղավնին» հայտնում էր. «Ուստի որոշվեցավ, որ օտարականաց տպագրատուները տաճկերեն լեզվով ուրիշ գիրք կամ տետրակ չտպվի, բացի անոնցմե, որոց տպագրիլը թույլատրված է և օտար լեզուներով տպվող գիրքերուն համար ալ տպագրիլը հառաջագույն Բարձրագույն դռնեն հրաման ստանա»³:

Այս որոշումը ևս որևէ ազդեցություն չունեցավ օտար հրատարակիչների ու տպարանատերերի վրա, իսկ նրանց ազատությունը սահմանափակելուն ուղղված Բ. դռան շարունակվող փորձերը ընդհատվեցին Ղրիմի պատերազմի (1853—1856) պատճառով, որից հետո կայսրությունը ավելի մեծ շահերի տնտեսական ու քաղաքական կախման մեջ ընկավ տերություններից⁴: Այսուհանդերձ, կառավարությունը առաջնակարգ էր համարում տպագրության վերահսկողության գործը. այս ուղղությամբ կարևոր քայլ էր 1857 թ. փետրվարին ընդունված «Տպարանների վերաբերյալ օրենքը», որը Բ. դուռը հաջողությամբ հակադրեց օտար հպատակների իրավական արտոնությանը: Այն պարտադիր էր համարում կայսրության սահմաններում օտար լեզվով հրատարակությունների համար տեղական իշխանության թույլտվությունը, ինչպես և պատիժներ էր սահմանում ընդդեմ այն անձանց, որոնք առանց թույլտվության կփորձեին տպարան բանալ կամ տպագրել տերության շահերին վնասակար գրքեր կամ այլ հրատարակություններ⁵:

Օրենքը գրքերի համար սահմանում էր նախնական գրաքննություն:

Տպարանների վերաբերյալ օրենքից առաջ հայերեն գրքերի տպագրության թույլտվությունը կախում է ունեցել պատրիարքից: Գրքերը տպագրվում էին «հրամանավ... պատրիարքին» վերտառությամբ, որ փաստորեն գրաքննչական ֆունկցիաներ է վերապահել արևմտահայ կրոնական սյուզերենին: 1850-ական թթ. պատրիարքը իր այդ դերը իրականացրել է հոգևոր ժողովի միջոցով: Գր. Օտյանը 1864 թ. նեպտեմբերին հիշատակելով Ն. Ռուսինյանի «Ուղղախոսության» դեմ արև-

մտահայ հետադիմության հալածանքները, գրում է. «Ասկե տասներկու տարի առաջ... «Ուղղախոսությունը» իբրև հերետիկոսություն պիտի պատժվեր և քիչ մնաց, որ վարչության ուժը բավեր՝ գիրքը տպող տպարանը գոցվեր և տպագրիչը բանտարկվեր»⁶:

Խ. Պարտիզպանյանին ուղղած՝ 1855 թ. փետրվարի 22-ի թվակիր նամակում ևս Օտյանը ցույց էր տալիս նույն ժողովի իրականացրած գրաքննությունը. «Հոգևոր ժողովը խոստմանագիր կպահանջե բոլոր ազգային տպարաններեն, որով ալ պիտի չկրնան ինչևիցե... գիրք, տետրակ, հոդված և այլն տպել՝ առանց հավանության այս նոր սրբաքննության ատյանին»⁷:

Պետք է կարծել, որ պատրիարքի և հոգևոր ժողովի գրաքննչական ձեռնարկները հազիվ թե հղացված լինեին պատրիարքարանի պատերի ներսում: Տպագրական գործը կղերի ձեռքին կենտրոնացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների համադրումը Բ. դուռն՝ նույն ժամանակաշրջանի վերոհիշյալ տնօրինություններին, ցույց է տալիս, որ կառավարությունը տպագրության գործը կայսրության մասշտաբներով կարգավորելուց առաջ նույն ոգով հրահանգներ պետք է տված լիներ համայնքների հոգևոր գլուխներին:

Տպարանների մասին օրենքով պարբերական հրատարակությունների համար նախնական գրաքննություն չէր հաստատվում, ակներևաբար, թուրքական կառավարությունը պարբերական մամուլը դեռևս չէր համարում որակական ինքնուրույնություն ունեցող գաղափարախոսական ամբիոն և այդ ոչ միայն բուն թուրքական մամուլի զուտ պաշտոնական լինելու (մասնավոր թուրքական մամուլ դեռևս չկար), այլև այն պատճառով, որ պարբերական հրատարակությունները դուրս էին մնում նրա քաղաքական-գաղափարական մտահոգությունների տեսադաշտից:

1850-ական թթ. Թուրքիայում մամուլն ապրում էր իր կազմավորման շրջանը: Ըստ «Նոյյան աղավնու», 1852 թ. ամբողջ երկրում տպագրվում էր ընդամենը 34 պարբերական, որից 13-ը՝ Կ. Պոլսում, 5-ը՝ Զմյուռնիայում, 3-ը՝ Եգիպտոսում, 8-ը՝ Սերբիայում, 4-ը՝ Մոլդավիայում և Վալախիայում, 1-ը՝ Նիկոմիդիայում: Քանակով առաջին տեղը գրավում էին ֆրանսերեն, ապա հայերեն (5) պարբերականները. 4-ական թերթեր ունեին թուրքերը, հույները և սերբերը⁸:

Ստ. Ոսկանյանի «Արևելքում» տպագրված մի ցանկից երևում է, որ 1850-ականի երկրորդ կեսին Կ. Պոլսում լույս էին տեսնում նաև երկու հայատառ թուրքերեն թերթեր, որոնք նախատեսված էին թուրքախոս հայ հատվածների համար («Մեճմուայը հավատիս» և «Ախապիրը

Քոնսթանթինի»)), որոնք կապ չեն ունեցել թուրքական ժուռնալիստիկայի հետ⁹։ Այս նույն շրջանից հայտնի են երկու թուրքական թերթեր՝ «Թագվիմ-ի վազային» և «Ջերիդե-ի հավադիսը»¹⁰։ Առաջինը պաշտոնաթերթ էր, իսկ երկրորդը հրատարակվում էր սուլթանական իրադեմով¹¹, ինչը բացառում էր և՛ մեկի, և՛ մյուսի անբարեհուսությունը։ Այս պայմաններում Բ. դռան համար անցանկալի գաղափարներ (կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության քննադատություն, քաղաքական իմաստով անընդունելի կրոնա-դավանական խնդիրների արծարծում և այլն) կարող էին արտահայտել միայն արտասահմանցիների հրատարակությունները, ուստի վերոհիշյալ օրենքը նախատեսում էր, որ օտարահայտակները չեն կարող տպարան հիմնել և թերթեր հրատարակել առանց արտաքին գործերի տեսչության թույլտվության¹²։

Տպարանների վերաբերյալ օրենքից հետո, 1858 թ. հրատարակված քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը տարածվում էր նաև մեղանշած պարբերականների վրա՝ սահմանելով որոշակի պատժաչափ. նշվում էր. «Ով որ կայսերական կառավարության հրամանով բացված տպարանի մը մեջ օսմանյան տերություն շահույցը վնասակար, կառավարության անդամոց կամ վեհ. կայսեր հպատակ ազգի մը դեմ լրագիր կամ գիրք կամ ուրիշ գրվածներ հրատարակե՝ տասնեն հիսուն մեծիտիե ոսկի տուգանքով կ'պատժվի։ Միանգամայն տպած բաներն ալ կգրավվին և տպարանն ալ հանցանքին ծանրությանը համեմատ՝ առժամանակյա կերպով կամ մշտնջենապես կ'զոցվի»¹³։

Հոդվածը ցույց է տալիս, որ կառավարությունը պարբերական մամուլը դեռևս չէր առանձնացնում գրատպությունից և հրատարակչական գործից։ Մեղանշած պարբերականի հետ միասին պետք է պատժվեր տպարանը։ 1860-ականին, սակայն, իշխանությունների թույլտվությամբ տպարանների իրավական դրությունը որոշ փոփոխություններ է կրել. տպարանները արդեն պատասխանատու չէին իրենց տպագրած պարբերականների բովանդակության համար։ Այսպես, Կ. Պոլսի «Մեղվի» և Զմյուռնիայի «Մաղիկի» վերջին էջերում նշվում էր. «Տպարանը պատասխանատու չէ հանդիսի պարունակության համար»։

Մինչև մամուլի վերաբերյալ օրենքի հաստատումը (1864), իշխանությունները իրենց հայեցողյամբ են տնօրինել պարբերականների խմբագիր-հրատարակիչների գործունեությունը։ 1840—1850-ական թթ. թուրքերեն և հայատալ լեզուներով թերթերը հրատարակվում էին լուսավորության տեսչի և մեծ վեզիրի թույլտվությամբ՝ սուլ-

թանական ֆերմանով: Ֆերմանը, սակայն, չի ապահովել թերթի հրատարակության կայուն իրավունքները կամ նրա անկախությունը: այն-ստակ հրատարակության իրավունք է ընձեռել¹⁴: Գավառներում հրատարակության թուլլտվությունը տալիս էր վալին՝ լուսավորության տեսչության հաստատումով: 1857 թ. տպարանների վերաբերյալ օրենքը լրացվեց նույն տարվա սեպտեմբերի հրահանգով, որը արգելում էր առանց դատաքննության ատյանի արտոնության տպագրել որևէ պարբերական¹⁵:

1862 թ. հիմնվեց տպագրական դիվան, որի առաջին տեսուչն էր Հովհաննես Սազրզը (կաթոլիկ հայ): 1862—1868 թթ. տպագրական դիվանը նախ գտնվում էր լուսավորության մինիստրության, այնուհետև՝ արտաքին գործերի մինիստրության իրավասության ներքո¹⁶: Մամուլի գործը վերջինիս հանձնելը բացատրվում է օտարահպատակների մամուլը հսկելուն ուղղված՝ Բ. դռան ցանկությամբ, ինչպես և ընդհանրապես պարբերականների վերահսկողությունը կենտրոնացնելու միտումով:

Ի սկզբանե Թուրքիայում իշխանությունները խիստ դժվարացրել են գավառներում պարբերականներ հրատարակելու գործը: Այս խմաստով հատկանշական է «Մաղիկի» (1861—1867) նկատմամբ թուրքական իշխանությունների վերաբերմունքը: Դեռ հրատարակությունից առաջ Գր. Զիլինկիրյանին (խմբագիր) տրվեց հանդեսը Կ. Պոլսում հրատարակելու արտոնություն, բայց այն սկսեց հրատարակվել Զմյուռնիայում: Միայն 1863 թ.՝ նրա հրատարակությունից երկու տարի անց, Գր. Զիլինկիրյանը կարողացավ «Մաղիկի» արտոնագիրը փոխադրել Զմյուռնիա¹⁷: Կ. Պոլսում ևս դժվարությամբ է տրվել պարբերականի հրատարակության թուլլտվություն. «Ժամանակի» խմբագիր Ստ. Փափազյանը այս առթիվ գրում էր. «Նոր հանդես կամ օրագիր հրատարակելու արտոնություն չկա, կամ թե առնելը խիստ դժվարին է: Ասոր փորձը մեզմե ետև շատերն ըրին»¹⁸:

Նշված դժվարությունը շատ ավելի հեշտությամբ էին հաղթահարում եվրոպացի խմբագիր-հրատարակիչները: 1863 թ. հունվարին արտոնություն չունենալու համար խափանված «Կորեսպոնդենս դ'Օրիան» թերթը թուլլտվությունը ձեռք բերեց ընդամենը մեկ-երկու շաբաթվա ընթացքում և վերահրատարակվեց¹⁹:

Եթե նկատի առնենք, որ 1840—1850-ական թթ. տպագրվող երկու թուրքերեն թերթերը հրատարակվել են կառավարության հաճությամբ և երկրում լույս տեսնող եվրոպական մամուլը վայելել է որոշակի առանձ-

նաշնորհումներ, ապա ակնհայտ է դառնում, որ առավել ճնշված վիճակում եղել են ոչ մահամեղականների, այդ թվում և արևմտահայերի հրատարակությունները: Մամուլի գործունեությունը այս շրջանում սահմանափակվել է գրավոր հրահանգների ուժով: 1861 թ. հոկտեմբերին վերաբաշխված «Մեղուն» նշում էր, որ վերահրատարակման թույլտվություն արտոնող պաշտոնական գրության համաձայն մայրաքաղաքում տպագրվող բոլոր պարբերականներին հրահանգվել է առհասարակ չքննարկել ազգային գործերի վիճակը²⁰:

Հրահանգներ են տրվել նաև որևէ կոնկրետ հարցի վերաբերյալ: 1861 թ. նոյեմբերին իշխանությունները «Մեղվին» արգելեցին տպագրել Նիկոմիդիայի կղերին քննադատող նամակները²¹: Ուշագրավ է 1863 թ. հունվարի 31-ին մամուլին ուղղված մի պաշտոնական ազդր. այստեղ արգելվում են այնպիսի բանավեճերը, «որոնք լրագրության վրա հաստատված կանոնադրության սահմաններուն մեջ ճառվելիք ընդհանուր շահուն վերաբերյալ խնդիրներու համար չըլլալով՝ անձնականին հետ առանձնական մասնավոր իրողություններու կվերաբերեն»²²:

Ի՞նչ «կանոնադրության» մասին է խոսքը: Պարզվում է, որ այդպիսին, և բավական խիստ բնույթի, գործել է մինչև 1864 թ. մամուլի օրենքը: «Մեղվի»՝ Նիկոմիդիայից ստացված հակակղերական նամակների տպագրությունը արգելիլու մասին խոսելիս Հ. Սվաճյանը բացատրում է, որ «Նոր ազդարարություն մը չընդունելու պատճառով զանց կընենք առայժմ նաև Նիկոմիդիո առաջնորդության ընդհանուր վիճակին վրայոք գրելիքնիս»²³: Հ. Սվաճյանը խուսափում էր նոր ազդարարությունից այն պատճառով, որովհետև պարբերականները ենթարկվում էին որոշակի կանոնի՝ մեկ տարվա ընթացքում երեք նախազգուշացում (ազդարարություն) ստացած պարբերականները ենթակա էին խափանման: Իշխանությունները, սակայն, կարող էին կրճատել նախազգուշացումների թիվը. 1863 թ. մարտին միայն մեկ անգամ նախազգուշացում ստանալուց հետո այս կերպ խափանվեց «Մեղուն»: Նույնիսկ «Մեղվի» նկատմամբ անաշու վերաբերմունքից շատ հեռու «Արշալույս արարապան» էր նկատում այդ պատժի արտաքո կարգի խստությունը, նշելով, որ ըստ օրինի պարբերականները խափանվում են այն ժամանակ, երբ մեկ տարվա մեջ երեք անգամ նախազգուշացում են ստանում:

Մամուլի հանդեպ բռնությունների մշտական փաստերի մասին էր ակնարկում նաև Կ. Պոլսի «Կուրիեր դ'Օրիեն» ֆրանսերեն թերթը: Քրոնիկարկելով 1864 թ. դեկտեմբերի մամուլի օրենքը, այդ թերթը գրում էր, թե «...Լրագիրներն, որ մինչև ցարդ կապված էին, այսուհետև ալ վար-

դե անկողնի մը վրա պառկած չպիտի ըլլան»²⁴։ Նույն օրենքի հրապարակման առթիվ «Մասիսը» ևս դժգոհությամբ էր արտահայտվում մինչ այդ տիրող գրաքննական բարքերի մասին, հիշելով «մինչև ցարդ լրագրության վրա դրված խիստ կանոնաց առկայութունը»²⁵։

Ասվածը թույլ է տալիս եզրակացնելու հետևյալը. մինչև 1864 թ. դեկտեմբերի մամուլի օրենքը Թուրքիայում կիրառվել են տպագրական կանոններ՝ մամուլի համար։ Մ. Դադյանը հիշատակում է այդ կանոնները՝ առանց, սակայն, գնահատելու կամ վերարտադրելու դրանց բովանդակությունը²⁶։ Այնուհետև, մամուլը ոչ մի բանով ապահովված չի եղել իշխանությունների կամայականություններից, որոնք ցանկացած դեպքում կիրառել են նախնական գրաքննություն, ընդամին, ուշագրությունամբ հետևելով հայ մամուլի հրապարակումներին։ 1857 թ. հոկտեմբերին Ա. Հայկունին ոչ առանց ազգային հետադիմության սադրանքների, դժվարությամբ կարողացավ իրականացնել «Մուսայթ Մասյացի» հրատարակությունը։ Այլ՝ պարբերականը ենթարկվել է հետապաշտական գրաքննության. նրա 2-րդ համարը հրատարակվել է առաջինից մեկ ամիս անց։ Խմբագիրը բացատրում է, որ «Շաբաթաթերթին մեջ պարունակած նյութը երեք-չորս շաբաթն է վեր քննության տակ ըլլալով՝ ստիպվեցանք անոր հրատարակումը քանի մը շաբաթ դադրեցնել»²⁷։

Զմյուռնիայում իշխանությունները նախնական գրաքննություն էին սահմանել «Մաղիկի» նկատմամբ, հատկապես այն ժամանակ, երբ պահպանողական ազգային վերնախավը նշել է նրա անբարեհուսությունը։ «Մասիսը» «Կուրիեր դ'Օրիենտից» արտատպել է այդ պարբերականի դեմ կիրառվող բռնությունները բացահայտող թղթակցություն։ «Զեմ գիտեր,—գրում է հեղինակը,—թե Պողոս էֆենտին (գրաքննիչը—Ա. Խ.) հասարակության համբերությունը հատցնել կուզե։ Դաստիարակության վերաբերյալ նախնական գրվածներ երկար ժամանակ քովը կպահե՞ քննելու, նայելու համար, որ բարոյականի հակառակ բան մը չպարունակեն։ Ըսողներ կան ընդ կատակս, թե ասանկ երթա նե՛՝ քերականության մեջն «սիրել» բայը պիտի ավրե, «ընդունիլ» բայը պիտի պահե, և «հատուցանել» բայը պիտի արտաքսե։ Քանի մ'օրենս ի վեր զայրագին բռնություն մը կբանեցնե «Մաղիկ» անուն հայ լրագրին դեմ... «Մաղիկի» խմբագիրը Վիկթոր Հյուկոյի ընտիր տաղերեն մեկը հայերենն ոտանավորի թալգմանած ըլլալով՝ Պողոս էֆենտին զանի պատժելու համար «Մաղիկը» քանի մ'օր կդադրեցնե։ Սակայն Պողոս էֆենտին հայ է և եթե իր մայրենի լեզվին տգետ է, այս բանիս համար զայն հալածելն արդարություն չէ։ Կարծեմ թե «Մաղիկի» վերջին թիվը կամար-

թիւի «Հուսահատութիւն» անուն տաղին մեկ թարգմանութիւնն պիտի հրատարակեր, բայց Պողոս էֆենտին զայն ալ արգելով ուզեր է իր ճարտար թարգմանչին ղրկելով զայն գլխատյալ և հոշոտյալ»²⁸:

Նամակը ցույց է տալիս, որ Զմյուռնիայում գրաքննութիւնն իրականացրել է վալիին ենթակա գրաքննիչը, որին տրված են եղել լայն լիազօրութիւններ, ընդհուպ մինչև պարբերականի խափանումը: Պարբերական հրատարակութիւնները Զմյուռնիայում վերահսկում էր վալիին կից դիվանը: Իրողութիւնները ցույց են տալիս, որ մինչև 1864 թ. լրագրական օրենքը, թուրքական իշխանութիւնները հսկել են մանաւանդ այն պարբերականները, որոնք ունեցել են առաջադիմական բովանդակութիւն: Զմյուռնիայի պահպանողական «Արշալույս արարատյանի» վրա, օրինակ, այդպիսի գրաքննութեան մասին խոսք անգամ չէր կարող լինել:

Մամուլի թուրք պատմաբանները՝ Ս. Իսկիթը, Օ. Էրսուլը, Հ. Էրթուղը, Ն. Բանօղլուն և ուրիշներ, Թուրքիայում մամուլի գրաքննութեան պատմութիւնը փաստորեն սկսում են 1864 թ. լրագրական օրենքից՝ որդ տեղեկութիւններ հայտնելով մինչ այդ տիրող գրաքննական բարքերի մասին: Հ. Էրթուղը նշում է, որ թուրքական կառավարութիւնը շարունակ մաստում էր պարբերականներին՝ տեղականորեն խափանելով գրքւնք²⁹, Ս. Իսկիթը ևս գրում է, որ թուրք մամուլը իր սկզբնավորումից մինչև սահմանադրական շրջանը զրկված էր ազատութիւնից և ենթարկվում էր գրաքննական սպառնալիքների³⁰: Մամուլի խափանումները իրականացվում էին ոստիկանութեան միջոցով, որի գործողութիւնները չէին կարող բողոքարկվել: 1864 թ. լրագրական օրենքը, այսպիսով, պետք է հայտնվեր իբրև նախորդ տասնամյակներին քաղաքացիութիւն ստացած՝ մամուլի ոտնահարված վիճակի իրավական ձեւակերպում:

Այսուհանդերձ, օսմանյան գրաքննութեան գործունեութիւնը առավել ամբողջականորեն և բազմակողմանիորեն սկսել է ծավալվել 60-ական թվականներից: Բռնութիւնների և անսանձ քահանայութեան իր մեթոդներն այդ գրաքննութիւնը տարածել է նաև թուրքական մասնավոր մամուլի, ապա «նոր օսմանների» հրատարակութիւնների վրա: Այս հանգամանքը պայմանավորված էր Օսմանյան Թուրքիայի ժողովուրդների հասարակական մտքի, մամուլի զարգացման տարբեր պայմաններով: 1850—1860-ական թթ. արևմտահայ հասարակական մտքի զարգացման բուն պրոցեսը, սահմանադրական պայքարի ծավալումը և հասարակական ուղղութիւնների հստակ տարորոշումը իրենց համապատասխան պարբերականներով՝ նշանավորում էին հայ մամուլի ու

Հրապարակախոսության զարգացման նոր փուլը: Դրան համապատասխան, առավել ակտիվ է դառնում թուրքական գրաքննության վերաբերմունքը արևմտահայ մամուլի նկատմամբ: Ազգային ինքնորոշման տրամադրությունների դրսևորումները մամուլում խիստ տագնապ էին պատճառում թուրքական իշխանություններին: Գրաքննությունը կոչված էր այս պայմաններում արգելակել հայ մամուլի ազգային բովանդակության առաջավոր միտումների զարգացումը: Ամբողջ 1860-ականին, թվում է, իշխանությունները անտարբեր պետք է լինեին հայ պարբերականների միջև ծավալված սահմանադրական պայքարի, զուտ հայկական համայնքի ներքին գերծնրով զբաղված թերթերի և հանդեսների բանավեճերի նկատմամբ: Իրականում գրաքննական մարմինները ուշադրությամբ հետևում էին հայ մամուլի գաղափարական զարգացմանը՝ ձեռնարկով հավասարակշռություն պահպանել արևմտահայ հասարակության կրոնական կազմակերպության և նրա հասարակական ազդեցության դեմ պայքար մղող աշխարհիկ առաջադիմական մտայնության միջև: Եվ երբ պահպանողականության դեմ մղվող պայքարում մամուլը սկսում էր ցուցաբերել ազգային ինքնորոշման, Թուրքիայի ֆեոդալական կարգերի ու հարաբերությունների դեմ ուղղված քննադատական վերաբերմունք, գրաքննությունը անմիջապես անցնում էր պահպանողականության կողմը՝ խախտելով իր նախապես սահմանած այդ հավասարակշռությունը: Արևմտահայ առաջադիմական, դեմոկրատական մամուլի պատմությունը անհնարին է պատկերացնել առանց այն խուսանավումների ու պայքարի, որ նա ստիպված էր մղել գրաքննության՝ ազատ խոսքը ընկճող այդ կազմակերպության դեմ: Ազատ մամուլի համար արևմտահայ առաջադիմական հրապարակախոսների այդպիսի կողմնորոշումը սնուցվել է ազատագրական շարժման գաղափարախոսությունից և սկիզբ է առել 1860-ական թթ.՝ սահմանադրության, ազգային ինքնագիտակցության խորացման համար մղվող պայքարի նոր փուլում: Այս փուլը համընկնում է օսմանյան գրաքննական ռեժիմի ձևավորմանը, որն իրավական ամրագրում ստացավ 1864 թ. դեկտեմբերի մամուլի օրենքով և դրան հետևած՝ 1867 թ. մարտի «ժամանակավոր որոշմամբ»:

Արևմտահայ մամուլի և հրապարակախոսության զարգացումը կապվում է 1850—1860-ական թթ. ազգային զարթոնքի, համայնքի ներսում դեմոկրատական խավերի ծավալած շարժումների հետ: Հայտ-

նի է, որ սահմանադրությունը, իբրև արևմտահայ համայնքի վարչական նոր կանոնադրություն, սահմանափակում էր սեղանավոր-ամիրաների և եկեղեցու գլխավորների վարչական ու հասարակական իրավունքները: Ամիրաների կամքն ու իշխանությունը փոխարինվեց երեսփոխանական ժողովով, որ կազմված էր կրոնական ու քաղաքական ժողովներից: Կանոնադրությունը ամրապնդում էր տնտեսական բավարար ուժ և դրան համապատասխան հասարակական ազդեցություն ձեռք բերած պոլսահայ բուրժուազիայի իշխանությունը համայնքի ներսում: Ղրիմի պատերազմից հետո ամիրայությունը կորցրել էր թուրքական պետությանը ֆինանսավորելու իր երբեմնի կարողությունները: Ոչ միայն նա, այլև Բերայի բազմազգ սեղանավորական հայրուստ դասը չէր կարող հավակնել մրցակցելու սուլթանի պարտատուի դերը ստանձնած ֆրանսիական և անգլիական կապիտալների հետ: Այս հանգամանքը, իր հերթին, արագացրեց ամիրայության կրախը արևմտահայ կյանքում: Առևտրական բուրժուազիայի հետ միասին արևմտահայ Ազգային վարչության մեջ տնօրինող ուժ դարձավ նաև էֆենդիական վերնաշերտը: Զբաղված լինելով թուրքական պաշտոնական ծառայության մեջ, այդ դասը բազմաճյուղ կապեր էր հաստատել փաշաների և պաշտոնական հիերարխիայի տարբեր օղակների հետ՝ դրանք ծառայեցնելով համայնքում ունեցած իր ազդեցությանը: Սահմանադրության ամբողջ պատմության ընթացքում, նաև այն տեական ժամանակահատվածներում, երբ այն չի գործել, էֆենդիական դասը պահպանել է գերադաս դիրք արևմտահայ համայնքում:

Սահմանադրության արժեքը պետք է գնահատել բացառապես հայ հանրության սահմաններում կատարված սոցիալական ու հասարակական փոփոխությունների տեսանկյունից: Այն չի վերացրել ո՛չ արևմտահայերի քաղաքացիական իրավագրկությունը, ո՛չ էլ նրանց անգուսպ շահագործումը հարստահարիչների կողմից: Ընդհակառակն, համայնքի սոցիալ-քաղաքական ու տնտեսական կացությունը վատթար է դարձել հենց XIX դ. երկրորդ կեսից, երբ օսմանյան կառավարողները ոտք դրեցին ժողովրդի տնտեսական քայքայման, տեղահանումների և վերջապես, բնաջնջման պետականորեն ծրագրված քաղաքականության ուղին: Սահմանադրությունից և՛ առաջ, և՛ հետո արևմտահայ հանրության ու սուլթանի միջև իբրև միջնորդ ճանաչվել է պատրիարքը: Բ. դուռը ամենևին չի մտահոգվել Արևմտահայաստանում սահմանադրության գործադրման համար. հարստահարությունները շարունակվել են անկախ այն բանից, թե ինչպիսի կազմակերպություն ունեւր հայ հանրություն-

նր: Մ. Ռուկեն-Ժեկմենը սահմանադրության քաղաքական անլիբերալությանը բացահայտում է հենց նրա իրավական երաշխիքների բացակայության տեսակետից: Այդ ակտը, գրում էր նա, «բացառում էր այնպիսի տնօրինում, որը նրա (հայի—Ա. Խ.) համար իսկապես երաշխիք լիներ ընդդեմ թուրքական կառավարության կամայականության և վերջինիս մղեր գործողության: Այլ կերպ ասած, ոչ մի տեղ հնարավոր չէ տեսնել՝ ոչ ազգի կոլեկտիվ իրավունքների, և ոչ էլ նրա առանձին անհատների անհատական իրավունքների որևէ լուրջ երաշխիք»³¹:

Անհատի և հանրության կոլեկտիվ իրավունքների հետագա ուղնաշարմանը ձգտելիս՝ թուրքական կառավարողները 1850—1870-ական թթ. ենում էին օսմանիզմի գաղափարախոսությունից: Այն ենթադրում էր կայսրության բոլոր ժողովուրդների ձուլումը մահմեդական զանգվածի մեջ: 1830 և 1850 թթ. Բ. դուռն արգեն ճանաչել էր արևմտահայ կաթոլիկ և բողոքական համայնքները՝ շնորհելով նրանց առանձին կրոնական հանրության ստատուս³², Հաստատելով կրոնական նոր միլիթներ (հայ հարանվանությունները, հույն և բուլղար ունիատները և այլն), Բ. դուռը փորձում էր կանխել սեպարատիստական շարժումները կայսրության ժողովուրդների մեջ և կոտորակելով թուլացնել ավանդական կրոնական համայնքները³³, Ղրիմի պատերազմից հետո, 1856 թ. կառավարությունը բռնեց լուսավորչական համայնքի մեջ կրոնական սկիզբը խախտելու և եկեղեցու ազդեցությունը թուլացնելու ուղին³⁴: Զուլման իր նպատակների խոշորագույն օսմանիզմը տեսնում էր հիմնականում եկեղեցու մեջ և դրա դեմ էր ուղղում իր միջոցառումները:

Միլիթների համակարգում ճեղքերի խորացումը խթանվում էր տերությունների քաղաքական ճնշման պայմաններում: Առաջնորդվելով իրենց գաղութային քաղաքականության շահերով, վերջիններս փորձում էին ուժեղացնել կաթոլիկ և բողոքական հանրությունները՝ իբրև քաղաքական հենակետերի: Այս իմաստով արևմտահայերի ազգային սահմանադրությունը իր աշխարհիկ բովանդակությամբ չէր հակասում ոչ Բ. դուռն, և ոչ էլ տերությունների հեռահար մտադրություններին:

Հետևանքը, սակայն, չէր կարող գոհացնել օսմանիզմի ջատագովներին: Աշխարհիկ սկզբի ուժեղացումը արևմտահայ համայնքում, որ մի հայտնի չափով խթանվում էր սոցիալական ու հասարակական հակասությունների խորացումից, թեև սասանեց կղերի ազդեցությունը, սակայն իր հերթին նպաստեց ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացմանը³⁵: Ազգայնության գաղափարը դարձավ արևմտահայ առաջավոր գաղափարների առանցքը և ընկավ ձևավորվող ու զարգացող

հայ հասարակական հոսանքների հայեցողությունների հիմքում: Ազգային միասնության գաղափարախոսությունը զարգանում էր օսմանիզմի ջատագովների համար արդեն անսպասելի ու միանգամայն անցանկալի հունով՝ հետամտելով արևմտահայերի կրոնադավանական պառակտումների վերացումը և նրանց համախմբումը ազգայնության դրոշի ներքո: Ազգային ինքնորոշման տրամադրությունները հասցրին նրան, որ սահմանադրության շուրջ բախվող բուրժուական և մանրբուրժուական դեմոկրատական հոսանքները այդ սահմանադրությանը (իրականում՝ համայնքի կանոնադրությանը) տվեցին անհամեմատ ավելի լայն մեկնաբանություն, քան նրա իրական արժեքն էր. իրավական այդ ակտի կիրառման հետ նրանք կապակցեցին ոչ միայն զուտ վարչական, այլև սոցիալական ու ազգային-քաղաքական պահանջներ: 1862 թ. Զեյթունի հերոսական ինքնապաշտպանությունը ղեմկրատ-սահմանադրականների սպասելիքներին հաղորդեց գործնական տրամադրություններ՝ խորացնելով նրանց ազգային ինքնորոշման ձգտումները:

Այս պայմաններում Բ. դուռը վերանայեց իր բիրքորոշումը արևմտահայերի սահմանադրության նկատմամբ՝ հակվելով դեպի կրոնական համայնքի ավանդական ձևի որոշ ամրապնդում, որն արտահայտվեց 1863 թ. սահմանադրության մեջ պատրիարքական իշխանության ընդլայնման ձևով: Գ. Օտյանը նկատում էր, որ 1860 թ. սահմանադրությունը խմբագրելու ժամանակաշրջանում «Բ. դուռը դժկամություն ուներ պատրիարքեն զատ ուրիշ մեկը գործադիր իշխանություն ճանչելու»³⁶:

Նույն կերպ, 1867 թ. Ֆուատ փաշան ընդդիմացել էր հայ սահմանադրականների փորձերին՝ ընդլայնելու Ազգային ժողովի դերը սահմանադրության խմբագրված տեքստի մեջ³⁷: Օսմանիզմի ջատագովները նախընտրում էին միլեթների աշխարհիկ իրավասությունների ոչ թե ընդառնակումը, այլ սահմանափակումը:

Հենց սահմանադրական պայքարի ժամանակաշրջանում արևմտահայերի ազգային ինքնագիտակցության վերելքը տազնապ էր պատճառում օսմանիզմը իրացնողներից Ֆուատ փաշային: Իր քաղաքական կտակում նա գրում էր. «Հայերը, մասնավորապես, թշնամական կերպարանք մը առնել սկսած են: Հարկ է չափավորել իրենց եռանդը՝ ասպարեզ տալով միայն անոնց, որոնք անկեղծորեն ընդունած են մեր կայսրության ձուլման սկզբունքները»³⁸:

Իբրև այդ տրամադրությունների հաստատում, սահմանադրությունը կառավարության կողմից դադարեցվեց 1861 թ., ապա գործողության մեջ մտավ երկու տարի անց՝ 1863-ին, դարձյալ կասեցվելով 1866-ին և 1869 թ. վերագործարկվելուց հետո այն անխափան գործել է միայն 1870—1880-ական թթ.: Արդուլ Համիդի բռնապետության տարիներին, մասնավորապես 1896—1908 թթ. Ընդհանուր ժողով չի գումարվել, և սահմանադրությունը գործել է դուռն անվանապես:

Իր ամբողջ սահմանափակությամբ և գործողության նեղ շառավիղներով սահմանադրությունը լուրջ նշանակություն ունեցավ արևմտահայերի հասարակական կյանքի զարգացման, լուսավորության և մշակույթի տարածման գործում: 1850—1860-ական թթ. սահմանադրության շուրջ ծավալված բախումների ընթացքում ձևավորվեցին արևմտահայ հասարակական հոսանքները: Զարգացում ապրեց և հասարակական ազդեցություն ձեռք բերեց պարբերական մամուլը՝ իբրև նշված հոսանքների գաղափարների ու հասարակական կարծիքի արտահայտիչ: Առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ դեմոկրատական խավերի տրամադրություններն արտահայտող մամուլը, որը փաստորեն գործնական հունի մեջ դրեց ժողովրդական զանգվածների ձգտումները:

Դեմոկրատական հրապարակախոսության արմատական արտահայտիչն էր Հ. Սվաճյանի «Մեղու» պարբերականը, որը հետադիմության ու պահպանողականության դեմ մղած իր սկզբունքային պայքարով խորացրեց Ստ. Ոսկանյանի դեմոկրատական «Արևելքի» բաց արած հունը: Սահմանադրության մեջ Սվաճյանը ամենից առաջ արժեքավորում էր վարչական գործերը վարելու՝ ժողովրդի անկապտելի իրավունքի ձեռք բերումը: 1859 թ. նա գրում էր. «Ազգային մեծ խռովւթենե մետքը հասկցվեցավ, թե ժողովուրդը իշխանություն և իրավունք ունի ազգային կառավարության միջամուխ ըլլալու և իր ուզած ու արժան դատած անձը ազգին վրա իշխան կարգելու և թե կուրորեն ու վատաբար չհնազանդիր ինքնակոչ տերերու ու թող չտար, որ իր իրավունքը անոնց ոտքին տակ ճգմվի»³⁹:

Սվաճյանը չի բավարարվել սոսկ ներքնախավերի՝ վարչական գործերը վարելու իրավունքի գաղափարով: Վերջինս նրա հայեցողության մեջ սերտաճել է ազգային ինքնորոշման գաղափարի և զարգացման այս ընթացքն ըստ էության, բովանդակավորում է 60—70-ական թթ. արևմտահայ դեմոկրատական մտքի գաղափարական հասունացումը: 60-ական թթ. Հ. Սվաճյանը սահմանադրության մեջ որոնում էր այն երաշխիքները, որոնք հետագայում մտավոր ու նյութական առումով զորաց-

Շեկու էին ազգը և հող էին նախապատրաստելու ազատագրական պայքարի ծավալման համար։ Այն ուղեկցվելու էր առաջավոր լուսավորության տարածումով, կղերական գաղափարախոսության լուրջ վիճարկումով և ազգային ու սոցիալական իրականության սուր խնդիրների հարցադրումով։ Դեմոկրատական «Մեղուն», ինչպես և «Մյունատին» ու «Մադիկը» այս սլատճառով պետք է կրեին օսմանյան ու ազգային հետադիմության հալածանքն ու հետապնդումները։ Արևմտահայ դեմոկրատական մամուլն իր ինքնահաստատումը իրականացրել է երկու ուղղություններով՝ ընդդիմանալով կղերապաշտանողականությանը, մյուս կողմից՝ թուրքական բռնակալությանը։ Արդեն 1860 թ. այս ուղեգիծը պարզորոշ արտահայտվել է դեմոկրատական մամուլում, ուստի կղերապաշտանողականությունն ու լիբերալ բուրժուազիան կառավարության աշակցությամբ և խրախուսանքով առաջադիմական պարբերականներին դեմ իրենց հալածանքը սկսեցին գրաքննական սահմանափակումներով։ 1860 թ. սահմանադրության հաստատումից հետո անցնելով ազգային վարչության գլուխ, լիբերալների առաջին մտահոգություններից մեկը եղավ դեմոկրատական մամուլի քննադատությունը կանխելու։ Ամիրայության ու պատրիարքի միահեծանության դեմ օպոզիցիա կազմած լիբերալները, որոնք փաստարկում էին ժողովրդի բոլոր խավերի ու յուրաքանչյուր առանձին անհատի հավասար իրավունքների օգտին, չցանկացան հանդուրժել հասարակական կարգուկանոնի այլ մեկնաբանություն, քան իրենցը։ Պահպանողականներից ոչ պակաս եռանդով ներքանք պատվար էին որոնում դեմոկրատների «ծայրահեղությունների» դեմ։

Սահմանադրության կիրառման հենց սկզբից «Մեղուն» Ազգային վարչությանը տարամիտում էր մի քանի հիմնական հարցերում։ Նախ, խոսքը վերաբերում էր սահմանադրության համազգային բովանդակությանը։ Եթե լիբերալները, իբրև Կ. Պոլսի բուրժուազիայի գաղափարախոսներ, Ազգային վարչության հաստատումը դիտում էին իբրև ընդհանրապես արևմտահայերի հասարակական իրավունքների հաստատում, ապա դեմոկրատները ժխտում էին վարչության համազգային հավակնությունները։ 2. Սվաճյանի կարծիքով կարևորը գավառի իրավունքների ճանաչումն էր Ազգային վարչության ու նրա գործունեության մեջ։ Այս իմաստով բնութագրական են ոչ միայն նրա բազմաթիվ հոդվածները, որոնք նվիրված էին Արևմտահայաստանի և նրա ժողովրդի կյանքի լուսարանմանը, այլև բուն Ազգային վարչության գավառական գործունեությանը։ Սահմանադրության կիրառումից երեք ամիս անց

Սվաճյանն արդեն առաջարկում էր գալստական առաջնորդների ընտրության ու պաշտոնավարման ժամկետը կարգավորել որոշակի կանոններով, ինչպես և ստեղծել Ազգային վարչության մշտական հանձնաժողով, որի գործը պետք է լինի մոտիկից ծանոթանալ արևմտահայ զանգվածների կարիքներին և ներկայացնել վարչությանը: Ըստ էության, առաջարկը կոչված էր այս կամ այն շափով լրացնելու սահմանադրության այն խռրոթացը, որի հետևանքով անտեսվում էին Արևմտահայաստանի բնակչության իրավունքները սահմանադրական վարչության մեջ: (Հիշենք, որ ըստ 1860 թ. սահմանադրության, ընդհանուր ժողովի 220 երեսփոխաններից 160-ը ընտրվում էին Կ. Պոլսի թաղերից՝ շուրջ 250.000 բնակչից, իսկ մնացած 60-ը՝ Արևմտահայաստանից՝ շուրջ 2.600.000 բնակչից)⁴⁰: Դա վկայում էր պոլսահայ բուրժուազիայի առանձնաշնորհյալ դրության մասին: Այնուհետև, եթե լիբերալների համար սահմանադրության կիրառումը նշանակում էր ազգային իրականության մեջ վերափոխումների ավարտ, ապա Սվաճյանի համար այդ նույն իրողությունը հեղաբեկումների սկիզբն էր միայն: «Մեղուն» ընդդիմադիր դիրք զբաղեց «սահմանադրված» պատրիարքական իշխանության, կղերի ու նրա առանձնաշնորհումների նկատմամբ, ամեն ինչից վեր բացելով կեղեքվող ու հարստահարվող ժողովրդի շահերը: Միանգամայն ճշմարտացի է հանդեսի ինքնաբերական գրոմը՝ «Մեղուն» ժողովրդին քարոզեց իր իրավունքը և ազգը կառավարելու փափաքողներուն քարոզեց իրենց պարտավորությունը: Բողոքեց ժողովուրդին իրավանց հարստահարության դեմ, Ազգային վարչության պարտավորությանց զանցառության դեմ»⁴¹:

Դիրքորոշման հավաստումից առավել այստեղ ուշագրավը ազգային վարչության ու «Մեղվի» սկզբունքային հակասությունների բացահայտումն է: Վարչության պարտավորությունների ու ժողովրդի իրավունքների շրջված պատկերացմամբ էր պոլսահայ բուրժուազիան սկսում իր սահմանադրական գործունեությունը: Նրա անտարբերությունը աշխատավորության իրավազուրկ վիճակի հանդեպ, հետադիմության առջև ընկրկելը և դեմոկրատական խառնիքի մտավորականության հալածանքը ցույց էին տալիս, որ վարչություն գործունեությունն սկսվում էր իր իրավունքների պաշտպանությամբ և ավարտվում ժողովրդի պարտականության պահանջով: «Մեղուն» և նրա համախոհ պարբերականները վարչությունից պահանջում էին պաշտպանել Արևմտահայաստանի ժողովրդին «խորամանկներու և հարստահարիչներու դեմ», որոնց «հարստությունը, ազդեցությունը և բռնությունը վախցուցած է ժողովուր-

դը շատ տեղ»⁴²։ «Առ նորընտիր երեսփոխանս Ազգային ընդհանուր ժողովո» հողավճուժ Սվաճյանը այդ ժողովին գործնական քայլերի էր մղում՝ թեթևացնելու գավառի ծանր կացությունը, ընթացք տալու նրանց իրավացի բողոքներին և լրջորեն զբաղվելու գավառի սահմանադրական ժողովների կազմությամբ⁴³։ 1860 թ. սկսած «Մեղվի» հրապարակախոսական ելույթների մեջ ճնշող մեծամասնություն են կազմում գավառահայերի կացությանը նվիրված հողավճենքն ու թղթակցությունները, Արևմտահայաստանում սահմանադրության կիրառման անհրաժեշտության հիմնավորումը։ Դա ցույց է տալիս, որ «Մեղուն» ազգային սահմանադրությանը տալիս է համազգային գործողության շառավիղ։ Այդ էր, սակայն, որ չէր մտնում ոչ պոլսահայ պահպանողականության, և ոչ էլ լիբերալների ծրագրերի մեջ։ Եվ երբ «Մեղուն» անցավ վանեցի հարրստահարիչ Պողոս վարդապետի, Բերիայի առաջնորդ Նիկողոս վարդապետի մերկացմանը, սուր քննադատության ենթարկեց Կ. Պոլսի թաղական ջոջերի կամայականությունները թաղական խորհուրդների ընտրություններում, պոլսական հետադիմության ճահիճը շարժվեց։ Հետադիմությանը սրտմտություն էր պատճառել վանեցի Պողոս վարդապետի հանդեպ Ազգային վարչության անփույթ վերաբերմունքի քննադատությունը «Մեղվում» և «Մյունատիի էրճիասում»։ Իր հայրենակիցներին անողորմ հարստահարությունների ենթարկած այդ վարդապետը անասելի ճարպկությամբ կարողացել էր կասեցնել իր դեմ գրված բողոքների հոսքը դեպի պատրիարքարան։ Ի վերջո, երբ մտերմական կապերն ու հարաբերությունները անզոր դարձան նրա շարագործությունները քողարկելու համար (նրա դեմ գրվեց ութ կետից կազմված մի ամբաստանություն, որոնցից յուրաքանչյուրի հաստատումը բավական էր կարգալույծ անելու), ամբաստանյալը քննության կանչվեց Կ. Պոլիս։ Այնուհետև սկսվեց գործի ձգձգումը. փոխանակ գործը արագորեն քրննելու և մեղավորին պատժելու, կրոնական և քաղաքական ժողովները սկսեցին հաշտության մղել Պողոսի կողմնակիցներին և հակառակորդներին։ Բանը ավարտվեց նրանով, որ բանակցություններից ձանձրացած վարդապետը փախավ Կ. Պոլսից՝ Տրապիզոն մեկնող շոգենավով⁴⁴։

«Մեղուն» կրոնական ժողովից պահանջում էր վճռական միջոցներ ձեռնարկել հանցագործ հոգևորականի նկատմամբ և դատապարտել նրա կանխակալ վերաբերմունքը։ Դրանից հետո, կատարելով կղերի ու վարչության կամքը, պատրիարքը Սվաճյանին ու մի քանի խմբագիրների կանչում է պատրիարքարան և նրանց ներկայացնում քաղաքական ժողովի առաջարկը՝ լուր տպագրելուց առաջ խմբագիրները պետք է

ստուգեն դրա իսկութիւնը, հիմք ունենալով պատրիարքարանի դիմա-
նը⁴⁵։ Դրանով պատրիարքարանը փորձում էր սեփականել տեղեկատվու-
թյան մենաշնորհը և կախման մեջ դնել մամուլը։ 1860 թ. հոկտեմբերի
այս միջադեպը նախանշում էր դեմոկրատական մամուլի և պատրիար-
քարանի հակասութիւնների հետագա խորացումը։ 2. Սվաճյանը այս
իմաստով էլ ընկալեց քաղաքական ժողովի առաջարկը։ «Խմբագրաց
պատրիարքարան կանչվիլը» հոգւածում նա հիմնավորում էր, որ մա-
մուլի ազատութիւնը հասարակական արատները վերացնելու կարևոր
նախապայման է և որ անտեսելով այդ ազատութիւնը, Ազգային վար-
չութիւնը հակասում է իր սահմանադրական բնույթին։ «Արդի ազգա-
յին կառավարութիւնը,—գրում էր նա,—ազատ սահմանադրական է,
որուն հիմը, պաշտպանը և երաշխավորը ազատ տպագրութիւնն է»⁴⁶։
2. Սվաճյանը մերժեց քաղաքական ժողովի տեսակետը՝ հետևյալ նկա-
տառով։ Ընդունելով պատրիարքարանի դիմանը իբրև տեղեկա-
տվության աղբյուր, մամուլը

1. Ակնհայտորեն կախման մեջ է ընկնում պատրիարքարանից, ո-
րը կարող է նույնիսկ զլանալ տեղեկութիւններ տալուց։

2. Կասկածի է ենթարկում իր թղթակիցների բարեխղճութիւնը։

3. Ինչպես հաճախ է պատահում, կարող է ավելի վաղ տեղեկա-
նալ լուրին, քան պատրիարքարանը։ Ստուգելու դեպքում կկորչեր լու-
րի այժմեականութիւնը, իսկ դրա ուշացած մեկնաբանութիւնը կարող
էր տեղի տալ թյուր կարծիքների՝ մասնավորապես օտար մամուլի մի-
ջոցով։

4. Կարող է ենթադրել, որ տվյալ տեղեկութիւնը հակառակ է Ազ-
գային վարչության կամքին, ինչպես և կարող է ցանկալի համարել դրա
հրապարակումը՝ նախքան վարչության իմանալը⁴⁷։

Ուշագրավ են Սվաճյանի առարկության առաջին և չորրորդ կետե-
րը։ Մամուլը ոչ միայն անկախ պետք է լինի Ազգային վարչութիւնից
ու պատրիարքարանից, այլև իրեն վերապահի դրանք քննադատելու
կամ հակառակ շփոթորոշում ունենալու ազատութիւնը։ Մամուլի ան-
կախ դիրքի և ազատախոսության լիարժեք լինելը այս սկզբունքային մո-
տեցումը, որ հարատեւել է 1860—1870-ական թթ. արևմտահայ առաջա-
դիմական հրատարակութիւններում, հակասության այն հիմնական
նզդն էր, որից սկսվում էր նրանց ու ազգային հետադիմության և սուլ-
թանական գրաքննության միջև խորացող անջրպետը։

Ապավինելով խոսքի ու կարծիքի ազատությանը, Սվաճյանը նույն
հոգւածում պահանջում էր պատժել մեղսագործ եկեղեցականին. հաշ-
վի առնելով եկեղեցու դերը աշխարհի համակարգում, նա նախնական

դատի իրավունքը վերապահում էր կրոնական ժողովին: «Մենք կփափաքեինք,—գրում էր նա,—որ ինչպես մինչև ցարդ, Հայաստանյայց կղերը ըրած է, ինք պատժելեն առաջ իր հանցավորը և հապա հանձնե զանի քաղաքական իշխանության»⁴⁸:

Կղերը մամուլի քննադատությունից պատվարելու գործում կրոնական և քաղաքական ժողովների խափանիչ փորձերը ձախողվեցին «Մեղվի» խմբագրի սկզբունքայնության առաջ: Պարբերականի դիրքորոշումն այս հարցում դարձավ առավել անզիջող, երբ վերոհիշյալ ելույթից երկու ամիս անց՝ 1860 թ. Նոյեմբերի 20-ին «Մեղվում» տպագրվեց Մ. Նալբանդյանի նամակը Հ. Սվաճյանին: Նամակը գրված է Պողոսի գործի առթիվ, սակայն ունի առավել լայն հասարակական ընդգրկում. նրա իմաստը տպագիր խոսքի ու ազատ կարծիքի պաշտպանությունից գերաճում-հասնում է մինչև վարչության կիսկատար գործունեության սուր քննադատության: Տրվում է վարչության լիբերալ ու հաշտվողական ուղեգծի դիպուկ բնութագիրը⁴⁹: Մամուլի և քննադատության ազատությունը Նալբանդյանը հիմնավորում էր «իրավադատության»՝ անձի և հասարակության իրավունքների պաշտպանության գաղափարով, որ նա բխեցնում էր մարդկանց հավասարության «բնական օրենքից» Հեղափոխական դեմոկրատը, այսպիսով, մամուլի ազատությունը աղերսում էր անհատի և հասարակության անկապտելի իրավունքի՝ ազատության հետ և պարզում այդ գաղափարն ընդդեմ հասարակական բռնացումների: Նալբանդյանն Ազգային վարչությունից պահանջում էր զրկել Պողոսին վարդապետական աստիճանից և նրան դատել քաղաքացիական ատյանով: Նա մերժում էր այս հարցում կղերին տրված առանձնաշնորհումը և լուծումը ենթադրում այլ կերպ, քան Սվաճյանը. սխալ է հոգևորականի դատվելը հոգևոր ատյանի կողմից, քանի որ մեղանշող կրոնավորները «շատ անգամ անպատիժ էին մնացել, որովհետև յուրյանց դատը վարում էին յուրյանց նմանների ձեռքով»⁵⁰:

Անկախ հարցադրման կտրականությունից կամ դրա իրագործման հնարավորությունից, Մ. Նալբանդյանի դիրքորոշումը առավել արմատական էր⁵¹ և համապատասխան՝ սահմանադրական ազատության ու անհատների հավասարության գաղափարներին: Այդ հոգվածի տպագրությունից հետո «Մեղվի» պայքարը կղերի անարժան ներկայացուցիչների դեմ դարձավ առավել վճռական, որին վերջինս չէր կարող հակադրել այլ բան, քան նոր բռնացումները:

Արեւմտահայ հետադիմութիւնը, որ Կ. Պոլսում առիթ էր որոնում «Մեղուն» և «Մյունստրի էրճիասը» ըմբերանելու համար, Զմյուռնիայում հանդես եկավ իր ամբողջ ինքնագլխությամբ: Խոսքը վերաբերում է «Միութիւն» սահմանադրական պարբերականի խափանմանը հետադիմութեան ձեռքով: Դեմոկրատորեն տրամադրված երիտասարդութեան այդ հանդեսի հետ զմյուռնահայ հետադիմութեան հաշվահարդարի պատմութիւնը հանգամանորեն ներկայացված է «Մեղվի» «Միութիւն» և զմյուռնացի հայեր» հոդվածում⁵²: Զմյուռնիայում «Միութիւնը» առաջինն է հանդես եկել սահմանադրական գաղափարների պաշտպանութեամբ: Կ. Պոլսի Ազգային վարչութեան կազմած «Սահմանադրական հրահանգը» դեռևս չէր ուղարկվել Զմյուռնիա, և համայնքի գործերն այստեղ տնօրինում էին տեղի ջոջերը: «Միութեան» էջերում սահմանադրութեան պաշտպանութիւնն արդեն բավական էր նրանց ցատու մտաբանելու համար: Ատելութիւնը դրսևորվեց մատնութեան ձեռով: «Միութեան» խմբագիրները (Մ. Վանանդեցի, Ղ. Մամուրյան, Ա. Ղոնճայան և ուրիշներ) իշխանութիւնների առջև ներկայացվեցին իբրև ապստամբներ, որոնք երկպառակութիւն են սերմանում համայնքում և նյութեր տպագրում իշխանութիւնների դեմ⁵³: Մատնութեան մեջ նըշվել էր, որ հանդեսը հրատարակվում է առանց հրատարակութեան արտոնագրի: Դրանից հետո հանդեսի հրատարակութիւնը խափանվեց, իսկ Տետեյան տպարանը, որտեղ հրատարակվում էր «Միութիւնը», փակվեց: Խմբագիրները ձերբակալվեցին: Հաջորդ օրը, սակայն, իշխանութիւնները նրանց ազատեցին բանտից. իրենց հոգովածները թարգմանաբար ներկայացնելով, խմբագիրները հերքեցին «կառավարութեան դեմ գրելու» ամբաստանութիւնը:

Ուշագրավ էր հասարակական այն արձագանքը, որ առաջացրեց «Միութեան» խմբագիրների բանտարկութիւնը: «Խուռն և անթիվ բազմութեամբ հավաքված ժողովուրդը» անվերապահորեն իր համակրանքը հայտնեց «Միութեան» գործիչներին՝ պահանջելով նրանց ազատութիւնը⁵⁴: Իշխանութիւնները տեղի տվեցին, որ վկայում էր պարբերականի խմբագիրների հասարակական հեղինակութեան մասին:

«Միութիւնը» անմիջապէս շվերաբացվեց (դա հնարավոր եղավ մոտ մեկ տարվա ընդմիջումից հետո, 1861 թ. սեպտեմբերին), որովհետև գտնվել էր նրա խափանման իրավական հիմքը՝ առանց արտոնագրի հրատարակվելը: Այդ միջադեպի պատճառով և Տետեյանների տպարանի, և «Միութեան» խափանումը կատարվել է 1857 թ. փետրվա-

րի 15-ի «Տպարանների մասին» օրենքի հիման վրա: Այդ օրենքով ոստիկանությունը իրավունք էր տրվում անհապաղ բռնագրավել «վնասակար գրքերը և հրատարակությունները» (հոդվ. 77), ինչպես և փակել այն տպարանները, որոնք մեղանշել էին և քրեական գործ հարուցել օրինազանցների դեմ (հոդվ. 9)⁵⁵: Տեղեկանքների տպարանը փակվել է հրամանագրի շունենալու պատճառով⁵⁶:

Զմյուռնիայի «եռապետները» սահմանադրությունից առաջ, ավանգույթի ուժով տնօրինել են համայնքի տնտեսական, վարչական ու լուսավորական գործը: Մյուսթեվելիության հնամենի իրավունքից օգտվելով նրանք իրենց ձեռքին էին կենտրոնացրել համայնապատկան կալվածքների եկամուտները (մշակվող հողեր, վարձով տրվող շինություններ, եկեղեցու հասույթներ՝ համապատասխան կալվածքներից), որի վրա հիմնվում էր նրանց հեղինակությունն ու զորությունը: Աղաների իշխանությունը սրբագործվում էր տեղական առաջնորդների օրհնանքով: Սահմանադրության կիրառումը սպառնում էր այդ ավանդական արտոնություններին. ինքնընտիր հոգաբարձուներին (առաջնորդի կողմից նրանց նշանակվելը ունեն զուտ ձևական նշանակություն) պետք է փոխարինեին համայնքի կողմից ընտրված երեսփոխանները, իսկ առաջնորդները ստանալու էին սահմանված թոշակ՝ կորցնելով եկեղեցապատկան գումարների ու եկամուտների վերահսկողության իրավունքը: Այստեղից էլ՝ ազգային ջոջերի ու առաջնորդների թշնամանքը սահմանադրական գաղափարները պաշտպանող «Հաշտենից» ընկերության և նրա հրատարակած «Միություն» հանդեսի նկատմամբ⁵⁷:

Հ. Սվաճյանը սատարել է Զմյուռնիայի սահմանադրականներին՝ ի դեմս «Միություն» հանդեսի և այնուհետև՝ «Ծաղիկի» մտավորականների: Նա հերքել է տեղի ջոջերի հորինած մեղադրանքները ընդդեմ «Միության» (Ֆրանսերենը «բարբարոս» կոչելը, ֆրանսախոս հայ վերնախավին քամահրելը և «Հաշտենից ընկերությունը լքած «հարուստ տղաների» անունները հրապարակելը): Հ. Սվաճյանը բացահայտում էր այդ հալածանքի հասարակական պատճառները՝ այն, որ սահմանադրական պարբերականը պայքար է մղել աղաների կամայականության դեմ, նպաստել ժողովրդի ինքնագլխակցության արթնացմանը: Այդ մատնությունները ջոջերը ցույց էին տալիս, որ սահմանադրական գաղափարների դեմ պայքարելիս կարող են դիմել ամեն մի միջոցի, այլ թրվում և մատնություն⁵⁸:

«Միությունը» արևմտահայ երկրորդ սլաբերականն էր, որ խափանվում էր իշխանությունների կողմից: Տխուր առաջնությունը, ի դեպ,

այս հարցում պատկանում է դարձյալ Զմյուռնիայում հրատարակված «Հայրենասեր» պարբերականին (1843—1846), որը խափանվել է 1844 թ.՝ «Արշալույս արարատյանի» եռանդուն պաշտպանների մեքենայությունների շնորհիվ⁵⁹։ Ընդհանրապես առաջադիմական միտքը իր ուղին հարթում էր ոչ միայն ազգային, այլև օսմանյան իշխանությունների հետ անվերջանալի բախումների պայմաններում. սրանց դեմ իշխանությունները օգտագործում էին հենց ազգային հետադիմությունը և նրա միջոցով վերահսկում կասկած հարուցող պարբերականների գործունեությունը։ Բուն՝ թուրքական գրաքննության անհանդուրժողականությունը ծավալվել է արևմտահայերի ազգային ինքնագիտակցության, ազատագրական գաղափարախոսության զարգացմանը համապատասխան. որքան որակական որոշություն է ձեռք բերել այդ պրոցեսը, այնքան ավելի խիստ է դարձել գրաքննությունը, ավելի մանրախնդիր ու կասկածալիտ։

1860-ական թթ. օսմանյան գրաքննությունը դեմոկրատական մամուլի դեմ սանկցիաներ կիրառելիս բավարարվում էր կղերապաշտական ուժերի նախաձեռնությամբ։ «Միություն», «Մեղվի», «Մյունատիի էրճիասի» ու «Ծաղիկի» դեմ նյութած «ազգայինների» դավերից հետո էր միայն, որ միջամտում էին իշխանությունները։ Գրաքննության այսպիսի «միջնորդավորված» ու սպասողական ուղեգիծը հարձակողականի էր վերածվում այն ժամանակ, երբ կասկածի էր ենթարկվում դեմոկրատական մտավորականության քաղաքական բարեհուսությունը։ Ինչպես ամենուրեք՝ սոցիալ-քաղաքական բռնության պայմաններում, Օսմանյան Թուրքիայում մամուլի գրաքննությունը ևս իր սկզբնավորման ժամանակ հանդես էր գալիս քաղաքական հիմքերի անդորրը հսկող Արգոսի դերում։ Թուրքական ոստիկանական գրաքննությունը այդպիսի հաշվեհարդար տեսավ Կ. Փանոսյանի «Մյունատիի էրճիաս» թերթի հետ։ 1862 թ. օգոստոսին այդ թերթը (հայատառ թուրքերեն, նշանակում է «Արգեոսի մունետիկ») հանդես եկավ բռնակալության դեմ մարտնչող զեյթունցիների պաշտպանությամբ։ Հայ լեռնցիների փոքրաթիվ, բայց տոկուն ջոկատները համառ պայքար էին մղում թուրքական կանոնավոր զորաբանակի դեմ։ Կ. Պոլսի դեմոկրատական գործիչների հայեցությունը անմիջական լիցք էր ստանում այդ հերոսական պայքարից։ Դրա ցայտուն արտահայտիչը դարձավ Կ. Փանոսյանը՝ 1860—1870-ական թթ. եզակիորեն համարձակ, ուղղամիտ և սկզբունքային մի հրապարակախոս, որն իր դեմոկրատական գաղափարներն արտահայտում էր սահմանադրության արմատական պաշտ-

պանելթյամբ ու հետևողական պրոպագանդով: Կ. Փանոսյանի թերթը սահմանադրական գաղափարների պաշտպանությունը զուգորդել է ոչ միայն Կ. Պոլսի, այլև գավառների աշխարհիկ ու կրոնական հարստահարիչների քննադատությամբ: Ա. Ալպոյաճյանը ընդգծում է նրա համաբժակ բանակոծող Կեսարիայի (իր ծննդավայրի) «մենծ աղայություն»-ը եւմ և այն, որ Կ. Փանոսյանի պարբերականը խորացրել է ժողովրդի ազատ խոսելու, անկաշկանդ շարժելու բնական միտումը... իր բնեցած ազատ իրավունքներու գնտակցությունը»⁶⁰: Սատարելով զեյթունցիներին և նրանց արդարացի կոծիքը, այս հրապարակախոսը Զեյթուն արշավող թուրքական զորքերի հրամանատար Ազիզ փաշային անվանել էր «փարավոնական բարբարոս»⁶¹, չվախենալով լրա հետևանքներից: «Մասիսը» հակիրճ և զգուշավոր տեղեկություններ է տվել նրան պատժելու մասին. նա նշում է, որ «արժանահարգ պ. Կարապետ Փանոսյան բարձրագույն հրամանավ կիրակի իրիկուն ոստիկանության դուռը տարվելով՝ բանտարկվեցավ»⁶²: Տեղեկություն է տրվում նաև հանգուցալուծման մասին. «Մյունատիի էրճիաս» լրագրին խմբագիր արք. Կարապետ Փանոսյան՝ «Մյունատիի» 213, 214 և 215 թիվերուն մեջ հրատարակած հոդվածներու պատճառով 21 օր ոստիկանության դուռը բանտարկվելիս ետև լրագիրը խափանեցավ և 20 լիրա տուգանք հատուցանելով, կիրակի իրիկուն բանտեն արձակվեցավ»⁶³: Կ. Փանոսյանի թերթը ընդմիջտ խափանվեց⁶⁴: Դա «Միությունից» հետո երկրորդ դեպքն էր, երբ խմբագիրը բանտ էր նետվում: Հատկանշական է, որ հետագիմությունը «Մյունատիի էրճիասի» խափանումը ընդունել է որպես վտանգավոր մտքերի արժանի փոխհատուցում: Ոմն Սահակ վարդապետ, որը, ինչպես Կ. Փանոսյանն է գրում՝ պատրիարքարանում խմբագիրներին քանիցս սպառնալի խրատներ է տվել, հայտնել էր, թե «Մյունատին» աստծո պատժին հանդիպեցավ»: Հիմնավորապես բացահայտելով նրա խավարամտությունը, Կ. Փանոսյանը նշում էր իր թերթի փակման պատճառը. «Ծթե «Մյունատին» պատիժ մը կրեց, կրոնական հանցանքի համար չի կրեց, այլ ազգային կամ քաղաքական խնդրի մը համար»⁶⁵:

Դեմոկրատական միտքը Կ. Փանոսյանին պաշտպանեց հետագիմության հալածանքներից: Մ. Նալբանդյանը արտասահմանի իր հեռավորությունից նրան պարզեց իր ձեռքը. «Մյունատին»,— գրում էր նա,— կարոտ չէ նոր ի նորո ընծայվելու ազգին. նա կարոտ չէ և ընծայության թղթերի՝ նաև ազնիվ մարդերի կողմից, թող թե մի շաղղակեր ագռավից: «Մյունատի» զբարւոթ պատերազմն պատերազմեցաւ, զհաւատսն

պահանջ: Իսկ ով է Այսահակը, արժանահիշատակ Թաղիադյանցի կրթ-
բաժ եզրի ճակատը: Օհ, պիտո է Արաբիա գնալ՝ նորա պատմությունը
իմանալու համար»⁶⁶:

«Այսահակը» Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ Սահակ
վարդապետն էր, «ներսեն-դուրսեն» պայքարի ժամանակ հետադեմ
կղերին ոգեշնչողներից մեկը, որ խստորեն քննադատվել է դեմոկրա-
տական գործիչների կողմից⁶⁷: Մամուլը ճնշելու հարցում իշխանություն-
ների հետ հետադիմության մերձեցումը բացահայտորեն երևաց սահ-
մանադրական երկպառակությունների ժամանակ: Հենց այդ ժամանակ
էր, որ դեմոկրատական մամուլի վրա հարձակման անցան Ազգային
վարչությունն ու կղերական հետադիմությունը: Նույն՝ Երուսաղեմի վան-
քի կանոնադրման շուրջ ծավալված պայքարը Բ. դոան համար առիթ
դարձավ դադարեցնելու սահմանադրության գործողությունը:

1860 թ. Ազգային վարչությունը կանոնադրություն էր մշակել՝ վան-
քի քայքայված վարչությունը բարեկարգելու համար, սակայն միաբա-
նությունը ընդդիմանում էր դրան: Հ. Սվաճյանը գրում էր, թե վանքը
«կարծես թե ազգեն դուրս, ազգեն անկախ ինքնիշխան մարմին մ'է,
ազգին հետ պայմանադրության մտնել կուզե ու նամակով մը կիմաց-
նե Ազգային վարչության, թե այսինչ հոգավածը (կանոնադրության—
Ա. Խ.) կընդունիր, այսինչը՝ չընդունիր, այսինչ հավելվածը կընե և
այլն»⁶⁸:

Միաբանության առարկություններին Ազգային վարչությունը պա-
տասխանեց մի վերջին փորձով. Հ. քահ. Հյունքյարպեյենտյանը առաք-
վեց Երուսաղեմ՝ կանոնադրությունն ընշունել տալու և պատրիարքա-
կան երեք ընտրելիներին (Սահակ, Հակոբ և Ծսայի վարդապետներ)
Կ. Պոլիս բերելու նպատակով: Վանքի ինքնուրույնությունը պաշտպա-
նող հետադիմությունը դրան պատասխանեց մեճենայություններով:
Նրանք գրգռեցին Կ. Պոլսի հայ ներքնախավերին, գլխավորապես գա-
վառացի մշակների կրոնական զգացումները, լուր տարածելով, թե Ազ-
գային վարչության որոշումները հետամտում են վանքի կործանումը,
միաբանության ցրումը՝ նրա հարստությունը թալանելու նպատակով:
Հուզախոռով ամբոխը գալիս է պատրիարքարան և պահանջում հետ կան-
չել Հյունքյարպեյենտյանին ու հրաժարվել վանքի վարչությունը կանո-
նադրելու փորձերից⁶⁹: Խռովություններին վեղջ տալու համար միջա-
մտեցին թուրքական զորքերը՝ Սելիմ փաշայի հրամանատարությամբ:
Օգտվելով խառնակություններից, Բ. դուռը դադարեցրեց սահմանա-

Ազգային գործողությունը: Ազգային գործերը վարելու համար ստեղծվեց
առժամանակյա խառն ժողով:

«Մեղուն» հաճախակի հանդես էր գալիս Երուսաղեմի վանքի քրն-
նադատությանը, պաշտպանում այն կանոնադրելու և սահմանադրու-
թյունը ազգային բոլոր հաստատությունների վրա տարածելու գաղա-
փարը: «Երուսաղեմի վանքը և միաբանությունը» հոդվածում պարբե-
րականը ցուցադրում էր վանքի ինքնիշխանության հետևանքները՝ ծանր
պարտքերը, խարդախ մատակարարների կողմից նրա եկամուտների
թալանը և այլն: Վանքը, ըստ դեմոկրատ մտավորականների, պետք է
դառնար ազգային լուսավորության օջախներից մեկը, դպրոցներ հիմ-
ներ ազգից ստացված նվիրատվությունների հաշվին: Երուսաղեմի վան-
քի և ընդհանրապես հետահայաց կղերի դեմ «Մեղուն» և «Մյունատին»
սկսեցին երկարատև բանավեճ, որին հակառակորդը որպես փաստարկ
կարող էր հակադրել միայն հալածանքները: Սկսվեց ազատախոհ մա-
մուլի դեմ ուղղված մի արշավանք, որին միացան նաև Ազգային վար-
չության շափավոր երեսփոխանները: Այս պայմաններում էր, որ Ազ-
գային վարչությունը հղացավ այսպես կոչված «Տպագրական օրենքը»՝
ազգային մամուլի համար: Նախ, հասարակական կարծիքը մոլորեցնե-
լու համար ազգային վարչությունը քննարկման հատուկ առարկա դարձ-
րեց «Մեղվի» և «Մյունատի» դեմ Երուսաղեմի միաբանների բողոքը:
Բողոքը լսվեց ազգային ժողովի՝ 1861 թ. մայիսի 25-ի նիստում: Մինչ
այդ, միաբանները կարողացել էին բավականաչափ հուսալի պատվար
գտնել Ազգային վարչության մեջ: Նրանց դիմումը ավելի լայն իմաստ
էր ստացել ընդհանուր ժողովի 59 երեսփոխանների միջամտությամբ,
որոնք իրենց հերթին, բողոքել էին վերոհիշյալ պարբերականների դեմ՝
Ազգային ժողովի նիստերը, իբր աղավաղված ներկայացնելու համար:
Երեսփոխաններն առաջարկում էին նման գործողությունները կասեց-
նելու նպատակով պատիժ սահմանել մամուլի համար⁷⁰: Այդ նիստում
հանդես եկած ատենապետ Սերվիչենը ազատամիտ ձևակերպումներով
խճողված իր ելույթում պաշտպանեց մամուլի ազատությունը սահմա-
նափակող առաջարկները: Նա հավաստում էր, մի կողմից, թե «գեշ
կարծիքներուն առջևը առնելու միակ ճամփան կարծյաց ազատության
ծառայելն է: Քննություն չընդունիր ու կարծյաց ազատությունը վերց-
նելը հասարակությունը խավարի մեջ ձգել է, և ոչ լուսավորության»,
բայց և մյուս կողմից, կտրականապես դատապարտում էր «ազատու-
թյան օրինավոր սահմանն դուրս ելլող լրագիրները»⁷¹: Այսպիսի ձևա-
կերպման դեպքում «մամուլի օրինավոր ազատության սահման» կա-

րելի էր հռչակել զուտ այն, ինչ ընդունելի էր համարում Ազգային վարչությունը: Դրա համեմատ «կարծյաց ազատությունը» կամ քննադատության ազատությունը, որի օգտին խոսում էր Սերվիլենը, մնում էին իբրև լիբերալ դարձված՝ զուրկ որևէ բովանդակությունից: Իրականում, խոսքը վերաբերում էր դեմոկրատական մամուլի ազատությունը կաշկանդելուն⁷²: Նույն նիստում Սերվիլենն առաջարկեց ստեղծել լրագրական կանոնադրություն պատրաստող հանձնաժողով:

Հանձնաժողովի անդամներն ընտրվեցին 1861 թ. մայիսի 30-ի նիստում: Դրա կազմի մեջ մտան Ն. Վարժապետյանը, Սամաթիո տեր Արիստակես քահանան, Սերվիլենը, Ստ. Ասլանյանը, Գր. Աղաթոնը, Գր. Օտյանը և Առ. Տատյանը⁷³:

Տպագրական օրենքի նախագիծը պատրաստ է եղել նույն թվականի հուլիսի 10-ին: Թվում է՝ Ազգային ժողովը պետք է որ ընդուներ այն, սակայն հնարավոր չեղավ գործը մինչև վերջ հասցնել: Խանգարեց սահմանադրության խափանումը Բ. դռան կողմից: Երուսաղեմի խնդիրը վերջնականապես երկպառակություն առաջացրեց քաղաքական ժողովի և պատրիարքի միջև: Այդ ժողովը պատրիարքին մեղադրում էր ինքնագլուխ որոշումներ կայացնելու, կրոնական ու քաղաքական ժողովների իրավասությունները ոտնահարելու հակասահմանադրական ընթացքի մեջ: Իսկապես, Երուսաղեմի խնդիրը վճռելու համար պատրիարքը հրավիրել էր համագումար ժողով՝ շրջանցելով Ազգային վարչությունը: Այս պատճառով ընդհանուր ժողովը 1861 թ. օգոստոսի 5-ին ապօրինի հռչակեց եկեղեցական համագումար ժողովը և անվավեր՝ նրա որոշումները⁷⁴: Ի վերջո, Ազգային ժողովի 1862 թ. փետրվարի 20-ի նիստում ընթերցվում է մեծ վեզիր Ալի փաշայի կարգադրությունը՝ սահմանադրության գործողությունը դադարեցնելու և սահմանադրությունը վերաքննելու նպատակով հանձնաժողով ընտրելու մասին: Ընտրվեց յոթ մարդուց բաղկացած հանձնաժողով՝ Ստ. Ասլանյան, Մ. Աղաթոն, Մ. Մինասյան, Գր. Օտյան, Ն. Ռուսինյան, Հ. Սուրենյան, Մ. Մանուկյան: Տերությունը պետք է վավերացներ սահմանադրությունը⁷⁵:

Դեմոկրատական մտավորականությունը քննադատական կրթչի տակ առավ և քաղաքական ժողովը և պատրիարքին՝ Երուսաղեմի հարցում անսկզբունքայնություն ցուցադրելու և միաբանությանը զիջումներ անելու համար: «Մեղուն» 1861 թ. հուլիսին գործի դրեց երգիծանքի և հրապարակախոսության ամենատարբեր միջոցներ (ծաղրանկար, հոգված, պամֆլետ և այլն)՝ ծանակելով վանքի ինքնագլխության ցույց-

ցերը ու նրանց հետադիմական պաշտպաններ Չամուռճյանին ու «Արե-վելյան դարի» խմբագիր Տեյիրմենճյանին: Իսկ երբ Հ. Սվաճյանը բա-ցահայտեց պատրիարքի, Երուսաղեմի միաբանության և համագումար ժողովի համերաշխությունը՝ վանքի ստատուսը, ուրեմն և հակասահ-մանադրական ընթացքը պաշտպանելու գործում⁷⁶, հետադիմությունը միահամուռ ուժերով նետվեց նրա վրա: Սրանց բողոքի հիման վրա ոստիկանությունը երկու ամսով՝ 1861 թ. օգոստոսի 21-ից մինչև հոկ-տեմբերի 31-ը դադարեցրեց «Մեղուն»: Պատրիարքի հետ ընդհարված քաղաքական ժողովը, սակայն, գոհունակ լուծյամբ էր դիտում «Մեղ-վի» դատապարտումը: Դեմոկրատիայի հասարակական ակտիվացումը և վարչության գործերը վերահսկելու նրա միտումները քաղաքական ժողովի համար հակակրեւի էին ոչ նվազ, քան հետադիմությանը: Բ. Ղուն իր հերթին, փութեց վերջ տալ մամուլի քննադատական ոգուն: Վերահրատարակված «Մեղուն» տպագրել է գրաքննական հրահանգը. «Սույն հրամանը (խափանման — Ա. Խ.) մեզի հաղորդող պաշտոնա-կան նամակը կհիշեցնե Պոլիս տպվող ամեն ազգի և ամեն լեզուն օրա-գիրներուն տրված պատվերը՝ ազգային ներկա գործոց վրա բացարձակ լուծյուն պահելու»⁷⁷: Իրոք, գրաքննությունը հետագա ամիսներին, մինչև 1862 թ. փետրվար, երբ արդեն որոշվել էր վերաքննել սահմա-նադրությունը, խստիվ հետևել է այդ հրահանգի կատարմանը: Մինչ այդ՝ դեմոկրատական պարբերականները ձեռնպահ են մնացել այդ ուղ-ղությամբ քննադատական նյութեր տպագրելուց:

Նոր սահմանադրությունը՝ նախկինի կրճատված տարբերակը, հաստատվեց 1863 թ. մարտի 19-ին: Նույն թվականի նոյեմբերին Ազ-գային վարչությունը վերստին ասպարեզ հանեց 1861 թ. տպագրական օրենքի նախագիծը: Դրա քննարկմանը նախորդել էին հառն ժողովի (որը գործում էր սահմանադրության առժամանակյա դադարի ժամա-նակամիջոցում) հալածական գործողությունները «Մեղվի» նկատմամբ: 1863 թ. հունվարին «Մեղուն» խարազանել էր հետադիմականներին, ո-րոնց ակտիվությունը նպաստել էր սահմանադրության խափանմանը: «Պողոս-Պետրոսի կոիվը» ֆելիետոնում Մեչլիսեշան զավեշտական գփերով էր ներկայացնում նրանց ծայր աստիճանի բացասական դերը իրականության սուր հարցերում⁷⁸: Անմիջական խոսքով ցույց էր տրը-վում կղերի անքննադատ լինելու, թերությունները կոծկելու համար պահպանողական դիրքորոշման վնասակարությունը: Ճանաչողական արժեք ունի Հ. Սվաճյանի ընդհանրացումը նաև պահպանողական կղերի և ամիրայության հոգևոր դաշնակցության վերաբերյալ: Հասա-

քակական այս ընդհանրացումները ունեցել են ավելի քան իրական հիմք, հրապարակախոսը նկատի է ունեցել որոշակի անձանց:

Պատրիարքարանի պատասխանը շուշացավ. մարտի սկզբին թագրի ռզղղկեց Բ. դռանը՝ «Մեղուն» խափանելու համար: Կ. Պոլսի «Կուրիեր դ'Օրիենտ» այս առթիվ հայտնում էր իր անհանգստությունը գրաքնական բռնության նկատմամբ. «Օրագիր մը երեք անգամ ազդարարությունը (նկատի ունի իշխանությունների կողմից երրորդ նախազգուշացումը, որից հետո պարբերականը խափանվում էր—Ա. Խ.) չընդունած՝ անոր խափանում ուզելը բռնավորական գործիք մը ուզել է»,—գրում էր այդ թերթը⁷⁹:

«Մեղուն» լռեցնելու հարցում միանգամայն համընկնում էին պատրիարքարանի և իշխանությունների մտավախությունները՝ Սվաճյանի ազատախոսությունը անընդունելի էր և մեկի, և մյուսի համար:

Ազգային վարչության կազմած մամուլի օրինագծի բովանդակությունն իսկ ցույց է տալիս, որ այն ազգային իշխանությունների համար պետք է ծառայեր որպես իրավական հիմնավորում՝ առաջադիմական մամուլի վրա բռնանալու համար: Օրինագծի ընդարձակ նախաբանը կասկած չի թողնում, որ դրա հեղինակը Սերվիլենն է: 1861 թ. մայիսի 25-ի Ազգային ժողովի նիստում նրա՝ մեզ արդեն ծանոթ ձևակերպումը մամուլում և հասարակության մեջ «գեշ կարծիքների առջևը առնելու» մասին, գրեթե նույնությամբ կրկնվում է օրինագծի նախաբանում: Այստեղ ասված է. «ծուռ կարծիք մը ավելի դյուրությամբ պիտի մերժվի, երբ ազատություն ըլլա կարծյաց, քան թե երբ այն ազատությունը սահմանի մեջ առնված ըլլա»⁸⁰: Ուշագրավ է նաև Սերվիլենի ազատամիտ վերապահումը և՛ նրա ելույթում, և՛ օրինագծի մեջ. «Հիրավի, կպաշտպանեմ... կարծյաց ազատ քնությունը, և ոչ թե ազատության օրինավոր սահմանն ըլլալը լրագրիները»,—ասվում է նրա ելույթում: Օրինագծում նույն միտքը ընդգծելու հետ միասին արդեն նշվում են ազատութեն «օրինավոր սահմանի» եզրագծերը. «Ազգի մարդկան համար քանի մը կետեր կան, որոնք միշտ հարգելի են և զորոնք միշտ հարգի մեջ պահել պետք է. այն է՝ նախ հավատքը, երկրորդ՝ իր ծագմանը մեջ ընդհանուրին վստահության կնիքը ունեցող իշխանությունը: Թե որ այս երկուքին համար, որոնք զընդհանուրը պիտի կառավարեն, դատաքնությունը նախատական միջոցներ գործածելով ուժը կոտրելու պատճառ պիտի ըլլա, այն ժամանակ անոնց փրկարար ազդեցության ոչնչանալուն պատճառ կըլլա և ասկե ալ խել մը վնասակար հետևանքներ կծագին որևէ ընկերության մեջ: Ուրեմն

և ասանկ պարագայի մեջ կարծյաց ազատութիւնը կրնա վնասել, կամ չափ ևս՝ ալ կարծյաց ազատութիւն չըսվիր, այլ լրբութիւն»⁸¹։ Հետեւաբար, կրոնի և Ազգային վարչութեան դեմ ուղղված քննադատութիւնը ցանկացած պահին կարելի էր որակել իբրև նախատական միջոցներ և անհանդուրժելի հանդգնութիւն։ Արևմտահայ սահմանադրական այրերը այստեղ լրիվ համամտութիւն էին հայտնում պահպանողականներին և անթույլատրելի համարում դեմոկրատական մամուլի անկախութիւնը Ազգային վարչութիւնից։

Տպագրական օրենքի նախագիծը՝ կազմված առաջաբանից և 14 հոդվածից, ըստ ամենայնի արտացոլում էր Ազգային վարչութեան հետընթացը։ Այստեղ դատապարտվում էր անստորագիր նյութերի հրապարակումը՝ իբրև լրագրողների համար մեղադրանքից խուսափելու միջոց։ Դրանով մամուլը զրկվում էր որևէ հեղինակի ինքնութիւնը թաքցնելու հնարավորութիւնից։ Օրինագծի երրորդ, չորրորդ, հինգերորդ և յոթերորդ հոդվածներով արգելվում էին կրոնը, սահմանադրութիւնը և Ազգային վարչութիւնը «նախատելը», ազգային պաշտոնականացնելը «պատվոյն դպչելը», պատրիարքների, առաջնորդների, կրօնական ու քաղաքական ժողովների անդամների դեմ թշնամութիւնը և «խռովութիւն հարուցանելու գրովածքները»։ Ստեղծվելու էր գրաքննչական ֆունկցիան իրականացնող հինգ անդամներից կազմված հանձնաժողով, որ ընտրվելու էր ընդհանուր ժողովի կողմից։ Սահմանադրութեան, կրոնի և վարչութեան դեմ ուղղված մամուլի ելույթները դատելու էր հանձնաժողովը (հոդվ. 11)։

Այնուհետև սահմանվում էին պատիժներ տպագրական հանցանքների համար, տուգանք՝ 100—500 դուրուշի չափով, ժամանակավոր խափանումից (երկու շաբաթից մինչև երկու ամիս) մինչև մշտական դատարեցումը (հոդվ. 12)։ Ընդգծվում էր տպագրական օրինագծի բխելը Օսմանյան տերութեան օրենքներից, դրա համապատասխանութիւնը այդ օրենքներին, ինչպես և տպագրական հանձնաժողովի կախումը օսմանյան իշխանութիւններից (հոդվ. 1, 13, 14)⁸²։

Օրինագծով Ազգային վարչութիւնը մամուլը դնում էր ոչ միայն ստորագրած վիճակի մեջ, այլև դարձնում էր իր կամակատարը։ Օրինագծի հաստատման դեպքում մամուլը փաստորեն պետք է ենթարկվեր կրկնակի ծանր գրաքննութեան, եթե հաշվի առնենք նաև գրաքննչական ֆունկցիաներ իրականացնող օսմանյան իշխանութիւնների խիստ հսկողութիւնը։ Իսկ այդպիսի հսկողութիւնը մշտապես զգում էր հայ մամուլը։ Հ. Սվաճյանին ուղղած՝ Գ. Օտյանի 1860 թ. փետրվարի 8-ի

թվակիր նամակից ևս պարզ երևում է, որ թուրքական իշխանությունները ուշադրություն չէտեսել են «Մեղվի» նյութերին և հարկ եղած դեպքում որոշակիորեն ցուցաբերել իրենց վերաբերմունքը⁸³:

Տպագրական օրենքի նախագիծն ավարտելուց հետո, 1863 թ. հոկտեմբերին քաղաքական ժողովը կազմեց մասնաժողով՝ այն վերաքննելու և ընդհանուր ժողովին ներկայացնելու համար: Մասնաժողովի մեջ մտան Սերվիշենը, Գր. Օտյանը, Գր. Աղաթունը, Պ. Աշնանյանը, Ն. Ռուսինյանը, Գ. Երամյանը և Հ. Մանվելյանը⁸⁴: Դա սպառնում էր տպագրական օրինագիծը դարձնել անվերջ շաղակրատանքի օբյեկտ, ուստի Գր. Օտյանը և Սերվիշենը հրաժարվեցին անդամակցությունից: «Ասանկ փափուկ խնդիր մը լուծելու համար,—գրում էին նրանք,—պետք է լավ ըմբռնել արդի ընկերական վիճակի պետքերը, ազգին բերմունքը և կարծյաց ազատության մասին ընդհանուրին կողմեն արդեն ընդունված սկզբունքները: Հետևաբար, մենք կկարծենք, թե արդեն պատրաստված ուրվագիծը ընդհանուր ժողովո ներկայացնելեն ուրիշ բան չէ մնացած ընելու: Ուստի, մեզի համար ալ կմնա մեր հրաժարականը տալ, զոր կաղաչենք, որ ընդունիք»⁸⁵:

Անհրաժեշտ է նկատել, որ այս ժամանակաշրջանում թուրքական կառավարությունն արդեն ձեռնարկել էր ամբողջ երկրի համար ընդհանուր տպագրական օրենքի ստեղծմանը, ուստի համայնքների ինքնավարությունը սահմանափակելուն ուղղված օսմանյան քաղաքականության պայմաններում զուտ հայ ազգային տպագրական կանոնադրությունը կորցնում էր իր իմաստը: Ի դեպ, «Մեղուն» կասկածով էր վերաբերվում այդպիսի կանոնադրության գործնականում ընդունվելու հնարավորությունը: Տվյալ դեպքում «Մեղուն» հետադիմական օրինագծի նմ էր ելնում՝ հաշվի առնելով նաև այն, որ արևմտահայ համայնքում պատրիարքական իշխանությունը ունի ավելի բարոյական, քան գործնական իրավասություններ: «Ինք (պատրիարքը—Ա. Խ.) պատժելու իշխանություն ունի՞ մի, և եթե չունի, տեբուլությունը պատրիարքարանին գործադիր իշխանությունն է, որ պատրիարքարանը օրենք մը շինե՞ տեբուլությունը զանի գործադրե»,—գրում էր «Մեղուն»⁸⁶: Պատճառաբանված էր նաև «Մեղվի» մյուս առարկությունը նշված օրենքի իրավաչափության դեմ. հայ մամուլն իր խոսքն ուղղում է ոչ միայն լուսավորչական, այլև բողոքական ու կաթոլիկ հայերին, իսկ մյուս կողմից, պարբերականներ էին հրատարակում նաև կաթոլիկ ու բողոքական հայերը: Այսպիսի իրադրության մեջ, կարծում էր «Մեղուն», լուսավորչական համայնքի պատրիարքական իշխանությունը իրավա-

առէ կարգավորել միայն իր դավանանքի շրջանակներում հրատարակվող մամուլը և այն էլ զուտ այնպիսի հարցերում, որոնք վերաբերում են այդ դավանանքի հայեթին⁸⁷։

Մամուլի ազատութեան դեմ պայքարելիս հետադիմականները չէին կարող հաշվի առնել այս առարկութիւնները։ Ազգային մամուլը վերահսկելու գործը պատրիարքը և նրա համակիր պահպանողականները համարում էին ոչ այլ ինչ, եթէ ոչ պատրիարքական առանձնաշնորհում։ Կառավարութիւնը իր հերթին, հակված չէր վերացնելու պատրիարքի այդպիսի իրավունքը, քանի որ դրանով հնարավորութիւն էր ստեղծվում միմյանց հակադրելու արեւմտահայերի կղերական իշխանութիւնը և աշխարհիկ առաջադիմական գաղափարախոսութիւնը։ Մյուս կողմից, մամուլի ազատութեան սահմանափակումը պահպանողականութեան համար մատչելի էր դարձնում հետեւյալ երկու նպատակը. նախ, նրանք արդարացնում էին Ազգային վարչութեան անգործունակութիւնը (որի պատճառը վերագրում էին ազատախոս մամուլին) և այնուհետեւ, պատվարում էին վարչութիւնը քննադատութիւնից։

Այսուհանդերձ, այս օրինագիծը ուղագրավ է այն տեսակետից, որ թուրքական իշխանութիւնները խրախուսել են դրա շուրջ խորացող ընդհարումները։ Հայտնի է, որ սահմանադրական ժողովներում ծայր առած և ծայր շունչեղ վիճաբանութիւնները, որ առիթ էին տվել Ալի փաշային «քառակուսի անիվներով սայլ» անվանելու սահմանադրութիւնը⁸⁸, մի հայտնի չափով պայմանավորված էին հենց կառավարութեան վերաբերմունքով։ Մ. Գ. Ռուլեն-Ժեկմենը այս առիթով ուղագրավ դիտողութիւն է անում. «Չի կարելի շխոստովանել,—գրում է նա,—որ վարչական այդ ամբողջ բարդ մեխանիզմի (սահմանադրական մարմինները—Ա. Խ.) գործողութիւնները վերջին հաշիւով կախված են Բ. Էռան՝ հասարակական ուժի միակ տնօրինողի բարի կամքից։ Մյուս կողմից անհնարին է, որ այդպիսի քանակութեամբ խորհուրդների և ժողովների միջև չծագեն տարաձայնութիւններ և բախումներ, որոնց արդյունքը պետք է լինէր ազգային գործի ավելի շուտ թուլացումը, քան ամրապնդումը»⁸⁹։ Ազգային վարչութեան վերոհիշյալ օրինագծի տեւական քննարկումը, որ ուղեկցվում էր առաջադեմ խմբագիր-հրատարակիչների հալածանքով, փաստորեն ջլատում էր հենց վարչութեան գործունակութիւնը։ Բացի այդ, ոչ 1860, ոչ 1863 թ. սահմանադրութիւններով, և ոչ էլ, առավել ևս՝ սուլթանական ֆերմաններով (որոնք համարվում են արեւմտահայերի սահմանադրութեան իրավական աղբյուրը) պատրիարքներին երբեք տրված չի եղել իրենց հանրութեան մեջ

պատժական օրենքներ մշակելու և կիրառելու իրավունք: Այդպիսի իրավասությամբ բացառապես օժտված էր օսմանյան պետությունը: Հեռեաբար, առանց Բ. դռան համաձայնության կամ թելադրանքի հնարավոր չէր զուտ արևմտահայերի տպագրական օրենքի գաղափարն անգամ: Եվ երբ կառավարությունը Թուրքիայում հրատարակվող մամուլի, այդ թվում և զարգացող թուրքական մամուլի մեջ նկատեց վտանգավոր միտումներ՝ մտքերը հեղաբեկելու գործում, ձեռնարկեց ընդհանուր օսմանյան լրագրական օրենքի մշակմանը: Այս պայմաններում քաղաքական ժողովի օրինագիծը զրկվում էր նույնիսկ կարծեցյալ լրջությունից:

Հանձնաժողովի ամենագործուն անդամներից երկուսի՝ Օտյանի և Սերվիլենի հրաժարականը քաղաքական ժողովին դրեց շտապ գործողությունների դիմել մամուլի դեմ՝ առանց սպասելու օրինագծի հաստատմանը: Դրանից հինգ օր անց, 1863 թ. հոկտեմբերի 25-ին ժողովն իր նիստին հրավիրեց «Մեղվի», «Մասիսի», «Կիլիկիայի», «Վարագյը հավատիսի», «Զեփյուռի» և «Ժամանակի» խմբագիրներին: Նրանց ծանոթացրեցին տպագրական օրենքի նախագծին, ապա հայտնեցին, որ մինչև դրա հաստատումը պետք է ենթարկվեն մի քանի հրահանգների: Դրանք էին՝ Ա. Կրոնի դեմ չգրել: Բ. սահմանադրության դեմ չգրել: Գ. Ազգային վարչության արածի և անելիքների դեմ չգրել: Դ. Անձնակազմության չդիպչել⁹⁰: Բացի այդ, կազմվելու էր մասնաժողով՝ գրաքննչական մի մարմին, որը հետևելու էր վերոհիշյալ հրահանգների կատարմանը: Որոշված էր, որ եթե պարբերականները «այս հրահանգաց հակառակ շարժին» քանի մը ազդարարութենե ետև Բ. դռան հրամանագրով կդադրին»: Խմբագիրներին պարտավորեցրին, որ զեղծումները քննադատելիս իրենց վերաբերմունքը պետք է հայտնեն իբրև անհատներ: Որոշվել էր պատրիարքարանի դիվանը տրամադրել խմբագիրներին, «որք կփափաքին ազգային ստույգ լուրեր հաղորդել»⁹¹:

Նշված որոշումները փաստորեն նշանակում էին դեռևս չհաստատված օրինագիծը պարտադրել պարբերականներին. մամուլի պարտականությունների համեմատ այստեղ ընդարձակվում էին Ազգային վարչության իրավունքների սահմանները: Քաղաքական ժողովի անձնապատասանությունը հասավ այնտեղ, որ կտրականապես արգելեց քննադատել ցանկացած անհատի՝ մինչև վերջինիս՝ «օրինոք» դատապարտվելը: Այսպիսով, հրահանգները զրկում էին մամուլի և հասարակական կարծիքի փոխադարձ շփումները և բացառում պարբերականների աֆենա-

շնչին ինքնուրույնությունը: Մամուլը վերածվելու էր սոսկ Ազգային վարչության ինֆորմացիան տարածող միջոցի:

Հրահանգների տակ շատորագրեցին «Մեղվի» խմբագիր Ա. Մուրատյանը և «Զեփյուռի» խմբագիրը: «Մեղուն» իր դիրքորոշումը հայտնեց մի քանի օր անց իր տպագրած «խմբագրական օրենք» հոդվածում: Այստեղ դատապարտվում է Ազգային վարչության՝ մամուլի դեմ արձակած բանադրանքը, տպագրական օրինագիծը և հրահանգները բնութագրվում են որպես սահմանադրության ոգուն հակասող օրենքներ⁹²:

Ազգային վարչությունը խիստ հիվանդագին ընկալեց «Մեղվի» ելույթը և նրա դեմ կիրառեց «Հրահանգների» երրորդ կետը («Ազգային վարչության բրածին և ընելիքներուն վրա չգրել»): Ա. Մուրատյանը կանչվեց պատրիարքարան՝ բացատրություններ տալու, ընդ որում, քաղաքական ժողովը սպառնացել էր չգալու դեպքում նրան «զապթիեով տանելու»: «Մեղվի» խմբագիրը հրաժարվեց ներկայանալ՝ այդ որոշումը կոչելով «բռնավորական և ապօրինավոր»⁹³ Պատրիարքը դիմեց ոստիկանությանը՝ «Մեղուն» խափանելու խնդրանքով, որից հետո հանդեսը խափանվեց (1863 թ. նոյեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 3-ը): Այս, ինչպես և «Մեղվի» 1863 թ. մարտի խափանումը, ցույց է տալիս, որ օսմանյան իշխանությունները արևմտահայ մամուլի զրաքննություն իրականացրել են ազգային մարմինների միջոցով և այս ասպարեզում նրանց հատկացրել լայն իրավասություններ՝ ընդհուպ մինչև պարբերականների խափանման առաջարկը:

Վերահրատարակված «Մեղվի» առաջին համարում հանդես եկավ նրա տնօրեն Հ. Սվաճյանը՝ բաց նամակ ուղղելով քաղաքական ժողովի ատենապետ Ստ. Ասլանյանին: Սվաճյանը բողոք էր հայտնում տպագրական ազատության դեմ վարչության բռնացումների և մանավանդ, «Մեղվի» դեմ ուղղված գործողությունների առթիվ: Հարկ է նշել, որ Սվաճյանին հաջորդած խմբագիրները՝ Հ. Հովվյանցը և Ա. Մուրատյանը ամբողջովին համամիտ են եղել տպագրական բռնացումների դեմ Սվաճյանի մղած պայքարին և շարունակել են այն: Այս պատճառով էլ նշված երկու հրապարակախոսներն էլ սեփական վաստակն են ներդրել «Մեղվի» դեմոկրատական ընթացքի և բովանդակության խորացման գործում: Տպագրական ազատության վերաբերյալ նրանց խմբագրականները և հոդվածները արևմտահայ հրապարակախոսության լուսավոր էջերից են և նպաստել են 60-ական թթ. դեմոկրատական մտավորականության գաղափարական զարգացմանը:

Վերոհիշյալ նամակում Հ. Սվաճյանը կտրականապես առարկում էր մամուլը քննադատության իրավունքից զրկելու ամեն մի փորձի դեմ և նախընտրելի էր համարում «Մեղուն» դաշարեցնել, քան պարտադրել նրան լռելու: Սվաճյանը ընդդիմանում էր կրոնի սպասավորների, սահմանադրության և Ազգային վարչության գործունեության դեմ չզրկելու հրահանգներին: Այն մեծ դժվարությունները, որ հաղթահարել է «Մեղուն» այս շրջանում, կարելի է պատկերացնել Ա. Մուրատյանի «Մտացածին անհնազանդություն մը» հոդվածով, որտեղ ներկայացվում են քաղաքական ժողովի բռնությունների, իշխանություններին «Մեղուն» մատնելու և այլ մեքենայությունների մասին⁴: Հետագայում ևս իր ընդհատումների համար «Մեղուն» պարտական էր քաղաքական կրոնական ժողովների չդադարող հալածանքներին:

Ազգային վարչության բռնացումները Կ. Պոլսի մամուլի և՛ հրահրեցին Զմյուռնիայի հայ հետադիմության եռանդը, «Ծաղիկ» հանդեսը հալածելու համար: Զմյուռնիայում սահմանադրական խմորումները ծայր էին առել դեռևս «Միության» (1860, 1861—1862) հրատարակության ժամանակ: «Միությանը» հաջորդած՝ Կր. Զիլինկիրյանի և Ա. Հայկունու «Ծաղիկ» տասնօրյան զմյուռնահայ համայնքում հետևողականորեն տարածում էր սահմանադրության հաստատման գաղափարը: Կանգնելով աշխատավորության շահերի պաշտպանության դիրքերում, «Ծաղիկն» իր տաղանդավոր հրապարակախոսների ու լրագրողների շնորհիվ լայն ճանաչում էր գտել արևմտահայ հանրության մեջ: Նրա աշխատակիցների ազդեցիկ հոդվածները, որոնք գրված էին օրվա հրատապ թեմաներով, նպաստում էին արևմտահայ ընթերցողի ազգային ինքնագիտակցության արթնացմանը, առաջնորդում նրան ժամանակի արևմտահայ կյանքի համար առաջադիմական հունով: Սոցիալ-քաղաքական բռնացումների դեմ «Ծաղիկի» պրոպագանդը հաջողություն ուներ դեմոկրատական երիտասարդության շրջանում, իսկ հետադիմությանը հասցրած նրա զորեղ հարվածները արձագանքվել էին ոչ միայն Բոսֆորի ափերին, այլև ամբողջ ազգային իրականության մեջ: «Ծաղիկի» կարևոր առանձնահատկությունը պետք է համարել նրա տեսական ընդգրկվածների լայն շառավիղը, արևմտահայ կյանքի կարևոր հարցերի լայնախոս մեկնաբանությունը՝ եվրոպական առաջադիմական գաղափարների տեսանկյունից: Զմյուռնիայի բուրժուա-ազլայական վերնախավը, որի կամայականությունները շարունակ դատափետվում էին այդ հանդեսի էջերում, նետվեց վտանգավոր ախոյանի դեմ՝ որպես ամբիոն օգտագործելով «Արշալույս արուրատյան» թերթը: Վերջինիս տագ-

նապ էին պատճառում «Մեղվի» և «Ծաղիկի» «անհնազանդ մտքերը», որոնք ամենուրեք հակադրվում էին խոհեմության պատվիրաններին: «Ազգային համերաշխություն» քարոզող Ղ. Պալդազարյանը պահպանողական հայեցակետից դատապարտում էր եվրոպական և ամերիկյան հասարակական բախումները՝ շրջանառության մեջ դնելով հետադեմ օտար մամուլի նյութերը⁹⁵: «Արշալույս արարատյանին» առանձնապես անհանգստացնում էր հակասահմանադրական խմբակցությունների մերկացումը «Ծաղիկի» էջերում: Ղ. Պալդազարյանը իր համերաշխությունն էր հայտնում Զմյուռնիայի համայնքում մյուսթեվելիական հին իրավունքից⁹⁶ զրկված լրամատերերին: «Ծաղիկը» ներթափանցել էր իր հակառակորդների հասարակական վարքագծի դասային հիմքերի ու շարժառիթների մեջ: Հինգ-վեց տարի շարունակ, նկատում էր Գր. Զիլինկիրյանը, Զմյուռնիայում կազմված է բռնասարների խմբակցություն, որի պարագլուխները «ազգային միապետական վարչության սանձը շատ ատեններե ի վեր իրենց ձեռքը անցուցած»՝ ընկճել են ամբողջ համայնքը⁹⁷: Գր. Զիլինկիրյանը բացահայտում էր նաև բուրժուական վերնախավի ու առաջնորդ Պ. Թագթագյանի ջանքերը՝ տարախոս մտավորականությանը ճնշելու գործում: Զմյուռնահայ երեւելիները հենվել են իշխանությունների աջակցության վրա, որն ապահովելիս մատնությունն ամենեւին էլ երկրորդական տեղ չի գրավել: «Քաջալերելու տեղ՝ վհատեցնել, պաշտպանելու տեղ՝ մատնելու տրամադրություն ունենալ»,— բնութագրում էր նրանց գործելակերպը «Ծաղիկը»⁹⁸: 1863 թ. մարտին «Ծաղիկը» մերկացրեց աղայական խմբակցությունների ու առաջնորդի շարաշահումները գավառական ժողովի ընտրություններում: Համայնքի վարչության մեջ նրանց իշխող դեր գրավելու ձգտումը, ինչպես բացատրում էր հանդեսը, թելադրվում էր զուտ առևտրական շահերով: «Ծաղիկը» թափանցում էր համայնքի հասարակական ներհանգցությունների սոցիալական պատճառների մեջ⁹⁹:

Հակառակորդները այդ հողվածք Զմյուռնիայի վալուն ներկայացրեցին իբրև առաջնորդին անարգելու ապացույց: Պարբերականը խափանվեց յոթ ամսով՝ 1863 թ. մարտի 10-ից մինչև նոյեմբերի 1-ը: 1857 թ. տպարանների մասին օրենքին համապատասխան՝ փակվեց նաև «Ծաղիկը» տպագրող Տետեյան տպարանը¹⁰⁰:

«Ծաղիկի» քննադատական ընթացքը և համագործակցությունը Կ. Պոլսի «Մեղվին», ցույց է տալիս, որ արևմտահայ այս երկու խոշոր գաղթօջախներում դեմոկրատական մամուլը իր ինքնությունը գտնում է մամուլի ազատության համար մղվող սկզբունքային պայքարի մեջ:

Մամուլի ազատության գաղափարը «համաշխարհային մեծ լուզում» դառնալու իրողությունը Վ. Ի. Լենինը բացատրում է նրանով, որ «այն արտահայտում էր առաջագեմ բուրժուազիային, այսինքն՝ նրա պայքարը բնոգեմ տերտերների ու թագավորների, ֆեոդալների, կալվածատերերի»¹⁰¹։ Ֆեոդալական հասարակության և այն պաշտպանող մտածողության ու գաղափարների դեմ էր ուղղվում նաև արևմտահայ դեմոկրատների՝ մամուլի ազատության պահանջը։ Նրանց հայեցողության մեջ դա վճռական նախապայման էր Օսմանյան Թուրքիայում ազգային, սոցիալական ու տնտեսական բռնացումները բացահայտելու համար։

Օսմանյան Թուրքիայում մամուլի գրաքննությունը ձևավորվել է մամուլի իրավական դրույթյան կարգավորմանն ուղղված միջոցառումների հիմքի վրա։ Մայրաքաղաքում պարբերականների հրատարակության արտոնագրի հարցը տնօրինում էին մեծ վեզիրը և լուսավորության մինիստրությունը (արտոնագիրը տրվում էր սուլթանական ֆերմանով), իսկ գավառներում՝ վալիները։ 1840—1850-ական թթ. մամուլը, այդ թվում և հայերեն պարբերականները ենթարկվում էին որոշ կանոնարկման, որ վերաբերում էր դրանց հրատարակության, խափանման ու վերահրատարակության պայմաններին։ Ինչ վերաբերում է հայ մամուլի բովանդակությանը, ապա այն վերահսկում էին պատրիարքը և հոգևոր ժողովը։ 1857 թ. տպարանների վերաբերյալ օրենքը և 1858 թ. քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը միայն մասամբ անդրադարձան մամուլին՝ վերաբերվելով ոչ թե նրա իրավական վիճակի կարգավորմանը, այլ կառավարության կողմից նրա բնոգնությունը վերահսկողությանը և պարբերականների բարեհոսությունը։

Մամուլի իրավական անորոշ դրությունը հնարավորություն տվեց արևմտահայ հետադիմությանը՝ սահմանադրության շուրջ մղվող պայքարի և նրա հաստատման ժամանակաշրջանում ճնշում գործադրելու առաջադիմական խմբագիր-հրատարակիչների վրա։ 1860-ական թթ. հասարակական հոսանքների ձևավորման ու հակադրության պայմաններում Ազգային վարչությունը մշակեց, այսպես կոչված, «Տպագրական օրենքի նախագիծ», որի նպատակն էր օրինականացնել իր բռնությունները դեմոկրատական մամուլի վրա։ Դրա հաստատումից կամ կիրառումից անկախ, պատրիարքարանը և Ազգային վարչությունը

պատժի և խափանումների էին ենթարկում «Մեղու», «Մուսայթ Մաս-
յաց», «Ծաղիկ» և այլ պարբերականները:

Հայ հանրության մեջ մամուլի շուրջ ընթացող հասարակական պայ-
քարը խրախուսվում էր Բ. դռան կողմից, որին ձեռնադրում էր արևմտա-
հայության ազգային միասնության թուլացումը: Սակայն ազգային
տպագրական օրենքը չհաստատվեց (1863)՝ երեսփոխանների կողմից
պաշտպանություն չգտնելու, այլև այն պատճառով, որ Բ. դռան արդեն
ձեռնարկել էր մշակելու ընդհանուր օրենք՝ Թուրքիայի ամբողջ մամուլի
համար:

2. ՄԱՄՈՒԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐՈՒ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՆՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1860-ական թթ. արևմտահայ մամուլի գործիչները լուսավորության
և ազգային ինքնագիտակցության վերելքի երաշխիքներից մեկն են հա-
մարել մամուլի ազատությունը: Այդպիսի ըմբռնումը հիմնականում հան-
գում էր հետևյալին. խոսքի ու տպագրության ազատությունը անհատի
ազատության հատկանիշներն են: Եթե անձեռնմխելի են անհատի քա-
ղաքացիական իրավունքները, նույնչափ և անձեռնմխելի են նրա մտքի
արդյունքները: Հետևաբար, տպագրական օրենքը պետք է պաշտպանի
մարդու հոգևոր իրավունքները՝ խորհելու, խոսելու, գրելու և տպագրե-
լու ազատությունը¹⁰²:

Արևմտահայ դեմոկրատական գործիչների հայեցողության մեջ մա-
մուլի ու հրապարակախոսության բովանդակությունը սերտորեն առնչ-
վում էր հասարակական կարծիքին: Որքան ազատ է հասարակական
կարծիքն իր դրսևորումների մեջ, այնքան անմիջական է նրա ազդեցու-
թյունը մտքերի ու գաղափարների ու սրանց միջոցով՝ հասարակական
հիմնարկների զարգացման վրա: Մամուլի ազատությունը անմիջակա-
նորեն կախում ունի հասարակության ազատությունից և սրա սահմա-
նափակումը չի հապաղում իր բացասական հետևանքներով ծանրանա-
լու տպագիր խոսքի վրա: Նշված գործիչները կանգնած էին իրենց ժա-
մանակի և իրականության համար առաջավոր՝ բուրժուադեմոկրատա-
կան դիրքերի վրա: Բնականաբար, նրանք բաժանում էին նաև այդ
մտայնության հայտնի սահմանափակությունը՝ մամուլին վերագրելով
ժողովրդի և կառավարության փոխհարաբերությունների անաչառ կար-
գավորողի դեր: Նրանք չէին անգիտանում մամուլի և հասարակական ու
քաղաքական պայմանների կապը, այդ պայմանների բարելավումը նշա-
նակալի չափերով կախման մեջ էին դնում մամուլի ազատ գործունեու-

թյունից: Տպագիր խոսքի ազատութեան սահմանափակումը դեմոկրատները դիտում էին իբրև բռնութիւն և դրանով իսկ կասկած էին ներշնչում այդպիսի քաղաքական իշխանութեան արդարացիութեան հանդեպ: Հ. Սվաճյանը, Գր. Զիլինկիրյանը, Կ. Փանոսյանը, Մ. Մամուրջանը և մյուսները ժողովրդի իրավունքներից էին բխեցնում մամուլի անաշառ ու հրապարակային քննադատութիւնը: Սահմանադրութիւնը նրանք մի նշանակալի չափով համարում էին մտքերի լուսավորութեան արդյունք, որի տարածման մեջ կարևոր դեր էին վերապահում ազատ մամուլին: Բնականաբար, այսպիսի գնահատականը մամուլին վերագրում էր նաև դեմոկրատիայի ընդդիմադիր ուժերին համոզելու, այլ կերպ ասած՝ հասարակական հավասարակշռութիւն ապահովողի առաքելութիւն: «Մեղվի» զմեռնացի նամակագիրը, հավանաբար Գր. Զիլինկիրյանը, այսպես է ձևակերպել այդ ըմբռնումը. «Հայոց համար գրելու առաջին ազատութիւնը մեծ բարոյական զորութիւն մ'է, որ առանց բռնութեան ազգին քաղաքական գլուխները գտնվողները, ազգին հոգևոր հովիվները սեպվողները միշտ իրենց պաշտոնին մտադիր ըլլալու կորդն և գեթ երկյուղածութեանց մեջ կպահն անոնք, որ բարձր պաշտոն մը հարստահարութենէն և բռնութենէն չեն կրնար զատ ըմբռնել»¹⁰³:

Հետադիմութեան հետ շարունակվող ընդհարումների պայմաններում դեմոկրատական հրապարակախոսները պետք է համոզվեին այս տեսակետի միակողմանի ակնկալութիւնների մեջ. այն հասարակական պասսիվութիւն էր վերագրում բռնութիւնների հակամետ արևմտահայ բուրժուական վերնախավերին և թուլացնում դեմոկրատական խավերի խոհերն արտահայտող մտավորականութեան հետևողականութիւնը: Հետագայում՝ ազգային վարչութեան հետ բանավեճի առավել վճռական փուլերում դեմոկրատ-հրապարակախոսները երկրորդական տեղ մղեցին մամուլի կարգավորիչ դերի վերաբերյալ տեսակետը: Այս իմաստով ուշագրավ է «Մեղվի»՝ իրերը և կացութիւնը արդեն իրենց իսկական անունով կոչելու մոտեցումը 1862 թ., երբ ի հաճույս հետադիմութեան՝ կառավարութիւնը դադարեցրել էր սահմանադրութիւնը. «Ազգին ամենափոքր մասը, — գրում էր հանդեսը, — այնպիսի դրութեան տեր է և այնպիսի անմեկնելի միջոցներու տնօրէն է, որ ուզած ժամանակը կարող կըլլա մեծագույն և օրինավոր մասին վրա բռնանալ և անպատիժ օրինազանցութեամբ իր կամքը առաջ քշել»¹⁰⁴:

Մամուլի ազատութիւնը դեմոկրատներին պատկերանում էր իբրև ժողովրդի ազատ կամահայտնութիւն. ժողովրդին լուսավորելու առաքելութիւնը մամուլն իրականացնում է հասարակական կարծիքը ներ-

կայացնելու միջոցով՝ վեր բարձրանալով անհատական ըմբռնումներից և հաղթահարելով դրանք: Ուշագրավ է «Մեղվի» մեկնաբանությունը հասարակական կարծիքի և մամուլի փոխհարաբերության վերաբերյալ: Հասարակական կարծիքը նա վերագրում էր ազգի ողջամիտ մասին, որն անկողմնակալ է և վեր՝ անհատական կարծիքի սահմանափակությունից: Ազգային քաղաքական ժողովի կազմած նախագծում, մինչդեռ, հասարակական կարծիքը գնահատվում էր իբրև ճշմարտացի և սխալ անհատական կարծիքների մեխանիկական միավորում, և այս պատճառով օրենսդիրը առաջարկում էր «կարծյաց ազատության չափ մը» դնելու օրինավոր ձև՝ գրաքննություն¹⁰⁵: Այս կապակցությամբ «Մեղուն» բանավիճում էր «Արշալույս արարասյանի» հետ, որը կրկնելով մամուլի օրինագծի դրույթը, պնդում էր, թե սահմանադրությունը կվերածվի անիշխանության, եթե «ազգային լրագիրներու ազատության չափ մը չգտնվի»¹⁰⁶: Սակայն հենց ազատության չափ գտնելու այդ մտահոգության հիմքում «Մեղուն» նկատում էր բռնության նկրտումները: Կարծիքի ազատության չափը, եզրակացնում է նա, նրա ճշմարտացիությունն է, որի վրա և հենվում է անհատի իրավունքը: Նույն կարծիքն էր պաշտպանում նաև Գր. Չիլինկիրյանը, երբ վկայակոչում էր ֆրանսիացի մի հեղինակի՝ «Իրավունքը ազատության չափը ու միանգամայն կանոնն է»¹⁰⁷: Անկողմնակալ քննադատության միջոցով հասարակության մեջ հեղաշրջում իրականացնելու գաղափարը Չիլինկիրյանը պրոպագանդում էր նաև 1880-ական թթ. սկզբին՝ իր «Ուղևորություն ի Կ. Պոլիս» գրքում¹⁰⁸:

«Մեղուն» կարծում էր, որ սնվելով հասարակական կարծիքից, մամուլը, իր հերթին, ներգործում է նրա վրա, ընդլայնում նրա շրջանակները՝ ի հաշիվ դեմոկրատական խավերի լայն ընդգրկման: Ազատ մամուլից ստանալով ճիշտ և ուղիղ գաղափարներ ազգային խնդիրների մասին, ազգը առավել ճշմարտացի է դարձնում իր դատողությունները և կարծիքը: Դրանով է մամուլն ապահովում ազգային հաստատությունների ու գաղափարների վրա դեմոկրատիայի ներգործության ուժեղացումը:

1863 թ. մարտին սահմանադրության վավերացման առթիվ «Մեղուն» առաջ էր քաշում մամուլի ազատության պահանջը՝ նոր ազգային վարչությանը հորդորելով չկրկնել նախորդ վարչության սխալները և բռնության հակումները: «Խորհրդածություն մը սահմանադրության առթիվ» հոդվածում նշվում է, որ մամուլը ազատորեն պետք է քննության առնի ազգային մարմինների գործունեությունը և հայտնի իր սեփական կարծիքը: Պարբերականը կողմնակից է անպատու դանակովները

արգելելուն, թակայն վճռականորեն պաշտպանում է «հանդարտ վիճաբանությունների» ազատությունը, որի հետ և առնչում է «ազգային հառաջադիմությունն ու սահմանադրության հարատևությունը»¹⁰⁹:

Մամուլի ազատության անհրաժեշտությունը «Մեղուն» հիմնավորել է նաև թարգմանական հոգևածներով: Առհասարակ այս հարցում պարբերականները վկայակոչում են ֆրանսիական մամուլի ազատության բուրժուական պաշտպաններին՝ է. Մարտենին, Ժ. Սիմոնին և այլոց, որոնց հրապարակային ելույթներն ու աշխատություններն ուղղվում էին ռեստավրացիայի ժամանակաշրջանի և նապոլեոն Ներոնի 1852 թ. մամուլի օրենքների դեմ: Հակադրվելով խավարամտության այն դիրքորոշմանը, որ մամուլի ազատությունը անհրաժեշտորեն իր հետ կրերի հասարակական անարխիա, այս գործիչները պնդում էին, որ սպասվող անարխիան կարելի է վերացնել լուսավորության ու բարոյականության տարածման միջոցով: Այսպես, է. Մարտենի «Առաջադիմություն» հոդվածում, որ թարգմանաբար տպագրել են «Մեղուն» և «Ծաղիկը», հետադիմության դեմ է ուղղվում «ճշմարտության ճանաչողության», «հոգիին իշխանությունը իմացականության ստորնություններին» հակադրելու ուղին¹¹⁰:

Ֆրանսիական բուրժուական լիբերալիզմի գաղափարները՝ մամուլի ազատության և այն կաշկանդող բռնությունների դեմ՝ հաճախ հագեցած բարոյախոսական քարոզներով ու մտահայեցողական վերլուծությամբ, արևմտահայ դեմոկրատների պրոպագանդի մեջ բեկվում էր որոշակի հասարակական խնդիրներ հետապնդող նպատակների: Դա արտահայտվում էր հետևողական սահմանադրական դիրքորոշման, կղերական ու աշխարհիկ ջոջերի շարաշահումների սուր և համարձակ քննադատության, ժողովրդի ոտնահարված սոցիալական ու քաղաքական իրավունքների պաշտպանության մեջ: Հ. Սվաճյանն ու Գր. Զիլինկիրյանը քաջատեղյակ են եղել լուսավորիչներին՝ Խուսեյի, այնուհետև է. Մարտենի ու Ժ. Սիմոնի՝ մամուլի ազատության վերաբերյալ տեսակետներին: «Ծաղիկը» էջերում թարգմանելով վերջինի «Խորհելու ազատությունը» աշխատությունը, Գր. Զիլինկիրյանը դրան կցել է իր առաջաբանը, որտեղ առավել ծանրանում է խոսքի ու մամուլի ազատության բնափիլիսոփայական հիմքերի, նրանց զարգացման պայմանների ու հետևանքների վրա¹¹¹: Եկատենք, որ «Ծաղիկը» խմբագիրը շրջանցում էր Ժ. Սիմոնի գաղափարներին հատուկ որոշ կողմերը (կրոնի հաշտեցում գիտության հետ, սպիրիտուալիզմի դրսևորումներ), հիմնականում օգտագործելով նրա այն մտքերը, որոնք հիմնավորում են ազատ խոս-

քի ու կարծիքի անհրաժեշտությունը հասարակական առաջարժման համար: Առհասարակ 1860-ական թթ. արևմտահայ դեմոկրատական գործիչներին՝ մամուլի ազատություն վերաբերյալ դատողություններում զգացնել է տալիս ուսումնառության դպրոցը, ծանոթությունը եվրոպական մտածողների տեսական գիտնացին¹¹², թեև հարկավոր դեպքերում շրջանցվում են նրանց հասարակական դավանանքի որոշ կողմերը: Գ. Կոստանդյանը՝ արևմտահայ փիլիսոփայական մտքի ապագա խոշորագույն ներկայացուցիչը, «Մաղիկի» էջերում մամուլի ազատությունը պաշտպանում էր ոգեփիլիսոփայության ինչ-ինչ սկզբունքների վկայակոչումով: 1860 թ. Գ. Կոստանդյանը «Միություն» մեջ տպագրեց «Հայ ազատախոսությունը» հոդվածը՝ անվերապահորեն իր համակրանքը հայտնելով հայ մամուլում նոր հայտնված քննադատական ուղղությունը և դրա իրական դրսևորումը տեսնելով «Մեղվի» էջերում:

Ազգային վարչության բռնացումները քննադատելիս, «Մեղուն» ցույց էր տալիս, որ նա խախտում է իր իրավասության սահմանները, կամայականորեն ստանձնում և՛ օրենսդրի, և՛ օրենքը կիրառող գործադիր իշխանության ֆունկցիաներ: Եթե վարչությունը տպագրական հանցանքը դիտում է իբրև քրեական հանցանք, ապա այդ հանցանքը պետք է դատաստանի ենթարկվի դատարանում և ոչ թե վարչության վճիռներով, եզրակացնում է «Մեղուն»: Այս պայմաններում «Մեղուն» պետք է օգտվեր, այն էլ միայն մամուլը դատապարտությունից ազատ պահելու նպատակով, օսմանյան համապատասխան օրենքի չգոյությունից: Բանավիճելով «Ժամանակի» հետ, որը ամբողջովին պաշտպանում էր վարչության հետադիմական գործողությունները առաջադիմական պարբերականների դեմ, «Մեղուն» բացահայտում էր այդ գործողությունների ապօրինությունը: Այստեղից էին սկսվում նրա սկզբունքային առարկությունները մամուլի ինքնուրույնությունը ոտնահարող Ազգային ժողովին:

Առանց օրենքի և դատի խափանումները վարչական բնույթ ունենին և կատարելապես շրջանցում էին խմբագիրների առարկություններն ու քաղաքացիական իրավունքները: Վարչական խափանումները, որոնք պարբերականների խարազանն էին մամուլի վերաբերյալ օրենքից և նախնական գրաքննությունից առաջ, սկիզբ էին առել կայսրության մեջ մամուլի հայտնվելու հետ միասին և հարատևել նրա ամբողջ պատմության ընթացքում:

«Մաղիկը» մամուլի ազատությունը առնչում է նրա քաղաքացիական առաքինության հետ. նրա առաջին և անհրաժեշտ պարտքն է պաշ-

քարել անարդարության դեմ կամ հրաժարվել ասպարեզից՝ դարձյալ տեղի չտալով ուժի առջև: Գր. Զիլինկիրյանը այս սկզբունքին հաստատուն կերպով հետևել է իր հանդեսի հրատարակության ամբողջ ժամանակաշրջանում: 1865 թ., երբ զմյուռնահայ հետադիմությունը պարբերականի հրատարակության համար ստեղծեց անտանելի պայմաններ, հրապարակախոսը այն տեղափոխեց Կ. Պոլիս՝ այնտեղից շարունակելով իր մերկացումները:

«Թե ինչ է մամուլը» և «Մամուլի ազատությունը»¹¹³ հոդվածներում Զիլինկիրյանը հասարակական կարծիքը ճշմարտապես արտահայտող մամուլը դիտում է իբրև բռնակալության դեմ պայքարի ազդեցիկ միջոց: Ավատատիրական հարաբերությունների բացասման գործում ընդգծելով մամուլի դերն ու նշանակությունը, «Մաղիկի» խմբագիրը ծառանում էր օսմանյան հետամնաց իրականության դեմ: Նա մամուլի հասարակական առաքելության մեջ ներդնում էր կոնկրետ իմաստ՝ ակնկալելով իրավազուրկ ժողովրդի պաշտպանություն, սոցիալական ու տնտեսական հարստահարությունների անխնա մերկացում:

Ազատ մամուլի համար արևմտահայ հրապարակախոսների ելույթները առավել սրույթուն ստացան այն ժամանակ, երբ նրանք կտրուկ քննադատության ենթարկեցին ազգային տպագրական օրինագիծը՝ «Մեղվի» և «Մաղիկի» բազմաթիվ ելույթները, տեսական հիմնավորումները և վկայակոչումները ըստ էության ստացան գործնական նշանակություն: Դրա հասարակական կարևորությունը ցույց տալու տեսակետից հատկանշական է այն բանավեճը, որ ծավալվել էր վարչության, սրա ձայնափող մամուլի և դեմոկրատ-հրապարակախոսների միջև: Դա սոսկ մամուլի ազատության վերաբերյալ բանավեճ չէր, այլ արտացոլում էր բանավիճող կողմերից յուրաքանչյուրի պատկերացումները սահմանադրության բովանդակության ու կիրառման վերաբերյալ: «Մեղուն» և «Մաղիկը» այդ օրինագիծը իրավացիորեն դիտել են որպես մամուլի վրա Ազգային վարչության լուծը օրինականացնող իրավական ակտ: «Մեղվի» մի թղթակից ըստ էության, միակողմանի էր համարում միայն մամուլի «ազատության չափը որոշող» իրավական սահմանումները. օրինագիծը, նրա կարծիքով, պետք է ենթադրեր նաև մամուլը վարչական ոտնձգություններից պաշտպանող նորմերի մշակում: Իր այս շատ կարևոր վերապահությամբ հեղինակն առարկում էր «Մեղվի», «Մյունատիի» և «Մաղիկի» դեմ ուղղված քաղաքական ու կրոնական ժողովների այն մեղադրանքին, թե ազգային երկպառակությունների պատճառը նրանց ազատախոսությունն է: «Ազգային մեկ քանի լրագրաց անսանձ ազատախոսության» դեմ բողոքողները այն լրագիրներեն

ավելի անդուռն բերնով և լիրբ ու անանուն հայտարարություններով ոչ միայն այս և այն նախատեսքին, այլև ընդհանուր, քաղաքական և կրոնական ժողովներին, մինչև սրբազան պատրիարքն հանիրավի առարկեցին: Ահա ասոնց հայհոյությանց համար պիտի ըլլա այն շափը, այն տեսակ բիրտ և անխմաստ գրությանց համար պիտի սահմանվի սույն սանձը»¹¹⁴, — գրում էր նա:

Ըստ էության, այս հոգվածը պետք է դիտել իբրև հորդոր վարչությանը՝ ազատամիտ օրինագիծ ստեղծելու համար: Հետաքրքիր է, որ հոգվածագիրը հույս է հայտնում, թե վարչությունը նախագիծը կկազմի Սերվիլենի խոսքերով ասած՝ «կարծյաց ազատության սկզբունքը իր շինելիք կանոնագրին հիմ բռնելու» սկզբունքով:

Մամուլի ազատությունը նրա հասարակական դերով էր հիմնավորում «Ծաղիկը»: Եթե «Ազգային երեսփոխանություն և ազգային օրագրություն» հոգվածում¹¹⁵ ազգային երեսփոխանությունը դիտվում է իբրև ազգի կամքի արտահայտիչ, ապա մամուլը ներկայացվում է իբրև այդ կամքի իրականացումը հսկող ժողովրդի իրավունք: Ժողովուրդը, եզրակացնում էր Գր. Զիլինկիրյանը. «ունի հասարակաց ձայն մը և անոր աթոռն է հայ օրագրությունը»¹¹⁶: Մամուլի ազատությունը նա համարժեք է համարում ժողովրդի կամահայտնությանը, բռնադատմաներն ազատության վրա՝ բռնացում այդ կամահայտնության վրա: Ուրեմն, «Ծաղիկի» խմբագրի հայեցողության մեջ մամուլի ազատությունը նույնանում է սահմանադրական ազատությանը և ապահովում վերջինի օտարումը:

Մամուլի ազատությունը, ինչպես Զիլինկիրյանն էր կարծում, կոնկրետանում է նաև երեսփոխանական վարչության գործունեության նկատմամբ վերահսկողություն սահմանելու մեջ: Այդ էր հետամտում նրա սկզբունքային առարկությունը Ազգային վարչության գործունեության, ինչպես և կրոնի դեմ չգրելու պատվիրանների դեմ: Ազգային վարչության գործողությունների գնահատականը դեմոկրատական մամուլը չիտում էր իբրև սահմանադրությունն անվճար պահելու նախապայման և բացահայտում էր այդ պատվիրանների ամբողջ վնասակարությունը: Ազգային վարչության «ըրածի և ընելիքի» դեմ գրելու արգելքի ակնհայտ պարողիա պետք է համարել «Մեղվի» առաջնորդողներից մեկի վերնագիրը՝ «Ուսումնական խորհրդին ըրածն ու Ազգային վարչության ընելիքը»¹¹⁷: Դեմոկրատական պարբերականը ցույց էր տալիս, որ ազգային մարմինների գործունեությունը այսուհետև ևս պետք է գտնվի իր ուղադրության կենտրոնում և հարկ եղած դեպքում քննադատվի:

«Տպագրական կանոնի ուրվագիծը» հոդվածում Գր. Զիլինկիրյանը Ազգային վարչությունը քննադատությունից վեր դասող ձևակերպումը համարում է «բռնասեր իշխանությանց հատուկ սկզբունք»¹¹⁸։ Նա թափանցել է նաև հետադիմական օրինագծի հասարակական շարժառիթների, մասնավորապես մամուլը ճնշելու գործում լիբերալ գործիչների և կղերապահայանողականների մերձեցման իրողության մեջ։ «Մեր ազգին մեջ,—գրում է նա,—քանի մը դավադիրներ կան, որոնք գոյություն ունին և որոնց պարագլուխները թեև անտարբեր կերևան ի հեռուստ Ազգային վարչության ընթացքին, ալ միշտ իրենց մատը կնըշմարվի ամեն գործերու մեջ, կզգանք, թե հանցական կամ հետադիմական նպատակի մը համար շարժող այդ մարդերու թաքուն ազդեցութենեն ազատ չմնար վարչությունը կազմող անձերու մեկ մասը»¹¹⁹։

Թափանցիկ ակնարկն ուղղվում էր հակասահմանադրական ջոջերին, օսմանյան ժառանգության մեջ գտնվող էֆենդիական դասին ու հետաձայաց կղերին, որոնց մտայնությունը 50-ականի վերջին և 60-ականի սկզբին արտահայտում էին Հ. Զամուռճյանի «Երևակը» և Գր. Տեյիրմենճյանի «Արևելյան դարը»։ Իսկապես, հանդեսի ուշադրությունից չէր կարող վրիպել գաղափարական մի այնպիսի հակառակորդ, ինչպիսին Հ. Զամուռճյանն էր՝ «Խավարյալների» առաջատարը և Երուսաղեմի հետադիմության պաշտպանը¹²⁰։

Գր. Զիլինկիրյանը առարկում էր կրոնի դեմ չգրելու պահանջներին։ Կրոնական բարոյականության քննադատությունը լուսավորության իրականացման պայմաններից մեկն է, բանականության իրավունքը, պրնդում էր նա։ Կրոնի ճշմարտությունը վիճարկելու իրավունքից զրկելը կնշանակի անհատին զրկել ազատ կարծիք հայտնելու հնարավորությունից։ «Կրոնքին դեմ գրելը զայն անարգել և նշավակել չէ և ներկա դարուս մեջ այնպիսի անհերքելի ճշմարտություն մ'է այս, որ նույնիսկ կառավարությունները (իմա Եվրոպայի—Ա. Խ.) ճանչցած են այս իրավունքը»,—գրում է նա¹²¹։

Զմյուռնացի հրապարակախոսը հիմնավոր առարկություններ էր անում հետադիմության այն փաստարկին, թե քանի որ մամուլի ազատությունը տեղի է տալիս ժայրահեղությունների, ապա այն անթույլատրելի է։ Եթե որոշ թերթեր մոռանալով պատշաճությունը և իրենց ազատության շափը, բորբոքում են սրա կամ նրա հակակրանքը, ապա դա դեռևս հիմք չի տալիս բոլոր թերթերի հանդեպ բռնություն գործադրելու. «Մի՞թե այս բավական զորավոր պատճառ մ'է մյուս ամեն միտքերու վրա նիգ մը դնելու և անոր լեզուն շղթայելու համար»¹²²—գրում է նա։

Գր. Զիլինկիրյանը դատափետում էր հասարակական արժեքից զուրկ, սոսկ կրքով և անձնական նպատակներով առաջնորդվող պարքերականները: Հայ մամուլի, որպես հասարակական կարծիքի արտահայտչի բովանդակությունը նա չի տում է զարգացման պրոցեսի մեջ. մամուլն ապրում է իր ինքնահաստատումը այնքանով, որքան ճշմարտացի է դրսևորում հանրային կարծիքը: Հակառակ դեպքում այդ կարծիքի միանգամայն պատճառաբանված անտարբերության պատճառով հասարակականորեն անարժեք պարբերականները կամ դադարում են, կամ քաշը տալիս իրենց արհամարհված գոյությունը:

Այսպիսի դատողություններից չպետք է եզրակացնել, որ Զիլինկիրյանը ընդհանրապես դեմ էր հասարակական կարծիքը չբաժանող անհատական մտայնությանը կամ ինքնատիպ մոտեցմանը: Ընդհակառակն, իրրե դեմոկրատ մտածող, նա կողմնակից էր անհատական ազատությանը, որը փոխադարձ շփումների պրոցեսում իր կնիքն էր դնում հասարակական կարծիքի վրա և, ի վերջո, գերաճում հասարակական ազատության: Ժամանակին Հեգելը նկատում էր, որ «Մամուլի ազատության բնորոշումը, որպես ամեն ինչ խոսելու և գրելու ազատության, անալոգն է այն բնորոշման, որ տրվում է ազատությանն ընդհանրապես՝ խրքե ամեն ինչ անելու ազատություն: Այդպիսի խոսքը վերաբերում է դեռևս անկիրթ, պարզունակ և մակերեսային պատկերացմանը»¹²³:

Գր. Զիլինկիրյանը այս դեպքում նկատի ուներ առաջավոր հասարակական շարժումներին ընդդիմացող կղերամիությանական մտայնության մամուլը. «Այսքան տարիներե ի վեր այնքան հայ թերթեր երևցան հայ գրականության ասպարեզը, և հետզհետե, բացի մեկ քանի են, ամենքն ալ՝ ոմանք ավելի և ոմանք՝ նվազ, լույս տեսնելով աներևութացան... Ստիպված ենք կարծելու, թե այնպիսի թերթեր հրատարակվեցան մեր մեջ և ասոնց մեկ քանին տակավին կհրատարակվին համոթ և ի նախատինս հայ մամուլի անվան, որոնք, արդարև, խաղալիկի տեղ դրին ինչ որ նվիրական, պատկառելի և ազգերու նեցուկն է և հայ հասարակության զգվանք տվին»¹²⁴:

Դիտողությունը ճշմարիտ էր. իրենց գաղափարական աղքատության և հասարակական իրողությունների կամայական մեկնաբանության պատճառով ընդունելություն չգտան Հ. Չամուռճյանի «Հայաստանը», «Զոհալը» և «Երեակը», Գր. Տեյիրմենճյանի «Արևելյան դարը» և այլ սարքերականներ: Գր. Զիլինկիրյանը Հ. Սվաճյանի «Մեղվի» հետ միասին մշտապես պայքարել է Հ. Չամուռճյանի հետադիմական գաղափարների դեմ՝ նրան համարելով հայ կղերամտության պատվարը:

1860-ականի առաջին կեսին Հ. Չամուռնյանը, որ անվերապահորեն պաշտպանում էր Երուսաղեմի առանձնաշնորհյալ վիճակը՝ արժանացավ դեմոկրատների մերկացնող քննադատության¹²⁵:

Մ. Մամուրյանի հայացքները մամուլի և կարծիքի ազատության մասին՝ բնութագրական կողմերով լրացնում են հայ առաջավոր մտավորականության դիրքորոշումը այս հարցում: Բանականությանը նա ներքնապես հատուկ է համարում ամեն ինչ քննության առնելու, վերլուծելու և գնահատելու կարողությունը, իսկ դրա հնարավորությունը դիտում է միայն ազատության մեջ: Ազատ քննությունը Մամուրյանը տարածում էր իրականության ցանկացած կողմի՝ հասարակական հիմնարկների, կրոնական գաղափարախոսության ու բարոյականության վրա, որ պետք է իրականացվեր ազատ մամուլի միջոցով: Օսմանյան բռնակալության պայմաններում այսպիսի կարծիքն ուղղվում էր այդ բռնակալությունը մարմնավորող ու վերարտադրող հասարակական կարգերի դեմ և ընդառաջում ազգային լուսավորության ու ինքնորոշման գաղափարներին: Մամուրյանի կարծիքով ազատ կարծիքի դեմ ուղղված բռնությունը խաթարում է ազատության ձգտումը մարդու մեջ և այլասերում «բնական ու ընկերական հարաբերությունները»: «Ինչպես նյութական, նույնպես և մտային առևտուր մը կա, այս առևտուրը փոխանակության միջոցով կկատարվի և ուր որ ազատ փոխանակություն չկա, ընկերությունը մնայուն (իմա անշարժ—Ա. Խ.) վիճակի մեջ կգտնվի»¹²⁶,—գրում էր նա:

Մամուրյանը քանիցս ելույթ է ունեցել քաղաքական ժողովի մամուլի օրինագծի դեմ: Տպագրական ազատությունը նա դիտել է որպես գաղառական զանգվածների կրթության, լուսավորության և նրանց ազգային ինքնագիտակցության զարգացման անհրաժեշտ միջոց: 1861-ից ի վեր ազգային իշխանությունների գործունեությունը գնահատելիս նա բնութագրման չափանիշ է դարձրել նրանց վերաբերմունքը մամուլի ազատության նկատմամբ:

Օրինագծի լիբերալ-սայթաքուն ձևակերպումները պահպանողական հրատարակություններն օգտագործեցին ղեմավրատական մամուլի և հրապարակախոսների վրա հարձակվելու համար: Զմյուռնիայի «Արշալույս արարատյանը» 1860 թ. սահմանադրության անհաջողությունը բացատրում էր նրանց անխոհեմությամբ, ժողովրդի մեջ, իբր, չարիք և երկպառակություն տարածող մտքերով: Ղ. Պալազարյանի թերթը պահպանողական հայեցակետ ուներ Ազգային վարչության և մամուլի փոխհարաբերության վերաբերյալ: Մամուլը նրա կարծիքով պետք է

հնազանդվեր վարչության որոշումներին, հակառակ դեպքում վերջինս կարող էր ենթարկվել հեղինակազրկվելու վտանգին: Ի դեպ, Ազգային վարչության հապաղումը հանդուգն մամուլին «խելքի բերելու գործում» պահպանողականներին ամենևին չէր գոհացնում: Սրանք սահմանադրական ջոհերից ակնկալում էին ազդու և վճռական գործողություններ¹²⁷: Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի անկախությանը կողմնակից լինելով, պահպանողականները այդպիսի անկախության ձեռքբերումը կապում էին չեմոկրատ-հրապարակախոսների հասարակական մեկուսացման հետ: Այս պատճառով «Արշալույս արարատյանը» հուսահատորեն պաշտպանում էր Երուսաղեմի միաբանների զրպարտագրերը «Մեղվի» և «Մյունատիի էրճիասի» դեմ: «Ազգային երկպառակելյուն ի Կոստանդնուպոլիս» հոդվածում Ղ. Պալղազարյանի թերթը տպագրական օրենքի նախագծից սպասում էր մամուլի անկախությունը սահմանափակող ձևակերպումներ, և այս առթիվ նախատում էր ազգային խշտությունների վարանումը: «Գրելու և հրատարակելու ազատության ոչ չափը ճանաչող և ոչ չափ մը դնող կա»,—գանգատվում էր թերթը, որի պատճառով պախարակվում են «հարուստ բարերարները և արժանահարգ եկեղեցականները»¹²⁸: Իր հակասահմանադրական ուղեղծով հայտնի «Արշալույս արարատյանը» մամուլի քննադատական տաբերքը անմիջականորեն կապում էր «սահմանադրական անխշտանության ու անկարգության» հետ:

Սահմանադրությանը գրեթե նույն առարկություններն էր անում Գր. Տեյիրմենճյանի «Արևելյան դարը»: Սահմանադրությունը նա որակում էր իբրև ազգի պատմական ավանդույթները ոտնահարող ակտ: Սահմանադրական մարմիններում, պնդում էր Տեյիրմենճյանը, «անկարգությունք, անիրավությունք, անխղճությունք և այլ ամենայն մարդկային անափառությունք և ինքնահավանությունք բարձր ի գլուխ կպարծին»¹²⁹: Կղերապահպանողական այդ հրատարակությունը սահմանադրությանը հակադրվելիս ավելի շատ շփման եզրեր ուներ «Արշալույս արարատյանի», քան Չամուռճյանի «Երևակի» հետ: Եթե Չամուռճյանը իր մեկնակետը սկսում էր զուտ արևմտահայ կղերամիության կանգնած վերնախավի դիրքերից, ապա Պալղազարյանն ու Տեյիրմենճյանը լրանից առավել և ամենից առաջ հաշվի էին առնում այն փորձությունը, որ ենթարկում էր սահմանադրությունը էջմիածնի կաթողիկոսությանը: Պահպանողականների այս խմբին թվում էր, որ սահմանափակելով հայ կղերի իրավասությունները, սահմանադրությունը Ազգային ժողովը օժտում է լրիվ անկախությամբ՝ պատրիարքի, ուրեմն և էջմիածնի կաթո-

դիկոսի նկատմամբ: Այստեղից էր սկիզբ առնում «Արեւելյան դարի» և պահպանողականների ահազանքը՝ ազգային բարոյականությունը քայքայելու վտանգի վերաբերյալ, որ փաստորեն նույնանում էր էջմիածնի կաթողիկոսության ազդեցության կորստի մտավախության հետ¹³⁰:

Մամուլի օրինագիծը գրեթե նույն դիրքերից էր գնահատում «Ժամանակը»: Ստ. Փափազյանը անառարկելիորեն պաշտպանում էր կրոնական ու քաղաքական ժողովների ձեռնարկումները առաջադիմական հրահրակախոսների դեմ: Փափազյանը առաջին հերթին կրոնի մեջ էր տեսնում ազգային առաջընթացի, գավառի հայ աշխատավորության կացության բարվոքումը, իսկ կրոնական բարոյականության մեջ՝ այդ կացությունից ճիշտ ելք գտնելու բոլոր նախադրյալները: Ազգային կյանքի վերածնությունը պետք է արդարացի հատուցում լիներ հնազանդության և օրինապատշաճության համար: Բողոքն ու խնդրագրերն էին այդ ծրագրի գլխավոր միջոցները, և համբերությունը՝ ազգային երկայնամտության ապացույցը: «Ժամանակը» կշտամբում էր Բալուի և Խարբերդի այն հողագործներին, որոնք չդիմանալով հարստահարություններին, գաղթում էին: Պարբերականը հորդորում էր նրանց «քիչ մը ժամանակ ևս համբերեն, մինչև քնիչներուն իրենց ժամանելը, ան ատեն պիտի արբի իրենց արտասուքը և պիտի բարձվին իրենց ցավերն ու տառապանքները»¹³¹: Զեյթունցիների հերոսական ըմբոստացումը, ներանց պայքարի թափը այս չափավոր գործիչը ձգտում էր խաղաղեցնել «բանիբուն եկեղեցականի մը քարոզներով ու հայրական խրատներով: Փափազյանը, ինչպես և բոլոր պահպանողական գործիչները, առավել մտահոգվում էր ոչ թե զեյթունցիների տնտեսական դրությանը, այլ նրանց միջավայրում կաթոլիցիզմի դավանական պրոպագանդին դիմակայելու սկզբունքները գաղափարով¹³²: Ազգային կրոնի և եկեղեցու բուն գոյությունը Փափազյանը պայմանավորում էր գավառական հոծ բազմությունների դավանական գոյատևմամբ և այս պատճառով առարկում էր ազգային վարչության մեջ պոլսահայերի առանձնաշնորհումներին: Ուշագրավ է, որ եթե «Արեւելյան արարատյանը» ազգային ժողովում պոլսահայ բուրժուազիայի շիջման պետող դերը առիթ էր դարձնում բնիշխնապես սահմանադրությունը մերժելու համար, ապա Փափազյանը վարչության մեջ գավառի իրավունքները պաշտպանում էր բուն ազգի ամբողջությունը պահպանելու մտահոգությամբ: Ավելացնենք, որ գավառը Փափազյանի համար ընդհանրական մի հասկացություն էր՝ զերծ տնտեսական ու հասարակական հակասություններից: Սահմանադրական պահպանուլ էանները 1860—1870-ական թթ. տես-

նում էին այն, ինչը միավորում էր ազգին, իսկ այն, ինչ բաժանում էր ազգը, այսինքն՝ սոցիալ-տնտեսական տարբերություններն ու հակասությունները, մղվում էր հետին պլան: Հետևաբար, պահպանողականների բանավեճը դեմոկրատների հետ հիմնականում սկիզբ էր առնում Արևմտահայաստանի բնակչության ազգային ու սոցիալական վիճակի և կրոնի նշանակության տարբեր գնահատականներից: Կրոնական բարոյականության մերժումը և եկեղեցու հասարակական դերի սահմանափակումը, ինչպես հայտնի է, դեմոկրատները ծառայեցնում էին զավառի աշխատավորական զանգվածների լուսավորության և ազգային ու տնտեսական կացության բարվոքման նպատակին: Այս պատճառով դեմոկրատ-հրապարակախոսների սուր հասարակական մերկացումները, կրոնական բարոյականության դեմ նրանց մշակած վճռական դիրքորոշումը Փափազյանին թվում էր իսկական շարիք, որ հարկավոր էր արմատախիլ անել: Մերժելով «Մեղվի», «Մյունատիի» և «Մաղիկի» քննադատական ուղեգիծը, «Ժամանակը» ևս ելնում էր այն վտանգից, որ նրանց մարտնչող պրոպագանդը «ազգի» աչքին հեղինակազրկում է կղերը և Ազգային վարչությունը: Այստեղից՝ նրա համեմատությունը այն բոլոր ձեռնարկներին, որոնց դիմում էր վարչությունը դեմոկրատական պարբերականները լռեցնելու նպատակով: Ինքը՝ «Ժամանակի» խմբագիրը խրախուսում էր այդ արշավանքը. 1863 թ. նոյեմբերին նա ձգտում էր «Մեղվի» խմբագրին ներկայացնել իբրև իշխանության չենթարկվող խռովարար: Երբ Ա. Մուրադյանը մերժում է ներկայանալ քաղաքական ժողովին, Ստ. Փափազյանը հատուկ դիտավորությամբ հայտնում է ընթերցողին, թե հիշյալ ժողովը պատվիրել է նրան պատրիարքարան ներկայանալ՝ «իր հրատարակած անհիմն ու սխալ հոդվածը հետս կրչելու», հակառակ դեպքում թագրիր է գրվելու Բ. դռանը՝ «Մեղուն» ժամանակավորապես դադարեցնելու համար¹³³: Այսուհանդերձ, քողարկելով իր իսկական վերաբերմունքը «Մեղվի» հանդեպ, «Ժամանակը» բարեմտության շինծու նշաններ էր ցույց տալիս, առաջարկելով քաղաքական ժողովին՝ «Մեղուն» դադարեցնել տալու փոխարեն նրա արտոնատեր Հ. Սվաճյանին պատվիրել, որ նա մեկ այլ անձի հանձնի պարբերականի խմբագրությունը¹³⁴:

«Ժամանակը» ամբողջովին պաշտպանում էր տպագրական օրենքի նախագիծը: Մամուլի ազատության վերաբերյալ դեմոկրատ-հրապարակախոսների պահանջը նա անվանում էր «սանձարձակ ազատություն»¹³⁵: Ուշագրավ է, որ միայն «Ժամանակն» է տպագրել վերոհիշյալ օրինագծի տեքստը՝ իբրև այդպիսի ազատության վախճանի իրավական երաշխիք:

Հիասթափությամբ էր նշում «Ժամանակը», որ ընդհանուր ժողովի երեսփոխանները վիճաբանություն են սկսել այդ օրինագծի դեմ (1863 թ. գեկտեմբերի 6-ի նիստում), որից հետո «խնդիրն անորոշ կերպարանքի մեջ՝ երեսփոխանները ցրվեցան»¹³⁶։

Վիճաբանությունները բուռն են եղել. դեմոկրատ-հրապարակախոսները հեղինակություն ունեին երեսփոխանական ժողովում։ Մամուլի օրինագիծը, գրում էր «Ժամանակը», «Մամուլի անսահման ազատության մեջ տեսնել ուզող մասեն մեծ գորություն մերժվեցավ. աղաղակներ փրթավ. գոռում-գոշումներ եղան և ուրիշ ատենի օրինակներուն նման հասարակության միտքը պղտորելու համար ըսին, թե սահմանադրությունը վտանգի մեջ է»¹³⁷։

Նույնիսկ մի այնպիսի չափավոր հրատարակություն, ինչպիսին «Սեր» հանդեսն էր, հակադրվեց «Ժամանակի» հետադիմությանը. «Մենք արդեն անսահման ազատություն մը շենք տեսներ մեր տկար ազգին մեջ, որպեսզի անկե եկած հետեանքներն ու զեղծումներ ալ նշմարենք»¹³⁸, — գրում էր նա։

Սերը» արտահայտում էր երեսփոխանների նշանակալի մասի վերաբերմունքը վարչության ղեկավարների ժայրահեղ անձնապատանուության նկատմամբ։

Ելունիսկ օսմանյան տպագրական օրենքի առկայության պայմաններում «Ժամանակը» պաշտպանում էր ազգային համանման օրենքի անհրաժեշտությունը։ Ըստ նրա, Ազգային վարչության օրինագիծը պետք է պարունակեր օսմանյան մամուլի օրենքի մեջ չամրագրված հոգվածներ և այնպիսի հոգվածներ, որոնք ճշգրտում էին մտցնելու նրա մեջ՝ մեկնաբանության իմաստով¹³⁹։ Ստ. Փափազյանը երկնշում էր, որ տպագրական օրենքում (օսմանյան) թերևս կբացակայեն հայ մամուլի ազատությունը սահմանափակող ձևակերպումները և դեմոկրատական պարբերականները կշարունակեն իրենց սովորական ընթացքը։ Պահպանողականները հավատարիմ էին մնում իրենց՝ ազգային իրականության հեռանկարները գնահատելու տեսակետից ևս։

Քաղաքական ժողովի օրինադրի և ի. Փափազյանի այս ելույթների քննադատությամբ հանդես եկավ Ե. Օսոսյանը «Էֆքյարը մուխայ-յերև» («Մտքերի ազատ արտահայտում») գրքույկով։ Նա պաշտպանում էր բնագրատական մամուլի գործիչներին՝ մամուլի ազատությունը համարելով սահմանադրության կիրառման հիմնական միջոցներից մեկը։ Փափազյանը վկայակալում էր հասարակական կարծիքի և մամուլի փոխներթափանցման կարևորությունը հասարակության զարգացման

մեջ և կարծում էր, որ հետադիմական օրինագծի պաշտպանները ոտնահարում են սահմանադրության ոգին: Բանավիճելով Ստ. Փափագյանի հետ, Փանոսյանը օրինագիծը մերժում էր այն պատճառաբանությամբ, որ արևմտահայ մամուլի համար նոր օրենք մշակելու կարիք չկա և որ մամուլի մեղանշումները կարելի է դատել արդեն հրապարակված օսմանյան տպագրական օրենքով (նկատի ունեւ 1857 թ. հրապարակված տպարանների վերաբերյալ օրենքը)¹⁴⁰: Ակնհայտ է, որ դեմոկրատ-հրապարակագիրները ընդհանրապես մամուլի օրենք հրապարակելուն և վերոհիշյալ տպարանների մասին օրենքը վկայակոչել են, որպեսզի կանխեն Ազգային վարչության հետադիմական միջոցառումները մամուլի նկատմամբ: Ուշագրավ է, որ Ս. Փափագյանը արդեն 1866 թ. վերջին հետին թվով պատասխանելով Կ. Փանոսյանին, օսմանյան մամուլի օրենքի առթիվ գրում էր. «Կարդացի՞ր պ. Փանոսյան, կիմանա՞ս ինչ եղավ. «էֆքյարիդ» մեջ քանի-քանի անգամ կրկնած էիք, թե տերութունը տպագրական օրենք ունի, և անիկա կբավե և անկե զատ՝ ուրիշ օրենք չկրնար ըլլալ, կտեսնե՞ք, պ. Փանոսյան, թե տերութունը նոր օրենք հրատարակեց, թե որ բավելու չափ օրենք մը կար, ի՞նչու պետք կար, ուրեմն, այս օրենքին»¹⁴¹:

Անվիճելի է, որ պարտութուն կրելով հետադիմական ազգային նախագծի վավերացման հարցում, հետադիմութունը մամուլի ազատութունը ճնշելու երաշխիքները տեսնում էր օսմանյան մամուլի օրենքի մեջ: Եվ չէր սխալվում, քանի որ այդ օրենքը, ինչպես կտեսնենք ստորև, մամուլի հետ դատաստան տեսնելու համար ոչ մի բանով չէր խանգարելու իշխանութուններին:

Մամուլի և տպագրական ազատության նկատմամբ իր չափավոր վերաբերմունքը հայտնեց Կ. Ություճյանի «Մասիսը»: Կ. Ություճյանն իր դյուրաթեք մտքերով համեմված հողվածներում, այնուամենայնիվ, ի վիճակի չէր թաքցնելու հաշտվողական դիրքը հետադիմական վարչության հանդեպ: Առհասարակ, նրա խմբագրության տարիներին «Մասիսը» հիմնականում արտահայտել է Ազգային վարչության ու պատրիարքարանի տրամադրութունները և կարծիքները իրականության հարցերի վերաբերյալ¹⁴²: Ընդ որում, հեռատես խմբագիրը խնամքով թաքցնում էր իր համակրութունները և ծանրումեծ, արտաքուստ անաշու խորհրդածութուններով ձգտում էր ընթերցողին հավատ ներշնչել իր անկողմնակալության հանդեպ: Այդ դիրքորոշումն ամրապնդելիս նա, բավականաչափ ծանոթ լինելով եվրոպական մամուլի նրբամտութուններին, երկրորդական հարցերում իրեն երբեմն շոայլութուն էր թույլ

տալիս՝ չհամաձայնելու Ազգային վարչության հետ: Քաղաքական ժողովի օրինագիծն ըստ ամենայնի պաշտպանություն գտավ նրա թերթի էջերում: Հատկանշական է, որ «Մասիսը» դրա «ամենեն ընդունելի և փափուկ կետերը» համարեց կրոնի, սահմանադրության և Ազգային վարչության դեմ հրապարակումները կանխարգելող հոդվածները: Անատարկելիորեն ընդունելով Բ. դռան 1862 թ. հունվարի 31-ի հրահանգը՝ բանավեճերից մամուլի ձևով մասին, «Մասիսը» բանավեճը որակում էր իբրև «կամակոր անձնասիրության արդյունք»: Կրոնի, սահմանադրության և վարչության քննադատությունը նա մերժում էր օրենքը, իշխանությունը և բարոյականությունը հարգելու տեսակետից: Լիբերալին հատուկ չափավորությամբ՝ «Մասիսը» զգուշացնում էր ծայրահեղություններից և տաշում-կոկում էր հաստատվելիք օրենքի հնարավոր սուր անկյունները: «Սակայն եթե կրնանք ըսել, — գրում էր նա, — որ ազգային լրագրությանց մեջ պատշաճից սահմանեն դուրս ելնողներ պակաս չեղան, կանոնադրաց վրա ալ ազգասիրական... սահմանադրական պարտավորություն մը կա զգուշանալու, որ չափազանցություններն արգիլեն՝ ուզած ժամանակին լրագրաց օրինավեր: զատությունն ալ չկաշկանդեն»¹⁴³: Քննադատել պետք է, բայց այնպես, որ «լուսավորե և շայրե», — այս էր «Մասիսի» տեսակետը:

«Մասիսը» վերջացնում էր այնտեղ, որտեղից սկսում էին դեմոկրատական պարբերականները, որոնք ոչ միայն լուսավորում, այլև կրակի տակ էին առնում ազգային իրականության սոցիալական ու քաղաքական չարիքները: Ինչ վերաբերում է «Մասիսին», ապա քաղաքական ժողովի ենթադրյալ ծայրահեղություններին դիմակայելիս նա պատրանք էր ստեղծում Ազգային վարչությունից իր բարձր կանգնելու մասին, թեև իրականում պաշտպանում էր նրա օրինագիծը:

Մամուլի ազատության վերաբերյալ բանավեճը արևմտահայ հասարակական հոսանքների միջև հետզհետե դուրս եկավ այդ խնդրի շրջանակներից և վերածվեց բարոյականության, կարծիքի ու խղճի ազատության շուրջ մղվող բանավեճի: Այս տեսակետից ուղադրավ են Կ. Փանոսյանի և Ա. Հայկունու ելույթները: Առաջինը տպագրեց «Ըսլահաթը մուհիմմե» («Կարևոր բարեկարգություններ») գրքույկը (1863), որը քաղաքացիական ամուսնության վերաբերյալ իր համարձակ առաջարկներով հարուցեց կրոնական ժողովի ծայրահեղ վրդովմունքը¹⁴⁴: Դրան նախորդած՝ Կ. Փանոսյանի «Սեֆիր բիր միլեթ» («Մի թշվառ ժողովուրդ», 1860) և վերոհիշյալ՝ «Էֆքյարը մուխայյերե» վերնագրով (1862) գրքույկները ազգային իրականության կարևոր հարցե-

Յրի¹⁴⁵, ինչպես և տպագրական ազատության մասին Ա. Հայկունու հանձնարարական հրատարակությունները, մասնավորապես Ռենանի «Հիսուսի վարուց պատմության» թարգմանությունը, լցրեցին կրոնական ժողովի համերաժյան բաժակը¹⁴⁶։ Արտահայտելով այդ տրամադրությունները, Ն. Վարժապետյանը հանդես եկավ «Քրիստոսի ս. եկեղեցին և աշոր հակառակորդները» գրքույկով (1864), որտեղ եկեղեցուն կոչ էր անում անզիջում պայքար սկսել նրա հիմքերին սպառնացող այդ հրատարակությունների դեմ։ Դրանից հետո կրքերն ալելի շիկացան. անհաշիվում կեսարացին չվարանեց պատասխանելու նաև Ն. Վարժապետյանի այդ ելույթին՝ իր «Մյուքյաֆաթ» («Պարգև», 1864) գրքույկով։

Դեմոկրատ-հրապարակախոսների դեմ ուղղված արշավանքը նվիրագործեց Պողոս Թագթագյան պատրիարքը՝ 1864 թ. սեպտեմբերի 22-ի թվակիր կոնդակով։ Պատրիարքը հայտնում էր «բարեմիտ ազգայնոց», թե «հայ լրագիրներեն և հանդեսներն ոմանք բարեխնամ տերության շնորհած տպագրական ազատությունը շարաշար գործածելով՝ թերթերին բազմաթիվ սուտ և զայթակղեցուցիչ լուրեր խճողելեն զատ՝ Քրիստոսի և իր սուրբ եկեղեցվո դեմ հեղինակված կամ թարգմանված ու եկեղեցականաց ու եկեղեցականության դեմ խայտառակ հողվածներ հրատարակելին...»¹⁴⁷։ Նա կոչ էր անում չկարդալ այդ հրատարակությունները և հավատն ամրապնդել «հոգվույն օգտակար և մտաց հրահանգիչ գրքերով»։ Պատրիարքը արտահայտում էր ճիշտ նույն տեսակետը, ինչ պահպանողական մամուլը։ Երկուսին էլ հավասարաշափ մտահոգություն էր պատճառում կղերի և նրա զաղափարախոսության դեմ ուղղված՝ դեմոկրատական գործիչների «ոտնձգությունը»։ Ինքը՝ պատրիարքը, հետադիմական օրինագծի անհաջողությունը առաջարկում էր փոխհատուցել եկեղեցու բեմերից հնչող խստամբեր քարոզների ու բանադրանքի բանավոր համազարկերով։ Հետադիմությունը ստանձնել էր գրաքննիչի դեր և իր գործողությունները հիմնավորում էր կրոնի ու եկեղեցու նվիրականությունը պաշտպանելու դիրքերից։

Դեմոկատների և նրանց ընդդիմախոսների բանավեճին միջամտեց Գր. Օտյանը՝ Ն. Վարժապետյանին ուղղած իր նամակով, որտեղ ազատամիտ դիրքերից սատարում էր կրոնական բարոյականության ջատագովներին ու աստափեստում այն կասկածի առնող դեմոկրատական գործիչներին։ Նրանք, գրում էր Օտյանը, «Անհատական պատիվ, ազգային և ընտանեկան պատկառանք, ամենեն ազնվական զգացումներ, ինչպես նաև ամեն վսեմ սկզբունքներն առաթուր կոխեցին, ամեն կողմ տարածեցին սրբապիղծ ձեռքերնին ու իրենց ամբարտավանության ալիքը ե-

լավ-ողողեց զեկեղեցվո թեմն ու հասարակաց երկրպագելի սուրբ սեղանը: Եվ վերջապես իրենցմե մեկը ամեն տեսակ պղծությանց մեջ գրիչը թաթխելեն ետքը Ռընանի գիրքը թարգմանելու ելավ (նկատի ունի Ա. Հայկունուն—Ա. Խ.), Ռընան, զոր այսօր ոչ ոք կկարդա Եվրոպայի մեջ»¹⁴⁸:

Վերջին դատողությունը, ըստ էության, ամփոփում էր Գր. Օտյանի ամբողջ ընդդիմախոսությունը դեմոկրատական հոսանքին, իսկ մասնավորության մեջ՝ կրոնական բարոյականությունն ուղղված քննադատության գնահատականը: Միաժամանակ, հետադիմությունից՝ տպագրական ազատության մարտնչող հակառակորդներից սահմանազատվելու համար Օտյանը դատապարտում է 1852 թ. Ն. Ռուսինյանի «Ուղղախոսություն» դեմ արևմտահայ ռեակցիայի արշավանքը: Այսուհանդերձ, նա որոշակի ուղի չի առաջարկում տպագրական ազատությունը կարգավորելու համար, գտնելու այն միջինը, որին հետամտում էր ինքը և որը ապահովելու էր և՛ մամուլի, և՛ նրա վրա բռնացումների ծայրահեղություններից: Ի վերջո, Օտյանը ևս, բացի ծայրահեղություններից, ուրիշ ելք չի գտնում, հայտնելով, թե կամ ամբողջովին պետք է արգելել ազատ մտածողությունը, և կամ լրիվ ազատ թողնել: (Ընդ որ օգուտը կընդունե, վնասն ալ մեկտեղ կընդունի. ամենեն գեղեցիկ բաներն իրենց տգեղ կողմը ունին. տպագրական ազատության ալ տգեղ կողմը «Ձայնն») (Ա. Հայկունու պարբերականը—Ա. Խ.) ու իրեն նման մի քանի օրագիրներն են»¹⁴⁹: Կարծիքի և խոսքի ազատության լուսլայն այս թողտվությունը սակայն, մնում էր իբրև ցանկություն: Դեմոկրատների հակակղերական գաղափարներին ընդդիմանալով, Օտյանը փաստորեն անցնում էր պահպանողականների կողմը. այս պայմաններում տպագրական ազատությունը ոտնահարող իշխանություններին առարկելը և մտածողության ազատությունն ընդունելը ստանում էին սոսկ դարձվածքի արժեք՝ զուրկ հասարակականորեն տպավորիչ որևէ իմաստից: Իսկապես, Օտյանը չկարողացավ հաղթահարել իրեն տագնապող «ծայրահեղությունները», դրանք նա կարող էր հաշտեցնել միայն մաքուր մտածողության մեջ: Արևմտահայ մամուլի ազատության լիբերալ-բուրժուական ձևակերպումը ևս պետք է ստանար իր գործնական մետամորֆոզները: Օտյանի վերոհիշյալ նամակից շուրջ տասն օր անց և կարծեք ի լրումն դրա, Ազգային վարչությունը միանգամայն գործնական հետևությունների հանգեց «Ձայնի»՝ որպես «տպագրական ազատության տգեղ կողմի» դրսևորման վրա: Հայկունու դեմ այդ ժողովը սկսեց մի իսկական հալածանք՝ ելք տալով տպագրական օրինագծի ձախողումից կուտակած իր մաղձին: Հայկունուց պահանջվեց բացա-

տրություններ տալ «Մուսայթ Մասյացի» («Զայն ընկերասիրական» ենթավերնաբերով) 1864 թ. № 30-ում տպագրած հոդվածի մասին: Կատաղի հալածանքի պայմաններում հրապարակախոսը ստիպված էր տեղի տալ՝ կասեցնելով նաև Ռերնանի աշխատության հրատարակությունը¹⁵⁰:

«Մեղուն» պաշտպանության տակ առավ իր գաղափարակցին: Պարբերականը տպագրեց Ա. Հայկունուն հղած՝ Մատթեոս կաթողիկոսի կոնդակը (1860 թ. հունիսի 1-ի, «Թուրքանտա տուտու») տետրակով միսիոներների դեմ ելույթի առթիվ): Յուրովի մեկնաբանելով Հայկունուն ելույթը, կաթողիկոսը խրախուսում էր նրա «Ճշմարիտ ուղղափառության ապացույցները: Իր կից գրության մեջ Հայկունին այդ կոնդակով պաշտպանվում էր կրոնական ժողովի և Հ. Զամուռճյանի մեղադրանքից. «Այս կոնդակը,—գրում է նա,—ավելի մեծ արժեք ու վավերականություն ունի, քան թե տեղիս կրոնական ժողովին և անոր ատենապետին վճիռը»¹⁵¹:

Աշխուժացած կրոնական ժողովին «Մեղուն» հակահարված տվեց Կ. Փանոսյանի դեմ պատրաստվող բանալրանքի առթիվ. հանդեսը մերկացրեց կրոնական ժողովի և Ն. Վարժապետյանի դերը՝ ազատ մտքի դեմ անզուսպ հարձակումների համար¹⁵²: Տպագրական օրինագծի անհաջողությունից հետո կրոնական ժողովը նախընտրում էր դեմոկրատական մտավորականության հետ առանձին-առանձին հաշվեհարդար տեսնելու ուղին:

Հայ դեմոկրատիայի առաջնորդ Մ. Նալբանդյանը արևմտահայ իրականության մեջ բացառիկ կարևոր նշանակություն է տվել մամուլի ազատությանը: Նալբանդյանը ազատ խոսքի իրավունքը սերտորեն կապակցում էր սահմանադրության ճակատագրի, ամբողջ ազգի համար նրա կիրառման հնարավորությունների հետ: Ըստ էության, Նալբանդյանն է առաջինն անգամ տվել արևմտահայ սահմանադրական լիբերալ-բուրժուազիայի զարգացման ընթացքի բնութագիրը 1860 թ. և դրան հաջորդող ժամանակաշրջանում: Հանձին Սերվիլենի, հեղափոխական-դեմոկրատը հանգամանորեն վերլուծում է մի ամբողջ հասարակական հոսանքի վարքագիծը, նրա գործունեության առաջադիմական նկարագիրը սահմանադրության հաստատման գործում և այնուհետև նրա ընկրկելը հետադիմության ճնշման առջև ու համագործակցության եզրերը «խավարչանքի» հետ: Դա պոլսահայ բուրժուազիայի գաղափարախոսի բնութագիրն էր, այն բուրժուազիայի, որի վճռականությունը բավականացրել էր մինչև ամիրայության վտարումը համայնքի վարչական գործերից: Փոխարինելով նրան, լիբերալները վարչության դեմ

ուղղված քննադատական ելույթները համարում էին սպառնալիք իրենց նորընծա իշխանության համար: Արևմտահայաստանի թշվառություններն ամոքելու համար այդ բուրժուազիան շուներ ոչ ուժ, և ոչ էլ ցանկություն: Նալբանդյանը բացահայտում է հենց այդ անկարողության ու վերահսկողության հասարակական հիմքերը և դրանցից ձգվող կամուրջը՝ Ազգային վարչության ու պահպանողականների միջև: Սերվիլներ, նկատում էր Մ. Նալբանդյանը, «կարող էր դեմ կենալ մի քանի բռնակալ առաջարկությանց, որ առնում էին խավարյալք, կարող էր, ապում ենք, բայց ընկալ հասարակաց հոսանքի մեջ: Այնուհետև, մի կողմ թողած սահմանադրության գործը, այդ քննիչ ժողովի առաջին տնօրինությունն եղավ հայկական խոսքը ճնշել, տպագրության ազատությունը բռնաբարել: Պ. Սերվիլներ կամակից էր այս բանին, և մենք առ ի սրտե ցավում ենք, որովհետև նորան ճանաչում ենք ստուգապես ազգասեր և ստուգապես մի հարգելի մարդ»¹⁵³, Նալբանդյանը նկատում է, որ սահմանադրության վավերացումից հետո, 1863 թ. Ազգային վարչությունը իր գործունեությունը սկսում է բռնությամբ, որ ուղղվում է ժողովրդի տրամադրություններն արտահայտող «Մեղվի» դեմ: Վարչության հասարակական ընթացքի չափանիշը Նալբանդյանը համարում է նրա «արտասահման բռնակալությունը» «Մեղվի» հանդեպ: Ազգային վարչության օրենքի նախագիծը, ինչպես Նալբանդյանն էր ցույց տալիս, արդեն ստացել է օրենքի ուժ, որով առաջնորդվում են ազգային ջոջերը: Իր ժողովրդական ուղղութիւնի համար «Մեղուն» արժանացել է հալածանքների և մատնության: «Ազգային թշվառություն» վերնագրով հոգևածում Նալբանդյանը ցույց է տալիս ոչ միայն լիբերալների, այլև պահպանողականների դարձվածամոլությունը, ժողովրդի շահերն անտեսելը: Նալբանդյանը խորաթափանց քննության է ենթարկել «մեր բրածին կամ ընելիքին վրա չխոսելու»՝ վարչության հրահանգը: Այդպիսի գործելակերպը քողարկում է լիբերալ բուրժուազիայի խոսքի և գործի անջրպետը, մամուլի համար անմատչելի դարձնում դրա բացահայտումը: «Ազգերնիս կհառաջագիմե կոր» դարձվածը Նալբանդյանը դարձնում է վարչության անգործունակության և նրա ինքնագոհության խարանը: Վարչությանն ամենևին չեն հուզում ազգային անլուր հարստահարությունները, գաղթը, սովը և կրոնափոխության ճարակը գավառներում: «Ազգային վարչությունը,—գրում է նա,—ոչ միայն խնամք չունի այդ պատճառների հիմքը փորելու, այլև հալածում է նորանց, որ ցույց են տալիս ազգին նորա բուն թշնամիքը: «Սուրբ բռնություն», այսօր այս խոսքն են մորմոթելով տեսանում Ազգային վարչության դրոշի վերա»¹⁵⁴:

Նալբանդյանը առանձին-առանձին վերլուծում է վարչության պահանջները՝ կրոնի, սահմանադրության, «անձնական պատվո շղիպչելու» վերաբերյալ: Ուշագրավ է այն, որ Նալբանդյանը հարկ է համարել պաշտպանել «Մեղվի» բոլոր փաստարկները և միաժամանակ, այդ հրահանգները մեկնաբանել իրավական ու հասարակական տեսանկյուններից: Այսպես, «Մեղվին» միանալով այն եզրակացության մեջ, որ Ազգային վարչությունը քննադատությունից վեր համարելը ուղղվում է հենց սահմանադրության ոգու դեմ, Նալբանդյանը բացատրում է նաև այդ ձևերի ամբողջ հետադիմությունը. եթե վարչությունը իրոք սահմանադրական է, ապա նա կարող է քննադատվել փոքրամասնության կամ վերջինիս մասը կազմող անհատի կողմից: Այդ դեպքում քննադատության իրավունքը որևէ պարբերականի զլանալը կնշանակեր ոչ այլ ինչ, եթե ոչ՝ անհատի կարծիքի ոտնահարում: Այդ ճնշումը ուղղվում է, ի վերջո, «հասարակաց ազգի դատաստանի» դեմ, բռնաճնշում հասարակական կարծիքի վրա: Նալբանդյանի համոզմունքով խմբագիրներից ստորագրություն վերցնելու ձեռնարկը ևս կամայականություն է, որին դիմում է վարչությունը, որովհետև օրենքի կատարումը երաշխավորվում է ոչ թե ստորագրությամբ, այլ բուն օրենքի ուժով:

«Ազգային թշվառություն» հոդվածում ի հայտ են բերվում նաև արևմտահայ պահպանողական ու լիբերալ մամուլի ու Ազգային վարչության փոխադարձ համամտության եզրերը, դատապարտվում է մասնավորապես «Մասիսի» ու «Արշալույս արարությանի» թշնամական վերաբերմունքը «Մեղվի» հանդեպ: Նալբանդյանը այս պարբերականների հասարակական համակրանքները բացատրում է արևմտահայ իշխող վերնախավի շահախնդրություններով:

Ժամանակակիցներից և ոչ մեկը չկարողացավ այնպես սթափ վերլուծել պոլսահայ կյանքի իրողություններն ու արևմտահայ կյանքի ընթացքը, ինչպես հեռավոր Պետրոպոլիսյան ամրոցի կալանավորը: Այդ հոգվածը 1860-ական թթ. արևմտահայ սահմանադրական պայքարի հանրագումարի վերլուծությունն է, պոլսահայ ներհակ գաղափարախոսությունների արժեքավորումը, որտեղ խիստ կարևոր նշանակություն է տվել պարբերական մամուլի և տպագրության ազատությանը:

Դեմոկրատական պարբերականները սանձելուն ուղղված՝ քաղաքական ժողովի համառ փորձերը այդպես էլ չհասան իրենց նպատակին: 1864 թ. դեկտեմբերի 31-ին օսմանյան կառավարությունը հրապարակեց

մամուլի վերաբերյալ օրենքը, որը հաջորդ տարվա սկզբից մտավ գործողության մեջ:

Ինչո՞վ էր պայմանավորված այդ օրենքի հայտնությունը: Ամենից առաջ՝ Օսմանյան Թուրքիայում մամուլի աննախընթաց զարգացմամբ, թուրք և ոչ մահմեդական ժողովուրդների պարբերական հրատարակությունների գաղափարական հասունացմամբ և հասարակական կարծիքի հետ նրանց ունեցած փոխադարձ շփմաների ընդլայնումով: Հպատակ ժողովուրդներին ազգային ինքնագիտակցության գաղափարական երաշխիքները ավելի կամ պակաս ամբողջականությամբ, ինչպես տեսանք արևմտահայ պարբերականների օրինակով, որոշակիորեն դրսևորվում էին նրանց մամուլի մեջ: 1860-ական թթ., նախքան մամուլի վերաբերյալ օսմանյան առաջին օրենքի հրապարակումը, իրենց լուսավորական միտումներով և երկրի հետամնաց ֆեոդալական հասարակական կարգերի դեմ ուղղված քննադատական դիրքորոշման պատճառով կառավարության ուշադրություն էին գրավել թուրքական պարբերականներից «Թերջուման-ի ահվալը» և «Թասվիրի էֆթյարը», մասնավորապես վերջինը, որը 1860-ականին սկսել էր արտահայտել սահմանադրական հայացքներ¹⁵⁵: Սուլթանական բռնակալությունը մամուլի վերաբերյալ օրենքով ձգտում էր կարգավորել մամուլի կախումը իշխանություններից, դրա միջոցով չափավորել ու կասեցնել և թուրքական մամուլի ընդդիմադիր տրամադրությունները, և հպատակ ժողովուրդների հասարակական մտքի արթնացումը: Եթե առաջինի մեջ սուլթանական ռեժիմը տեսնում էր երկրի հասարակական վերակառուցմանն ուղղված վտանգավոր գաղափարներ, ապա երկրորդի մեջ՝ հպատակ ժողովուրդներին քննադատակցության, ուրեմն մամուլի զարգացման մեջ ազգային ինքնորոշման ձգտումների արտահայտություն, որոնք սպառնալու էին բռնակալության գոյությանը: Իր մահվանից առաջ գրած հիշատակագրում Ֆուատ փաշան բնատահայելի շարժման վերաբերյալ ապագապաշի մտքեր էր հայտնել, և այդ մտքերը, ինչպես նշում է Ա. Ալպեյաճյանը, ծնվել էին սահմանադրական վեճերի, Զեյթունի ապստամբության և այլ պատճառներով: «Բ. դուր, — գրում էր Ֆուատ փաշան, — երբեք ձգտելու չէ, որ հայերը հույն եկեղեցիին հետ միանան, ընդհակառակն, թերևս իմաստությամբ վարված կըլլա, եթե քաջալերի իր ժողովուրդներու մեջ այն փիլիսոփայական ոգին, որ զանոնք կղերին ազդեցութենեն ազատ կընեն և իրարու կմոտեցնեն: Ներքին գործերու մեջ մեր բոլոր ջանքը միայն մեկ նպատակի մը ձգտելու է՝ որ է զանազան ցեղերու ի մի ձուլումը... Գարատաղ մը, սերպ իշխանություն մը, Հայաստանի թագավորություն

մը. իրենց և աշխարհի ամենափոքր օգուտ մը չընծայելն ի զատ՝ առավել կամ նվազ ցնորական երազներ են, մարդկային հին բաժանումներու դժբախտ մնացորդներ...»¹⁵⁶:

Այս նույն ժամանակաշրջանի օսմանյան մյուս երեւելի քաղաքագետը՝ Ալի փաշան ևս իր կտակում Աբդուլ Ազիզին խորհուրդ էր տալիս վերացնել միլեթներին վարչական սահմանադրութիւնները: 1867 թ. նոյեմբերին (3 շաբաթ 1284) Կրեստեից ուղարկած իր մի հուշագրում նա պնդում էր, որ օսմանյան բոլոր հայատականների միաձուլումը Թուրքիայի առաջընթացի ուղին է¹⁵⁷:

«Կղերի ազդեցութիւնէ» արեւմտահայերին ձեռքադատելու նպատակով Ալի և Ֆուատ փաշաները 1868 թ. հոկտեմբերին գրեթե թշնամանքով ընդունեցին Ս. արք. Ջալալյանին, որն իբրեւ նվիրակ Կ. Պոլիս էր առաքվել Գևորգ կաթողիկոսի կողմից: Թուրքական քաղաքագետների աչքին կաթողիկոսը և նրա նվիրակը արեւմտահայերի մէջ ուսական ազդեցութիւն տարածողներ էին, որ անշուշտ, տաքնապ էր պատճառում նրանց: Մական և չպետք է անտեսել, որ Բ. դռանը մի հայտնի չափով հեռաքրքրում էր Կ. Պոլսի պատրիարքարանի և էջմիածնի միջև գուտ կրօնական կապերի թուլացումը՝ ժողովրդին եկեղեցուց հեռացնելու լծաստով: Կառավարութիւնը գործեց արագ և կտրուկ կերպով: «Դուռն ինքն կոչեալ է զլրագրապետսն (Կ. Պոլսի եվրոպական թերթերի—Ա.Խ.) և հրամայել է գրել զայնպիսի հոդուածս զանազան անձանց՝ անյապաղ հրատարակել...»¹⁵⁸, — գանգատվում էր կաթողիկոսին անհաջողակ նվիրակը:

Ալի փաշայի հանձնարարութեամբ Սավֆեթը կաթողիկոսին ուղղած գրութեան մէջ ընդգծում էր, որ Կ. Պոլսում կաթողիկոսական նվիրակի գտնվելը ավելորդ է և ստվեր է նետում պատրիարքի հեղինակութեան վրա, որն արդեն իսկ կաթողիկոսի ներկայացուցիչն է իր հոգևոր պաշտոնով¹⁵⁹: Բ. դռան պահանջով արքեպիսկոպոսը հետ կանչվեց էջմիածին:

Այս ժամանակաշրջանում ևս օսմանյան կառավարութիւնը չի հապաղել կտրուկ վերաբերմունք դրսևորել այն բոլոր դեպքերում, որոնք, նրա կարծիքով, արեւմտահայերի մէջ կարող էին խորացնել ազգային ինքնագիտակցութեան, ազգային ինքնորոշման ձգտումները: 1869 թ. ապրիլի 25-ի համարում ուսաց «Բիրթեվիե վեդոմոստի» թերթը գրում էր, որ Տրապիզոնի անգլիական հյուպատոսին միայն երկար ջանքերից հետո է հաջողվել Լոնդոնի Ազգերի բրիտանական թանգարանի համար ոչնչացումից փրկել հայոց թագավոր Տիգրան Երկրորդի հար-

Թաքանդակը: Ռուսական դեսպան Պ. Իգնատևին մեծ վեզիր Ալի փաշան պարզաբանել էր, որ «կառավարությունը մտադիր էր ոչնչացնել հարթաքանդակը, որպեսզի շարթնանա հայերի մեջ նիրհող ազգային զգացմունքը»¹⁶⁰:

Հայտնի է դառնում նաև, որ արևմտահայ գավառներում վալիները արդեն մի քանի տարի առաջ «գաղտնի հրաման են ստացել ջանախնդրաբար ոչնչացնել այն բոլոր արձանները, որոնք վերաբերում են հայերի անցյալին, որպեսզի հայերը ոչ մի տեսանելի նշան չկարողանան պահպանել իրենց երբեմնի անկախությունից: Այդ բարբարոսական հրամանը ամենուրեք գործադրվում է և դրա հետևանքով ոչնչացրել են մինչև այժմ դեռ չվերծանված բոլոր սեպագիր արձանագրությունները», — եզրափակում է թերթը¹⁶¹:

Հայ դեմոկրատական մամուլը, ինչպես տեսանք, հենց սահմանադրության կիրառման մեջ էր տեսնում ազգային ինքնագիտակցության զարգացման հնարավորությունները, երբ պաշտպանում էր գավառում դրա գործածության խնդիրը: Օսմանյան քաղաքագետների ջանքերը փաստորեն ուղղվում էին ոչ միայն սահմանադրության, այլև այն սատարող առաջադիմական մամուլի դեմ:

Այսուհանդերձ, 1864-ին Ալի փաշան հուլյս ուներ մամուլի գաղափարական զարգացումը կանխել վերահսկող օրենքների համակարգով¹⁶² շրջանցելով նախնական գրաքննությունը: Այդ հարցում մեծ վեզիրին լավատեսություն էր ներշնչում մամուլի փաստական վիճակը, որ բնութագրվում էր իշխանություններից ունեցած լիակատար կախածությունամբ: Մամուլի օրենքը բնավ չէր խանգարում նրա իրավիճակի անփոփոխ մնալուն: Հրապարակելով մամուլի օրենք՝ առանց գրաքննական օրենքի կամ նախնական գրաքննության, օսմանյան իշխանությունները սերմանում էին լիբերալ-ոեֆֆորմիստական պատրանքներ, իսկ մյուս կողմից, ամուր պրկում մամուլի սանձը:

1861 թ. դեկտեմբերի 31-ի մամուլի օսմանյան օրենքը կազմվել էր գերազանցապես 1852 թ. Նապոլեոն Երրորդի¹⁶³, ինչպես և 1819 և 1828 թթ. ֆրանսիական համապատասխան օրենքների օգտագործմամբ: Օսմանյան օրենքը կազմված էր երկու մասից՝ Ա. Ընդհանուր տրամադրություններ, և Բ. Պատժական տրամադրություններ: Առաջինը կազմված էր 9, իսկ երկրորդը 26 հոդվածից: Այդ օրենքով նախնական գրաքննություն չէր սահմանվում. թերթը կամ հանդեսը տպագրվելուց հետո տիրջ կամ պատասխանատու տնօրենի ստորագրությամբ մեկ օրինակ պետք է ուղարկվեր Կ. Պոլսի լրագրական դիվանին, գավառներում՝ վալիին (հոդվ. 4):

Ընդհանուր տրամադրություններով կարգավորվում էին մամուլի հրատարակության պայմանների (հրատարակության արտոնություն են) հետ կապված իրավական փոխհարաբերությունները: Պատժական մասում նշվում էին այն պատիժները, որոնք նախատեսվում էին պարբերականների համար: Առանձնապես ծանր պատիժներ էին սահմանվում երկրի «ներքին խաղաղության և ապահովության» (հոդվ. 13), «հասարակաց բարոյականի» (հոդվ. 14), սուլթանի կամ նրա գերդաստանի (հոդվ. 15), պաշտոնական անձանց, պետական մարմինների (հոդվ. 19) դեմ մեղանշած պարբերականների համար: Թույլատրվում էր վարչական կարգով (առանց դատի) պատժել սուլթանի, նրա իշխանության և գերդաստանի, պետական պաշտոնյաների, օտար տերությունների ու նրանց դեսպանների դեմ մամուլի հանցանքները՝ մինչև մեկ ամիս տևող խափանմամբ (հոդվ. 27):

Վերոհիշյալ հանցանքների, ինչպես և պետական մարմինների ու պաշտոնական անձանց և օտարազգի դեսպանների ու պաշտոնատար անձանց նկատմամբ մամուլի մեղանշումները պետք է դատեր հինգ մարդուց կազմված հանձնաժողովը, որի տեղեկագրի հիման վրա բարձրագույն ատյանը վճիռ էր կայացնելու: Մյուս բոլոր հոդվածներում նշված հանցանքներն ու օրինազանցությունները դատվելու էին ոստիկանական ատյաններում (հոդվ. 34): Վարչական կարգով պատժի ենթակա էին երկու տարվա ընթացքում երեք անգամ դատապարտված թերթերը և մյուս հրատարակությունները (հոդվ. 29): Պատիժները, ընդհանուր առմամբ, աչքի չէին ընկնում խստության՝ «ամենատեսական ժամկետով խմբագիր-հրատարակիչների բանտարկությունը հասնում էր մինչև մեկ տարվա, իսկ զրամական զուգահեռ տեղաբնակները՝ կեսից մինչև 150 լիրայի»: Հանցանքի կրկնության դեպքում դատաստանական կամ վարչական միջոցով պատիժը (որ տրվել էր առաջին անգամ) կարող էր կրկնապատկվել (հոդվ. 33)⁶⁴:

Այսուհանդերձ, մամուլի օրենքն իր թվացյալ լիբերալ տրամադրություններով իսկ իր մեջ թաքցնում էր ոստիկանական կամայականությունների լայն բացված դռները: Օրենքով ամրագրված՝ ոստիկանական ատյանների ընդարձակ իրավասությունները արդեն նշանակալիորեն մամուլը հանձնում էին ոստիկանության տնօրինությանը: Ոչ պակաս կարևոր էր այն հանգամանքը, որ օրենքի տրամադրություններն ըստ ամենայնի ներառում էին մամուլի հանցանքների դիմաց կիրառվելիք պատիժները, մինչդեռ լիովին շրջանցում էին մամուլի գործիչների ապահովության երաշխիքը, այդ թվում և բողոքարկման իրավունքը:

Այս առթիվ Ա. Դ. Ժելտյակովը նկատում է, որ «օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ի հայտ եկավ նրա լրջագույն արատը՝ ո՛չ թերթերի արտոնատերերը, ո՛չ էլ լրագրողները ոչ մի հնարավորություն չունեին պաշտպանելու իրենց վարչական կամայականություններին»¹⁶⁵,

Մամուլի օսմանյան օրենքի և Նապոլեոն Երրորդի 1852 թ. փետրվարի 27-ի օրենքի (37 հոդված) համեմատությունը ցույց է տալիս, որ օսմանյան օրենսդիրը նշանակալիորեն մեղմացրել է ֆրանսիականի ակնառու խստությունները: Վերջինս աչքի է ընկնում իրավախախտումների և դրանց պատժելիության անհամեմատ լայն ցանկով: Այն նախատեսում է հրատարակության իրավունքի համար դրամական երաշխավորություն (հոդվ. 3—4), թերթերի և այլ պարբերականների դրոշմատուրը (6—13 հոդվ.), որոնք չէին նախատեսվում օսմանյան օրենքով: Ֆրանսիական օրենքը նախատեսում էր նկարների, գրավյունների, էստամպների, էմբլեմների և այլնի նախնական գրաքննություն¹⁶⁶ (հոդվ. 22), որպիսին չի հիշատակվում օսմանյան օրենքում: Այնուհետև, կարևոր տարբերություն էր այն, որ իրավախախտումների դեպքում ֆրանսիական օրենքը ենթադրում է միաժամանակ և դրամական տուգանք, և բանտարկություն, իսկ օսմանյանը կիրառում է մեկը կամ մյուսը:

Մյուս կողմից, օսմանյան օրենքում քիչ չեն նաև ուղղակի փոխառությունները, ինչպես մամուլի կողմից «հասարակական անդորրը» վրդովելուն վերաբերող հանցանքի մեջ դիտավորության և շարամտության առանձնացումը (հմմ. ֆրանս. հոդվ. 15, օսմ. հոդվ. 26)¹⁶⁷, իշխանությունների՝ պարբերականներին ուղղված որոշումների ու կարգադրությունների պարտադիր տպագրությունը (հմմ. ֆրանս. հոդվ. 19, օսմ. հոդվ. 8)¹⁶⁸ և այլն: Օսմանյան օրենքը նմանակել է նաև տնօրենխմբագիրների քաղաքացիական իրավունակության, հրատարակության արտոնագրի պայմանների և այլնի վերաբերյալ ֆրանսիական օրենքի տրամադրությունները¹⁶⁹,

Վերոհիշյալ ազդեցության մասին է խոսում նաև այն փաստը, որ օսմանյան օրենքով չի ձևակերպվել, բայց գործնականում կիրառվել է ֆրանսիական օրենքի տրամադրությունը: Այսպես, վերջինս արգելում էր մամուլի իրավախախտումների վերաբերյալ դատավարությունների հաշվետվությունների հրապարակումը (հոդվ. 17)¹⁷⁰: Իսկապես, հայ խմբագիր-տնօրենների դատավարությունների ընթացքի մասին մամուլը սպառիչ ինֆորմացիա չի տպագրել, հայտնվել է միայն դատավարության ընթացքի կամ դատավճռի մասին, որ զարծյալ թույլատրվում

էր ֆրանսիական համապատասխան օրենքով: Բացառութիւն է կազմում միայն «Մամուլի» խմբագիր Գ. Այվազյանի դատավարութեան ընթացքի կանոնավոր լուսաբանումը «Մասիսում»՝ 1883 թ.:

Նշված օրենքների համադրումը ցույց է տալիս, որ օսմանյան մամուլի օրենքը ֆրանսիականից փոխառել է հիմնականը՝ իշխանութիւնների նկատմամբ մամուլի ստորագաս դիրքի ամրագրումը: Երկու օրենքների համար էլ ընդհանուր էր այն, որ դրանք հետամտում էին մամուլը ներփակել պաշտոնական գաղափարախոսութեան շրջանակներում:

Գործողութեան մեջ մտնելուց հետո մամուլի օսմանյան օրենքի մեղմութիւնը, սակայն, վերածվեց իր հակադրութեանը: Բռնակալութեան պայմաններում ոստիկանական հաշվեհարդարի ավանդույթները ավելի ուժեղ դուրս եկան, քան օրինականութիւնը:

Մամուլի օրենքը վավերացնելուց հետո Բ. ղոան մեջ կազմակերպվեց տպագրական տեսչութիւն՝ 1862 թ. հիմնված մամուլի դիվանի (մաթբուաթ մյուդյուրյուղու) փոխարեն¹⁷¹: Նորաստեղծ վերահսկիչ մարմինն տրվեցին առավել լայն գործնական լիազորութիւններ:

Օսմանյան նորաթուխ օրենքի լիբերալ տրամադրութիւնների զուտ ձեւական նշանակութիւնը բացահայտվեց Զմյուռնիայի «Մաղիկի» նկատմամբ տեղի թուրքական իշխանութիւնների ցուցաբերած կամայական վերաբերմունքով: Զմյուռնահայ համայնքում սահմանադրութեան համար վարած հետեղական պրոպագանդով, արեւմտահայերի հասարակական իրավունքների և ազատաշունչ գաղափարների պաշտպանութեամբ «Մաղիկը», «Մեղվի» և «Մյուռնատիի էրճիասի» հետ միասին 1860-ականին հատել էր այն սահմանագիծը, որով նշանավորվում էր արեւմտահայ լուսավորականութեան անցումը դեմոկրատիզմ: Եվրոպական և ռուսական առաջավոր գաղափարները տեսական հիմք դաժան «Մաղիկի» հասարակական կողմնորոշումների համար: Ազգային լուսավորութեան և կրթութեան, ժողովրդի հոգեւոր զարգացման սեւուռ գաղափարը դեմոկրատական պարբերականների մեջ կոբցրեց իր միակողմանի նպատակաւորվածութիւնը, երբ դրան միացան աշխատավորութեան սոցիալ-տնտեսական ծանր դրութեան, իրավագրկութեան մերկացման և ազատագրական պայքարի գաղափարախոսութիւնը բովանդակող խնդիրները: «Մաղիկի» խմբագիր Գր. Զիլինկիրյանը ռեակցիայի և խավարամտութեան դեմ իր սկզբունքային լուսավեճը հիմնավորում էր արեւմտահայ գավառական զանգվածների իրավագործ կացութեան, ներառեց սոցիալական թշուառ վիճակի բացահայտմամբ, հանդես գալիս նաև հայ բաղաբային ընչազուրկ բնակչութեան և մանրբուրժուական խա-

վերի պաշտպանությամբ: Պաշտպանությունը ուղեկցվում էր ազգային վերնախավի համարձակ քննադատությամբ, որ չէր կարող չառաջանել վերջինիս պատժիչ ձևնարկները: 1863 թ. մարտ-նոյեմբերին խափանվելուց և վերահրատարկվելուց հետո «Ծաղիկը» շարունակեց իր ըմբոստ ուղեգիրք տեղական ջոջերի նկատմամբ: 1865 թ. մարտին հանդեսը տպագրեց «Ժեռն-ժաններու պարահանդեսը» ֆելիետոնը, որտեղ մերկացնում էր զմյուռնահայ բարձրաշխարհիկ երիտասարդության քաղքենիական դաստիարակությունն ու վայելչանքների առօրյան¹⁷²: Հեղինակը ցուցադրում էր այդ երիտասարդության ապազգայնացումը, անմիտ հնազանդությունը արևմտյան բարձրին: Վերնախավի հոգևոր պարապության այսպիսի մերկացումը ցասման ջղաձգումներ առաջարեց հարուստների շրջանում: Ի դեպ, հակասահմանադրական ազաների համար ներկայացել էր պատեհ առժեռ՝ իրենց հակառակորդ պարբերականը հալածելու համար: «Ծաղիկի» խմբագիրը մրաստանվեց իշխանությունների առջև՝ իբրև պատվավոր քաղաքացիների անհատական ու ընտանեկան պատիվը նվաստացնող: Զիլինկիրյանին պատժելու են նետվել Մանչեստրի հետ առևտրաարդյունաբերական կապեր ունեցող հարուստ վաճառականները: Ֆելիետոնից անմիջապես հետո ներանք ստորագրություններ են հավաքել և ներկայացրել թաղական խորհրդին՝ Զիլինկիրյանին ս. Մեսրոպյան դպրոցի ուսուցչությունից հեռացնելու պահանջով: Մի այլ խնդրագիր ուղղվեց իշխանություններին՝ «Ծաղիկը» պատժելու համար¹⁷³:

«Ծաղիկի» հակառակորդը՝ «Արշալույս արարատյանը» ոչ առանց բավականության ներկայացրել է խմբագրին պատժելու տեսարանը. «Հոգվածույն (ֆելիետոնի—Ա. իս.) տաճկերեն թարգմանությունը նախագահական մեծ ժողովույն (մեճլիս-ի քեպիր) մեջ կարդացվեցավ և միակամ հավանությամբ 28 օր բանտարկության դատապարտվեցավ «Ծաղիկի» խմբագիրը, որ անցյալ ամսո 20-ին (մարտի—Ա. իս.) ի բանտ մտավ: Հինգ օր բանտը մնալեն ետև վսեմ. փաշան բարեհաճեցավ մարդասիրաբար անոր ազատություն շնորհելու՝ զիջանալով հաղաշանս բարեգութ երևելի անձանց ոմանց»¹⁷⁴: Միջամտել էին զմյուռնացի ազդեցիկ վաճառական Հ. Սպարթյանը և տեղի «Իմպարտիալ» ֆրանսերեն թերթի խմբագիր էդուարդ¹⁷⁵:

Թե այս ժամանակ որքան շիկացած են եղել կրքերը զմյուռնահայ համայնքում, կարելի է պատկերացնել այդ հաշվահարդարի օրինակով: Ֆելիետոնում ոչ մի կոնկրետ անուն կամ գործողության վայր չկա, գործում են միայն ընդհանրացված անձինք, բայց դա լիանգարեց ջոջե-

քին՝ լիակատար նմանություն գտնելու իրենց և հոգվածի գործող ան-
ձանց միջև: Մամուրյանը իրավացիորեն նկատում էր, որ ֆելիետոնում
ոչ մի բան չկար՝ հանդեսը մամուլի օրենքի համեմատ պատժի ենթար-
կելու համար¹⁷⁶: Բացի այդ, Զիլինկիրյանին դատել էր ոչ թե դատա-
րանը, ինչ ենթադրվում էր երեք ամիս առաջ գործողության մեջ մտած
մամուլի օրենքով (հոգվ. 34), այլ Զմյուռնիայի երևելիների ժողովը,
որը իրավասու չէր դատելու: Նույնիսկ սովորաբար զուսպ «Մասիսը»
այս առթիվ իր տարակուսանքն էր հայտնում, թե ինչ հիման վրա են
«Ծաղիկի» դեմ վալիին խնդրագիր ներկայացրել և կամ «դատապար-
տության վճիռը լրագրական ո՛ր օրինաց, ո՛ր հոգվածին համեմատ տըր-
ված է»¹⁷⁷:

Անկասկած, Զիլինկիրյանի դատաստանը կատարվել է մամուլի օ-
րենքի շրջանցմամբ և ապօրինի: Հազիվ գործողության մեջ մտած՝ մա-
մուլի օսմանյան նորաթուխ օրենքը տալիս էր իր անգործունակության
ապացույցը, ինչպես թանգիմաթի շրջանի այն բոլոր օրենքները, որոնք
վերաբերում էին հպատակների քաղաքացիական իրավահավասարու-
թյանն ու իրավունքներին:

Հետադիմությունը իշխանությունների միջոցով ճնշում գործադրեց
նաև Տետեյանների վրա, որոնց տպարանում հրատարակվում էր «Ծա-
ղիկը» Վերոհիշյալ իրադարձություններից անմիջապես առաջ, տեղի
տալով այդ ճնշմանը, Տ. Տետեյանը ստիպված էր եղել հրաժարվելու
«Ծաղիկին» ուղղված Մ. Մամուրյանի «Հայկական նամականի» հեր-
թական հատվածը (է նամակ) տպագրելուց: Այստեղ Մամուրյանը դա-
տապարտում էր սահմանադրական քաջքշուկները, ինչպես և Ազգային
վարչության բռնացումները մամուլի դեմ¹⁷⁸: Նա գավառների անտերունչ
վիճակի հետ էր կապակցում տգիտության խավարն ու կրոնափոխու-
թյան ճարակը: Մամուրյանը դատապարտում էր եսակենտրոն կղերին,
բացահայտում նրա հակասահմանադրական դիրքորոշման հասարա-
կական պատճառները: Քննադատական ուժեղ լիցքով հագնեցած այս ե-
լույթը իբրև 1860-ական թթ. հայ դեմոկրատական հրապարակախո-
սության նշանակալի արժեք, իր սուր հարցադրումներով առնչվում էր
Մ. Նալբանդյանի «Ազգային թշվառություն» հոգվածին:

Թեև Մ. Մամուրյանը քննադատում էր Տետեյաններին՝ հոգվածը
շտպագրելու համար, սակայն դրա պատճառը տեղական իշխանույն-
ների հարկադրանքն էր, որին Տետեյանները ստիպված էին համակերպ-
վել՝ տպարանը խափանումից ազատելու համար: Դրանից ոչ շատ ա-
ռաջ իշխանություններն արգելել էին «Ծաղիկի» համար նախատես-

ված Գր. Զիլինկիրյանի այն հոդվածը, որտեղ հրապարակախոսը հանդես էր եկել ընդդեմ զմյուռնացի հարուստների մի խմբակցության, որի մարդիկ ոչնչացրել էին ս. Ստեփանոս եկեղեցու խաչկալները: «Ծաղիկը»,—գրում էր Գր. Զիլինկիրյանը «Մասիսում»,—«Անօրինակ փոքրագույն մ'առջև կզոհվի և միթե զոհվիլ չէ՝ հողված մ'ունենալ, շարեյ տալ և չկրնալ հրատարակել»¹⁷⁹:

Ակներև է, որ «Ծաղիկի» նկատմամբ շարունակվել է նախնական գրաքննությունը, ինչպես մամուլի օրենքի հրապարակումից առաջ էր: Դրա ապօրինությունը այս դեպքում առավել աչքի էր զարնում, որովհետև օրենքով նախնական գրաքննություն չէր նախատեսվում:

Իրեն՝ Մամուրյանին դեռևս ժամանակ էր հարկելու՝ ըստ ամենայնի գնահատելու մամուլի օրենքը: 1865 թ. սկզբին նա կաթժում էր, թե այդ օրենքը կկիրառվի և նույնիսկ նկատում էր դրա սրտը չբաղան կողմերը՝ կանխարգել գրաքննության և դրամական երեսփառության բացակայությունը¹⁸⁰: Որ օրենքը ամրագրում էր միայն մամուլի պարտականությունները՝ լիովին անգիտանալով նրա իրավունքները և, ի վերջո, պետք է լրացներ թանգիմաթի շրջանում հրապարակված օսմանյան քաղաքացիական օրենքների ձևականությունը, դեռևս հայտնի չէր: Համենայն դեպս, Մամուրյանը կաթժում էր, որ Զմյուռնիան, որպես պրովինցիա, կարող է շեղվել օրենքից, և դրա պատճառն էր համարում իշխանությունների կամայականությունները:

Գր. Զիլինկիրյանը ևս գրեթե նույն կարծիքին էր. մատնությունների և հալածանքի մթնոլորտից ազատվելու, ինչպես և մամուլի իրավունակի օրինականացման ակնկալությամբ նա «Ծաղիկը» տեղափոխեց Կ. Պոլիս: «Գիտենք,—գրում է նա,—թե մայրաքաղաքին մեջ գեթ տնություն ընդհատ ազատությունը պիտի անարգել վայելենք: Գիտենք, թե այսուհետև եթե ամբաստանելի հողված մը գրելու ըլլանք, անկողմնապահ և հողվածին ուժը հասկցող հանձնաժողովի առջև պիտի դատվինք»¹⁸¹:

1865 թ. № 109-ից «Ծաղիկը» տպագրվել է Կ. Պոլսի Արամյան-Արեևիյան տպարանում: Որպես համաբարտու, այսինքն՝ պատասխանատու տնօրեն ստորագրել է Զ. Ստեփանյանը: Դա ունեցել է միանգամայն ձևական բնույթ, դրանով Զիլինկիրյանը կամ խուսափել է նոր մատնություններից կամ էլ Կ. Պոլսում «Ծաղիկի» հրատարակության նոր թույլտվության ձեռք բերելը նրա անվամբ՝ կապված է եղել որոշակի դժվարությունների հետ: Իր տեղում տեսանք, թե որքան ջանքեր էր պահանջում հրատարակության հետ կապված վարչական արգելքների հաղթա-

հարումը: Կ. Պոլսում և պարբերականը կրկին Զմյուռնիա տեղափոխելուց հետո էլ, մինչև «Մաղիկի» վերջնական դադարը, Չիլիկիիլիայում մնաց իբրև պարբերականի փաստական խմբագիրը: Իրավական տեսակետից, Զ. Ստեփանյանի ստորագրությամբ «Մաղիկի» հրատարակությունը ոչ մի բանով չէր տոժում. նկատենք, որ մամուլի օրենքով պարբերականի հրատարակության հայտագրում կարող էր նշվել կամ Խիրոջ կամ պատասխանատու տնօրենի անունը (հ. 4): Այս հոգվածն ընդօրինակում էր ռեստավրացիայի ժամանակաշրջանի ֆրանսիական՝ այսպես կոչված «պատասխանատու հրատարակչի» վերաբերյալ օրենքը¹⁸²: Այն ուժի մեջ էր նաև 1850—60-ական թվականներին: Այսպես իբրև Փարիզում հրատարակվող՝ Ստ. Ոսկանյանի «Արևելք» հանդեսի համարատու (պատասխանատու հրատարակիչ) ստորագրում էր դը Լետրը, «Արևմուտքի» համարատու՝ Լ. Թրիբին:

Արևմտահայ պարբերականները գրեթե լուծյամբ անցան 1864 թ. դեկտեմբերի մամուլի օրենքի կողքով: Դա բացատրվում է մի քանի պատճառներով: Նախ, ի տարբերություն մինչ այդ մամուլի հանդես կիրառվող կամայականությունների, օրենքով իրականորեն կարգավորվում էին իշխանությունների և թերթերի ու հանդեսների փոխհարաբերությունները, որ գեթ ձևական իմաստով դրական տեղաշարժ էր: Ոչ միայն տեղական իշխանությունների, այլև ազգային հետադիմության դեմ մամուլի ազատության համար պայքարող հրապարակախոսներին մամուլի օրենքը ներկայանում էր իբրև գործողության անհամեմատ լայն հնարավորության երաշխիք: Այնուհետև, հազիվ թե թույլ տրվեր հայ մամուլին՝ քննադատական խոսք ուղղելու ընդդեմ նոր օրենքի. Օսմանյան Թուրքիայում հրապարակված օրենքների մասին ծայրահեղ դեպքում անհրաժեշտ էր լռել, իսկ քննադատությունը համազոր էր խռովության: «Մասիսի» դատողություններն այս առթիվ ընթանում էին օրենքին ու նրա գործունակությանը հավատ ընծայելու հունով, մի իրողություն, որ նկատելի է նաև Գր. Չիլիկիիլիայի ու Մ. Մամուրյանի համառոտ ելույթներում: Կ. Ությունյանը կարծում էր, որ այդ օրենքով մամուլին շնորհվել է իրավունքների ու պարտականությունների հավասարակշռություն, որին լրագրությունը պետք է ապավինի զուսպ ուղեգծով, այսինքն՝ «հասարակաց կարծիքը լուսավորել արդարասեր քննադատությամբ և զեղծմանց բարձմանը նպաստել»¹⁸³: «Լրագրական նոր օրենքը հայ մամուլին և Ազգային վարչության նկատմամբ» վերնագրով հոշվածում «Մասիսն» արդեն հետին թվով իրեն թույլ էր տալիս դժգոհություն հայտնել Ազգային վարչության օրինագծի նկատ-

մամբ և չափավորել նրա ծայրահեղ խստությունները: Նա Ազգային վարչությանը նախազգուշացնում էր, որ նա թեև կարող է որևէ թերթի դատի հրավիրել՝ «գատը վաստկելու կամ չվաստկելու կասկածելի հույսով»: Բայց և խորհուրդ էր տալիս «սնտայաց ետևեն վազելով իր իշխանությունը չնվաստահանել»¹⁸⁴:

Պետք է եզրակացնել, որ «Մասիսը» ևս պատրանքներ է ունեցել մամուլի օրենքի՝ խմբագիր-հրատարակիչների իրավունքներն ապահովող երաշխիքների հարցում: Իրականում, այդ օրենքը Ազգային վարչությանն ամենևին չէր խանգարելու ցանկացած ժամանակ դիմելու իշխանություններին և պատժի ենթարկելու ցանկացած պարբերականը: Մամուլի իրավունքների անգլխացումը նոր օրենքի մեջ՝ հանգանցին ցույց տալ միայն Կ. Պոլսում եվրոպական լեզուներով հրատարակվող պարբերականները: Վերջիններս այս շրջանում անհամեմատ ավելի ազատ էին գործում, քան զուտ տեղական մամուլի օրգանները: Ավելին, եվրոպական թերթերը հրահրվում էին դեսպանատների կողմից, որոնց նոր օրենքը ոտնձգություն էր թվում իրենց ավանդական առանձնաշնորհումների նկատմամբ: Նշված հրատարակությունները սերտորեն կապված էին եվրոպական տերությունների՝ Թուրքիայում ունեցած տնտեսական ու քաղաքական շահերին, արտահայտում էին այդ շահերը և ֆինանսավորվում նրանց կողմից: Ոչ դեսպանատներին, ոչ էլ ներքին ձայնափող թերթերին ձեռնառու չէր եվրոպալեզու և տեղական թերթերի իրավունքների համահարթեցումը: Այդպիսի համահարթեցում կամ, որ նույնն է՝ եվրոպական թերթերի անկախության վերացումը ապահովվում էր մամուլի նոր օրենքով, այն վերաբերում էր ընդհանրապես Թուրքիայի տարածքում հրատարակվող պարբերականներին: Մամուլի օրենքում նշվում էր, որ օտարահպատակները լրագրական հանցանքների համար դատվելիս չեն տարբել լեզու Բ. դռան հպատակներից և պետք է ենթարկվեն օսմանյան դատարանների իրավասությանը (հոդվ. 3): Եվրոպական և տեղական հրատարակությունների միջև մնում էր սոսկ մեկ տարբերություն, որը ոչնչով չէր փոխում իրերի վիճակը. այն, որ օտարահպատակը հրատարակության արտոնության խնդրագիրը ներկայացնելու էր արտաքին գործերի, իսկ Բ. դռան հպատակը՝ հասարակական կրթության մինիստրությանը (հոդվ. 1):

Անգլիական դեսպանատունը Բ. դռանը բողոք ներկայացրեց մամուլի նոր օրենքի խստությունների դեմ՝ դժգոհելով եվրոպական հրատարակությունների արտոնությունների վերացման համար: «Լեվընդ հերալդը» և «Կուրիեր դ'Օրիենը» պնդում էին, որ մամուլի օրենքը հա-

կասում է օտարահպատակներին տրված ստատուսին¹⁸⁵։ Այս թերթերը քննադատում էին մամուլի հանցանքները բնութագրող՝ «անվանարկություն» և «թշնամանք» հաճախադեպ ձեակերպումները օրենքում (հոդվ. 14—25), նկատելով, որ Վրանք չափազանց առաձգական են և չարաշահումների տեղիք կտան իշխանություններին։

Բանավիճելով այդ թերթերի հետ, մամուլի օրենքը պաշտպանության տակ առավ կրիսապաշտոնական «Ժուռնալ» թերթը։ Արտահայտելով կառավարության տեսակետը, նա հայտնում էր, որ օրենքի բուն արժեքը մամուլի գործը քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորելն է։ Եթե իշխանությունները, գրում էր թերթը, չարաշահեն իրենց իրավունքները մամուլի հանդեպ, ապա դրա համար օրենքը բնավ մեղավոր չէ. օրենքը մնում է օրենք և որպես այդպիսին, «չիրնար գեղծում պատճառել, վասնզի նույնհետայն բռնաբարված կհամարվի և այն ատեն օրենքը պակասություն չունենար, այլ բռնաբարողը»¹⁸⁶։ Առարկությունը սոփեստության իսկական նմուշ էր. անշուշտ, օրենքը ի վիճակի չէր կանխելու իր դեմ եղած մեղանշումները, այդ թվում և իշխանությունների մեղանշումները։ Բայց հենց այն հանգամանքը, որ մամուլի օրենքը ամրագրում էր մամուլի և նրա գործիչների միայն պարտականությունները և իշխանությունների միայն իրավունքները, վկայում էր դրա միակողմանի նպատակաուղղվածության մասին։

«Մասիսը» իր համամտությունը հայտնեց «Ժուռնալին»։ «Մենք ալ այս կարծիքին ենք,—գրում էր թերթը,—և ավելի սիրելի է մեզ հավատալ, որ կայսերական կառավարությունը երբեք չպիտի մեկնի իր ներողամիտ քաղաքականությունն, եթե լրագրողներն ալ ուղղության շավղեն չխոտորին»¹⁸⁷։

Օտարահպատակների հրատարակություններից «Գազեթ դյու Լիվանը» միանգամայն ճիշտ գնահատեց մամուլի օրենքը՝ ցույց տալով դրա երկու կարևոր թերությունները՝ խմբագիրների իրավազրկությունը և ներանց անօգնականությունը իշխանությունների առջև¹⁸⁸։

Այսուհանդերձ, մամուլի օրենքը որոշ չափով կաշկանդում էր բռնապետության անսահման իշխանությունը մամուլի վրա։ Օգտվելով դրանից, վերջինս արդեն Բ. դռան դեմ իր ելույթներով սկսել էր վիճարկել այդ իշխանությունը։ 1867 թ. սկզբին «Մուհրիրը» և «Թասվիրի էֆթյարը» քննադատեցին կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը, որի համար երկուսն էլ նախազգուշացում ստացան¹⁸⁹։ Այլ Սուլավիի մի հոդվածը «Մուհրիրում» (1867 թ. մարտ) Եփրատի Իսմայիլ փաշայի և Նուպար փաշայի վերաբերյալ՝ պատճառ

դարձավ, որ կառավարութիւնը խափանի այդ պարբերականը¹⁹⁰։ Դրանից հետո «Թասվիրի էֆթյարը» տպագրեց նրա տնօրեն Ֆիլիպ էֆենդու բողոքը այդ խափանման առթիվ, ինչպես և նամըք Քեմալի ծանոթութիւնները պատահարի մասին։ Այդ թերթը խիստ դիտողութիւններ արեց նաև Կրետեի գործերին եվրոպական միջամտութեան դեմ, որի պատճառով խափանվեց մեկ ամսով¹⁹¹։ Կառավարութիւնը սաստեց նաև Կ. Պոլսի հունական թերթերին, որոնք անհանդուրժելի հողվածներ էին տպագրել Կրետեի ապստամբութեան առթիվ¹⁹²։ Լիբերալ-սահմանադրականների դեմ Ալի փաշան հարձակման անցավ՝ արդեն մամուլի վիճակը իրավականորեն խստացնելու նպատակով։ 1867 թ. մարտի 6-ին նա հրապարակեց այսպես կոչված «Ժամանակավոր որոշումը (կամ «Ալիի որոշումը»)»¹⁹³, որով փաստորեն սառեցվում էր 1864 թ. մամուլի օրենքը, իսկ պարբերականների բախտը ամբողջովին հանձնվում էր իշխանութիւնների տնօրինութեանը։ Խափանված թուրքական թերթերի խմբադիր-հրատարակիչները ենթարկվեցին աքսորի կամ բանտարկութեան։

Որոշման մեջ նշվում էր, որ «Տեղական մամուլի մի մասը... դարձել է երկրի ընդհանուր շահերին հակառակ բոլոր ժայռահեղ խմբակցութիւնների և ձգտումների կրքոտ օրգանը։ Նա հաճախ չի զլանում նույնիսկ այնպիսի հարձակումներ, որոնք քայքայում են կայսրութեան հիմքերը»։ Դատապարտվում է մամուլի թշնամական պրոպագանդը և վնասակար գաղափարների տարածումը, այն, որ «իբրև աղետալի գաղափարների ջատագով, նա իր խնդիրն է համարում անլուր կեղծիքների տարածումը»։ Դրան վերջ տալու նպատակով, ասված է որոշման մեջ, կառավարութիւնը հարկադրված է գործել վարչական կարգով՝ ընդդեմ այդ պարբերականների և որ այդ վարչական ձեռնարկը կվերացվի, երբ վերացվեն դրանք ծնող պատճառները¹⁹⁴։

Ուշագրավ է որոշման վերջին դարձվածքը, որտեղ վարչական միջոցառման ոչ մի ժամկետ չի նշվում։ Հիշատակվում է միայն այն պայմանը, որը կախում ունի, իր հերթին, այլ պայմաններից։ Թանգիմաթի օրինագծերի և օրենքների մշակման բովով անցած թուրքական օրենսդրութիւնը սկսել էր գնահատել մշուշապատ ձևակերպման արժեքը։ Ինչևէ, մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը, Բ. դուռը այդպես էլ չտեսավ այդ որոշման անհրաժեշտութիւնը պայմանավորող հասարակական պատճառների վերացումը։ 1864 թ. մամուլի օրենքը, սակավ բացառութիւններով, չվերականգնեց իր իրավական ուժը։ «Ժամանակավոր որոշումը» հաջորդ տասնամյակին և մանավանդ համիդ-

յան ռեակցիայի շրջանում ծառայեց իբրև հիմնավորում՝ ճզմելու կամ՝ անողորմաբար ոչնչացնելու մամուլի ամեն մի ընդդիմություն պաշտոնական ուղեգծի դեմ¹⁹⁵։

Հայ պարբերականները գրեթե չանդրադարձան վերոհիշյալ որոշմանը։ Ասենք, «Ծաղիկի» օրինակը արդեն ցույց էր տալիս, որ այդ որոշումից առաջ էլ, մամուլի օրենքի գործողության պայմաններում թուրքական իշխանությունների համար որևէ արգելք չկար պարբերականները հետապնդելու կամ ճնշելու համար։ Այսուհանդերձ, «Մասիսը» շատ համառոտ հայտնեց իր թաքնված անբավականությունը։ «Այս տնօրենությունը,—գրում էր նա,—բոլոր մեզ, անոր համար ավելի ցավալի է, որ Եվրոպայի մեջ կայսերական կառավարության թշնամյաց առիթ կուտա ըսելու, թե Բ. դուռն մեկ կամքը բավական է ուզած օրենքը դադարեցնելու»¹⁹⁶։

Հիրավի, «Մասիսի» խմբագիրը կարողանում էր կոահել թուրքական քաղաքագետների մտահոգությունները։ Մի քանի ամիս անց օսմանյան լիբերալ-սահմանադրականների մամուլի դեմ իր հալածանքները հիմնավորելու համար և անգլիական հասարակական կարծիքի առջև բարոյական կապիտալ շահելու նպատակով Բ. դուռը անիրավիժի դեր պետք է խաղար։ Մուղուրուս փաշան՝ օսմանյան դեսպանը Անգլիայում, դատ բաց արեց իոնդոն փոխադրված «Մուհեբիի» դեմ։ Թուրքական կառավարությունը տալիս էր արտասահմանի հակասուլթանական հրատարակությունների դեմ պայքարի նախօրինակը, որը որքան կարևորություն, այնքան էլ անհեթեթ ձևեր պետք է ստանար Աբդուլ Համիդի ժամանակ։

Արևմտահայ իրականության մեջ մամուլի ազատության վերաբերյալ տարակարծությունները արտացոլում էին սահմանադրության բովանդակության, գավառներում այն կիրառելու և ազգային ինքնագիտակցության զարգացման համար մղվող պայքարը։ 1860-ական թթ. առաջին կեսից ընդլայնվեց քննադատական ուղղությունը մամուլի և հրապարակախոսության մեջ։ Այս ուղղությանը հետևող առաջադիմական գործիչները հենվում էին «հասարակաց կարծիքի»՝ դեմոկրատիայի վրա և հանդես գալիս նրա անունից ու նրա պաշտպանությամբ։ Պահպանողականների և լիբերալների անհանդուրժող մոտեցումը մամուլի «ծայրահեղության», այսինքն նրա ազատության նկատմամբ, վկայում էր, որ նրանց առավել ձեռնտու է չափավոր ուղղությունը։

1864 թ. օսմանյան մամուլի օրենքը հրապարակվեց այն ժամանակ, Լըբ պարբերական մամուլը ի վիճակի էր արտացոլելու թանգիմաթի շրջանում օսմանյան հասարակության մեջ կատարված հասարակական-քաղաքական փոփոխությունները, ինչպես և հակադրվելու կայսրության հպատակ ժողովուրդների տնտեսական ու քաղաքական վիճակի պաշտոնական մեկնաբանությանը: Աբտաքուստ լիբերալ ձեակերպումներով, խիստ պատժաշափեր ենթադրող մամուլի օրենքը գործնականում ամենաբազմազան արգելքներով կաշկանդում էր մամուլի ինքնուրույնությունը և իշխանությունների համար գերադաս դիրք ապահովում նրա նկատմամբ: Օրենքը ըստ էության ամրագրում էր իշխանությունների իրավունքները և մամուլի պարտականությունները և այս հանգամանքը նրան տալիս էր խիստ միակողմանի բնույթ՝ լայն դուռ բաց անելով իշխանությունների կամայականությունների համար: Մամուլի օրենքի այսպիսի սրված միանշանակությունը իրավական հող հարդարեց 1867 թ. մարտին հրապարակված «Ժամանակավոր որոշման» համար, որով վարչական իշխանություններին գործնական հնարավորություններ էին տրվում ձնշելու մամուլում նկատվող ամեն մի օպոզիցիա:

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՈՐՈՇՈՒՄԸ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՐԱՆՈՒՄԸ ԵՎ
ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայերի սահմանադրության նախապատրաստման և հաստատման ժամանակից ի վեր (1850—1860-ական թթ.) մամուլը ստացավ հասարակական ազդեցիկ նշանակություն: Ազգային վարչությունը կանոնադրելու, ժողովրդական զանգվածների և վերնախավի միջև մեղավոր պայքարի հանգուցակետերում մամուլն ինքնահաստատում էր ապրում ոչ միայն բախվող կողմերի տրամադրություններն արտահայտելու, այլև այդ տրամադրություններին մի հայտնի շափով հուն տալու իմաստով: Այն հանգամանքը, որ 1861 թ., սահմանադրության կիրառումից մեկ տարի անց Ազգային վարչությունը հրապարակ նետեց իր կազմած մամուլի նախագիծը՝ առաջադիմական պարբերականները սանձելու նպատակով, վկայում էր մամուլի ժողովրդականության բարձրացման մասին: Ազգային վարչության ու սահմանադրության գործողության խափանումները ևս (սահմանադրության դադարեցումները 1861 և 1866 թթ.) արևմտահայ պաշպանողականությունը առնչեց դեմոկրատական մամուլի ազդեցության և նրա կողմից իրադարձությունների «հրահրիչ» մեկնաբանման հետ: Անտարակույս, այդ մեղադրանքի մեջ ավելի շատ գաղափարական պայքարն արտացոլող միակողմանիություն կար, քան ճշմարտություն, քանի որ սահմանադրական մեքենայի խափանումները, ինչպես հայտնի է, կապվում էին օսմանյան կառավարության հատուկ քաղաքականության հետ: Սահմանադրության սկզբունքային պաշտպանությամբ արևմտահայ դեմոկրատական մամուլը թեև անուղղակի, իր դժգոհությունն էր հայտնում այդպիսի քաղաքականությունից: Դա նշանակում էր, որ առաջադիմական պարբերական հրա-

տարակույթյունները, անկախ արևմտահայ հանրության խնդիրներին անդրադառնալու կարողությունից և շափերից, բուն Արևմտահայաստանի կյանքի դեռևս ոչ բավարար արտացոլումից, ապրում էին որակական տեղաշարժերի պրոցես: Մի հայտնի շափով այն համընկավ օսմանյան մամուլի ու գրաքննության ձևավորման ու զարգացման ընթացքին: «Նոր օսմանների» լիբերալ-սահմանադրական շարժման դեմ մղվող պայքարում սուլթանական բռնակալությունը մամուլի ռեժիմը սահմանելիս ելնում էր իր հաստատունությունը ապահովելու նպատակից: Վերջինիս ընթացքի առանձնահատկությունները բացահայտելիս անհրաժեշտորեն պետք է հաշվի առնել թուրքական լիբերալ շարժման դեմ Բ. դոան թշնամական վերաբերմունքը: 'Թրանով էլ բացատրվում է գրաքննական անհանդուրժող դիրքորոշումը այդ ռեժիմը վիճարկող հրատարակությունների նկատմամբ: Սակայն վերոհիշյալ հանգամանքը անհրաժեշտ լինելով հանդերձ, դեռևս բավարար չէ մամուլի իրավիճակը պայմանավորող քաղաքական ու հասարակական պայմանները բնութագրելու համար: Այդպիսի վերաբերմունքը ամբողջացնող մյուս կողմը օսմանյան պաշտոնական գաղափարախոսության անհաշտ պայքարն էր կայսրության ընկճված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման դրա գաղափարների հանդեպ: Այս իմաստով մամուլի ռեժիմը ամբողջովին արտացոլում էր սուլթանիզմի ներքին քաղաքականությունը: Մամուլի գրաքննական ռեժիմը հանդես էր գալիս իբրև այդ քաղաքականությունը ըստ ամենայնի հիմնավորող, դրա դեմ ուղղված ամեն մի առարկություն կանխող ու կանխարգելող իրավական դրույթուն:

Պրուսական գրաքննությունը, նկատում էր Մարքսը, «Մեզանից պահանջում է օրենքներին համապատասխան վարքագիծ, պահանջում է հարգանք՝ օրենքների նկատմամբ, և դրա հետ միասին մենք պարտավոր ենք հարգել այնպիսի հաստատությունները, որոնք մեզ օրենքից գուրս են դնում և կամայականությունը բարձրացնում իրավունքի աստիճանի»¹:

Օսմանյան վարչակարգին հատուկ առանձնահատկություններով հանդերձ, գրաքննությունը Թուրքիայում ևս կամայականորեն ուղղվում էր արևմտահայերի ազգային-քաղաքական իրավիճակը ներկայացնող հրապարակումների դեմ: Այս ժամանակաշրջանից իսկ գրաքննությունը գործում էր յուրահատուկ նրբամտությամբ: Եվրոպական կաշուն քաղաքագիտությանը առատորեն հրամցնելով բռնակալական ռեժիմի «արևմտականացման» պատրանքներ, Բ. դուռը գրաքննությանը տվել էր հետտպագրական բնույթ, այսինքն, նախնական գրաքննություն

չսահմանելով, ձգտում էր ստեղծել այն երևութականությունը, թե իբր, երկրում մամուլի լայն ազատություն էր տրված: Գրաքննությունը, մինչդեռ չէր հապաղում խստությունները գործադրել հրապարակումներից հետո՝ փորձելով կանխել հետագա նույնպիսի հրապարակումները: Թերթերի և ամսագրերի խմբագիր-տնօրենները արդեն փորձով գիտեին, թե իրենց ինչ է սպառնում նման մեղանշումների համար: 1860—1870-ական թթ. այս ուղիով ընթացող գրաքննությունը միայն հաջորդ տասնամյակին, Արդու Համիդի օրով, դեն նետեց հետապագրական լիբերալ ծածկոցը և վերածվեց հրեշավոր ու մերկապարանոց մի գրաքննության, որ անօրինակ էր ընդհանրապես գրաքննությունների պատմության մեջ:

Այս ամենի հետ միասին, գրաքննությունը բնութագրելիս չպետք է աչքաթող անել նրա դիրքորոշումը Կ. Պոլսում և Զմյուռնիայում տպագրվող եվրոպական լեզուներով մամուլի նկատմամբ: Այն իրողությունը, որ այդ մամուլը սերտ կապեր ուներ Բ. դուռը թելադրող տերությունների քաղաքականության հետ՝ գրաքննությանը մղում էր մի հայտնի շափով սահմանափակել ձեռքերի ազատությունը: Եվ և՛ թե 1840-ական թթ. Բ. դուռը փորձում էր որևէ կերպ կարգուկանոնի տակ դնել այդ մամուլի գործունեությունը և սահմանել նրա համար իրավական նորմեր, ապա դա ամենից առաջ խոսում է այն մասին, որ հենց այդ մամուլն էր, որ երկրում վայելում էր մի որոշ ազատություն: Համիդյան ռեակցիայի տարիներին միայն Թուրքիայի եվրոպական մամուլը ենթարկվեց խիստ հսկողության: Իր պատժիչ էությունը գրաքննությունը առանձնահատուկ ուժով էր դրսևորում հպատակ ժողովուրդների մամուլի հանդեպ, ձգտելով արմատախիլ անել ազգային, կրոնական ու քաղաքական ճնշումների դեմ ուղղված բողոքները, որոնք ուղղվում էին օսմանյան բռնապետության ու դրան համապատասխան հասարակական օրգանիզմի դեմ:

Արևմտահայ մամուլի հասարակական զարգացմանը զուգընթաց՝ գրաքննությունը դառնում էր առավել կասկածամիտ ու խստամբեր: 1860-ական թթ. վերջին նա իր հարձակումներն ուղղեց մասնավորապես այն պարբերականների դեմ, որոնք ակտիվորեն արտացոլում էին հասարակական իրադարձությունները և փորձում լուսաբանել արևմտահայերի կացությունը գավառներում: «Ալիի որոշումից» հետո, երբ հալածանքների ենթարկվեցին «նոր օսմանների» պարբերականները, իշխանությունները վերակառուցեցին իրենց երբեմնի գործելակերպը՝ դիմելով տպագրության կենտրոնացված վերահսկողության միջոցին: Ուշա-

գրավ է աշդպիսի պայմաններում Զմյուռնիայի «Մաղիկի» հրատարակությունը կամովին դադարեցնելու վերաբերյալ Գր. Զիլինկիրյանի որոշումը: «Մաղիկին դամբանականը» հրաժեշտ-հողվածում նա գրաքննությունը ապակողմնորոշող մի քանի դարձվածներից հետո բացատրում է դրա պատճառը. «Ազատության համար գրելու սկսանք, ազատության համար կովեցանք, ազատության համար հալածվեցանք, մատնվեցանք, նախատվեցանք, վնասվեցանք և հինգ տարի ստոյիկյան համակերպությամբ մեր խղճի ձայնին հնազանդելեն ետք՝ այսօր դառնապես կստիպվինք փառքի բարձունս կարդալ «Մաղիկ» վրա, վասնզի կզգանք, թե առանց ազատության անհնարին է նախապաշարումներու, ավելորդապաշտություններու, ընկերական փտած ու ցեխոտ սովորություններու մատնված բազմության մը հառաջադիմությանը նպաստել, վասնզի համոզված ենք Վիքթոր Հյուկոյի հետ, թե «ազատությունը հառաջադիմության տեսողական գործարանն է»²:

Դրանից երկու տարի առաջ, 1865 թ. հետադիմության շղափարող բռնությունների պայմաններում դադարել էր ահեհազդեցիկ դեմոկրատական հրատարակությունը՝ «Մեղուն»: Եվ միայն 1870 թ., երբ «Մեղուն» նորոգվեց Հ. Սվաճյանի ձեռքով, արևմտահայ հրապարակախոսության անդաստանում խախտվեց պահպանողականների ուժերի գերակշռությունը: 1860-ականի 2-րդ կեսից սկսած արևմտահայերի վարչական-սահմանադրական ձգնաժամը և գրաքննական հալածանքները նշանակալիորեն պայմանավորեցին դեմոկրատական հրապարակախոսության այս ժամանակաշրջանի վալդէջօր:

1868 թ. վերջին արևմտահայերի սահմանադրական մեքենան արդեն երրորդ անգամ ցուցադրում էր իր անկատար ընթացքը: Գավառական հարստահարությունների վերաբերյալ բողոքագրերը կուտակվում էին պատրիարքարանի պատերի ներսում՝ որևէ ընթացք չստանալով: Կ. Պոլսի թաղերում սահմանադրական խորհուրդները վերածվել էին խմբակցությունների նեղմիտ վեճերի, որ կաթվածահար էր անում շրանց կենսունակությունը: Վիճակը նույնն էր Ազգային վարչությունում, որտեղ սահմանադրության վերաքննության, գավառական կացության և այլ խնդիրների անպտուղ քննարկումը խորացրել էին պատրիարք Պ. Թազմագյանի և երեսփոխանների խմբերի երկպառակությունները: Պատրիարքը կորցրել էր իր ազդեցությունը կրոնական և քաղաքական ժողովներում³: Ընդհանուր ժողով չէր գումարվում, իսկ երբ այդ հաշովում էր, ապա նիստը վերածվում էր կրքերի անզուսպ բախումների: Այս պայմաններում, ինչպես գրում է Ա. Նրիցյանը, «մի քանի նշանա-

վոր հայ անձանց թելադրությամբ» կառավարությունը կախակայեց սահմանադրությունը⁴։ Անտերունչ մնացած ազգային գործերին միջամտեց ժողովուրդը, որը խասգուղի և Գումգաբուի եկեղեցիներում ցույցեր արեց պատրիարքի դեմ՝ սահմանադրության կիրառմանը ընդդիմանալու համար։ Պատրիարքի և նրա կողմնակիցների բողոքի հիման վրա Կ. Պոլսում ձեռքակալվեցին մի խումբ հայեր՝ իբրև հրահրիչներ։ Անկարգություններին վերջ տալու համար Բ. դռան թելադրանքով կազմվեց Խառն ժողով⁵։ Վերջինս հայտարարության մեջ տեղեկացնում էր, թե «վերջին օրերս եկեղյաց ոմանց մեջ պատահած մի քանի անկարգությանց համար ազգայիններեն ոմանք ալ դեռ կփնտրվին ու պիտի կանչվին եղեր»⁶։ Ի թիվս այլոց, ձերբակալվեցին «Մանգումեի էֆըյարի», «Փունջի» և «Ժամանակի» խմբագիրները՝ ցույցեր կազմակերպելու ամբաստանությամբ։ «Վերջապես,— գրում է «Մասիսը»,— ոստիկանությունը... երաշխավոր առավ և արձակեց դանոնք, միայն մեծ. Փանոսյան էֆենտին երաշխավոր չտալով ծանուցեր էր, որ դատախազ ունի, դատարանի պատրաստ է և ժամու մը շափ պահվելե ետք ինք ալ արձակվի է առանց երաշխավորի»⁷։

Չնայած դրան, ժողովրդի հուզումները պատրիարքի դեմ դեռ շարունակվում էին։ Խառն ժողովի երկրորդ պաշտոնական հայտարարությունից հետո ակնհայտ դարձավ, որ դրությունը դեռևս չի կայունացել⁸։ Ուշագրավ է, որ Խառն ժողովի ատենադպիր Գր. Օսյանի ստորագրությամբ ազդարարություն էր ուղարկվել հայ խմբագիրներին՝ տեղեկատվության համար ժողովատան դիմանից օգտվելու հնարավորության մասին⁹։ Հակասական լուրեր շահողորդելու և կրքեր չգրգռելու նպատակով Խառն ժողովը պարբերականներին մղում էր միօրինակ տեղեկատվության։ Այս օրերին հրաժարական տվեց պատրիարքը և Խառն ժողովի պատվիրակությունը ստիպված էր հայտնելու մեծ վեզիրին, որ նա չի վայելում ժողովրդի վստահությունը¹⁰։

Վերահիշյալ երեք պարբերականների խմբագիրներին ոստիկանության շուտ տանելը պատահական չէր. «Մասիսը» ճիշտ էր նկատում, որ մամուլը արդեն սկսել է հաշվի առնել և արտահայտել հասարակական կարծիքը¹¹։ Հասարակական կարծիքի այս դրսևորումը մինչդեռ, անցանկալի էր գրաքննության համար, որը դրանում խռովության որոշակի նշաններ էր որոնում։ Տպագրական տեսչությունը անպայման մեղավորներ էր փնտրում և որպես այդպիսին՝ ամենահարմարը դիտեց «Մանգումեի էֆըյարը»։ 1868 թ. դեկտեմբերին ծավալված երկպառակությունների առթիվ թերթի տպագրած մի հոդվածում ընթերցողին

հուշարկվում էր այն բանի գիտակցությունը, որ կառավարությունը ձգձգում է արևմտահայերի սահմանադրության վերահաստատումը, որովհետև իրավական այդ ակտի գործողության մեջ նկատում է հայերի քաղաքական ակտիվացման վտանգ։ Բ. Դուռը կռահեց Կ. Փանոսյանի մտքերը։ Սավֆեթի ստորագրությամբ «Մանգումեի էֆբյարին» ուղղված խափանման ազդի մեջ նշվում էր, որ թերթը թյուր մեկնաբանություն է տալիս հայ համայնքի հանդեպ պետության բարյացակամությանը և գրգռում է ժողովրդին։ «Մանգումեն» փակվեց անորոշ ժամանակով¹², իսկ Կ. Փանոսյանն ընկավ մեզ արդեն ծանոթ դատական քաշքշուկների մեջ։ Կ. Փանոսյանը խուսափողական բացատրություններ տվեց իր հրապարակումը ոչ ճիշտ ըմբռնելու մասին։ Եվ խափանման ազդը, և այդ բացատրությունները տպագրվել են թերթի վերաբացումից հետո, 1869 թ. մարտին¹³։

Օսմանյան պաշտոնեության քննադատությունը «Մանգումեի էֆբյարում» ամբողջանում է Արևմտահայաստանում թուրքական իշխանությունների կամայականությունների համարձակ մերկացումներով։ Թերթը բացահայտում էր գավառներում օսմանյան քայքայված վարչության շարաշահումների, հասարակ ժողովրդին ճնշելու և հարստահարելու բազմաթիվ փաստեր, դատապարտում ազգային և կրոնական ճնշումները։ Այսպիսի բազմաթիվ նյութեր են տպագրվել Մուշի, Վանի, Կարինի, Կեսարիայի և այլ գավառների իրականությունից։ «Մանգումեին» թղթակցում էին Մ. Խրիմյանը և Գ. Սրվանձտյանցը՝ ներկայացնելով գավառի իրական վիճակը (տնտեսական, հողային շարաշահումներ, հայ գյուղերի ճորտացում քրդական վերնախավի կողմից և այլն)։ Արևմտահայաստանի կյանքը ճշմարտացի և քննադատական աներկյուղ մերկացումներով է բացահայտված «Մշեցվոց վրա ընդհանուր տեսություն մը» վերնագրով հոդվածաշարում¹⁴։ Դրա հեղինակը (հոգևածներն անստորագիր են), ինչպես նշում է ուսումնասիրողը, Գ. Սրվանձտյանցն է¹⁵։ Ժողովրդի սոցիալ-քաղաքական ծանր վիճակի դեմ ծառացած այս լուսամիտ հոգևորականը առաջիններից է արևմտահայ հրապարակախոսների մեջ, որոնք բացահայտեցին օսմանյան տեղական իշխանությունների սերտ համագործակցությունը քրդական աղաների հետ՝ հայ գավառը տնտեսապես քայքայելու գործում։

Գ. Սրվանձտյանցի ելույթը տազնապ պատճառեց օսմանյան պաշտոնեությանը. հոդվածաշարի հասարակական արձագանքները հաշվի առնելով, Ալի փաշան հետաքննություն սկսեց Կարնո գավառական իշխանությունների գործողությունների առթիվ, որի ընթացքում պարզվեց,

որ հարստահարութիւններն իրականում ավելի տարածված են և անտանելի¹⁶։ Նկատենք, որ Ալի փաշային հայ գավառի տառապանքներից շատ վելի զբաղեցնում էր քրդական ավարառութիւնների համարյա օրինականացումը տեղական իշխանութիւնների կողմից. այդ հետաքննութիւնը ստեղծելու էր անաշտութեան պատրանք։

«Մանգումեի էֆթյարի» խափանման միջոցներին Կ. Փանոսյանը խմբագրել է Հ. Մինասյանի արտոնատիրութեամբ հրատարակվող «Միածան» թերթը (1869 թ. փետրվար)։ «Միածանը» բողոքի սուր շեշտերով շարունակեց արևմտահայութեան ծանր դրութեան լուսաբանումը։ Այս խմաստով շատ ուշագրավ է «Բ. դուան և Ազգային հառն ժողովույն և բոլոր հայերուն ուշադրութեանը արժանի լալիդին տեղեկագիր մը» հրապարակումը (դարձյալ անստորագիր)։ «Մուշ,—գրում էր թերթը,— մարգկային թշվառութեան և գերութեան բնակարան մ'է, ուր ոչ մարդկային կենաց ասպնջութիւն կա, և ոչ ալ ընտանեկան պատիվ, հարստահարութեանք, բռնութիւնք, մարդասիրութիւնք, կանանց բռնաբարութիւն, կուսերու լլկումն, անխիղճ զրկանքներ են, են»¹⁷։ Թեմայի, շոշափած հարցերի, քրդական հարստահարութիւնների դեմ ուղղված բողոքի պոռթկումները և ոճի նույնութիւնը հուշում է, որ այս հոգվածի հեղինակը թերևս Գ. Սրվանձտյանցն է¹⁸։

«Միածանից» հետո համանման բնույթի նյութեր տպագրեցին նաև Կ. Պոլսի եվրոպական թերթերը։ Տպագրական տեսչութիւնը խափանեց «Միածանը», սակայն, քանի որ գործին խառնվել էին եվրոպական թերթերը և Ալի փաշան հաշվի էր առնում այդ հանգամանքը, «Մասիսում» զետեղեց պաշտոնական հայտարարութիւն՝ գավառների դրութեան վերաբերյալ։ Առաջին և միակ անգամն էր, որ տպագրական տեսչութիւնը այս կամ այն վերապահումներով ընդունում էր հայ մամուլի հրապարակումների ստուգութիւնը, ինչպես և պարզաբանում տալիս դրանց վերաբերյալ։ Հետագայում, որպէս կանոն, տպագրական տեսչութիւնը ոգի ի բռն ճգնել է հերքել մամուլի այս կարգի մերկացումները և դրանք համարել է հասարակական կարգուկանոնի դեմ ուղղված զրպարտութիւն։ Միածանանակ, տպագրական տեսչութեան հայտարարութեան մեջ նկատելի է ընդհարումների նախաձեռնութիւնը հայ բնակչութեան վրա բարդելու, ինչպես և մամուլի հրապարակումները շափազանցութիւն համարելու միտումը։ Աչքի է զարնում միայն վրանաբնակ քրդերին մեղադրելու նպատակաւորվածութիւնը, խսկ թուրք աղաների և շահանքների հարստահարութիւնների փաստերը լուսնայն շրջանցվում են։ 1860-ական թթ. վերջից, ուրեմն, գրաքննութիւնը մշակում է որո-

շակի ուղեգիծ՝ պաշտոնական ձևակերպումներով գավառական քառասի պատճառների մեջ բացառել թուրքական հարստահարիչների կամ բյուրոկրատիայի մասնակցությունը:

Հայ մամուլի ակտիվությունը կոտրելու միջոցների մեջ տպագրական տեսչությունը կարևորություն էր տալիս հրատարակության արտոնագիրը ձգձղելուն: Մինչ այդ, արտոնագրի ստացման գործում իշխանությունների անբարյացակամ վերաբերմունքը 1867 թ. «Ժամանակավոր բեռնումից» հետո վերածվեց արգելքի: 1868 թ. իշխանությունների թանձրամիտ համառության պայմաններում Օ. հոռասարյանը ստիպված էր հրաժարվել առանձին թերթի հրատարակության իրավունք ստանալու մտքից: Ի վերջո, Մ. Աղաբեկյանը մեծ դժվարություններով նրան փոխանցեց «Օրագրի ծիլն Ավարայրվո» թերթի արտոնատիրությունը: «Առաջին անգամ երբ Բ. դուռը գացինք,—գրում է հոռասարյանը,—բացելիբաց մեզի ըսին, թե «դուք հասարակապետական եք եղեր, դուք սոսիալիսթ եք եղեր, Բ. դուռը ծառայող հայ պաշտոնատարները իբրև օտար տերության ծառայող մարմիններ կընդունիք և կբարոզեք եղեր են, աստի ձեզ հատուկ արտոնագիր չկրնար տրվիլ»: Մենք ասոր դեմ քննություն խնդրեցինք՝ «Քննեցեք, ըսինք, մեր հոգավածները (մինչ այդ հոռասարյանը աշխատակցել է «Մանզումեին» և «Միածանին»—Ա. հ.)» և եթե կան տերության շահույց դեմ քարոզված սկզբունքներ, մենք ոչ միայն մեր արտոնագիրն ստանալու քաղաքական իրավունք են կզրկվինք, այլև կուզենք որ ըստ պատմական օրինագրքի մեր պատիժը տնօրենվի...»²⁰:

«Օրագրի» վերանվանված «Միլն Ավարայրվոն» հրատարակվել է 1869 թ. սեպտեմբերից, սակայն հոկտեմբերին հոռասարյանը դեռևս արտոնագիրը չէր ստացել: Դրա արտոնատիրության իրավունքը ստացվել է հետագայում, իսկ մինչ այդ թերթը հրատարակվել է միայն իշխանություններին և իրեն՝ հոռասարյանին հայտնի զարտուղի ճանապարհներով:

«Մանզումեի էֆթյարը» ևս հրատարակվել էր պարբերականների հրատարակության արտոնագրի հետ կապի ծ դժվարությունների մասին: Տպագրելով Զմյուռնիայի «Իրավունք» թերթի (հրատարակվել է 1869 թ.) Մ. Ս. Վանանդեցու խմբագրությամբ) հրատարակության ազդը (1868 թ.), «Մանզումեին» գրում էր, որ «Մինչդեռ Կ. Պոլիս իր հայ քաղաքական լրագրաց նոր արտոնություն դժվարավ տրվելու վրա կցավեր՝ ահա: Զմյուռնիա այս ցավը կմեղմացնե»²¹: Նույնն էր վկայում «Մամուլի» խմբագիր Գ. Այվազյանը. «Գավառներու մեջ,—գրում էր նա,—

տեղական կուսակալին՝ առ Բ. դռանն ուղղելիք ինհայովը (դիմում — Ա. Խ.) դուրսավ կստացվի խմբագրական հրատարակության մը արտոնագիրը, սակայն ի Կ. Պոլիս այս շնորհքը դեռ հրապարակագիրները հավասարութեամբ չեն վայելեր»²²։

«Ժամանակավոր որոշումից» հետո՝ 1867—1868 թթ. Կ. Պոլսում ազգային-հասարակական բովանդակութեամբ ոչ մի նոր պարբերականի արտոնութեուն չի տրվել։ Հաջորդ երկու տարիներին ևս դրանց թիվը խիստ նվազել է։ Ինչ վերաբերում է 1864 թ. օրենքի պատժական մասին, ապա այն կարող էր կիրառվել միայն իշխանութեունների ցանկության դեպքում, և այդ՝ ոչ միայն թերթերի խափանման, այլև խմբագիր-հրատարակիչների զանցանքների ժամանակ։

1869 թ. պոլսահայ համայնքի հուղումներից հետո, երբ մամուլը ցույց էր տվել իր հասարակական ազդեցութեունը, տպագրական տեսչութեունը հայ պարբերականները սկսեց դիտել իբրև վտանգավոր հրահրիչների։ «Ժամանակավոր որոշման» գործողութեան պայմաններում դա նշանակում էր ոստիկանական անսահմանափակ իշխանութեան սպառնալիք՝ մամուլի վրա։ 1870-ական թթ. նույնիսկ սովորական միջադեպերը տպագրական տեսչութեան կողմից մեկնաբանվում էին իբրև խռովութեան հնարավոր առիթներ, և վերջինս անհապաղ գործի էր դնում իր պատժելու իրավունքը։ Այս պատճառով հայ մամուլի մեղանշումները պատժելիս տպագրական տեսչութեունը առաջնորդվում էր ոչ թե տվյալ կոնկրետ հրապարակման արժեքը հաշվի առնելով, այլ արդեն իր ունեցած վերաբերմունքով։ Խմբագիրների իրավագրկութեան, մամուլը պաշտպանող որևէ օրենքի չգոյութեան պայմաններում հայ պարբերականները ոչ սակավ դեպքերում հարվածներ էին կրում նաև այնտեղ, որտեղ ոչ մի խոսք չէր կարող լինել հասարակական անդորրը վրդովելու մասին։ Իր հերթին, Բ. դուռը խրախուսում էր ոստիկանական գործողութեունները մամուլի հետ նրա ունեցած հարաբերութեուններում։ Ոստիկանութեունը իրավունք ուներ շրջանցելու տպագրական տեսչութեունը և անկախ նրա վերաբերմունքից՝ ձերբակալելու խմբագիր-տնօրեններին։ Այս իմաստով ուղադրավ էր «Մամուլի» խմբագիր Գ. Այվազյանի հետ 1869 թ. տեղի ունեցած միջադեպը։ Օգոստոսին «Մամուլը» զավեշտորեն նկարագրել էր Սկյուտարի ս. Խաչ եկեղեցում կատարված պարգևաբաշխութեան հաջողութեւնը («Ֆատրիսաբաշխութեուն» վերնագրով)։ Զայրացած թաղեցիներից ոմանք թաղական խորհրդի միջոցով բողոքեցին ոստիկանութեանը։ Նման դեպքերում սովորաբար արդարացի էր համարվում բողոքող կողմը։ Դրան հետեւեց դատը, Այվազ-

յանը դատվեց և դատապարտվեց մեկ ամսվա բանտարկության՝ ի դո-
հացումն վրեժխնդիր թաղեցիների: Ի դեպ, դատավճիռը կայացվել էր
1864 թ. մամուլի օրենքի համաձայն, որի պատժական մասի կիրառմամբ
ոստիկանությունը պատրանքներ էր ստեղծում այդ օրենքի գործունա-
կության վերաբերյալ: Գ. Ալվազյանը ոչ մի կերպ չկարողացավ ապա-
ցուցել, որ իր ֆելիետոնով չի դիպել որևէ մեկի պատվին կամ արժա-
նապատվությանը: Դա ավելորդ էր, որովհետև դատավորները վկայա-
կոչել էին մամուլի օրենքի այն հոդվածները, որտեղ առկա էին «ընդ-
հանրության դեմ» մամուլի ելույթները պատժելու ձևակերպումները²³:

«Ժամանակավոր որոշմանը» հաջորդող տարիների ընթացքում
կայսրության տարածքում հրատարակվող մամուլի դեմ իշխանություն-
ների բռնությունները մի հայտնի չափով սանձազերծվում էին արտա-
սահմանի չվերահսկող թուրքական մամուլի՝ «նոր օսմանների» հրատա-
րակությունների ներշնչած տագնապից: Լոնդոն տեղափոխված «Մուհ-
բիրը» և ապա «Հյուրիթթը» քարոզում էին սահմանադրական գաղա-
փաւնէր, որոնք իրենց ամբողջ անհատկողականությամբ հանդերձ, բա-
վականաչափ կտրուկ օպոզիցիա էին ներկայացնում սուլթանական
միահեծանության դեմ: Գրաքննությունը ուշադիր հետևում էր, որ այս
գաղափարները չթափանցեն կայսրության տարածքում հրատարակվող
մամուլի մեջ: Արևմտահայ պարբերականների համար այս իմաստով
գրաքննությունը հազիվ թե անհանգստանալու հիմքեր ունենար: Պատ-
ճառը ոչ միայն լեզալ մամուլի հնարավորությունների խիստ սահմա-
նափակությունն էր, այլ հիմնականում՝ «նոր օսմանների» գաղափարա-
խոսությունը: Օսմանյան սահմանադրական շարժումը հասարակական
փոփոխությունների իր ծրագիրը հենում էր սուլթանական ռեժիմի սահ-
մանափակման նպատակի վրա՝ հետամտելով Թուրքիան բուրժուական
զարգացման ուղի: Վուրս բերելու գաղափարը: Այս տեսակետից միայն՝
երկրի բարեկարգումների, ավանդական տնտեսական ու վարչական
հարաբերությունների հետագա բարեփոխման տեսակետից, «նոր օս-
մանների» գաղափարախոսությունը առաջացրել է արևմտահայ հասա-
րակական մտքի հետաքրքրությունը: Հնչում էր, որ արևմտահայ բուր-
ժուա-լուսավորչական միտքը դեռևս 1870—50-ական թթ., բոլորովին
անկախ թուրքական լիբերալ-ռեֆորմիստական շարժումից և դրանից
առաջ, յուրացրել էր բուրժուական պառլամենտարիզմի գաղափարները:
Եվրոպական մայրաքաղաքներում՝ Փարիզում և Վենետիկում էին ձե-
վամբվել արևմտահայ լուսավորիչներ Ն. Զորայանի, Գր. Օտյանի,
Ն. Խուսիսյանի, Ն. Պալյանի, Մ. Աղաթոնի և այլոց հասարակական հա-

յացքները²⁴։ Այս գործիչները 1850-ական թթ. վերջին եվրոպական սահմանադրությունների հիման վրա էին ստեղծել արևմտահայ համայնքի ներքին կանոնադրությունը՝ ազգային սահմանադրությունը։ 1860-ական թթ. դեմոկրատական հրատարակությունների՝ «Մեղվի», «Միության», «Մանգումեի էֆքյարի» և «Մաղիկի» բազմաթիվ հրապարակումներում կարելի է գտնել պետական կառավարման սահմանադրական ձևի պրոպագանդ, որը ոչ միայն կոչված էր հիմնավորելու արևմտահայ համայնքի սահմանադրությունը, այլև՝ դրսևորվում էր իբրև որոշակիորեն ձևավորված հայեցակետ, որը վերաբերում է ընդհանրապես պետական կառուցվածքին։ Վերոհիշյալ գործիչները այն պատկերացնում էին ժողովրդի բուրժուական դեմոկրատիզմի դիրքերից, որի հիմքում ընկած էր ժողովրդի ազատ կամահայտնության իրավունքը։ Այս ըմբռնումները արևմտահայ հասարակական միտքը յուրացրել էր դեռևս 40—50-ական թթ. (Ստ. Ոսկանյան, Ն. Զորայան)։ Ավելին. արևմտահայ լուսավորիչները, այնուհետև՝ սահմանադրության հեղինակները առաջադրում էին միասնական ազգի հարցը, որը գործնականից առավել գաղափարական իմաստով քաղաքական հատկանիշներ էր վերագրում արևմտահայությանը։ 60-ական թթ. կազմավորված «նոր օսմանների» մահմեդական սահմանադրականությունը տրամագծորեն հակառակ էր այս մտայնությանը և ենթադրում էր կայսրության բոլոր ժողովուրդների ձուլումը միասնական օսմանյան զանգվածի մեջ, մերժում էր նրանց ազգայնության, ազգային ինքնորոշման գաղափարներն ու ձգտումները։ Հետևաբար, արևմտահայ հասարակական մտքի հետաքրքրությունը Թուրքիայում սահմանադրություն հաստատելու հանդեպ պետք է բացատրել ոչ թե տեղական որևէ փոխազդեցության մեջ, այլ երկրի վարչական բարենորոգումների խնդրում նրա շահագրգռվածությամբ։ Հայ մամուլը 1860-ականին անուղղակիորեն, այնուհետև ինքնուրույն, քննարկել է Թուրքիայում սահմանադրական կարգերի իրացման հնարավորության հարցը։ Դրա առաջին դրսևորումներից մեկը կարելի է գտնել Զմյուռնիայի «Արշալույս արարատյան» թերթում։ Թերթը 1867 թ. փետրվարին Կ. Պոլսի «Կուրիեր դ'Օրիենտից» արտատպել է «Ստիպողական բարեկարգության մը վրայոք» հոդվածը²⁵, որտեղ արվում են պառլամենտարիզմի կիրառման հարցադրումներ։ Կասկած հայտնելով թանգիմաթից ակնկալվող սոցիալ-տնտեսական բարեբեր հետևանքների նկատմամբ, ֆրանսերեն թերթը ոչ մի տարբերություն չէր տեսնում կայսրության նախկին և ներկայի վիճակների միջև. այստեղ իրական ուրվագծերով են ներկայացված Թուրքիայի տնտեսական անկյալ վիճակը,

ժողովրդական բազմութիւնների սաստկացող շահագործումը չորպա-
ճիներէ կողմից, պաշտոնեութեան կոռուպցիան և այլն: Թուրքիայում
համընդհանուր քայքայման դեմն առնելու համար «Կուրիեր դ'Օրիենը»
առաջարկում էր դիմել բարեկարգութեան, հիմնել ընտրովի ազգային
խորհուրդ, որը պիտք է ներկայացնէր կայսրութեան ժողովուրդներին:
Խորհուրդը վերահսկելու էր երկրի ֆինանսները, դրանց շրջանառութեա-
նը, ինչպէս և կառավարման համակարգում իրականացվելիք բարեփո-
րոգումները: Մյուս կողմից, իր պառլամենտարիստական հակումները
օրինապատշաճ հունի մեջ տեղավորելով, «Կուրիեր դ'Օրիենը» հիշում
էր Ալի փաշայի այն կարծիքը, թէ Թուրքիայի ժողովուրդները դեռեւս
չեն հասունացել սահմանադրական կարգերի համար, մտացածին էր
համարում «անգործադրելի կառավարութեանց կերպերը» (իմա սահ-
մանադրական—Ա. Խ.) և դրանով արտաքնապէս սահմանադրւում
«նոր օսմաններից»: Իրականում, «Կուրիեր դ'Օրիենը» արտահայտում էր
Թուրքիայի ֆինանսական կայունացմամբ շահագորգոված ֆրանսիական
բանկիրների տեսակետը, որոնցից փոխառութիւններ էր արել Բ. դուռը
Ղրիմի պատերազմից ի վեր: Սահմանադրական կարգերի վերաբերյալ
թերթի վերապահումները կոչված էին շեղելու գրաքննութեան ուղի: Երու-
թիւնը: «Ազգային խորհրդանոցի» գաղափարի առաջադրումը ինքնին
վկայում էր այս խերթի իսկական համակրանքների մասին, մանաւանդ,
եթէ նկատի ունենանք, որ նրա խմբագիր Ժ. Պլետրին որոշակի կապեր
ուներ «նոր օսմանների» հետ: Նա տպագրել էր թուրքական լիբերալ
գործիչ Շինասիի այն հոդվածները, որոնք վերջինս հնարավորութիւն
չէր ունեցել զետեղելու իր խմբագրած «Թասվիրի էֆթյարում»: Նույն
«Կուրիեր դ'Օրիենը» տպարանում էր տպագրվել Նամըք Քեմալի և Սաա-
դուլահ բեյի կողմից ֆրանսերենից թուրքերենի թարգմանված՝ Մուս-
տաֆա Ֆազլը փաշայի մեղադրականը ընդդէմ Աբդուլ Ազիզի²⁶:

Արեւմտահայ լիբերալ և պահպանողական մամուլը Թուրքիայում
սահմանադրութեան կիրառման հարցին անդրադարձավ մի քանի տարի
անց՝ 1872 թ., երբ մեծ վեզիր Ալի փաշան վերանայել էր թուրքական
սահմանադրականների հանդեպ իր դիրքորոշումը և հաջողել էր հասնել
արտասահմանում սովթանական ռեժիմի դեմ նրանց հրատարակու-
թիւնների դադարեցմանը²⁷: Դա փոխհատուցվել էր մամուլի նկատմամբ
բռնութիւնների մի որոշ մեղմացումով: Ալիին փոխարինած Մահմուդ
Նեգիմ փաշան, առավել ևս՝ Միդհատ փաշան, որը սերտ կապեր ուներ
«նոր օսմանների» հետ, ընդունել էին լիբերալ ուղեգիծ՝ Բ. դուռն նա-
խորդ տարիների համեմատութեամբ: Այս ուղղութեամբ կառավարութեան

որոշ ձեռնարկներ հայտնի չափով ակտիվության էին մղում մամուլին։ Այսպես, Մահմուդ Նեդիմ փաշան 1872 թ. փետրվարին «Ժուռնալձիններ» (տեղեկաբերողներ) էր ուղարկել գալվառներ, որտեղ հայտաբերելով տեղերի կարիքներն ու պահանջները, նրանք պետք է նախապատրաստեին բարենբրդումների գործը։ Կառավարության այս նախաձեռնությունը աչքի էր ընկնում շատ ավելի ցուցադրական, քան գործնական՝ որևէ նշանակությամբ։ Նման ուղեգիրը որոշ հույսեր էր ներշնչում արևմտահայ մտավորականների մի մասին՝ կառավարության բարենորոգչական մտաբերությունների վերաբերյալ։ Այս էր պատճառը, որ մամուլը, այդ թվում և արևմտահայ պարբերականները, փորձեցին քննարկել երկրի տնտեսական, վարչական ու հասարակական կացությունը։ Իրենց հասարակական բովանդակությունը աշխուժացրեցին «Մեղու», «Մասիս», «Մանգումեի էֆքյար», «Օրագիր» և «Մամուլ» պարբերականները։ Պուստայ սահմանադրական կյանքի, պատրիարք երիմյանի և նրա հակառակորդ «Ղալաթիո օճախի» մասին թեր և դեմ հողվածների կողքին սկսեցին երևալ համազգային նշանակություն ու կարևորություն ներկայացնող նյութեր, որտեղ լուսաբանվում էին Արևմտահայաստանի իրականությունը, գաղափարական կարիքները, և այս կապակցությամբ՝ Թուրքիայի վարչական իրավիճակը։ Սպասվելիք բարենորոգումների վերաբերյալ «Մասիսը» տպագրեց Հ. Շիշմանյանի («Մերենց») «Ժուռնալձի, երևափառական ժողով, մամուլ» հոդվածը²⁸։ Ժուռնալձիների բավականին լայն ուշադրություն գրաված առաքելությունն ընկալելով բարեմիտ իմաստով, Մերենցը այն կապում էր Բ. Դոան պառլամենտական հեկումների հետ և հիմնավորում ընդհանրապես երեսփոխական ժողովի կարևոր նշանակությունը երկրի տնտեսական ու վարչական վերածնության գործում։ Մերենցը բացեիբաց հակադրվում է օսմանյան երեսփոխանական ժողովի գործունակության վերաբերյալ Ֆուատ փաշայի՝ բացասական վերաբերմունքին։ Ֆուատ փաշան, գրում է Մերենցը, «զվարճալի նկարագիր մը ըրեր էր բարիլոնական ժողովի մը, ուր օսմանցին, արալը, հայը, հույնը, քյուրտը, հրեան, առնավուտը, պուլղարը, պոշնարը և այլն՝ յուրաքանչյուրը իրենց լեզվով իրարու անիմանալի կխոսին՝ իրենց զանազան ցեղական, կրոնական, կլիմայական շահերը մեջտեղ ձգելով...»²⁹։ Ինքը՝ Մերենցը, միանգամայն հնարավոր և ժամանակը հասունացած է համարում օսմանյան երեսփոխանական ժողովի հաստատման համար, իսկ կայսրության ժողովուրդների միջև եղած տարբերությունները՝ ոչ ավելի անհաղթահարելի, քան սահմանադրություն ունեցող երկրների ժողովուրդներինը։ Մերենցը հերքում

է նաև Ալի փաշայի կարծիքը՝ սահմանադրական վարչության անցնելու համար կայսրության ժողովուրդների դեռևս տհաս լինելու մասին և որպես օրինակ, վկայակոչում է արևմտահայերի սահմանադրական վարչության գործունեությունը:

Մերենցի այս հոգվածը, անտարակույս, վկայում է նրա լիբերալ տրամադրությունների մասին, որոնք նա պահպանեց մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Այդ ժամանակաշրջանում՝ ազգային շարժման և դրա գաղափարախոսության վերելքի պայմաններում նա հրաժարվեց արևմտահայ կյանքի ռեֆորմիստական զարգացման ուղու մասին պատկերացումներից և իր պատմավեպերով կանգնեց ազատագրական պայքարի պաշտպանության դիրքերում:

Վարչական բարենորոգումների կապակցությամբ հայ մամուլում քննադատության ենթարկվեց օսմանյան պաշտոնեությունը: Փաստորեն գավառական բոլոր գործերը ենթարկվում էին տեղական վարչությունների ինքնագլուխ տնօրինությանը³⁰, որ պաշտոնեության այլասերման ու կոռուպցիայի պայմաններում էլ ավելի անտանելի էր դարձնում արևմտահայերի հարստահարումները: Կ. Փանոսյանը «Մանգումեի էֆթյարում» տպագրեց «Խնդիրք առ նորին վսեմություն մեծ վեզիրն (հայտառ թուրքերեն, «Սաղազամ հազրեթլերին բիր նիյազ» վերագրով) հոգվածը, Սեբաստիայի հայերի հարստահարությունները նկարագրող թղթակցությունների առթիվ, որտեղ բացահայտվում էին տեղական իշխանությունների շարաշահումները և հայ բնակչության կատարյալ իրավազրկությունը³¹: «Ներքին» խորագրի ներքո զետեղված մի այլ հոգվածում Կ. Փանոսյանը քննադատում էր թուրքական պաշտոնական վերնախավի՝ վյուքեիների բարոյական քայքայումն ու անբանությունը: Հրապարակախոսն առաջարկում էր կրճատել վյուքեիների բարձր աշխատավարձը, վերջ տալ նրանց կամայականություններին և այլն³²: Ուշագրավ է, որ այս նույն ժամանակաշրջանում Բ. դոան հայազգի պաշտոնյաների, նրանց եսամուլ վարքագծի քննադատությամբ հանդես եկավ Մ. Այվատյանի «Արարատը»: 1872 թ. հունվարին Մ. Այվատյանը դիպուկ բնութագիր էր տվել էֆենդիական հայ դասին: Ինչպես վկայում է «Մեղուն», նա գրել էր. «Այս հայ էֆենտիները հեթանոսին հացը ուտելով՝ հեթանոսին սուրը կթաշեն եղեր»³³: Դրանից հետո խիստ վրդովված հայազգի էֆենտիները հասան այն բանին, որ Բ. դոան իսպառ խափանեց «Արարատը»³⁴:

«Մանգումեի էֆթյարը» հիշյալ ելույթների համար խափանվեց երկու ամսով: Պաշտոնական ազդում հայտնվում էր, որ թերթը դադարեց-

վում է տերութեան դեմ «ծայրահեղորեն անպատշաճ լեզու գործածելու պատճառով»³⁵։

Օսմանյան պաշտոն'ութեան քննադատութիւնը, որ բոլորովին նոր երևույթ էր մամուլում, դարձյալ առնչվում էր կայսրութեան մեջ իրականացվելիք բարենորոգումների գաղափարին։ Այն հուզում էր ոչ միայն ղեմնկրատական, այլև մյուս հոսանքների պարբերականներին։ Իսկապես, «Մանգուլների էֆքյարի» հետ գրեթե միաժամանակ տպագրական տեսչութիւնը մեկ ամսով դադարեցրեց Օ. Խոճասարյանի «Օրագիրը» որի պատճառը դարձյալ կառավարութեան ներքին քաղաքականութեան քննադատութիւնն էր, ինչպես և երեսփոխանական ժողովի հարցի հարուցումը։ Մասնավորապես, «Օրագիրը» հակադրվել էր կառավարութեանը (1872 թ. № 699-ում) ծխախոտի մենավաճառութեան օրենքի կասեցացումը³⁶։

Խափանված թերթերի քննադատական ելույթների պաշտպանութեամբ և նրանց դեմ կիրառված բռնութեան դեմ բողոքով հանդես եկավ Գ. Այվազյանի «Մամուլը»։ «Տպագրական ազատութիւն» վերնագրով հոգևածում նրա խմբագիրը բարենորոգումների իրականացումը առնչում էր միայն սահմանադրական վարչութեան հաստատման հետ³⁷։ Գ. Այվազյանը դատաւարտում էր մամուլի բռնադատված վիճակը Թուրքիայում, հիշատակում 1867 թ. «ժամանակավոր որոշումը», որ ամենայն խստութեամբ բանեցվում էր հայ պարբերականների նկատմամբ։ Տպագրական տեսչութեան ցասումը, սակայն, առաջացել էր «Մամուլի» այն եզրակացութիւնից, որ երկրում կամայականութիւնների պատճառը հաստատուն ու կիւրաքուրա օրենքների բացակայութիւնն է, որ կարելի է ուղղել միայն երեսփոխանական վարչութիւն ստեղծելով։ Այս հոգիվածի պատճառով «Մամուլը» երեք ամիս զրկվեց հրատարակվելու իրավունքից։ Այն վերահրատարակվեց 1872 թ. հունիսի 25-ին։

Սահմանադրական կարգերի միջոցով Արեւմտահայաստանի դրութիւնը բարելավելու հույսերը, սակայն, չէին լքում լիբերալ սպասելիքներով լեցուն արեւմտահայ գործիչներին։ «Օրագրի» խմբագիրը չկարողացավ զսպել, Զոհրապի արտահայտութեամբ, իր «ծայրահեղութեան հակամետ պահանջումները»³⁸։ 1872 թ. նոյեմբերին նա տպագրեց «Քաղաքական կյանք» հոգիվածը, որտեղ առաջադրել էր Թուրքիայում երեսփոխանական ժողով հաստատելու գաղափարը³⁹։ Տպագրական տեսչութեան պատասխանը չուղացավ։ «Խոճասարյան դուռը կանչվեցավ,—գրում է այս առթիվ Ա. Արփիարյանը,—և իրմե բացատրութիւն ուղեցին հրատարակված հոգիվածին համար։ Պատասխանեց, որ ինք ուրիշ բան չէր

ըրած, բայց եթե պաշտպանել գաղափար մը, զոր բացարձակորեն կթարողե Ֆազըլ Մուստաֆա փաշա (Եգիպտոսի նախկին խտիվ Իսմայիլ փաշայի եղբայրը, որ իր ժառանգական իրավունքեն զրկված ըլլալով՝ այլևս Պոլիս էր ու բարձր պաշտոններ կվարեր)։ Հայ խմբագրին տված բացատրութիւնները գոհացուցիչ չերևցան։ Ո՛ւր իսլամ նախարար մը, ուր՝ ուշա խմբագիր մը»⁴⁰։ Վրդովված Խոճասարայանը թերթի հավելվածում հայտնեց, որ թե «Օսմանյան իշխանութիւնը իր զորութիւնը փոխանակ անգն ու խեղճ հայոց վրա փորձելու, թող փորձն ընդդեմ քյուրտերուն, որոնց հարստահարութիւնները Հայաստանին մեջ ոչ չափ ունին, ոչ սահման։ Հայ ազգը պիտի պարտավորի դիմել էջմիածին, ուր է իր հոգևոր գլուխը և անոր միջոցով Ռուսիո վեհափառ կայսեր պիտի ներկայացնեն Հայաստանի վիճակին խնդիրը»⁴¹։ Այս հանդգնութեան համար «Օրագրի» մեկամսյա պատժաշափը հասցվեց երեք ամսի⁴²։

Արևմտահայ հրապարակախոսները Թուրքիայում սահմանադրական կարգերի հաստատման խնդիրն արծարծել են հետևյալ երկու տեսակետներէից. նախ, այդ հարցը արդեն քննարկվում էր Կ. Պոլսի եվրոպական մամուլում և ապա, թուլացել էին կառավարութեան խստութիւնները «նոր օսմաններէի» հանգեպ։ Մինչդեռ հայ մամուլի նկատմամբ գրաքննութիւնը մտադիր չէր ներողամտութիւն ցուցաբերել։

Հայ պարբերականներին պատժելուց հետո ուշաբերված «Մասիսը» ցույց էր տալիս գրաքննութեան կողմնակալ վերաբերմունքը տեղական, այդ թվում և հայ հրատարակութիւնների նկատմամբ։ «Այս դադարումները,—գրում էր նա,—որոց վրա կցավինք ի սրտե, ցույց կուտան, թե Թուրքիո մեջ ինչպէս շատ բաներ, նույնպէս և կարծյաց ազատութիւնը դեռ հեռի են այն վիճակէն, ուր հասած կտեսնվին Եվրոպիո հառաջադեմ ազգաց մեջ։ Նույնիսկ Կ. Պոլիս այն բանը, որ տեղվույս եվրոպական լրագիրք կգրեն ու կհրատարակեն, փորձով կտեսնենք, որ բնիկ լրագրաց ներելի չէ, վասնզի երեսփոխանական խնդրույն վրա «Քուրիէ տ'Օրիան» բազում էջեր լցուցած էր և արգելք մի չէր եղած նմա»⁴³։ Համենայն դեպս, ինքը՝ «Մասիսը», այս անգամ ևս կարող էր վկայակոչել իր հաջողակութիւնը. Մերենցի վերոհիշյալ հոդվածը երեսփոխանական ժողովի հարցադրմամբ, դուրս էր մնացել տպագրական տեսչութեան տեսադաշտից։ Հավանաբար, դրան օգնել էին «Մասիսի» բարեկամ հայ գրաքննիչները։

Այսպիսով, Օսմանյան Թուրքիայում սահմանադրական միապետութեան հաստատման հարցը արևմտահայ մամուլը քննարկել է գա-

վառի վարչական ու տնտեսական բարենորոգումների կտրվածքով: Օսմանյան կառավարման համակարգի լիբերալացման ձգտումը հայ մամուլի էջերում՝ չի առնչվել ոչ «նոր օսմաններին», և ոչ էլ Կ. Պոլսի եվրոպական հրատարակությունների նպատակների հետ, այլ իր նախասիրությունների հիմքում ունեցել է ազգային տնտեսական ու հասարակական վիճակի բարվոքման նպատակ: Այս ձգտումները չեն հասել գաղափարական հստակության, փոքր ի շատե ուղղակիություն ունեցող ծրագրի, միանգամայն համապատասխանելով այն թույլ և գրեթե աննկատելի կապին, որ ուներ արևմտահայ բուրժուազիան գավառի տրնտեսության հետ: Պառլամենտարիզմի գաղափարների պաշտպանությունը 70-ականի սկզբի հայ մամուլում հանդես էր գալիս իբրև զուտ աշխարհայացքային և ոչ թե գործնական-գաղափարական ուղեգծի դրսևվորում:

«Չափն անցնող» պարբերականները խափանելով, տպագրական տեսչությունը շուտով պետք է վերանայեր իր դիրքը նաև Կ. Պոլսի եվրոպական պարբերականների հանդեպ: Դա պատահական չէր, որովհետև, ինչպես տե՛սանք, դրանք առավել ակտիվությամբ էին քննարկում սահմանադրական վարչության հետ կապվող հարցերը: Եվ այն հանգամանքը, որ «Մասիսը», «Մամուլը», «Արշալույս արարատյանը» և այլ հայ պարբերականներ հիշյալ հարցն արծարծելիս նախադեպի իմաստով վկայակոչում էին արտասահմանի լեզուներով տպվող պարբերականները, ցույց է տալիս, որ վերջիններս իրենց համար ապահովել էին տպագրական տեսչության թողտվությունը: Այսպես, «Լեվրնդ հերալդը» ռազմական մինիստր էսառ փաշային ուղղակի մեղադրել էր 1872 թ. սկզբին Բերայում զորքերի կատարած անկարգությունների համար: Տպագրական տեսչության պասսիվության պայմաններում մինիստրը ստիպված էր անձամբ դատ բանալ այդ թերթի խմբագիր Մակ-Կունի դեմ⁴⁴: Տպագրական տեսչությունը սթափվեց միայն 1872 թ. մայիսին՝ խափանելով նույն «Լեվրնդ հերալդը» «Ժամանակավոր որոշման» ուժով. առիթը այդ թերթի էջերում օսմանյան վարչական քայքայված հաստատությունների՝ կաշառակերության և այլնի դատապարտումն էր, որ տպագրական տեսչությունը որակեց իբրև «նախատական ու զրպարտիչ» ելույթ⁴⁵: Եվրոպական հրատարակությունները, սակայն, շարունակում էին իրենց ընթացքը: Նույն տարվա հուլիսին «Կուրիեր դ'Օրիենտ» մերկացրեց Տուլլայի մյութեսարըֆի չարաշահումները, որից հետո, էսառ փաշայի օրինակով, վերջինս դատ բաց արեց այդ թերթի դեմ⁴⁶:

Այս ժամանակաշրջանում բավականաչափ նվազել էր տպագրական տեսչությունն եռանդը, որի պատճառը կառավարության լիբերալ բնթացքն էր: Հուլիսի վերջին մեծ վեզիր էր դարձել Միդհատ փաշան, որի նշանակումն աշխուժացրել էր սահմանադրականների գործունեությունը և զգալի չափով՝ մամուլի ակտիվությունը: «Նոր օսմանների» հրատարակությունների նկատմամբ թուլացավ խիստ հակադրությունը: Թեթևացվեց շորս ամսով խափանված «Իբրևթի» պատիժը⁴⁷: Այս շրջանում տպագրական տեսչությունը հայ մամուլի հետ իր հարաբերությունները սահմանափակել էր կառավարության բնորոշումը տնօրինությունների շրջանակներում: Հակադրության որոշ թուլացումը ապակողմնորոշեց սովորաբար չափված-ձեկված «Մասիսին»: Թերթը կիսաբերան բողոքեց Բ. դոան այն ծանուցման դեմ, որով հայտնվել էր պատրիարքարանին, թե կառավարությանը նրա ուղղած թագրիները այսուհետև պետք է ունենան ոչ ին քաղաքացիական, այլ զուտ կրոնական բնույթ, քանի որ նրա իրավասությունները վերաբերում են միայն կրոնական հարցերին: Բ. դուռը փորձում էր վերջ տալ գավառի հարստահարությունների վերաբերյալ տեղեկագրերին և միաժամանակ, լուեցնել հայ մամուլը: Կ. Ություճյանը դրան սուարկել էր այն իմաստով, որ քաղաքացիական հարցերը հնարավոր չէ շրջանցել թագրիներում, քանի որ «կրոնական խտրությունք մեծ դեր կխաղան քաղաքական իրաց մեջ»⁴⁸: Ություճյանը կանչվեց տպագրական տեսչություն՝ Սաադուլլահ բեյի մոտ: Նրան դիտողություն արվեց կառավարության հրահանգների դեմ հակառակ մրտքեր հայտնելու համար և կրկին հայտնվեց, որ այսուհետև բացառվելու է պատրիարքի քաղաքացիական ամեն մի իրավասություն, ոչը բացառապես Բ. դոան գործն է:

Խստությունները առավել նկատելի դարձան 1872 թ. նոյեմբերին, երբ Միդհատին փոխարինեց Մեհմետ Ուլուշտյու փաշան: Հայ հրատարակություններում արդեն ձեռվերվել էր դավառական հարստահարությունների թեման, մանավանդ, 1872 թ. ապրիլից, երբ պատրիարք Մ. Խրիմյանը կառավարությանն էր ներկայացրել գավառական հարստահարությունների տեղեկագրերը: 1872 թ. նոյեմբերին «Մանգումեի էֆթյարում» տպագրվեցին Կ. Փանոսյանի դիտողությունները «Մասիսին» Բաբերդից առաքված մի թղթակցության մասին: Այստեղ Կ. Փանոսյանը իր հերթին դատափետել էր տեղի գայմագամին և նրա գործադրած բռնությունները հայ բնակչության նկատմամբ: «Մանգումեի էֆթյարը» խափանվեց մեկ ամսով: Այս առթիվ «Մասիսը» հույս էր հայտնում, որ գայմագամը ևս, որ առիթ էր տվել Կ. Փանոսյանի այդ

եկուլթին, անպատիժ չի մնա⁴⁹: Նույն ամսին խափանվեց «Օրագիրը»․ տպագրական տեսչության նոր տնօրեն Մաճիտ բեյը մամուլի սանձը պրկելու կողմնակիցներից էր և լիբերալ թողտվությունների համոզված հակառակորդ: Աշնանը ծավալված բռնությունների շրջանում Կ. Պոլսի եվրոպական հրատարակությունները զանգատվում էին անօրինակ խրատություններից, նշելով, որ մեկ ամսվա մեջ Կ. Պոլսում խափանվել է հինգ թերթ⁵⁰: Ձայնակցելով սրանց, «Մասիսը» բողոքում էր վարչական խափանումների դեմ: Մամուլի վրա հարձակումները, դատում էր «Մասիսը», գրգռում են հասարակության հետաքրքրասիրությունը, պատրժված թերթերը այդ պատժի շնորհիվ հառնում են հանրահայտ, մինչդեռ, ուշադրություն չդարձնելու դեպքում դատապարտված նյութը չէր նկատվի: «Այն կառավարություն, որ հասարակաց կարծիքն և նրա փողարն եղող լրագրությունը կհալածեն՝ ինքն իրեն կլնասեն և հարստահարյալ լրագրաց վարկը, համարումն ու կարևորությունը կավելացնեն»,— գրում էր թերթը⁵¹:

Նորհրդածությունը, որ «Մասիսը» փոխ էր առել Կ. Պոլսի եվրոպական մամուլից, նոր չէր իր լիբերալ բովանդակությամբ: Հեգելն իր ժամանակին նկատում էր, որ «Ֆրանսիայում խոսքի ազատությունը միշտ էլ պակաս վտանգավոր է եղել, քան լուծությունը, քանի որ վերջինը ստիպում է երկյուղել, թե հոգում կպահեն այն, ինչ ասելու են տվյալ գործի դեմ, մինչդեռ դատողություն անելը մեկ ուղղությամբ ելք և գոհացում է տալիս, որի շնորհիվ գործը մնացած բոլոր դեպքերում կարող է շարժվել իր նախկին հունով»⁵²:

Լիցքաթափման, հիվանդագին հետևանքներից ապահովագրող այս միջոցը, որ նաև ազատության պատրանք էր ստեղծելու, ձեռնտու էր և եվրոպական հրատարակություններին, և «Մասիսին»․ առաջիններին՝ Բ. դուան վրա նախասիրած ուղղությամբ ճնշում գործադրելու համար, ի շահ մի որևէ տերության քաղաքական նպատակների, իսկ հայ պարբերականի համար՝ արևմտահայ գավառի վրա կառավարության Բարեհաճ ուշադրությունը հրավիրելու տեսակետից: Նկատենք, որ Ությունյանի թերթը իր բարեհուսության իմաստով կասկածի որևէ տեղիք չէր տալիս թուրքական իշխանությունների առջև: Դրանով պետք է բացատրել, որ գավառական հարստահարությունների բացահայտմանը մշտապես տեղ տված «Մասիսը» մինչև 1880 թ. ոչ մի անգամ չի խափանվել, մինչդեռ, տպագրական տեսչությունը քանիցս պատժել է մյուս թերթերին, նույնիսկ նրանց, որոնք անհամեմատ պակաս չափով են անդրադարձել գավառական կյանքի իրողություններին: Հետաքրքիր են այս

առթիվ Ա. Արփիարյանի հայտնած մտքերը. «Ություճյան,—գրում է նա,—1860-են ետքն ալ խելքը գլուխը մարդ մնաց, երբ իր շորս կողմը գլուխները կբռնկեին բարոյական կյանքի փոփոխությամբ... Ու մինչ թերթիքը կշատնային՝ ելլելով, իյնալով, մեկ՝ կգոցվեր, մյուսը կբացվեր, սա՛ ջնջված, սա՛ վերերևակ, և օգին մեջ հակաթրթական գաղափարները ազգին գլխուն բոլորը կոլրտվեին, «Մասիսը» ինքնազսպումի քաջությունը ունեցավ:

— Ճանրմ, սա «Մասիսը» օր մըն ալ գոնե պիտի չգոցվի՞,— կմոտար ջերմատագնապ ժողովուրդը»⁵³:

Իր աներեր ընթացքը «Մասիսը» շարունակեց մինչև 1880 թ. նոյեմբեր, երբ համիդյան գրաքննությունը հատուկ հսկողություն սահմանեց հայ մամուլի նկատմամբ: Մինչ այդ, ամբողջ 60—70-ական թթ. «Մասիսը» գրեթե անվթար կարողացավ անցնել գրաքննության սահանքները:

1873 թ. սկզբին տպագրական տեսչությունը մամուլի վրա նկատելիորեն ուժեղացրեց պաշտոնական հսկողությունը: Գործողության մեջ մտցվեց մամուլի կանոնադրության նոր լրացում, որը պարբերականների տնօրեններին պարտավորեցնում էր «իրենց թերթը կամովին դադարեցնել ետև՝ որչափ ժամանակ և տեև դադարումը, չեն կրնար նորեն հրատարակել՝ առանց Բ. դռնեն օրինապես հրաման ստանալու»⁵⁴:

Օսմանյան պաշտոնեության համբավված կոռուպցիայի ու գանձագողության պայմաններում այսպիսի լրացումը հավելյալ դժվարություններ էր ստեղծում պարբերականների վերահրատարակման համար: Հ. Պարենյանը այդպես էլ չհասցրեց վերստին թույլտվություն ստանալ 1872 թ. հուլիս-օգոստոսին դադարած «Եփրատի» վերահրատարակության համար: Մեծ երգիծաբանն այս առթիվ ակնարկել է և տպագրական տեսչության հետապնդումների, և «Եփրատի» հրատարակության հետ կապված դժվարությունների մասին: «Նկատելով, որ տպագրական տեսչությունը անփույթ գտնվեցավ մեր «Եփրատը» դադարեցնելու, մենք հարկադրվեցանք զայն դադարեցնել ասկե երեք-չորս ամիս առաջ: Նկատելով, որ չպիտի կրնայինք զայն կանոնավոր կերպով հրատարակել, ստիպվեցանք կանոնավոր կերպով դադարեցնել»,—գրում է նա 1872 թ. նոյեմբերին⁵⁵: Պարոնյանը փորձեց «Եփրատը» վերահրատարակել 1873 թ. հունվարին, սակայն այն վերջնականապես խափանվեց վերոհիշյալ լրացման համաձայն՝ «առանց հրամանի հրատարակված ըլլալուն համար»⁵⁶: Այս վերջնական խափանումով սկիզբ առան

տպագրական տեսչության նոր հարձակումները հայ պարբերականներին վրա: Հունվարին հետապնդումների ու խափանումների ենթարկվեցին «Մամուլը» (երկու ամսով), «Հայրենիքը» (չորս ամսով, բայց վերահրատարակվել է երկու ամիս անց՝ մարտին), որոնք պատժվել էին Բերայի ազգային գերեզմանատունը գրավելու համար Բ. Ղոսան իրենց ընդդիմությունը հայտնելու պատճառով⁵⁷: Եթե դրան ավելացնենք այն, որ իշխանությունները հայ պարբերականները լռեցնում էին ազգային վարչության կամ պատրիարքի առաջին խսկ բողոքի հիման վրա, առանց հաշվի առնելու խմբագիրների առարկությունները, ապա պարզ է դառնում, որ տպագրական տեսչության ճնշումները հետամտում էին ջլատել հայ մամուլի քննադատական ուղղվածությունը և նրա մեջ բխացնել բողոքելու իրավունքը: Այս գործում գրաքննական մարմինները հենակետ են գտել հետադիմական շրջաններում: 1870-ականի սկզբից հայ մամուլը օսմանյան իշխանությունների համար դառնում է հայ հանրության գործերին մշտապես հետևելու և իր միջամտությունները հիմնավորելու հավելյալ բնագավառ: Պարբերականների քննադատական ելույթների նկատմամբ օսմանյան իշխանությունների այս անհանդուրժող և խիստ դիրքորոշումը հետամտում էր կրճատել հետտպագրական գրաքննության և նախնական գրաքննության միջև եղած տարբերությունները. շնչին մեղանշումների համար տրվելիք երկարաժամկետ պատիժները խմբագիր-տնօրենների մեջ վախ և անվստահություն պետք է սերմանեին քննադատական բնույթի ցանկացած հողվածի հետևանքների նկատմամբ: Նկատենք, որ ի հակալիշո դրա, պոլսահայ հարկությունը շփուլացող հետաքրքրություն է ցուցաբերել հայ պարբերականների խափանման պատճառներին, իր օգնությամբ ոչ սակավ դեպքերում խրախուսել պատժված թերթերին: Այսպես, 1872 թ. մարտին ժողովուրդը հանգանակություն կազմակերպեց դադարած «Մանգումբի էֆթյարի» խմբագրի համար՝ ի նպաստ նրա տնօրինությանը ենթակա Ագապյան վարժարանի⁵⁸: Բերայի գերեզմանատան խնդրի առթիվ խափանված «Մամուլի» օգտին ևս 1873 թ. հունվարի 27-ին ներկայացում տրվեց Կետիկ փաշայի թատրոնում: Հետաքրքիր է, որ ներկայացման ավարտից հետո արտասանվել է Մ. Նալբանդյանի «Ազատն աստվածը»: Դրանից հետո, երբ դերասաններից մեկը հայտնել է, թե հայտագրի մեջ նշված «Հայրենասեր զինվորի երգի» հայերեն տեքստը չլինելու պատճառով երգվելու է թուրքերեն, հանդիսականները չեն համակերպվել. նրանց պահանջով խոսքը տեղն ու տեղը հարմարեցվել է և երգվել հայերեն⁵⁹: Մամուլի օգտին կազմակերպվող այսպի-

սի նախաձեռնութիւնները նպաստում էին ժողովրդի ազգային ինքնագիտակցութեան բարձրացմանը և արժարժում նրա հայրենասիրական զգացումները:

Արևմտահայ մամուլի դեմ 1873-ի սկզբին ձեռնարկված հարձակումները այն վերաբերմունքի արտահայտութիւնն էին, որ կառավարութիւնը սկսեց դրսևորել երկրում ամեն մի օպոզիցիայի նկատմամբ: Հայածանքների ենթարկվեց «նոր օսմանների» մամուլը: Իր իշխանութեան մեղրամիսն ապրող մեծ վեզիր Ռյուշտյու փաշան իրականացնում էր ընդդիմադիր ուժերին սիրաշահելուն հակառակ քաղաքականութիւն: «Նոր օսմանները» շարունակում էին քննադատել Բ. դռան քաղաքականութիւնը «Իբրեթում», «Դիոթենում» և այլուր: 1873 թ. «Դիոթենը», որտեղ քննադատական նյութեր էին տպագրել Նամըք Քեմալը և Զիյա բեյը, խափանվեց անորոշ ժամանակով: Հաջորդ հարվածը հասավ «Հագիթա» երգիծաթերթին, որը շարունակում էր խայթել կառավարությանը⁶⁰: «Իբրեթը» վերջնականապես փակվեց այն բանից հետո, երբ Կետիկ փաշայի թատրոնում բեմադրվեց Նամըք Քեմալի «Հայրենիք կամ Սիլիստրիա» դրաման⁶¹: Հանդիսականները և նրանց միացած ամբոխը դրսում ցույցեր արեցին, որոնց հակակառավարական միտումները տագնապ պատճառեցին Բ. դռանը: Մարտի 28-ին ընդդիմադիր լրագրողների մի խումբ՝ «Իբրեթի» խմբագիր Նամըք Քեմալը, Ահմեդ Միդհատը, Նուրի, Մուհիթ և Թեմալի բեյերը ձերբակալվեցին և աքսորվեցին մայրաքաղաքից: Բանտից ազատվեցին նախապես ձերբակալված «Իբրեթի» արտոնատեր Ալ. Սարաֆյանը և Կետիկ փաշայի թատրոնի տնօրեն Զ. Վարդովյանը: Մտցվեց թատրոնի ներկայացումների նախական գրաքննութիւն⁶²:

Արևմտահայ պարբերականները, շնայած իշխանութիւնների խիստ հսկողութեանը, 1870-ական թթ. սկզբին ևս հանդես են եկել տպագրական ազատութեան պահանջներով: Ծերենցի՝ վերը հիշված «Ժուռնալճի», երեսփոխանական ժողով, մամուլ» հոդվածում լիբերալ հարցադրումներով է ներկայացվում մամուլի ազատութիւնից սպասվելիք համընդհանուր շահը: Ծերենցը շեշտը դնում էր երկրի բարեկարգման համար նպաստավոր ազատ մամուլի գործունեութեան վրա և վարչական բարեկարգումների հաջողութիւնը պայմանավորում մամուլի ազատութեան չափով: «Ուրեմն տերութիւնը,—գրում էր նա,—եթե ուզե տեղեկութիւն առնուլ և ճշգրիտ իմանալ երկրին վիճակը, գործիք մը ունի ձեռքը և անով չէ թե միայն նյութական, այլ և երկրին ամեն աստիճանի բարոյական վիճակին մեջ միշտ տեղյակ կրնա ըլլալ յուր ամեն աստիճան-

ներուն մեջ. այն օրը, երբ մամուլ ազատության ավելի քաղցր օրենքներու տակ ձգե՝ տեղեկությունք գետորեն կհորդեն»⁶³: Կառավարությանն ուղղված հորդորական այսպիսի ոճից արդեն բավականաչափ տարբերվում էր «Մամուլի» «Տպագրական ազատություն» հոդվածը, որտեղ 1867 թ. «Ժամանակավոր որոշումը» համարվում է դուռ պատերազմական վիճակի իրավական ակտ, որը ժամանակավրեպ է դարձել: «Մամուլը» բողոքում էր պարբերականների վրա տպագրական տեսչության հաճախողեպ հարձակումներից, դրանք որակելով իբրև քաղաքական իշխանության անմիտ բռնություն «բարոյական իշխանության» նկատմամբ⁶⁴:

Պետք է կարծել, որ մամուլի հանդեպ հալածական այս քաղաքականության ներդաշնակությունը «Ժամանակավոր որոշմանը»՝ չէր գոհացնում Բ. դռանը, որովհետև որոշումը ձևակերպված էր իբրև Կրետեի դեպքերի հետ կապվող վարչական ժամանակավոր միջոցառում: Դրա ուժի մեջ մտնելուց անցել էր հինգ տարի և նման վիճակի շարունակությունը աննպաստ տեսանկյունից կարող էր ներկայացնել Բ. դռան լիբերալ հավաստիացումները եվրոպական տերությունների առջև: Համենայն դեպս, կառավարությունը փորձեց կամ փորձեց ցույց տալ, որ ցանկանում է հաղթահարել իր համար ոչ բարենպաստ այդ վիճակը և մշակել մամուլի նոր օրենք: 1873 թ. փետրվարին ստեղծվեց մամուլի իրավական վիճակը փոխելու նպատակով կազմված հանձնաժողով՝ Արիֆի բեյի գլխավորությամբ: Փետրվարի 20-ին այն արել էր արդեն իր շորորդը նիստը: Հանձնաժողովի անդամների մեջ էին Գր. Օտյանը, Մաճիտ բեյը և Բառնիս էֆենդին: Այս կապակցությամբ «Մասիսը» նկատում էր, որ «գործը լմնցնելու համար հանձնաժողովը դեռ երեքշորս նիստ ունի ընելիք»⁶⁵: Հանձնաժողովի գործունեության հանդեպ որոշակի հետաքրքրություն ցուցաբերեց Կ. Պոլսի եվրոպական լեզուներով տպագրվող մամուլը: «Լեվրնդ հերալի» խոսքին նայելով, — հարում էր «Մասիսը», — նոր լրագիր հրատարակողներեն դրամական երաշխավորություն մառնվելու խնդիր կհուղի հանձնաժողովին մեջ: Անկեց զատ՝ լրագրական հանցանաց դեմ տրված վճռոց գործադրություն ապահովելու համար հոդվածը կխմբագրվի, որպեսզի լրագրապետ մի, որ տուգանք վճարել չուզե, երաշխավորության գումար մի ավանդե և յուր թերթն ալ կարենա առժամանակյա կերպով դադրիլ»⁶⁶:

Վերոհիշյալ հանձնաժողովը, սակայն, գործն իր ավարտին չհասցրեց. 1873 թ. հունիսին կազմվեց նոր հանձնաժողով, որին անդամակցում էին Սաադուլլահ և Մաճիտ բեյերը, ինչպես և Հովհ. Սաքրըր⁶⁷:

Անշուշտ, առաջին և երկրորդ հանձնաժողովների պատրաստած նախագծերի միջև եղել են բավականաչափ տարբերություններ, համեմայն դեպս, այդ են վկայում մամուլի հակասական տեղեկությունները այդ նախագծերի մասին: Այսպես, «Մասիսը» հայտնում էր, որ 1864 թ. դեկտեմբերի օրենքի մեջ պետք է փոփոխություններ կատարվեն. «Բասիրեթը» տեղեկացնում էր, որ մամուլն այսուհետև պետք է «ենթարկվի տպագրական տեսչության քննությանը» (հավանաբար՝ նախնական)⁶⁸, իսկ «Լեվրնդ հերալդը» վկայում էր, թե նոր օրենքը «ասկե առջի օրենքեն ավելի ազատամիտ է, երաշխավորության պայմաններ դրված են մեջը, բայց գումարները՝ խիստ չափավոր»⁶⁹:

Հուլիսի վերջին նախագիծը ներկայացվեց կառավարության վավերացմանը, սակայն վերստին ուղարկվեց խմբագրման, որը հանձնաժողովն ավարտեց միայն դեկտեմբերի 12-ին: Նախագիծը, սակայն, չհաստատվեց⁷⁰: Եթե հավաստի էր «Լեվրնդ հերալդի» վերոհիշյալ դիտողությունը՝ օրենքի որոշ ազատամիտ ձևակերպումների վերաբերյալ, ապա դրանք հազիվ թե դուր եկած լինեին սուլթանին ու Բ. դռանը: Օսմանյան բռնապետությունը չէր հանդուրժի մի օրենք, որը ենթադրեր այդ նույն բռնապետության գոյության իրավունքի ազատ քննարկում: Այս միջոցին Հ. Պարոնյանը զարմանալի խորաթափանցությամբ սառը ջուր էր լցնում Բ. դռնից ազատամիտ օրենք սպասող բարեմիտների հույսերի վրա: «Լրագրական օրենք» ծանուցման մեջ նա միանգամայն դիպուկ էր ներկայացնում կառավարության իսկական մտադրությունները նոր օրենքի վերաբերյալ.

«Հոգված Ա. Բուր լրագիրները դադրեցրեն:

Հոգված Բ. խմբագիրներն ալ անոթության վարժեցնել:

Հոգված Գ. Աշքերու համար տեսչություն մը դնել, որպեսզի անիրավություն մը տեսնելուն պես՝ զանոնք տեսնելի դադրեցրեն:

Հոգված Դ. Լրագիր մը իր ուզածը ամենայն ազատությամբ կրնա խորհիլ, բայց չկրնար խոսիլ:

Հոգված Ե. Լրագիր մը իր խմբագրին վրա կրնա հարձակիլ. մնացած հոգվածները լրագրական վարչության դեմ ըլլալնուն համար ավրած ենք»⁷¹:

Իսկապես, ի հակադրություն մամուլի ազատության սպասելիքների, նրա իրավական վիճակի մեջ նոր սահմանափակումներ մտցվեցին: Զմյուռնիայի ֆրանսերեն «Իմպարտիալի» վկայությամբ մամուլի օրենքին նոր հարված էր հասցվել՝ պարբերականների նկատմամբ ընդլայնվել էր գավառական մեջլիսների իրավունքը. Կ. Պոլսում արվող լրա-

գրական դատերը նոր հավելվածի ուժով պետք է կատարվեն տեղե-
րում⁷²: 1874 թ. վերջին ստացվեցին արտոնագիր ստանալու հետ կապ-
ված պայմանները. մանրագնին քննության էին ենթարկվելու հայցողի
անձնական նկարագիրը, խմբագրական հմտություններն ու արժանիք-
ները⁷³:

Այսպիսով, 1870-ականի առաջին կեսի մամուլի օրենքի հավելում-
ները ենթադրում էին նրա իրավական վիճակի հետագա սահմանափա-
կումներ: Այս տասնամյակի օսմանյան գրաքննության քաղաքականու-
թյան մեջ նկատելի է հետևյալ գիծը. պարբերականների հանդեպ գրա-
քննական ռեժիմի խստացումները կամ ժամանակավոր մեղմացումնե-
րը կապվում են սուլթանական ներքին և արտաքին քաղաքականության
տեղատվությունների կամ մակընթացությունների հետ, իսկ ինչ վե-
րաբերում է հարցի իրավական կողմին, ապա 1867 թ. «ժամանակա-
վոր որոշումից» ի վեր այն ընթանում էր մամուլի իրավունքները սահ-
մանափակելու ուղիով:

Խմբագիր-հրատարակիչները 1873 թ. դեկտեմբերին սպասում էին
մամուլի նոր օրենքի և դրոշմատուրքի վավերացմանը: Հրապարակվեց,
սակայն, միայն դրոշմատուրքի կանոնադրությունը: Այն տարածվելու
էր ոչ միայն մամուլի, այլև գրագրության հետ կապվող բոլոր՝ առե-
տրական, դրամական, դատական և այլ գործառնությունների վրա: Սահ-
մանվում էր դրոշմի տուրք՝ 2 փարա յուրաքանչյուր պարբերականի
համար⁷⁴: Այս տուրքը նյութական զգալի ծանրություն էր մամուլի հա-
մար, որ խորին դժգոհություն առաջացրեց խմբագիր-տնօրենների շըր-
ջանում: Հաշվի առնելով տուրքի հետ կապվող դժվարությունները,
«Մասիսը» 1874 թ. հունվարի 22-ից դադարեցրեց հատավաճառ գոր-
ծարքը, քանի որ վաճառվող թերթի յուրաքանչյուր օրինակի վրա դրոշ-
մի տուրք պետք է դրվեր: Թերթը ծանուցեց բաժանորդներին, որ առաք-
վելու է ամսական, եռամսյա և վեցամսյա շրջաններով⁷⁵: Տուրքի ծան-
րությունը թեթևացնելու խնդիրը այլ կերպ լուծեցին մյուս հայերեն
պարբերականները: Հ. Պարոնյանը «Թատրոնի» հատավաճառ գինը 40
փարայից իջեցրեց 20-ի՝ անփոփոխ թողնելով բաժանորդագինը, որով-
հետև նախապես կարծում էր, թե դրոշմատուրքի հավելումը հատավա-
ճառին՝ կթանկացնի պարբերականի գինը և կվանի ընթերցողին: Գործ-
նականում այդ փոփոխությունն իրեն չարդարացրեց և երգիծաբանը
ստիպված էր «Թատրոնի» հատավաճառ գինը վերստին բարձրացնել 40
փարայի⁷⁶: Ի դեպ, տուրքը գանձվում էր միայն մասնավոր մամուլից.
պաշտոնական հրատարակությունները ազատ էին մնում դրանից: Թեր-

թերի գնի փոփոխելը, սակայն, քիչ թեթևություն բերեց խմբագիրներին Նյու-Յեքան անձկությունը: Դրոշմատուրքին ընդդիմանալու հարցում ակտիվություն ցուցաբերեցին Կ. Պոլսի եվրոպական հրատարակությունների խմբագիրները: Նրանց օգնության հասած դեսպանների խնդրանքով դրոշմի տուրքի գանձումը հետաձգվեց մինչև 1874 թ. հուլիսի 1-ը, այնուհետև՝ մինչև սեպտեմբեր և ի վերջո, գործադրվեց 1875 թ. մարտին⁷⁷: Նույն ամսին Կ. Պոլսի բոլոր ազգությունների խմբագիրները խնդրագիր ներկայացրեցին մեծ վեզիր Մեհմետ Ռյուշտյու փաշային, որը «դյուրության միջոցներ շնորհելու» պարապ խոստումով ճանապարհեց նրանց: Օրենքը գործողության մեջ դրվելուց հետո տպագրական տեսչության աշխատակիցները առանց որևէ ձևականության կարող էին ներխուժել ցանկացած թերթի խմբագրություն: Նոյն թերթերը հայտնաբերելու նպատակով (երբեմն, տուրքից խուսափելու և վաճառված թերթերի մի մասի գումարը իրենց պահելու մար, խմբագիրները վաճառքի էին հանում անդրոշմ թերթերի որոշ տպաքանակ):

Թե ինչպիսի ծանրություն էր դրոշմի տուրքը աղքատ հայ խմբագիրների համար, երևում է «Մամուլի» բացատրությունից: Խմբագիրները «թերթ-գլուխ երկու փարա վաստակի երես տեսած ունի՞ն, որ օրն ալ ելլեն՝ 40—50 դրուշ դրոշմի տուրք վճարելու հարկադրվին»,— գրում էր նա⁷⁸: Դրոշմի տուրքի նպատակը երգիծանքի սուր զենքով բացահայտեց Պարոնյանը, նկատելով, որ այն ստեղծված է խմբագիրներին պատժելու համար: «Թատրոնում» նա գրում էր. «Որոշված ենք մեր թերթերուն յուրաքանչյուրին երկերկու փուլ փակցունելու նախ՝ գանձուն (պետական գանձարանին—Ա. Խ.) մեծ ծառայություն մատուցանելու համար, եթե փուլի նպատակն է գանձը հարստացնել: Երկրորդ՝ մեր արժանի պատիժը կրելու համար, եթե փուլի նպատակն է խմբագիրները պատժելու: Եվ այս ծառայությանց փոխարեն,—եղրակացնում էր երգիծաբանը,—ինքզինքնիս բնարեղի պիտի առաջարկենք գումարեղի երեսփոխանական ժողովին»⁷⁹: Նա ծաղրում է և՛ Բ. դռան ակնկալիքները դրոշմի տուրքից, և՛ երեսփոխանական ժողովի զուտ ձևական բնույթը: Իսկապես, ինչպես վկայում էր «Լեվրնդ հերալդը» միայն Կ. Պոլսում դրոշմի տուրքը օրական 200 լիրա հասույթ էր տալիս պետական դանձարանին⁸⁰:

Դրոշմի տուրքի հետևանքով արևմտահայ շատ թերթեր, ավելի քան երբեք, ստիպված էին ակնկալել մասնավոր անձանց ձեռնտվությունները, կախման մեջ ընկնել այս կամ այն հովանավորից: 1875 թ.՝ այդ տուրքը մտցնելու ժամանակից մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքա-

կան պատերազմի վերջը դադարել են երկու տասնյակի չափ հայերեն և հայատառ թուրքերեն պարբերականներ, որ աննախընթաց երևույթ էր երկրում հրատարակվող մամուլի պատմության մեջ: Դադարած թերթերի և ամսագրերի մի մասը չէր դիմացել նյութական ծանրացած կացությանը, եթե նկատի առնենք, որ դրոշմի տուրքի տարեկան չափը հասնում էր 50—60 լիրայի՝ սլատկառելի մի գումար խմբագիրների համար: Տուրքը մտնելու սկզբնական շրջանում տուժեցին նաև թուրքական թերթերը. այսպես, «Վաքըթը» 1876 թ. պարտքի պատճառով դադարեցրեց իր հրատարակությունը, նույն պատճառով՝ ևս մի քանի թերթեր⁸¹: Սակայն Աբդուլ Համիդի ժամանակից, մինչև 900-ականի սկզբները, դրոշմի տուրքը ծանրացավ միայն հայ և հունական պարբերականների վրա: Սուլթանից թուրքական թերթերը նպաստ էին ստանում, որ թեթևացնում էր նրանց նյութական վիճակը: Իր գահակալության 25-ամյակի առթիվ, 1901-ին սուլթանը տուրքից ազատեց թուրքական և թուրքիայում հրատարակվող բոլոր եվրոպական պարբերականները: Հայերեն և հունարեն թերթերը այդ տուրքը վճարեցին մինչև 1907 թ.⁸²:

Այսպիսով, մամուլը նյութապես քայքայելուն ուղղված կառավարության ձեռնարկները, առանձնապես ծանր էին անդրադառնում հայ պարբերականների վրա: Ամբողջ արևմտահայության նկատմամբ բռնակալի վարած կործանարար քաղաքականությունը, բնականաբար, տարածվում էր նաև հայ մամուլի վրա:

1867 թ. «Ժամանակավոր որոշման» հրապարակումից հետո մինչև 1870-ական թթ. կեսը գրաքննական քաղաքականությունը ծավալվել է երկու հիմնական ուղղություններով՝ կաշկանդելու օսմանյան լիբերալ գաղափարախոսության պրոպագանդը, դրան զուգահեռ, կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների ազգային ինքնագիտակցության վերելքը: Հայ պարբերականներում տպագրվեցին թուրքական քայքայված պաշտոնական, կոռուպցիայի, ինչպես և երկրում սահմանադրական կարգեր իրականացնելու վերաբերյալ նյութեր: «Մանգումեի էֆթյարի» և «Միաթանի» դեմ գրաքննության անհանդուրժող վերաբերմունքը ցույց էր տալիս, որ իշխանությունները ձգտում էին կոտրել հայ մամուլի էջերում ծավալվող քննադատական ոգին: Այդպիսի կանխարգելող միջոցառումներ էին հայ պարբերականների արտոնագրերի թույլտվության

սահմանափակումները, չդադարող խափանումները, դատաստան տես-
 նելը հայ թերթերի խմբագիր-տնօրենների հետ և այլն: Նույն նպա-
 տակն էին հետապնդում նաև թուրքական իշխանությունները՝ հայ
 ազգային մարմիններին մամուլի դեմ լարելու գործում: Հայ հանրու-
 թյան ներսում ուժեղացավ պարբերականների կախումը Ազգային վար-
 չությունից և պատրիարքից: Վարչական ու դատական անհապաղ սանկ-
 ցիաները մամուլի նկատմամբ՝ ամենաշնչին իսկ առիթներով, փաստո-
 րեն ի չիք էին դարձնում գրաքննության հետապագրական բնույթը.
 որևէ որոշակի բնագավառում պարբերականների հրապարակումների
 խիստ պատժելիությունը փաստորեն կանխում էր նրանց հետագա
 ելույթների հնարավորությունները և տիրող գրաքննության արդյունա-
 վետությունը մի հայտնի չափով մոտեցնում կանխարգել գրաքննու-
 թյանը:

2. ՄԱՄՈՒԼԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԽՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայ մամուլի հասարակական ակտիվության վերելքը նշանակալիո-
 րեն խթանվում էր գավառի կացության հանդեպ պատրիարք Մ. Խրիմ-
 յանի ցուցաբերած գործուն վերաբերմունքով: Մ. Խրիմյանն առաջին
 պատրիարքն էր, որ գործնական քայլերի դիմեց Կ. Պոլսի Ազգային
 վարչությունը «սահմանադրական ազգի» վարչություն դարձնելու ուղ-
 ղությամբ: Մինչև Մշո նախկին առաջնորդի հայտնվելը պատրիարքա-
 րանում, արևմտահայ գավառը ոչ թե ազգային ժողովի գործունեու-
 թյան օբյեկտն էր, այլ ավելի շուտ՝ պոլսաբնակ բուրժուական խմբակ-
 ցությունների շահախնդրությունների ու նեղ-դասային ձգտումների բա-
 վարարման միջոց: Հայտնի են 60-ական թթ. Ազգային վարչությանը
 գավառներից առաքված բազմաթիվ բողոքագրեր՝ հարստահարույթուն-
 ների փաստական ու սրտակեղեք ապացույցներով: 1863 թ. գործող
 գավառական մասնաժողովը տեղեկագրում էր Այնթապի, Զարսանճա-
 գի, Վանի, Ալաշկերտի, Եվդոկիայի և այլ շրջանների հայ բնակչության
 տնտեսական ու ազգային ճնշումների մասին⁸³: Դրանից առաջ, 1861 թ.
 Ընդհանուր ժողովը քննարկել էր գավառների կացության հարցը, անդ-
 րադարձել տառապյալ ժողովրդից ստացված բողոքագրերին⁸⁴: Հարկ
 է նկատել, որ Ազգային ժողովում գավառի հարցի քննարկումները
 խթանվել են Կ. Պոլսի հայ գավառացիների և մայրաքաղաքի այլ ներք-
 նախավերի կողմից: Այսպես, 1863 թ. Կ. Պոլսի գլխավոր թաղերի կող-
 մից Ընդհանուր ժողովին հղվել էր մի ընդարձակ համախոսական, որ-

տեղ գավառահայերի իրավունքների պաշտպանության խնդիրը ամենա-
առաջնահերթին էր համարվում վարչության համար: «Պոլիս հայոց ազ-
գին ամենափոքր մասը կկազմեն,—գրում էին նրանք,—և անցյալեն բա-
վական ուսանք, որ ժողովներն գրեթե ժամանակնուն մեծ մասը Պոլսո
օրինավորության զոհերով՝ գավառներն երեսի վրա թողած են... Մեր
զորությունը մեր հայաստանցի եղբայրն են, առանց անոնց՝ աշխար-
հի առջև և ոչ մեկ բանով մը կրնանք պարծիլ, ուստի բավական է մին-
չև ցարդ զանոնք հորդորանոք մխիթարելնիս, ալ սկսինք այսուհետև
կենդանացուցիչ միջոցներով զանոնք հոգևորել, որուն գործադրության
որոշումը ազգն անհամբեր երեսփ: պատկառելի ժողովեդ կսպասեն»⁸⁵:

Գավառի վիճակի նկարագրումնյունը շրջում էր քաղաքական ժողո-
վի բազմաթիվ տեղեկագրերում՝ նաև կրթական գործի, գավառների հետ
Կ. Պոլսի ունեցած թույլ կապի, խուրբական պաշտոնեության շարաշա-
հումների, գավառներում սահմանադրության կիրառման և այլ առիթ-
ներով: Սակայն նշված բողոքագրերը ընթերցվելուց հետո կամ պատ-
րիւրբարանում թողնվել են փոշու խեամքին, կամ նույն բախտին ար-
ժանացել Բ. դոան շափազանց տարողունակ արխիվներում: Որպես կա-
նոն, այդ բողոքագրերը ունեին տեղական նշանակություն, ներկայաց-
նում էին արևմտահայ մեկ գյուղի, մեկ կամ մի քանի գավառների բո-
ղոքն իրենց ոտնահարված իրավունքների համար: Այսպես, 1865 թ.
քաղաքական ժողովի տեղեկագրերում հանգամանորեն ներկայացվում
են Ադանայի, Բաղեշի, Տիգրանակերտի և այլ վայրերի վայրագ հա-
րստահարությունները թուրքական բյուրոկրատիայի և քրդական ավա-
զանու կողմից⁸⁶: Խրիմյանի պատրիարքության ժամանակ էր միայն, որ
ստեղծվեց գավառական հարստահարողություններ՝ ամփոփող փոքր
ի շատե ամբողջական տեղեկագիր և բերվեց որոշակի համակարգի:
Գավառական այդ տեղեկագիրը, որ պատրաստել էր Ն. Վարժապետյանի
գլխավորությամբ գործող հանձնաժողովը, հարստահարությունները ներ-
կայացնում էր առանձին խմբերով: Դրանք էին՝ հարկերի ապօրինի
գանձումներ, թուրքական պաշտոնեության զեղծումներ, քաղաքացիա-
կան դատարաններում հայ բնակչության իրավունքների ոտնահարում-
ներ, հարստահարությունների անհատական դեպքեր: Կցված էր նաև
դրանից բխող՝ հանձնաժողովի եզրակացությունը, այն, որ կատարելա-
պես անգործունակ է բողոքների քննության կառավարության գործե-
լակերպը, ինչպես և առաջադրվում էին միջոցներ՝ հարստահարությու-
նները վերացնելու կա: կանխելու համար⁸⁷:

Պատրիարքը առաջ քաշեց նաև սահմանադրության վերաքննության հարցը. որոշ փոփոխություններ կատարվեցին սահմանադրական ժողովների կազմության և նորմերի մեջ (քաղաքական ժողովի անդամների թիվը 20-ից հասցվեց 14-ի, մշակվեց սահմանադրական հրահանգը՝ գաղափարների վարչության գործունեության կարգավորման նպատակով), որոնք դարձյալ հետամտում էին Արևմտահայաստանի բնակչության վիճակի բարվոքումը⁸⁸: Նոր պատրիարքի շարունակ աճող ժողովրդականությունը և գաղափարի հանդեպ մտասեռ ուղարկությունը հակասում էր պոլսահայ բուրժուառևտրական վերնախավի և էֆենդիական դասի շահագրգռություններին: Գաղափար հարստահարությունների, նրա իրավիճակի բարելավման խնդրին առաջնահերթ նշանակություն տալը, առավել ևս՝ պայքարելը դրա գործադրման համար, ամենեկին չէր մտնում սրանց հասարակական նախասիրությունների մեջ: Մայրաքաղաքն էր այս մարդկանց գործունեության ու խոհերի առանցքը, Բ. դրռան հանդեպ լոյալությունը՝ նրանց ճնշող մասի գործունեության նախապայմանը: Մ. Խրիմյանը իր սկզբունքային, հաճախ՝ հախուռն հարցադրումներով ելնում էր սրանց դասային ինքնաբավության, «ազգի» առաջատարի հավակնությունների դեմ: Նա շրջանցում էր պոլսական բուրժուազիայի և համազգային պաշտոնեության վերացական ու պարապ հարցադրումները «սահմանադրական ազգի» իրավունքների մասին և առաջադրում նոր և հիմնական ուղղություն Ազգային ժողովի գործունեության համար՝ գաղափարի հարցը⁸⁹: Պատրիարքին հակոտնյա ուժերը վարչության մեջ, անտարակույս, չէին առարկում Արևմտահայաստանի կացության բարվոքմանը, սակայն կարծում էին, որ նախաձեռնությունը պետք է արվի «վերևից», պետական միջոցառումների պայմաններում և իրագործվի իրենց իսկ գլխավորությամբ: Ավելին, Խրիմյանի ոչ ավանդական գործելակերպը, Արևմտահայաստանի բարվոքմանն ուղղված միջոցառումները նպաստում էին պոլսահայ մանրբուրժուական-դեմոկրատական խավերի հասարակական ակտիվությանը, որ չէր կարող դուր գալ վերնախավի ներկայացուցիչներին:

Խրիմյանի պատրիարքության ժամանակ Ազգային վարչության մեջ բավական ազդեցիկ էին դարձել աշխարհիկ ու կրոնական մի շարք գործիչներ, որոնք ելնելով Կ. Պոլսի բուրժուական ու կղերական վերնախավի շահերից, պայքար ծավալեցին պատրիարքի դեմ⁹⁰: Խոսքը վերաբերում է համբավավոր «Ղալաթիո օճախին» կամ «ձախակողմյան երեսփոխաններին», որոնց բորբոքում էին սահմանադրությունը գաղառներում կիրառելու համար պատրիարքի համառությունն ու եռան-

դր, որ չէր ցուցաբերել նախորդ «խոհմազարդ» պատրիարքներին և ոչ մեկը: «Օճախի» մեջ էին մտնում Քր. Ղազարոսյանը, Ստ. Փափազյանը, Հ. Մերեմե-Գուլին, Մ. Իզմիրլյանը, Օ. Խոճասարյանը և Էրիշներ: Խրիմյանի դեմ պայքարելիս նրանք օգտագործեցին նրա թույլ տված սահմանադրական մեղանշումները (սահմանադրական ժողովների հետ հաշվի չնստելը, սահմանադրությանը հակասող որոշ ձեռնարկներ և այլն)⁹¹ և նրան մեղադրեցին կամայականության ու հակասահմանադրական գործելակերպի մեջ: Ի վերջո, լիովնացող պայքարը չլատեց և պատրիարքի, և նրան ընդդիմացող քաղաքական ժողովի ուժերը: 1873 թ. կեսին Խրիմյանը հրաժարական տվեց, որին հետևեց և քաղաքական ժողովի հրաժարականը⁹²:

Սակայն, գավառական հարստահարությունների տեղեկագիրը, որ այդպես էլ գնաց միանալու Բ. դռան դիվաններում անհետացած բազմաթիվ թագրիրներին, լուրջ նշանակություն ունեցավ մամուլի և հրապարակախոսության կողմնորոշումների համար: Զգալի չափով սրանով է բացատրվում արևմտահայ գավառի, նրա ոտնահարված սոցիալ-հասարակական իրավունքների թեմայի քննարկումը մամուլում: Անշուշտ, մամուլում լուսաբանման այս առարկան ուղիագծվում է դեռևս 1860-ական թթ. և այդ՝ անկախ պարբերականների հասարակական ուղղությունից: Թեմայի արժարժումը այս ժամանակաշրջանում, սակայն, կրում էր պատահական ու անցողիկ բնույթ: Խնդիրն այն է, որ դեմոկրատական մամուլը 1860-ականին հայ հասարակական մտքին մատուցեց իր պատմական ծառայությունը՝ Արևմտահայաստանը դարձնելով իր ուշադրության հիմնական օբյեկտը: Սակայն դա դեռևս չէր նշանակում, որ այս ժամանակաշրջանում առանձնացվում էր ազգային-կրոնական ու տնտեսական ճնշումների խնդիրը: «Մեղուն», «Մանգումեի էֆքյարն» ու «Ծաղիկը» Արևմտահայաստանին անդրադառնում էին իբրև բնաշխարհի իրականության վերաբերող թեմա՝ սրա մեջ ներառնելով նրա բնակչության կրթական, տնտեսական ու հասարակական կյանքը, Կ. Պոլսի վարչությանը սահմանադրապես առնչվելու հնարավորությունները և այլն: Սակայն արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու մարդկային իրավունքների, նրանց անասելի ծանր առօրյայի ու հարստահարությունների խնդիրը մամուլի տեսադաշտ մտավ միայն 1870-ական թթ.: 1860-ական թթ. հայ ժողովրդի ազգային կազմության պրոցեսի ավարտը⁹³ նոր փուլ էր նշանավորում հայ հասարակական մտքի, ազատագրական պայքարի գաղափարախոսության պատմության մեջ: Հայրենիքը՝ Արևմտահայաստանը դառնում է հասարակական հոսանքների

մտայնության ելակետը, միաժամանակ՝ նպատակը: Սկզբունքային տարբերություններ ունենալով Արևմտահայաստանի սոցիալ-տնտեսական ազգային դրության գնահատման ու հեռանկարների հարցում, այդ հոսանքներից յուրաքանչյուրը իր սեփական հայեցողությունից բխող հնարավորությունների սահմաններում ձգտում էր թափանցել բնաշխարհի իրականության մեջ, ճանաչել այն առանց գունազարդումների: Գաղթօջախների հեռավորությունից 1840—1860-ական թթ. պահպանողական ու լիբերալ մտածողների ստեղծած հայրենիքի վերացական-նշխույտ պատկերը, որ հիմնականում բերվածվում էր ազգային լուսավորության հեռանկարներում, փոխարինվում է գավառը ճանաչելու իրական պահանջներով: Արևմտահայ բուրժուազիան ազգի սոցիալական և քաղաքական վերելքի խնդիրը լծորդում է իր սեփական սոցիալական շահերի ու հետաքրքրությունների հեռավորակերին: Եվրոպական շուկաների ու ապրանքաշրջանառության մեջ իր հետագա դիրքի հնարավորությունները նրան պատկերապես էին միայն Արևմտահայաստանի հաստատուն գետնի վրա, նրա տնտեսական յուրացմամբ: Սակայն այս տնտեսական ներթափանցումն անհնարին էր առանց համապատասխան հասարակական ու քաղաքական հարաբերությունների, առանց անհատի քաղաքացիական այն ձևական ազատության, որ անհրաժեշտ է ամեն մի երկրում բուրժուական հարավերությունների զարգացման համար: Սովետական ռեժիմը բացառում էր նման հնարավորությունները Արևմտյան Հայաստանում, որով էլ պայմանավորված էին արևմտահայ առևտրական բուրժուազիայի խիստ թույլ կապերը բնաշխարհի հետ: Այսուհանդերձ, տնտեսական յուրացմանը նախորդում էր ճանաչողության այն պահանջի բավարարումը, որով ստիպված էր սահմանափակվել Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Տրապիզոնի և այլ վայրերի ազգային բուրժուազիան:

Դեմոկրատական միտքը և մամուլը, որ արդեն 60-ական թթ. բավականաչափ իրազեկություն ունեին գավառի սոցիալ-տնտեսական իրականության վերաբերյալ, ելնում էին գավառական հարստահարվող բազմությունների շահերից: Դեմոկրատ հրապարակախոսները այդ շահերի իրացման արմատական ուղին լծորդում էին հայ բնակչության քաղաքացիական ու ազգային իրավունքների սկզբունքային պաշտպանության հետ, որ նրանց տարավ դեպի ազգային-ազատագրական պայքարի գաղափարը: 1862 թ. Զեյթունի ապստամբությունից հետո արևմտահայ դեմոկրատիայի սյս քաղաքական կողմնորոշումը պետք է խորանար Բալկանների ազատագրական պայքարի իրողությամբ և

1877--1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետեանքով սպասվելիք ռուսական արտաքին քաղաքականության համընթաց ուղեգծով: Դեմոկրատների համար առավել ևս, քան հասարակական որևէ այլ հոսանքի, կեղեքվող հայ զանգվածները դարձել էին գործնական կողմնորոշման աղբյուր, աշխարհայացքի ու գործելակերպի սոցիալական հենարան:

Հասարակական հոսանքների վերոհիշյալ մտայնությամբ է բացատրվում այն, որ 70-ական թթ. գավառի իրականությունը հաճախակի էր երևում պարբերականներում: Խնդիրը լուսաբանվում էր ժամանակի գրեթե բոլոր հրատարակություններում՝ սկսած «Մասիսից» մինչև «Արեւելեյան փող» և «Մամուլ» Սակայն գաղափարական, մասամբ դրանից ածանցվող սուրբեկտիվ նկատառումները ոչ քիչ դեպքերում բաժանում էին պարբերականներին, խանգարում խնդրի բազմակողմանի լուսաբանմանը: Այսպես, Ազգային վարչության մեջ Խրիմյանի նկատմամբ եղած ընդդիմությունը 70-ականի սկզբներին՝ իր արձագանքը գտավ նրան կողմ և դեմ պարբերականների էջերում և իր անույտող ծավալմամբ թուլացրեց գավառական կյանքի բացահայտման թեման: 1870—1874 թթ. մամուլի էջերից անպակաս էին փոխադարձ հարձակումներն ու չավարտվող բանակռիվները Խրիմյանի պատրիարքության շուրջ, ընդ որում՝ բանավեճերը հաճախ վերածվում էին անձնական բախումների, կորցնելով հասարակական լրջությունը: «Մասիսը», «Արեւելյան փողը», «Մանգումբի էֆքյարը», «Մեղուն» պաշտպանում էին Խրիմյանի ձեռնարկները սահմանադրության վերաքննության և այլ հարցերում: «Օրագիրը», «Արարատը», «Փունջը», «Հայրենիքը» և «Մամուլը» ընդհակառակն, հակառակվում էին պատրիարքի ուղեգծին կամ հակառակորդ քաղաքական ժողովի դիրքերից, կամ հավանություն չտալով նրա գործունեությանը: Պատրիարքի հանդեպ ընդդիմադիր, բայց և զուսպ դիրք էր գրավել «Արեւելյան մամուլը»: Տեական վեճը «Օրագրի» և «Մանգումբի էֆքյարի», ինչպես և «Մասիսի» ու «Օրագրի», «Մասիսի» ու «Փունջի» միջև հասավ նույնիսկ «պատվո դատի»՝ տեղի տալով Պարոնյանի սրախոսությունների հեղեղին: Այս առումով իսկական գլուխգործոց է «ճակատամարտ Օրագրո» ընդդեմ «Մանգումբի» երգիծական պատումը, որտեղ գրոտեսկի չափազանց վարպետ օգտագործմամբ բացահայտված է այս երկու պարբերականների բանավիճալին ծայրահեղությունների անհեթեթությունը, մամուլի լայնախոհության պակասը, որ վիճաբանող կողմերին հասցնում էր ծիծաղելի պաթետիկայի և իրականության զգացողության կորստի: Պարոնյանը սրանց հաշտությունը ևս

ներկայացնում է բուն վեճի բովանդակությանն արժանի սատիրական պատկերով⁹⁴։

Ինքը՝ մեծ երգիծաբանը, սակայն, միջոցների մեջ քիչ խտրություն էր դնում, երբ բանավիճում էր «Մամուլի» խմբագիր Գ. Այվազյանի հետ։ Հայտնի են նրա ոչնչացնող հարձակումները վերջինիս վրա, որ դարձյալ սկիզբ էր առնում Խրիմյանի հանդեպ հակադիր վերաբերմունքից։ Գ. Այվազյանը պատասխանել է Հ. Պարոնյանին՝ իր անհամեմատ ցածր հնարավորությունների սահմաններում, ընդ որում, իր հերթին տալով «անձնականությանը դպչելու» բազմաթիվ օրինակներ։ Պարոնյանի բազմաթիվ ֆելիետոնները, սատիրական պատումներն ու հումորեսկները և առհասարակ լրագրային ժանրի ստվար զործերը իրենց գեղարվեստական արժանիքների շնորհիվ հարատևել են, բայց մի մասն էլ զուտ առօրեական բանավեճի ոգով է հագեցած և այսօրվա ընթերցողին կարող է հետաքրքրել լոկ ճանաչողական, ժամանակի լրագրական բարբերի տեսակետից։ Այսուհանդերձ, Պարոնյանի զորեղ հարվածները «Մամուլի» խմբագրին՝ թողել են խոր հետք, Գ. Այվազյանին արժանացնելով հետագա ուսումնասիրողների կանխակալ վերաբերմունքին։ Այս հանգամանքը քիչ դեր չի ունեցել այն բանում, որ «Մամուլը» առ այսօր դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից, եթե չհաշվենք մի քանի համառոտ ակնաբկները Գ. Այվազյանի և նրա պարբերականի վերաբերյալ։ Մինչդեռ այդ պարբերականը, անկախ իր խմբագրի կարողություններից, որոնց մասին քամահրանքով են արտահայտվել ոչ միայն Պարոնյանը, այլև Ա. Արփիարյանն ու Մ. Փորթուգալյանը, ուշադրության է արժանի ոչ միայն մամուլի պատմության, այլև հայ մամուլի հանդեպ օսմանյան գրաքննության վերաբերմունքի, ինչպես և արևմտահայ երգիծանքի զարգացման տեսակետից։ «Մամուլի» էջերում կարելի է գտնել ուշագրավ բազմաթիվ ֆելիետոններ, երգիծական զրույցներ, պատմվածքներ ու մանրապատումներ, ժամանակի իրականության սրամիտ բնութագրումներ, որոնք իրենց արվեստով չեն հասնում Պարոնյանի երգիծանքին, սակայն կարող են ընդհանրապես գաղափար տալ Սվաճյանից մինչև Պարոնյանը ձգվող արևմտահայ երգիծանքի բովանդակության մասին՝ 1870-ական թթ.։

«Մեղվի» և «Մամուլի» բանավեճը հաճախ բուրս էր գալիս պատշաճ երկխոսության ահամաններից և վերածվում անձնական հարձակումների։ Դրա հիմքում ընկած էին հասարակական տարբեր հայեցակետեր։ Պարոնյանը և Այվազյանը ներհակ վերաբերմունք ունեին իրականության խնդիրների ու դրանց լուծման ուղիների հարցում։ «Մամուլ-

լը» պաշտպանում էր «Ղալաթիո օճախի» երեսփոխաններին ու քաղաքական ժողովին, «Մեղուն»՝ սրանց հակառակորդ պատրիարքին, «Մամուլն» արտահայտում էր «օճախի» հաշվենկատ համակրանքը կաթողիկոսի նկատմամբ, «Մեղուն» կաթողիկոսի հեղինակությունից առավել գերադասում էր պատրիարքի իրավասությունը՝ արևմտահայ կյանքի խնդիրների լուծման գործում: «Մամուլը» ուներ պահպանողական հայեցակետ. ազգային կյանքում նա առաջատար դեր էր հատկացնում դրամատեր բուրժուազիային և մեծարում նրա «ազգախնամ» գործունեությունը: Հայտնի են նրա դիֆերամբները մեծահարուստ Հ. Կյոչեյանին⁹⁵, որ այնպես դիպուկ ծաղրուծանակի էր ենթարկում Հ. Պարոնյանը⁹⁶: Զրպարտություններ տեղալով Խրիմյանի վրա, որ հորինել էին «ձախակողմյանները» «Մամուլը» պաշտպանության տակ էր առել վանեցի Պողոս վարդապետին, որի շարաշահումները ժամանակին դատապարտել էին Հ. Սվաճյանն ու Մ. Նալբանդյանը:

Այս ամենի հետ միասին, «Մամուլն» անդրադարձել է գավառական իրականությանը, իր ջանքերը միացրել այն լուսաբանելու շարժմանը, որին ձեռնամուխ էր եղել մամուլը 70-ականի սկզբներից, ինչպես և պաշտպանել է գավառական հարստահարությունների տեղեկագրերը: Բ. դռան պաշտոնեության, գավառական կեղեքումների մերկացման, տպագրական տեսչության դեմ հանուն մամուլի ազատության համարձակ ելույթների մեջ պետք է նկատել հասարակական համոզմունքներ դավանող մի խմբագրի, որի հրապարակումները նշանակալի ազդեցություն են ունեցել գաղութահայ հասարակայնությանը բնաշխարհին առնչելու գործում: Ուշագրավ է այս տեսակետից «Մամուլի» տպագրած «Հետս կոչումն» հոդվածը, որտեղ բացահայտվում է ոչ միայն Գ. Այվազյանի դիրքորոշումը հարստահարությունների նկատմամբ, ալլև համառությունը տպագրական տեսչության ճնշումների դեմ: Գրաքննիչները ստիպում են Գ. Այվազյանին հերքում տալ «Մամուլում» տպագրված Ճանիկի առաջնորդ Արիստակեսի նամակի մասին: «Տպագրական տեսչությունը,—գրում է «Մամուլը»,—սուտ և անհիմն կկարծեն այն գրությունը, որ գավառական հարստահարությանց մեկ ամենափոքրիկ մասը կկազմեն: Ուրեմն, իրավունք ունինք հավատալու, որ եթե տպագրական տեսչությունը, կամ որ նույնն է՝ Բ. դուռը, այսպիսի գրությունները մինչև հիմա սուտ և անհիմն չի հավատար, այսօր Ասիո այն անլուր բարբարոսությունները, հարստահարությունները, կեղեքումները, ոճրագործությունները... կաշառակերությունը, մեկ խոսքով՝ ժողովրդական ամեն թշվառությունները բռնաբարձ

անհետացած էին: Թող ազգը տեսնե, թե տակավին յուր առաջնորդաց վկայություններով առ ոչինչ կհամարվին կառավարության առջև...»⁹⁷:

Տպագրական տեսչությունը անմիջապես շղիմեց հատուցման. նույն տարվա մարտի 25-ին, երեք ամիս խափանելով «Մամուլը», գրաբնութ-
թյունը, անտարակույս, հաշվի էր առել ոչ միայն նրա տպագրած «Տպա-
գրական ազատություն» հոդվածը, այլև այս մեղանշումը: Առհասարակ,
գրաբնությունը Ավագյանի պարբերականը մշտապես պահել է իր ուշա-
դրության կենտրոնում և առիթը բաց չի թողել այն խափանելու կամ
խմբագրին բանտարկելու համար:

Տպագրական տեսչության դեմ մղած համարձակ և տևական պայ-
քարով հայտնի էր մանավանդ «Մանգումեի էֆքյար» թերթը: Կ. Փանոս-
յանի խմբագրությամբ 70-ականին նա շարունակում էր լուրջ ներգոր-
ծություն թողնել արևմտահայ հասարակական կյանքի վրա: Մայրաքա-
ղաքում և գավառներում «Մանգումեի» ունեցած մեծ հեղինակության
հետ կալուղ էին մրցել միայն Հ. Պարոնյանի պարբերականները՝ «Մե-
ղուն», ապա «Թատրոնը»: «Մանգումեին» առաջին հրատարակությու-
ններից մեկն էր, որ անդրադարձավ արևմտահայերի սոցիալ-տնտեսա-
կան աղետալի դրությանը: Հայ բնակչության գաղթը բնաշխարհից՝ նա
բացատրում էր տնտեսական լկանքի իրողությամբ: 1872 թ. նա «Ման-
գումեում» տպագրեց Բաֆֆու «Սովը»՝ հուշարկելով պարսկական և
թուրքական բռնապետությունների նույնությունը ժողովրդի համար⁹⁸:
Կ. Փանոսյանը իր թերթը հրատարակում էր հիմնականում հայատառ
թուրքերենով՝ նկատի առնելով թուրքախոս հայ հատվածներին: Դրժ-
վար է գերս.գնահատել նրա պարբերականների դերը այդ հատվածնե-
րին համազգային կյանքի մեջ ներգրավելու, լուսավորական-մշակու-
թային շարժմանը հաղորդակցելու ասպարեզում: Միաժամանակ «Ման-
գումեին» տպագրել է բազմաթիվ հայերեն նյութեր, որոնք իրավունք են
տալիս այդ թերթը երկլեզվյան համարելու, իհարկե, հայատառ թուրքե-
րենի գերակշռությամբ: Հայերենին դիմելը բացատրվում էր մի կողմից
հայախոս ընթերցողին «Մանգումեի» լսարանի մեջ ներգրավելու, և
մյուս կողմից՝ թուրքախոս հատվածներին մայրենի լեզվին մոտեցնելու
ձգտումով: Կ. Փանոսյանը Արևմտահայաստանի հայ բնակչության սո-
ցիալ-տնտեսական վիճակի ցուցադրման հետ միասին հանդես է եկել
ի պաշտպանություն Կ. Պոլսի հայ աշխատավորության: Կ. Փանոսյա-
նը ևս, ինչպես Հ. Սվաճյանը, բացահայտել է թաղական ժողովների՝
սահմանադրական հավասարության երաշխիք լինելու մասին լիբերալ-
ների (Գր. Օտյան) պատկերացումների անիրական բնույթը: «Մանգու-

մեկ» էջերում արտացոլվել է այն պայքարը, որ մղում էին **Խասգյուղի** հասարակ ազգայինները ամբարտաժան թաղականների դեմ⁹⁹։

1860-ական թթ. Կ. Փանոսյանը անխնա մերկացնում էր ս. Փրկչյան ազգային հիվանդանոցի և Ծղիգուլեի որբանոցի ինքնագուլիս հոգաբարձությունը։ Սրանց զեղծումների բացահայտումը, որ արվում էր Կ. Փանոսյանին և նրա թերթին հատուկ հրապարակախոսական շիկացած խոսքով ու համազիչ տրամաբանությամբ, դեմոկրատական խավերի պաշտպանության պայմաններում հաղթանակ բերեց տաքարյուն խումբագրին։ Պողոս պատրիարքի 1867 թ. հուլիսի 15-ի շրջաբերականով նրան հանձնվեց հիվանդանոցի ընդհանուր տնօրինությունը և դրամական մատակարարման գործը¹⁰⁰։ Հիվանդանոցում Փանոսյանը իրագործել է իր բարեկարգումները, սակայն տեղի տալով նյութական դժվարություններին և հակառակորդների ստվար խմբին, հրաժարվել է իր պաշտոնից։ Երկար տարիներ Փանոսյանը նվիրվել է մանկավարժության՝ ստանձնելով Կ. Պոլսի Ազապյան իգական վարժարանի տնօրինությունը։

69—70-ական թթ. «Մանգումեն» ուներ նյութական բավարար հնարավորություններ՝ տարեկան ծախսում էր 1500—2000 դուրուշ, նրա հրատարակության գործում զբաղված էին 10—20 աշխատողներ, որպիսիք էրազել անգամ չէին կարող հայ շատ պարբերականներու «Ատեն մը,—վկայում է Ա. Արփիարյանը,—«Մանգումեն» օրը երկու տպագրություն կունե՛նար, առտուրիկուն, յուրաքանչյուր թիվն՝ 4.000-ական օրինակ, հատը՝ 40 փարաջի... Օրվան մեծ մարդը Փանոսյանն էր»¹⁰¹։

Վերջին դիտողությունը վերաբերում է «Մանգումենի» խմբագրի հասարակական մեծ ազդեցությանը։ Արևմտահայ կյանքի գրեթե բոլոր բնագավառներում «Մանգումեն» ասում էր իր խոսքը։ Դպրոցի, լուսավորության տարածման, կղերական բարոյականության հերքման, մամուլի դեմոկրատական ազատության, թատրոնի և դրամատուրգիայի զարգացման ասպարեզներում այդ թերթը նշանակալի ծառայություն է մատուցել առաջավոր ազգային մշակույթին։

Որպիս խմբագիր, Կ. Փանոսյանը հայտնի էր մամուլի ու կարծիքի ազատության վերաբերյալ իր յուրահատուկ մոտեցմամբ։ Թերթում ցուցադրելով հասարակական այս կամ այն բնագավառի վերաբերյալ իր վերաբերմունքը, նա միաժամանակ տեղ էր հատկացնում խնդիրը հակառակ կողմից լուսաբանող տեսակետներին։ «Լրագրաց էջերը,—գրում էր նա,—ծողովորդյան բաց ըլլալը կարծյաց ազատության պահանջում։

ներեն մեկն է: Եվ թերթ մը, որչափ որ կարծյաց զանազանություն կամ տեսակ-տեսակ գրությունք պարունակե, այնչափ՝ ընթերցողաց օգտակար ծառայություններ բրած կըլլա»¹⁰²:

Մի հայտնի չափով այս մոտեցումը սպառնում էր կարծիքների բազմազանության մեջ սքողել թերթի բուն ուղեգիծը: Դեմոկրատները, մասնավորապես Գր. Չիլինկիրյանը և Հ. Պարոնյանը այս իմաստով ցույց են տվել «Մանգումեի» ոչ հստակ դիրքորոշումը որոշ խնդիրների նկատմամբ:

70-ական թթ. արևմտահայ գավառի, նրա բնակչության իրավազրկության բացահայտմամբ «Մանգումեի էֆքյարը» ստանում է քաղաքական բովանդակություն և լրացնում դեմոկրատական մամուլի շարքը:

Այս թերթն էր, որին մշտական հատուցման թիրախ էր ընտրել տպագրական տեսչությունը: 1872 թ., երբ թերթը խափանվել էր վրանքեյաներին տրվող աշխատավարձի և բարեկարգումների մասին անհանգուրժելի դատողությունների համար, Հ. Պարոնյանը իր հումորին հատուկ տարողունակությամբ համադրում էր Կ. Փանոսյանի յուրահատուկ հանդգնությունը՝ «կրոնական սահմանեն դուրս ելլելու» կամ «քաղաքական սահմանի մեջ մտած ըլլալու» ձևը և «Մասիսի» ու նրանման «զգուշություն ընդունելի» անվտանգությունը¹⁰³: Սրանով հանդերձ, 70—80-ականին «Մանգումեի» բազմաթիվ խափանումները հրահրվում էին այն տագնապից, որ ներշնչում էր բռնապետության դեմ իր ըմբոստությամբ հայտնի Կ. Փանոսյանը:

Հայ մամուլի վրա հսկողություն իրականացնելիս Բ. դուռը հենվում էր արևմտահայ աշխարհիկ ու կղերական հետադիմության վրա: Այս հանձնարարությունը կատարելիս վերջինս երբեք չի նեղվել նախաձեռնության պակասից: Առաջադիմական մամուլի նկատմամբ գործնականության հալածանքը ոչ սակավ դեպքերում պետք է բացատրել նաև այդ ակտիվությամբ: Այս դեպքում մամուլը և ազգային, և ընդհանուր քաղաքական բնույթի նյութեր հրատարակելիս ստիպված էր գաղափարներն անցկացնել կրկնակի հսկողության բովով: Այս պայմաններում գործելիս դեմոկրատական մամուլը մշակում էր ճկուն ուղեգիծ, ուրույն արտահայտչամիջոցներ ու գործելակերպ, որ անպայման պետք է հաշվի առնել գործնականության հետ նրա հարաբերությունները պարզաբանելիս: Այս իմաստով ամենադժվարին խնդիրներ լուծելը 70-ականին վիճակված էր Հ. Պարոնյանին: Նա զարգացրեց «Մեղվի» սատիրան՝ հզոր շեշտեր տալով նրա քաղաքական ու հասարակական նպատակաուղղվա-

ծովայանր: Նրա «Մեղու», ապա «Թատրոն» պարբերականներում» առօր-
յա փաստի գեղարվեստական վերլուծությունը հասցվում էր քաղա-
քական լարման, որչափով երգիծաբանը հետամտում էր փաստի սո-
ցիալապես ու հասարակական արժեքավորմանը: Դա նոր որակ էր հայ
մամուլի մեջ, երբ լրագրական ժանրերը միաժամանակ հանդես էին գա-
լիս որպես գեղարվեստական ամբողջական ստեղծագործություններ:
Հանձին Պարոնյանի, արևմտահայ հրապարակախոսությունը բարձրաց-
վեց արվեստի մակարդակի, դրսևորվելով իր հայտնի երկփեղկավածու-
թյան՝ փաստի և գեղարվեստական մեկնաբանության միասնության մեջ:
Իրապեսության այս եղկողմանի լուսաբանումը Պարոնյանի այս պոր-
բերականներն օժտում էին հասարակական բաժնի նշանակությամբ:
70-ական թթ. արևմտահայ պարբերականներից և ոչ մեկը այնպես
սկզբունքային պայքար չի մղել ազգային կղերական ու աշխարհիկ հե-
տադիմության դեմ, ինչպես այս երկու հրատարակությունները: Դա
նշանակում էր անսպասան ընդհարում գրաքննության հետ, որովհետև
երգիծաբանի անողորմ երկացումներից միակ ազդեցիկ պաշտպանու-
թյունը թե մեկը, և թե մյուսը գտնում էին իշխանությունների աջակցու-
թյան մեջ: Գրաքննությանը ապավինելու հարցում առանձնապես եռան-
դուն էր կղերական հետադիմությունը: 1872 թ. աշնանը կրոնական ժո-
ղովը դիմել էր իշխանություններին՝ մամուլի քննադատությունը կա-
սեցնելու նպատակով: Հ. Պարոնյանի ակնարկից պարզ է դառնում, որ
իշխանությունները կատարել են այդ խնդրանքը և հրահանգել պարբե-
րակա՝ ներին՝ իրենց քննադատության մեջ դուրս չգալ կրոնական հար-
ցերի սահմաններից: «Կրոնական սահմանեն դուրս չելնելու համար,—
ծաղրում էր Պարոնյանը իր թաքնված հակառակորդներին,— մեր կարճ
խելքով կարճ ճամբա: մը գտանք, այն է՝ թե բոլոր խմբագիրները կրո-
նակա՝ն ըլլան, կարգվածները՝ քահանա, չկարգվածները՝ վարդապետ»¹⁰⁴:

Եղբոր մատնաշար ներկայացուցիչների հանդեպ «Մեղուն» անողորմ
էր ու վճռական. նրա հարվածների թիրախ էին դարձել վանեցի Պողոս
վարդապետները, Տիգրաշյան Մկրտիչ «հրաշագործը», Եզնիկ և Ամբրոսիոս
վարդապետները, Խ. Նար Պեյը, դատաստանական խորհուրդների այս
անդամներ և այլն: Այս վրդովված հակառակորդները ակնդետ հետևել
են «Մեղվի» հրապարակումներին՝ առիթ որոնելով նրան պատժելու
համար: Իսկ եթե թերթը այդպիսի պատահություն չէր տալիս, ապա
առիթը նրանք ստեղծում էին սեփական նախաձեռնությամբ: Այդպիսի
բնույթ ունեւր ամբողջովին զրպարտության վրա հիմնված՝ «Մեղվի»
1873 թ. հունվարի խափանումը: Հունվարի 12-ին, դրանից մի քանի

օր առաջ, «Մեղուն» տպագրել էր մի ծաղրանկար, որտեղ խարազանվել էին պատրիարք Մ. Խրիմյանի հակառակորդները: Պատրիարքին անվանարկելու նպատակով նրանք կանգ չէին առել այնպիսի մի ղրպարտության առջև, ինչպիսին նրա սիրային կապերի մասին լուրեր տարածելն էր: Նշված ծաղրանկարը մակագրված է. «Թե ով է այս խնդիրը հարուցանողը»: Հունվարի 17-ի համարում, որից հետո «Մեղուն» խափանվել է, Պարոնյանը բացատրել է ծաղրանկարի բովանդակությունն ու շարժառիթները. «Եվ ինչ էր պատկերը. վատությունը ոտքի վրա կեցած՝ սիրո խնդիր կհարուցանե»,—գրում էր խմբագիրը:

Զրպարտիչները տպագրական տեսչության տնօրեն Սաադովլահ բեյի առջև ծաղրանկարը մեկնաբանեցին այն իմաստով, թե իբր այն ուղղված է հենց Խրիմյանի դեմ: Հարցը, ի դեպ, ավելի է խճճել պատրիարքարանի «քաբու քեհյասին» (վերակացու), որը զգուշորեն ապակողմնորոշել էր թուրք պաշտոնյային. «Լսածնուս նայելով,—գրում է Հ. Պարոնյանը,—Սաադովլահ բեյը քաբու քեհյասին կանչելով բացատրություն է խնդրել, քաբու քեհյասին ալ իբր թարգման «Զհասկցա» բռել: ամչնալով՝ «Կցավիմ» ըսեր է: Խնդիրը պարզ է. «Մեղուն» երկու ամիս գոցվի հանիրավի, վնասուց ենթարկվի, ինչու՝ որովհետև քաբու քեհյ սին «ցավեր է»¹⁰⁵:

Առհասարակ, քաբու քեհյասին՝ Ա. Ֆրենկյանը, օգտվում էր տպագրական տեսչության կասկածելի վստահությունից. պետք է կարծել, որ հայ մամուլի մասին նա տեսչությանը հետաքրքրող տեղեկություններ է տվել: 1873 թ. ապրիլին «Օրագրի» խմբագիրը շատ հասկանալի ակնարկ էր անում այն մասին, որ «Ալիքսան էֆենտին»՝ Ֆրենկյանը, տպագրական տեսչությունում է եղել այն պահին, երբ Գ. եպիսկոպոս Ալեքանդյանը եկել էր տպագրական տեսչություն՝ խնդրելու «Օրագրի» խափանումը նրա հետ ունեցած մի ինչ-որ վեճի պատճառով¹⁰⁶:

Բոլոր դեպքերում, պատրիարքարանի վերակացուի բացատրությունը համընկել է «Մեղուն» ղրպարտողների մեկնաբանությանը: Տպագրական տեսչության կողմից պարտեռականին ուղղված ազդարարության մեջ ծաղրանկարը որակվում է ճշմարիտ: Պարոնյանի թշնամիների ոգով, իբր՝ «Մեղուն» ծաղրել է պատրիարքին և մեղանչել բարոյականության դեմ: Դրանից հետո «Մեղուն» խափանվեց վարչական կարգով, ըստ «Ժամանակավոր որոշման», երկու ամսով (1873 թ. հունվարի 17-ից մինչև մարտի 18-ը): «Հանուն արդարության և ճշմարտության այս անխափանության դեմ բողոքելի զատ ուրիշ բան չենք կրնար ընել, որով-

հետև մեր դատավորը մարտ 12-ն է, որ առանց մտիկ ընելու կհրամայե»,—գրում է Պարոնյանը¹⁰⁷:

1873 թ. հունվարի խափանումից հետո կրոնական ժողովը ավելի խիստ և միաժամանակ ավելի զգույշ է դարձել «Մեղվի» նկատմամբ: Ապրիլին, պարբերականի վերաբացվելուց մեկ ամիս անց, կրոնական ժողովը ազդարարություն ուղղեց նրան՝ արգելելով ծաղրել կրոնական արարողությունները և կրոնավորներին: Կրոնական ժողովը սպառնում էր, հակառակ դեպքում, «տնօրինել անհրաժեշտը», այսինքն՝ դարձյալ խափանել տալ «Մեղուն»: Անդրդվելի երգիծաբանը առիթը չուշացրեց. նա տպագրեց «Հիսնըմեկոնց հայելին և և...» հոդվածը, ուր ներկայացվում էին «ձախակողմյան» հորջորջված երեսփոխանների երգիծական դիմաստվերները¹⁰⁸: Իրենց հասարակական վարքագծի հատկանշական կողմերով այստեղ պատկերվում են Խ. Նար-Պեյը, Թադեոս, Գրիգորիս, Նիկողայոս եպիսկոպոսները, այլ կրոնականներ, աշխարհականներից՝ Ստ. Փափազյանը, Ք. Ղազարոսյանը, Օ. Խոճասարյանը և ուրիշներ: Զափազանց վրդովված «ձախակողմյանները» դիմեցին տպագրական տեսչությանը, որը «Մեղվին» ուղղված ազդով կոչ արեց հրաժարվել «պարսավանք և շարախոսություն» պարունակող նյութերի հետագա հրապարակումից¹⁰⁹:

Առհասարակ Պարոնյանը բազմիցս հալածանքների է ենթարկվել ծաղրանկարների պատճառով: Երգիծանքի և ծաղրանկարի հանդեպ տպագրական տեսչության հատուկ հակակրանքը նկատի առնելով, Պարոնյանի հակառակորդները նրա դեմ բողոքելիս ծաղրանկարներին տվել են իրենց ցանկացած մեկնաբանությունը և գրեթե միշտ հասել հաջողության: 1873 թ. ապրիլի վերջին Պարոնյանին դարձյալ կանչել են տպագրական տեսչություն և իր տպագրած մի ծաղրանկարի համար առաջարկել են վճարել կամ 25 օսմանյան ոսկի կամ հանձն առնել 2 ամսվա բանտարկություն¹¹⁰: Ըստ երևույթին, նույն դեպքը նկատի ունենալով Պարոնյանի հակառակորդը՝ Գ. Այվազյանը, երբ շարախնդորեն գրում էր, թե «Պեշիկթաշցվոց ընտանեկան ակնածանաց արժանի պատվուն դեմ մեղանչեց խայտառակ քարիքաթյուրներով, որոց համար տպագրական տեսչության կողմանե հրավիրվեցավ որոշյալ պայմանաժամի մը մեջ կամ 25 ոսկի տուգանք վճարելու, կամ 3 ամիս բանտարկվելու»¹¹¹:

«Ղալաթիո օճախի» անդամներին ծանակելիս «Մեղուն» առանձին հատուկ ուշադրություն է դարձրել կղերի բարոյական ու հասարակական վարքագծին: Այդ նպատակն էր հետամտում նրա գրած «Զորս

վարագործով կատակերգություն մը» ֆելիետոնը¹¹², Պարոնյանը ծաղրու-
ծանակի էր ենթարկում Նար-Պեյի վայելչասիրությունը, մայրաքաղա-
քում նրա անցկացրած փափկակյաց առօրյան ու թեթևամտությունը, որ
աչքի փուշ էր դարձել հենց իրենց՝ հոգևորականների համար¹¹³, Զմյուռ-
նիայի, իսկ դրանից առաջ Ռոդոստոյի առաջնորդությունից հրաժար-
ված եպիսկոպոսը «Մեղվում» ցույց է տրվում ժամանակի կղերին հա-
տուկ այլ թերություններով: «Մեղու» լրջորեն խոսելու ստիպված» հոգ-
վածում դատապարտվում է բարոյականության ու առաքինության անու-
նից խոսող՝ կրոնական ժողովի անարժան ներկայացուցիչների գործե-
լակերպը¹¹⁴: Ընթերցողի վրա խոր տպավորություն պետք է թողներ
Եզնիկ և Հովսեփ վարդապետների, Բերայի քարոզիչ Ամբրոսիոս վարդա-
պետի և այլոց քննադատությունը:

«Մեղվի» խափանման համար շատ ջանքեր են գործադրել Նար-
Պեյը և Նիկողայոս եպիսկոպոսը, որը տեղապահ էր նշանակվել Խրիմ-
յանի՝ պատրիարքությունից հեռանալուց հետո: Սրանք իրենց համա-
խոհ մի քանի կղերականների հետ փորձել էին խափանել տալ «Մե-
ղուն», սակայն չէին հաջողել, ինչպես նկատում էր Հ. Պարոնյանը¹¹⁵:

Մամուլի քննադատությունը խեղդելու՝ հետադիմական կղերի ձեռ-
տով՝ կոկին դրսևորվեց 1874 թ. հունվարին: Այս անգամ Ազգային
վարչությունն էր համամտել կրոնական ժողովի հետ: Վերջինիս որոշ-
մամբ պատրիարքարանի դիվանատան անդամներից մեկը զբաղվելու
էր հայ մամուլում, «վարչության որոշմանց և ազգային գործոց մասին
եղած օրինավոր դիտողությունները վարչության ներկայացնելու,
տեսնված սխալ հրատարակություններն ուղղել տալու և թշնամական
հոգվածները վարչության ուշադրությանը ներկայացնելու համար, որ-
պեսզի այս մասին հարկ եղածը տնօրինվի»¹¹⁶: Այդ պաշտոնը հանձնը-
վել էր կրոնական ժողովի ատենադպիր Մ. Իզմիրլյանին: Այս առթիվ
«Մեղվի» խմբագիրը շատ դիպուկ նկատում էր, որ կղերին ոչ վայել,
արատավոր վարքագծի բացահայտումը կարող է դիտվել իբրև թշնա-
մական գործողություն և մամուլը ենթարկել ճնշումների:

Անհրաժեշտ է նկատի առնել, որ Պարոնյանի այս քննադատությու-
նը Ազգային վարչության և կրոնական ժողովի հավակնությունների դեմ՝
փաստորեն ուղղվում էր դեպի տպագրական տեսչությունը: Վերջինս,
մինչև 1873 թ. սկիզբը մամուլին ուղղված կրոնական ժողովի հրահանգ-
ները ուղեկցել էր իր պաշտոնական հայտարարություններով՝ երկիցս
պատճեք տալով չհրապարակել «անձնականի և կրոնական գլխոց և
պաշտոնների դեմ հարձակողական հոգվածներ»¹¹⁷: Ծիշտ նույն օգոստոս-

սին տպագրական տեսչությունից Մ. Ալվատյանի «Հայրենիքը» ստացավ երկրորդ նախազգուշացումը՝ կղերի և պաշտոնյաների դեմ «խել մը սուտ և սխալ զրույցներ» տպագրելու համար¹¹⁸։ Կրոնական ժողովի նախազգուշացումները մամուլին՝ շարունակվել են նաև 1874—1875 թթ.։ Երբ 1874 թ. հրապարակվեց հերթական ազդը՝ «կրոնական ժողովի դեմ բան մը չգրել», այլ հարկ եղած դեպքում հայտնել նրան, որպեսզի «հարկ եղածը տնօրինեն», Պարոնյանը ծաղրուծանակի ենթարկեց այդ ինքնապաշտպանական միջոցառումը։ «Թատրոնը» հայտնեց, թե քաջալերված այդ ծանուցումներից, շտապում է տեղեկացնել կրոնական ժողովի ատենապետին, որ «կրոնականին մեկը կաշառակերության հանցանքին մեջ գտնված է»¹¹⁹։

Կրոնական ժողովի և Նար-Պեյի երգիծումը հասարակական սուր հնչեղության հասավ նաև «Թատրոնում», երբ Պարոնյանը կոնկրետ փաստերով ցույց տվեց «գերապատիվ սրբազանի» կամայականությունները Պեյիկթաշում և Միջագյուղում՝ մեղադրելով նրան կրկնամուսնությունը և եռամուսնությունը սրբազործելու մեջ։ Ծրգիծաբանի այս հարվածները այնքան սաստիկ են եղել, որ կրոնական ժողովին ստիպել են կորցնել իրականության զգացումը։ Իր պաշտոնական հայտարարության մեջ նա հայտնում էր, որ «Թատրոնի» խմբագիրը խոստովանել է, թե Պեյիկթաշի եռամուսնության և Միջագյուղի կրկնամուսնության վերաբերյալ լուրերը տպագրելիս խաբվել է իր տեղեկաբերներից, ուստի խոստացել է հերքում տպագրել դրա մասին։ Պարոնյանը հերքեց կրոնական ժողովի հորինած այդ ամբողջ կեղծիքը և պնդեց իր խոսքը¹²⁰։ Դրանից հետո կրոնական ժողովը ստիպված էր լռել իր պաշտպանյալի հետ միասին։

Խ. Նար-Պեյը իր համախոհների հետ քանիցս փորձել է վրեժխնդիր լինել երգիծաբանից։ 1873 թ. սեպտեմբերին հասնելով այն բանին, որ տպագրական տեսչությունը նախազգուշացում տա «Մեղվին», սերբազանը ավելի կաշուն դարձավ։ «Օրագիրը» «Լա Թուրքի» թերթից արտատպել է մի լուր, որի համաձայն՝ հալ կրոնավորները դիմել են Բ. դուռ՝ իրենց քննադատող «Մեղուն» խափանել տալու համար։ Այդ գործում, ինչպես գրում էր «Մեղուն», գլխավոր նախաձեռնողը եղել էր Նար-Պեյը¹²¹։ Պարբերականը խափանելու այս անհաջող փորձին Պարոնյանը հակադրեց իր մերկացումները հետազայում ևս շարունակելու հաստատ վճռականությունը։ Ակներև է, որ հրապարակախոսը իր հասարակական պարտքը առավել բարձր էր դասում, քան թերթի խափանման որևէ վտանգ։ «Կխնդրենք մեր սուրբ հայրերեն,— գրում էր

նա,—որ պարապ տեղը շաշխատին մեր թերթը խափանել տալու. թերթը խափանել տալով բան մը չեն շահիր: «Մեղուն» խափանվի նէ՝ տեղը ուրիշ թերթ մը կելնե և ան ալ իրենց թերությունները կծաղրե»¹²²:

Մամուլի քննադատությունը խեղդելուն ուղղված հետադիմական ձեռնարկները, սակայն, հիմնականում ավարտվում էին հաջողությամբ: 1874 թ. հոկտեմբերին պատրիարք Ն. Վարժապետյանը խափանել տվեց «Ասիան»: «Մասիսին» ուղղած գրության մեջ պատրիարքը իր այդ «գրեթե ակամա» քայլը պատճառաբանում էր նրանով, թե իբր այդ պարբերականը քանիցս հրահրել է ժողովրդին՝ «ընդհանուր ժողովը կոխելով ցրվելու համար»¹²³:

Պատրիարքի այս միտումնավոր բացատրության դեմ հանդես եկավ «Ասիայի» խմբագիր Մ. Փորթուգալյանը¹²⁴: Նա գրում էր, որ Ազգային ժողովը կորցրել է իր բարոյական դիրքն ու արժեքը՝ իր կազմում ունենալով կասկածելի արժանավորության աշխարհիկ ու կղերական գործիչներ¹²⁵: «Ասիան» պաշտպանում էր խրիմյանին և նրա հեղինակությունը հակադրում կրոնական ու քաղաքական ժողովների սնամեջ գործունեությանը: Պատահական չէր, որ պատրիարքութունից խրիմյանի հեռանալուց մեկ տարի անց էլ վրեժխնդիր երեսփոխանները պահանջում էին հաշիվ պահանջել նրանից «ազգի գումարները» յուրացնելու համար և այլն¹²⁶: Ոխակալությունը բացատրվում է նրանով, որ խրիմյանը շարունակում էր նույն հարգանքը վայելել ժողովրդական խավերի մեջ: Եվ այդ ժողովրդականությունը «ձախակողմյաններին» պատկերանում էր իբրև իրենց ազդեցության դեմ ուղղված սպառնալիք:

«Ղալաթիո օճախի» անդամների՝ Ք. Ղազարոսյանի, Օ. Խոճասարյանի, Ստ. Փափազյանի, Նար-Պեյի և այլոց քննադատությամբ «Ասիան» կանգնում էր Հ. Պարոնյանի «Մեղվի» կողքին: 1870-ական թթ. դեմոկրատները իրենց պարբերականներում քննադատում էին գավառը իբրև պաշտոնի ու եկամուտների աղբյուր դիտող և նրա վիճակը անտեսող կղերին: Այստեղից էր ծագում Մ. խրիմյանի հակառակորդ եկեղեցականների քննադատությունը Պարոնյանի պարբերականներում, այստեղից էր սկսվում Փորթուգալյանի ընդդիմությունը հիշյալ խմբակցությանը՝ «Ղալաթիո օճախի» գործիչներին:

«Ասիայի» հասարակական բովանդակությունը արժեքավորելիս այն պետք է անպայմանորեն դասել դեմոկրատական պարբերականների շարքը: Նրա էջերում առանձնապես նկատելի է Պարոնյանի ու նրա «Մեղվի» նկատմամբ մշտապես դրսևորվող համակրանքը, այլև հասարակական նույն սկզբունքների պաշտպանությունը: Այս պարբերակա-

նը առաջիններից էր, որ շատ բարձր գնահատեց Պարոնյանի երգիծական արվեստը և նրա մեծ «հաջողակությունը» ընթերցողների շրջանում: Մ. Փորթուգալյանը հակադրվում էր երգիծանքի ժանրի ու երգիծական մամուլի նկատմամբ գրաքննության հալածական քաղաքականությանը: Եթե գրաքննությունը շեշտում էր այդ ժանրի հասարակական «վտանգավորությունը և բարոյական ալյասերվածությունը», ապա Փորթուգալյանը, ընդհակառակն, հիմնավորում էր ամենից առաջ նրա հասարակական անհրաժեշտությունը: Նա նկատում էր, որ «ընտանեկան և ազգային կյանքին մեջեն հոռությունները բառնալու, ծանծաղամտությունը և անհանգամարությունը հավասարապես հարվածելու համար ծաղրաթերթերուն պետքը խիստ զգալի է»¹²⁷:

Երեսփոխանական ժողովի անդամների դեմ «Մեղվի» տպագրած «Հիսնըմեկոնց հայելին և ես» հոդվածին միանգամայն համահնչուն էր «Ասիայի» «Նկարագիր երեսփոխանաց» հոդվածը, որտեղ քննադատվում են մի խումբ երեսփոխաններ՝ իրենց անձնական մանրախնդիր շահերի համար¹²⁸: Պարոնյանին «Ասիան» պաշտպանեց նաև Այվազյանի հետ նրա բանավեճերի ժամանակ: Սակայն «Թատրոնի» և «Ասիայի» համագործակցությունը առավել նկատելի է եկեղեցու բարենորոգման, մտավորականության ջանքերով նրա թերությունները վերացնելու ուղեգծի մեջ: Անդրադառնալով դրան, Ա. Ալպոյաճյանը նշում է. «Իրեն (Մ. Փորթուգալյանին—Ա. Խ.) հետ այս պայքարին մեջ համաձայն էր Հակոբ Պարոնյան՝ իր «Թատրոնով»¹²⁹, Դիտողությունը միանգամայն ճշմարիտ է, սակայն հարցը չի սպառվում սոսկ համամտությամբ: Իր համագործակցությանը Պարոնյանը տվել է կոնկրետ բնույթ՝ աշխատակցելով «Ասիային»: Այստեղ նա տպագրել է յոթ հոդված, բոլորն էլ միեւնույն լեմայով, որենք վերաբերում են Ամբրոսիոս վարդ. Իսկենդերյանի բարոյական վարքագծին և այս առթիվ՝ ազգային մարմինների հաստատարների ընթացքին¹³⁰: Պարոնյանի առաջին հոդվածը (շարունակելի) կրում է «Թատրոնին» երբեմնի հուշարարը» ստորագրությունը. մյուսներում նա ստորագրել է «Հուշարար», որ «Թատրոնում» հանդիպող՝ երգիծաբանի լավ հայտնի ծածկանուններից է¹³¹: Չնայած իրենց բովանդակության միօրինակությանը, Պարոնյանի այդ հոդվածները ուշագրավ են իրենց քննադատական ոգու, ինչպես և այն տեսակետից, որ կոնկրետություն են մտցնում կրոնական ու քաղաքական ժողովների դեմ նրա մղած պայքարի հետևողականության հարցում: «Հուշարարի» վերջին հոդվածից պարզվում է, որ դեռևս «Թատրոնի» մեջ Ամբրոսիոսի դեմ տպագրած նյութերի համար այդ վարդապետը

դատ է բաց արած եղել Պարոնյանի դեմ: Տպագրելով «Հուշարարի» հոդվածները, Մ. Փորթուզալյանը լիովի բաժանել է Պարոնյանի դժվարին կացությունը: Հարկ է հիշեցնել, որ 1864 թ. մամուլի օրենքի 7-րդ հոդվածով պարբերականի խմբագիրը (կամ տնօրենը) պատասխանատու էր իր տպագրած նյութերի համար, որ նշանակում էր, թե անկախ դատապարտելի նյութի հեղինակի ինքնությունից, խմբագիրը «այն հոդվածին հեղինակին կամ հեղինակներուն հետ իբրև մեղսակից պիտի դատվի»¹³²:

Փաստորեն Պարոնյանի մերկացնող հոդվածները արագացրեցին «Ասիայի» խափանումը: Այս հարցում իր նկատառումներն ուներ նաև պատրիարք Ն. Վարժապետյանը, որը դեմ էր իրիմյանին կրոնական ու քաղաքական ժողովներին հակադրելու և նրան պաշտպանելուն ուղղված՝ «Ասիայի» ընթացքին: Նոր պատրիարքը իր համակրությունն էր հայտնում իրիմյանին՝ պաշտպանելով նրան իր հակառակորդների զերպարտություններից, բայց և դեմ էր նախկին պատրիարքի մեծարմանը՝ տեղի տալով ազդեցիկ խորհրդատուներին և իր սեփական պատվասիրական ձգտումներին:

Խափանված «Ասիային» ուղղված տպագրական տեսչության ազդում հայտնվում էր, որ պարբերականը դադարեցվում է պատրիարքարանի դեմ վնասակար լուրեր տպագրելու պատճառով: Խափանման հաջորդ օրը՝ 1874 թ. հոկտեմբերի 22-ին Մ. Փորթուզալյանը հանդես եկավ հավելվածով, որտեղ սուր քննադատության ենթարկեց պատրիարքին և ազգային հետադիմությանը՝ իր թերթը խափանել տալու համար: Հավելվածից պարզվում է, որ պատրիարքը իշխանությունների առջև «Ասիան» ներկայացրել է իբրև ժողովրդին պատրիարքարանի դեմ գրգռող հրատարակություն: Հերքելով այդպիսի մեղադրանքը, Փորթուզալյանը փաստերով ցույց է տալիս ազգային իշխանությունների արդեն թշնամական վերաբերմունքը «Ասիայի» հանդեպ: Նա գրում է, որ Սիմոն Մաքսուտը «մի քանի անգամ մեծ. եպարգոսին ներկայացրեց և թախանձով աղաչեց է «Ասիան» ժամ առաջ դադարեցնելու համար»¹³³:

Դեմոկրատական թերթի խափանումը անբավականության արձագանք առաջացրեց հայ առաջավոր մտավորականության շրջանում: Խընդիրը կրոնական հետադիմության գործողություններով բացատրեց Բաֆֆին. «Կրոնական ժողովի նախազգուշությունը,—գրում էր նա,— որ դարձած էր Կ. Պոլսի լրագրությանը, որ նրանք եկեղեցականների վերաբերյալ տեղեկությանց մեջ համեստություն պահպանեն, նրանց անձնականությունը չդպչեն և այլն, այդ հոռմեական կուժը խեղճ «Ա-

սիայի» գլխին կոտորվեցավ, Լրագիրը դադրեցավ յուր գործունեությունը, Կրոնական ժողովը փոխանակ լրագրության ձայնը լռեցնելու, ավելի լավ կաներ՝ հոգևորականներին ուղղեր¹³⁴:

Ե՛րբ հայ հոգևորականությանը քննադատող մամուլին օսմանյան գրաքննությունը պատժում էր միայն կրոնական ժողովի կամ ազգային ջոջերի միջամտությունից հետո, ապա անմիջական նախաձեռնություն էր հանդես բերում այն ժամանակ, երբ հարցը վերաբերում էր հարանվանական վեճերին: Այս խնդրում շահագրգռված կողմ էին նաև եվրոպական տերությունները, որոնց կարծիքը կառավարությունը չէր կարող հաշվի չառնել: Հարանվանական հարցերի հանդեպ մշտապես հետաքրքրություն էր ցուցաբերում Թուրքիայի եվրոպական, մասնավորապես կաթոլիկական դավանանքը պաշտպանող ֆրանսիական մամուլը: («Կուրիեր դ'Օրիենտ», օրինակ, իրեն այս հարցում հատուկ միջամտության իրավունք էր վերապահում): Կար նաև օսմանյան կառավարության ավանդական դիրքորոշումը՝ օգտագործելու կաթոլիկ և լուսավորչական հայերի հակասությունները արևմտահայության ազգային միասնությունը պառակտելու համար: Հարանվանական վեճերի մեջ խորացող մամուլի նկատմամբ, ուրեմն, գրաքննությունը կիրառում էր մի ուղեգիծ, որը հաշվի էր առնում և՛ այս, և՛ վերոհիշյալ՝ արտաքին միջամտության հնարավորությունը: Այդպիսի հուսալի ուղեգիծ էր բանավեճերի ընթացքում դրսևորվող ծայրահեղությունների կանխումը՝ տերություններին չզրգուլու համար: 1874 թ. առանձնապես սրված հասունյան-հակահասունյան պայքարի ժամանակ խնդրին դարձյալ միջամուխ եղան Կ. Պոլսի ֆրանսերեն թերթերը՝ պաշտպանելով Ա. Հասունյանին: Սրանց և մի քանի հայ թերթերի միջև բորբոքված բանավեճը անհանգստացրեց Բ. դոանը, քանի որ դա հավելյալ առիթներ էր ստեղծում կառավարության գործերին արտաքին միջամտության համար: Այս պայմաններում տպագրական տեսչությունը ճնշում պետք է գործադրեր և՛ եվրոպական թերթերի, և՛ հայ պարբերականների վրա: Բորբոքված բանակովի պայմաններում, ի դեպ, Կ. Պոլսի «Ֆար դյու Բոսֆորը» բանը հասցրեց այնտեղ, որ մտացածին լուր տպագրեց մի սպառնալիքի մասին, որ իբր, արել էր ֆրանսիական ղեսպանը հայ կաթոլիկների խնդրի առթիվ¹³⁵: «Ֆար դյու Բոսֆորը» դրանով ձգտում էր կառավարությանը կողմնորոշել դեպի հասունյանները: Բ. դոան դիրքորոշումը, սակայն, այս շրջանում նպաստավոր չէր հասունյանների համար: Իրեն զգացնել էր տալիս Ֆրանսիայի՝ Թուրքիայում կաթոլիկական դավանանքի մշտական ջատագովի բացակայությունը մեծ քա-

ղաքականությունից: Այսուհանդերձ, հետևելով զգուշավոր գործելակերպի, որ արտահայտվում էր հիշյալ պայքարը տեղական շրջանականերում սահմանափակելու միտումով, Բ. դուռը շտապեց կանխել դրա արձագանքները: Արձագանքը, մինչդեռ, սպառնում էր տարածվել մամուլում: Այս ընդհարումներին Կ. Պոլսի եվրոպական մամուլը կարևոր նշանակություն տվեց այն ժամանակ, երբ Ղալաթիո ս. Փրկիչ եկեղեցին հանձնվեց հակահասունյանների պարագլուխ Հ. Քյուրեյլյանին: Սակայն վեճի հետագա խորացումը կառավարությանը ստիպեց եկեղեցին առաջժամ ավանդ պահել և հարցի լուծումը հանձնել հատկապես այդ նպատակով ստեղծված հանձնաժողովին:

Վերոհիշյալ իրադարձություններին ակնդետ հետևող «Ֆար դյու Բոսֆորը» տպագրական տեսչությունից ստացավ երկրորդ նախազգուշացումը՝ «թյուր մեկնաբանությունների» համար: Կրակին ջուր լցրեց ինչպես միշտ կանխակալ և ոչ հավաստի «Օրագիրը», հայտնելով, թե «սեփականության խնդիրը» (Ղալաթիո հիշյալ եկեղեցու, որին ձգտում էին տիրանալ հակադիր կողմերը) օգտագործվում է այն նպատակով, որ հակահասունյանները միանան լուսավորչականներին: Հավատալով այս կեղծ լուրին, հասունյաններին պաշտպանող մյուս ֆրանսիերեն թերթը՝ «Կուրիեր դ'Օրիենը» քննադատության ենթարկեց հանձնաժողովի նախագահին՝ կանխակալության համար: Տպագրական տեսչությունը «Կուրիեր դ'Օրիենը» խափանեց երեք ամսով, իսկ նրանից արտատպություններ արած «Օրագիրը», ինչպես և «Մամուլը» նախազգուշացումներ ստացան¹³⁵: Կարճ ժամանակ անց, 1874 թ. ապրիլի 6-ին «Մամուլը» և «Մեծմուշտը հավատիսը» խափանվեցին մեկական ամսով¹³⁷: Հայ կաթոլիկական համայնքի ներսում ծավալված ջրապտույտը իր խորքերը տարավ այս պարբերականներին: Հատկանշական է, որ այս խափանումներից հետո հայ մամուլը հասունյան-հակահասունյան պայքարի մասին այլևս նյութեր չի տպագրել: Պետք է եզրակացնել, որ տպագրական տեսչությունը արգելել էր նման բնույթի հրապարակությունները:

«Ասիայի» հետ միաժամանակ 1874 թ. հոկտեմբերի 21-ին երկու ամսով խափանվեց «Թատրենը»՝ Հ. Տատյանի դեմ գրած «Սահմանադրության մեջ ազնվապետություն» և «Շնորհ և իրավունք» քննադատական հոդվածների համար¹³⁸: Պարոնյանն այս անգամ երգիծանքի սլաքն ուղղել էր սահմանադրական վարչության մեջ ատենապետի սլաշտոնով հայտնված ամիրայական ժամանակների մի բեկորի՝ Տատյան տոհմի ներկայացուցչի դեմ: Առարկություն շահագործող և ինքնամեծար ատենապետը կոպտորեն վիրավորել էր Հ. Իփեկճյանին, երբ վեր-

շինս պաշտպանել էր ժողովրդի սահմանադրական իրավունքները: Յուլյց տալով Տատյանի կամայականությունը, Պարոնյանը իր սատիրական հարցադրումը ընդհանրացնում էր իր երկրորդ հոդվածում՝ բացահայտելով նրա ազնվապետական հավակնությունների անհեթեթությունը սահմանադրական ժողովի մեջ. եթե ժողովրդի կամքը իբրև շնորհ է ընդունվում միապետության մեջ, ապա այն իրավունքի է վերածվում սահմանադրական վարչությունում, նկատում է Պարոնյանը:

Բռնասեր ատենապետին Պարոնյանը հիասթափեցրել է «Թատրոնը» վերահրատարակելուն պես. «Մենք Տատյանի անձին չդիպանք, իր բռնավորական ընթացքը հարվածեցինք, ինչպես որ պիտի հարվածենք ամեն անգամ, որ երեսփոխանի մը վրա բռնություն բանեցունե»¹³⁹, — գրում է նա:

Հ. Տատյանը, սակայն, շարունակեց հալածանքները «Թատրոնի» դեմ՝ գործի դնելով իր ընդարձակ կապերն ու ծանոթությունները և՛ ազգային, և՛ պաշտոնական շրջաններում: Ուշագրավ է, որ սահմանադրության անունից մշտապես խոսող «Մասիսը» այլ բան չգտավ անելու, քան ողոթել մոլեգնած «ազնվապետականին»՝ հաշվի առնել խափանված «Թատրոնի» նյութական ծանր կացությունը և միջնորդել պատիժը մեղմելու համար¹⁴⁰:

Պայքարը, սակայն, շարունակվում էր. դեկտեմբերի վերջին Պարոնյանին կանչում են տպագրական տեսչություն, որտեղ վերատեսուչ Քալիադիսը կրկնակի խափանման սպառնալիքով զգուշացնում է այլևս ելույթ չունենալ Տատյանի դեմ¹⁴¹:

Պարոնյանը դրանից հետո էլ շարունակել է երգիծել Տատյանին՝ արհամարհելով սրա վրեժխնդրությունը: Ատենապետությունից Տատյանի հեռանալուց հետո տրված այս հարվածները անձնական որևէ մղում չունեին, պարզապես Տատյանը ներկայացնում էր էֆենդիական դասի այն մարդկանց, որոնց մերկացումը մինչև վերջ սկզբունքային նշանակություն ունեի երգիծաբանի համար: Հայ պաշտոնեությունից հետադիմական ներկայացուցիչները դեռևս 60-ական թթ. իրենց ամբողջ ազդեցությունը գործադրել են ազգային առաջադիմական մամուլը ճնշելու համար: Հ. Սվաճյանի «Մեղուն» Գր. Զիլինկիրյանի «Ծաղիկը», Կ. Փանոսյանի «Մանզումեի էֆբյալը» և շատ այլ պարբերականներ բազմիցս հալածանքների են ենթարկվել սրանց մատնությունների պատճառով և չնայած դրան, շարունակել են իրենց անընդհատ պայքարը անհատ զորեղներից մամուլի ազատությունը ապահովելու համար: Ընդ որում, դեմոկրատական պարբերականների ճշմարտացի քննադատությանը հե-

տադեմ պաշտոնյաները հակադրել են սուտը և զրպարտությունները. այսպես, նույն Հ. Տատյանը զրպարտել էր «Թատրոնը» տպագրական տեսչության առջև: «Թատրոնի» հոգվածները սխալ թարգմանելու մասին Պարոնյանի դիտողությունը, որ նա արել է տպագրական տեսչությունում, Քալիադիսի մոտ, անկասկած, վերաբերում է Տատյանին¹⁴²:

Հ. Տատյանի դեմ Պարոնյանի գրած հոգվածներում աչքի է զարնում նաև տպագրական տեսչության դիպուկ քննադատությունը, որով երգիծաբանը ամբողջացնում է իր վերաբերմունքը և՛ տպագրական տեսչության, և՛ հայ էֆենդիության նկատմամբ: Այս առթիվ գրած մի երգիծական երկխոսության մեջ Պարոնյանը փաստորեն բնութագրում է թուրքական ամբողջ գրաքննությունը. «Լրագիր մը դադրելու համար անպատճառ հանցանք գործելու ստիպյալ չէ, ճշմարտություն մը պաշտպանելը բավական է լրագիր մը երկու ամիս դադրեցնելու»¹⁴³, — գրում է նա:

1874-ի հոկտեմբերի վերոհիշյալ խափանման ժամանակ «Թատրոնի» և «Ասիայի» (որ իսպառ խափանվել էր) խմբագիրները ժողովրդից օգնություն ստացան հանգանականության շնորհիվ: Առանց այդպիսի քաջալերության, նշում էր Հ. Պարոնյանը, անհնարին կլիներ «Թատրոնի» շարունակությունը հակառակորդների մեքենայությունների պայմաններում¹⁴⁴:

Պատրիարք Մ. Խրիմյանի կազմած և թուրքական կառավարությանը ներկայացրած գավառական հարստահարությունների տեղեկագիրը, իբրև պաշտոնական փաստաթուղթ, նշանակալիորեն նպաստեց հայ խմբագիր-հրատարակիչներին՝ արժարժեքով գավառի հարստահարությունների խնդիրը: Միաժամանակ, սահմանադրության վերաքննության և գավառների իրավունքների ընդլայնման կապակցությամբ պատրիարքի հարցադրումները բորբոքեցին հասարակական պայքարը: Դա հավելյալ հնարավորություններ էր ընձեռում գրաքննությանը՝ հետևելու մամուլի բարեհուսությունը և նրա կողմնորոշումներին: 1870-ական թթ. առաջին կեսին արևմտահայ պարբերականներից ամենից ավելի պատրվել են «Մանգումեի էֆթյարը», «Մեղուն», «Թատրոնը», «Օրագիրը» և «Մամուլը»: Հայ հանրության ներսում ընթացող հասարակական պայքարի ժամանակ թուրքական իշխանությունները անվերապահորեն պաշտպանում էին աշխարհիկ ու կղերական վերնախավին, ուստի վերոհիշյալ թերթերի խափանումները որոշակիորեն ցուացնում էին ոչ միայն հասարակական պայքարի սրումը, այլև օսմանյան իշխանու-

թյունների շարունակական և մանրախնդիր միջամտությունը հայ համայնքին վերաբերող գործերին: 1870-ական թթ. ավելի է ընդգծվում իշխանությունների այն ուղեգիծը, որով կղերի և եկեղեցու համար բացառիկ դիրք էր ապահովվում մամուլի նկատմամբ: Այդ է վկայում նաև «Ասիա» դեմոկրատական պարբերականի ընդմիջտ խափանումը: Գրաքննությունը հարկ եղած դեպքում կասեցնում էր նաև մամուլի ելույթները էֆենդիական դասի դեմ և օգտագործում էր հասունյան-հակահասունյան պայքարը՝ ազգային համախմբման պրոպագանդը խափանելու և պարբերականների ինքնուրույնությունը սահմանափակելու համար:

3. ՊԱՐՐԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆՈՐ ՕՍՄԱՆՆԵՐԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Օսմանյան գրաքննական քաղաքականությունը անմիջականորեն արտացոլում էր երկրի ներքին ու արտաքին քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները: 1867 թ. Կիպրոսի դեպքերը առիթ տվեցին «Ալիի որոշման» հրապարակմանը: Դա առաջին ազդանշանն էր, որից հետո գրաքննությունը վերակառուցելու էր իր վերաբերմունքը մամուլի հանդեպ՝ հասարակական փոփոխված իրադրության համեմատ: Իսկապես, ամբողջ 70-ական թթ. գրաքննական հսկողության կորագծի բարձրացումը կամ իջեցումը անդրադարձնում էին Թուրքիայի քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերը: 1874 թ. գրաքննության համեմատաբար զուսպ ընթացքին վերջ պետք է տրվեր բռնապետության այն քաղաքականությանը համապատասխան, որով ավելի ուժեղացան հպատակ ժողովուրդների ճնշումները և ազգային կրոնական բռնությունները: 1875—1876 թթ. անօրինակ ծավալ և թափ ստացավ Բալկանյան ժողովուրդների պայքարը սուլթանական բռնապետության դեմ: Հպատակ սլավոնների ղինված ապստամբությունը օսմանյան կայսրության ներքին քաղաքականության ճգնաժամի արտահայտությունն էր, սուլթանական ռեժիմի բացահայտ անկարողության դրսևորումը՝ կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների սոցիալատնտեսական ու քաղաքական կյանքի զարգացման ընթացքը փոքրիշատե ապահովելու գործում: Մայր առած Արևելյան ճգնաժամը խորացրեց հակասությունները մի կողմից Թուրքիայի և եվրոպական տերությունների ու Ռուսաստանի, մյուս կողմից՝ բուն թուրքական քաղաքական ուժերի միջև: Երկրի ներքաղաքական խառնարանում մակերես ելան «նոր օսմանները», որոնք երկրի հետամնաց հասարակական հարաբերու-

թյուններին, պետական կարգին, սուլթանիզմի միահեծանությունը, ինչպես և տերությունների նվաճողական քաղաքականությունը հակադրեցին իրենց սահմանադրական ծրագրերը:

Քաղաքական ու ֆինանսական կրախ ապրող կայսրության վիճակի քննությունը ավելի ու ավելի համառորեն էր ներթափանցում ոչ միայն «նոր օսմանների», այլև երկրում հրատարակվող մյուս պարբերականների էջերը: Թերթերն այս շրջանում եվրոպական պարբերականներից արտատպություններ էին անում՝ դրանց կցելով սեփական դատողությունները այդ խնդիրների մեկնաբանության մեջ: Սրա հետ մեկտեղ, թուրքական թերթերը ծայրահեղության էին հասցնում իրենց հարձակումները բալկանյան ապստամբած ժողովուրդների դեմ և տիրող ազգի լրագրության ամբարտաժան դիրքերից մեկնաբանում Ռուսաստանի վերադարձումը սլավոնների ազատագրման գործում: Մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և դրանից հետո տպագրական տեսչությունը դիվանագիտական նկատառումներով հարկադրված էր անընդհատ միջամտել թուրքական մամուլի այդ բնույթի անպատասխանատու և հախուռն հարձակումներին: 1875 թ. օգոստոսին Բ. դուռը հարկադրված էր խափանել «Մեճմուլայը մաարիֆը», որը Հերցեգովինայի ապստամբության կապակցությամբ չէր զսպել իր թշնամական կրքերը Ռուսաստանի հանդեպ¹⁴⁵: Մյուս կողմից, երկրի վարչական-հասարակական կյանքի, հպատակ ժողովուրդների հարստահարությունների վերաբերող նյութերը սկսել էին որակ կազմել հպատակ ժողովուրդների մամուլում՝ խորին անհանգստություն հարուցելով թուրքական պետական շրջաններում: Դրությունը առավել բարդացնում էին Կ. Պոլսի և Ջամյունիայի եվրոպական պարբերականները, որոնք տերությունների տնտեսական ու քաղաքական շահերի օգտին արվող իրենց հակասական հրապարակումներով շփոթահար էին անում Բ. դուռնը և դիվանագիտական դժվարություններ ստեղծում նրա համար: Մամուլի՝ պետական քաղաքականության ուղեգծից շեղվելու հաճախացող օրինակները արագացրեցին դրանք արգելելուն ուղղված՝ Բ. դուռն գործողությունները: 1875 թ. սեպտեմբերին պաշտոնական ժանուցմամբ տպագրական տեսչությունը իր դժգոհությունն էր հայտնում Հերցեգովինայի դեպքերի առթիվ հրապարակվող քննադատական նյութերի արտատպություններից (եվրոպական մամուլից) և ապա՝ հավելվածների համանման բնույթի հրապարակումներից: Վարչական ամենախիստ պատիժների սպառնալիքով տպագրական տեսչությունը մամուլին կոչ էր անում պահպանել զգուշավորություն, ձեռնպահ մնալ թշնամական գաղափարներին ար-

ձագանքելուց և «ես կենալ հրատարակելե աշնպիսի քաղաքական լուրեր, որոց ստուգութիւնն ըստ բավականի հաստատայալ չըլլա, ինչպես նաեւ աշնպիսի ենթադրութիւններ պարունակող հոգովածներ, որք Բ. դոան անկապտելի իրավունքները խնդրո տակ կրնան ձգել»¹⁴⁶:

Տպագրական տեսչութեանը լուրջ գլխացավանք էին պատճառում, մանավանդ, թերթերի հավելվածները, որոնց հրատարակութեան իրավական կարգավորումը դուրս էր մնացել 1867 թ. «Ժամանակավոր որոշումից» և որոնք թեմատիկ իմաստով խմբագիր-հրատարակիչներին գործողութեան որոշ ազատութիւն էին ընձեռում: Հերցեգովինայի ապրտամբուլութիւնից հետո թերթերը հաճախ ամբողջ հավելվածներ էին հատկացնում դրա հետ կապված ռազմական իրադարձութիւններին՝ իրենց սեփական մեկնաբանութիւններով, որոնք հաճախ հակասում էին պաշտոնական հայտարարութիւններին: Զգտելով վերջ տալ դրան, տպագրական տեսչութիւնը 1875 թ. սեպտեմբերին հրապարակած ծանուցմամբ հայտնում էր, որ թերթերը Հերցեգովինայի դեպքերի մեկնաբանութեանը «ավելի երկյուղալի կեղծարանք տալու համար հավելվածի ձևով կհրատարակեն հաճախ»¹⁴⁷: Դրանից քիչ անց, նույն ամսին կառավարութիւնը հրապարակեց 1864 թ. մամուլի օրենքի լրացուցիչ հոգոված՝ հավելվածների վերաբերյալ. այդ հոգովածով թերթերի հավելվածները ամբողջովին դրվում էին պաշտոնական սահմանների մեջ: Այսուհետեւ, դրանք իրավունք ունեին միայն ինֆորմացիա տպագրել պաշտոնաբաշխութիւնների, պաշտոնական լուրերի մասին, զետեղել պաշտոնական հեռագրեր: Մեղանշող հավելվածների համար սահմանվում էր մեկից երեք ամսվա խափանում՝ բացի մամուլի օրենքով սահմանված մյուս պատիժներից¹⁴⁸:

Այս շրջանում կառավարութիւնը տպագրական տեսչութեան աշխատանքները վերակառուցում էր խստութիւններն ուժեղացնելու ճանապարհով: Տպագրական տեսչութեան վերատեսչի պաշտոնում Բերթեէֆենդուն փոխարինեց Ստեփան Արզումանը, իսկ ղեկտեմբերի վերջին նրա տեղը նշանակվեց Մեհմեդ Սայիդ բեյը¹⁴⁹: Կարճ ժամանակահատվածում արված այս փոփոխութիւնները ցույց էին տալիս, որ մեծ վեզիր Մահմուդ Նեզիմ փաշային չեն գոհացրել տպագրական տեսչութեան վերահսկողական ջանքերը:

Հերցեգովինայի ապստամբութեան վերաբերյալ լուրերի արտատպութիւններն արգելելով, կառավարութիւնը ձգտում էր փակել անցանկալի տեղեկատվութեան հոսքը, որ կարող էր հրահրել կայսրութեան ժողովուրդների հետաքրքրասիրութիւնը ազատագրական պայքարի ելած Բալկանների նկատմամբ: 1875 թ. նոյեմբերին տպագրական տեսչու-

թյունը հրապարակեց նույն բովանդակությամբ երրորդ ծանուցումը՝ զգուշացնելով «քաղաքական սուտ ու սխալ լուրեր», կառավարության գործունեությունը թյուր մեկնաբանելուց և «բարեկամ տերությունների դեմ» նյութեր տպագրելուց¹⁵⁰։ Այս անգամ ևս, ինչպես միշտ, սպառնալի ծանուցումներին հետևեցին թերթերը հետապնդելու և պատիժները առատորեն գործի դնելու ձեռնարկները։ 1875 թ. վերջին խափանվեց Օ. Խոճասարյանի «Օրագիրը», որը առաջ էր ընկել կառավարության պաշտոնական հայտարարություններից ու գործողություններից, գրելով, թե «Կըսվի՝... այսօր կամ վաղը Գարատաղի դեմ պատերազմ պիտի հրատարակվի»։ Տպագրական տեսչությունը «Օրագրին» մեղադրեց անստույգ լուր տպագրելու մեջ։ «Օրագիրը» խափանվեց ընդմիշտ, բայց Հ. Տառյանի և Սիմոն Մաքսուտի միջամտությամբ Խոճասարյանը ներում ստացավ և թերթը վերահրատարակվեց «Նորագիր» անվամբ¹⁵¹։ Գրեթե միաժամանակ մեկ ամսով խափանվեց Ն. Թյուլպենտճյանի «Լրագիրը»՝ Հերցեգովինայի ապստամբության վերաբերյալ նյութեր տպագրելու համար¹⁵²։ «Անպատեհ» կամ «անբարոյական հոդվածներ» տպագրելու համար տարվա վերջին խափանվեցին «Մամուլը», «Միմոսը», հունական «Մոմոսը»¹⁵³։ Թուրքական թերթերի, մասնավորապես զավեշտաթերթերի դեմ գործադրվեցին նույնպիսի միջոցներ. պատժեցին «Քահաբա» և «Հեյալ» թերթերը, քիչ անց՝ «Սադակաթը» և «Իսթիկբալը»¹⁵⁴։ Տպագրական տեսչությունը մամուլի հսկողությունը ուժեղացրեց ոչ միայն Բալկանների մասին անցանկալի տեղեկատվությունը կանխելու, այլև մամուլի քննադատական ոգին ընկճելու նպատակով, որ սկսել էր թեքվել սուլթանի ու Բ. դուռն քաղաքականությունից դժգոհ տրամադրությունների հունը։ Այս տրամադրությունները խորանում էին Թուրքիայում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների ընթացքով։ 1875 թ. հոկտեմբերին կառավարությունը ստիպված էր սնանկ հռչակելու Թուրքիան, այն բանից հետո, երբ երկրի արտաքին պարտքը հասավ 200 մլն ֆունտ ստեռլինգի (2 միլիարդ ռ.)¹⁵⁵։ Թուրքիա հավաքվեցին տերությունների ներկայացուցիչները՝ «հիվանդ մարդու» դիվանագիտական կոնսիլիումի, որտեղ կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր կորզել առավելագույն տնտեսական ու քաղաքական օգուտներ։ Այսպիսի պայմաններում մամուլն իր քննադատական ելույթներով սպառնում էր անցանկալի միջադեպեր ստեղծել կառավարության համար։ Դրանից խուսափելու մտադրությամբ տպագրական տեսչությունը հարկ համարեց թույլ չտալ Թուրքական պաշտոնեության դեմ ուղղված քննադատական հրապարակումներ։ 1875 թ. հոկտեմբերին նա սպառնում էր ան-

միջապես վարչական միջոցների դիմել այն թերթերի նկատմամբ, որոնք «անդադար անձնականությանը դեմ կիսոսին՝ պատշաճից սահմանեն դուրս ելնելով»¹⁵⁶։ Դրան զուգահեռ, թուրքական հետադիմությունը հարվածն ուղղեց Կ. Պոլսի բուլղարական և հայ մամուլի վրա, որոնք օրվա թեմա էին դարձրել հարստահարությունները Բուլղարիայում և Արևմտահայաստանում։ «Մասիսը» նկատում էր, որ բուլղարական և հայկական թերթերն ունեն թեմատիկ ընդհանրություն՝ Բուլղարիայից ստացված թղթակցությունները «Հայաստանի գավառներեն եկած նամակներուն գրեթե ընդօրինակությունն են հարստահարությանց մասին»¹⁵⁷։ Իսկապես, Կ. Պոլսում տպագրվող հայ և բուլղարական մամուլի նյութերը այս շրջանում աչքի էին ընկնում ազգային իրավունքների համարձակ պաշտպանությամբ։ Ի դեպ, մայրաքաղաքի բուլղարական թերթերի մի մասը տպագրվում էր հայկական տպարաններում¹⁵⁸՝ գործնական որոշ հող հարգարելով լրագրողների մտավոր շփումների համար։

Նույն թեմայով էին գրում նաև Կ. Պոլսի և Զմյուռնիայի եվրոպական թերթերը. այսպես, Բ. դռան վրա անգլիական քաղաքականության արդյունավետ ճնշումն ապահովելու նպատակով «Լեվընդ հերալդը» անդրադառնում էր խաղաղ բնակչության նկատմամբ թուրքական զորքերի շարագործություններին՝ Բուլղարիայում, տուրքերի սաստկացմանը և այլն։ Այդ կասեցնելու համար տպագրական տեսչությունը 1875 թ. դեկտեմբերի 9-ին հրապարակված ծանուցմամբ դատապարտում էր մամուլի շեղումները պաշտոնական տեսակետից¹⁵⁹։ Դրանից անմիջապես առաջ, նոյեմբերի 22-ին մեկ ամսով խափանվեց Հ. Պարոնյանի «Թատրոնը»՝ Մուշում կատարված շարագործությունները մերկացնելու համար։ Հ. Պարոնյանը «Մասիսից» արտատպեց Կարինից ստացված նամակի տեքստը և դրան կցեց սեփական դիտողությունները։ «Առանց ցասման գրել վնասակարի մասին՝ նշանակում է տխուր գրել»¹⁶⁰,—նկատում էր Վ. Ի. Լենինը։ Հ. Պարոնյանի հրապարակախոսության ներգործուն ուժը դրսևորվում էր այդպիսի ցասկոտ մերկացումների մեջ։ Այս անգամ նրա խոսքը թեև ուղղվում էր տպագրական տեսչությանը, բայց փաստորեն հասցեագրված էր Մշո տեղական իշխանություններին և Բ. դռանը։ Հրապարակախոսի մերկացումներում ուրվագծվում է ամբողջ Արևմտահայաստանի թշվառ կացությունը բռնակալության պայմաններում, դիպուկ կերպով ցուցադրվում ժողովրդի տառապանքները խորացնող հանցավոր կառավարության պատկերը։ Իր

անկեղծությամբ և քաղաքացիական արիության ուժով Պարոնյանի այս ելույթը արևմտահայ դեմոկրատական հրապարակախոսության բնորոշ օրինակներից է: Հոգվածի ենթատեքստում շատ որոշակիությամբ ընկալվում է շարագործներին հրահրող և նրանց հանցակից կառավարության նկատմամբ ժողովրդի մշակելիք վերաբերմունքը: Եթե «բարեխնամ կառավարության՝ գավառաց մեջ գտնված շարախնամ կուսակալներն անկարող ըլլալով հարստահարիչները զսպելու՝ ոճրագործությանց տեսարանին առջև նարկիլե քաշելով կզվարճանան», ապա պարզ է, որ ժողովուրդը պետք է ընդդիմության միջոցներ պատրաստի իր պաշտպանության համար—այսպիսին է Պարոնյանի հարցադրման տրամաբանական պատասխանը: Ընդ որում, ընթերցողին այլ եզրակացությունը պետք է մղեր նաև «բարեխնամ կառավարություն» պաշտենական ձևակերպմանը հրապարակախոսի համադրած «չարախնամ կուսակալներ» որակումը: Կուսակալներն իրենք հենց ներկայացնում էին կառավարությունը, ուստի նրանց տված մակդիրով Պարոնյանը սպանիչ սատիրայի էր ենթարկում կառավարության բարյացակամության հետ կապված ամեն մի սպասելիք և իրերն անվանում իրենց իսկական անունով: Շատ տպավորիչ էր նաև «Թատրոնում» նամակի տպագրությունը սգո եզրագծերի մեջ առնելը: Հրապարակախոսը դրանով առարկայորեն ցուցադրում էր ժողովրդի աղետալի վիճակը բարբարոս կառավարության բռնությունների ներքո՝ ի հակադրություն արևմտահայերի ապահովության ու բարօրության վերաբերյալ պաշտոնական հավաստիացումներին¹⁶¹:

Տպագրական տեսչությունը շտապ արձագանքեց հոգվածին ու նամակի տպագրությանը: «Թատրոնին» առաքած ծանուցման մեջ Մուշից ստացված նամակի բովանդակությունը նա բնութագրեց իրրև «թշնամական», լի՝ հերյուրանքներով ու չափազանցություններով, իսկ Պարոնյանի մեկնաբանությունները՝ դրանց վրա հենված ծայրահեղություններ¹⁶²:

Ըստ էության, «Թատրոնի» խափանման պատճառը սոսկ նամակի տպագրությունը չէր, թեև տպագրական տեսչության ծանուցման մեջ հիմնական մեղքը վերագրվում է նամակի բովանդակությանը: 60-ականի վերջերից նման նամակներ քիչ չէին տպագրվել արևմտահայ մամուլում՝ դառնալով կամ խափանման պատճառ, կամ էլ ոչ մի հետևանք չթողնելով, նայած թե տվյալ ժամանակաշրջանում ինչ չափերի էր հասնում տպագրական տեսչության ակտիվությունը: Վերահիշյալ նամակը «Մասիսը» տպագրել էր առանց որևէ հետևանքի կամ տպագրական

տեսչությունն որևէ արձագանքի: Կ. Ությունյանը իր կողմից խորհրդածություններ չի հավելել նամակին, միայն հրավիրել է «պատրիարքարանի ու բարեխնամ կառավարության ուշադրությունն ու գթությունը»: Ինչպես տեսանք, Պարոնյանը հենց ցույց էր տալիս, թե իրականում ինչ արժեք ունի այդ «բարեխնամ» հորջորջումը, ուստի նրա մեկնաբանությունների մեջ էլ պետք է որոնել խափանման պատճառը:

Խափանելով և լուծության դատապարտելով կայսրության թունավոր պալարները բացահայտող հրատարակությունները, տպագրական տեսչությունը 1875 թ. վերջին և 1876 թ. սկզբին մի կարճ ժամանակ դադարեցրեց մամուլի դեմ ուղղված իր աղմկալի հալածանքները: 1875 թ. վերջին Աբդուլ Ազիզը հրապարակեց ֆերման, այնուհետև իրադե, որտեղ կրկնվում էին թանգիմաթի՝ 1839 և 1856 թթ. հանդիսավոր հավաստիացումները հպատակների իրավահավասարության, անձի ու կայքի ապահովության, ինչպես և վարչական բարենորոգումների վերաբերյալ¹⁶³: Իրադրության զարգացումը պետք է ցույց տար, որ Աբդուլ Ազիզը այդ քայլին դիմել է դիվանագիտական նպատակով, որպեսզի հանդարտեցնի ապստամբության թափը Բալկաններում, և մյուս կողմից՝ տերությունների արդեն ձևավորվող միջամտությանը Բոսնիայի և Հերցեգովինայի գործերին¹⁶⁴: Համենայն դեպս, երկրի վարչական ընդհանուր բարենորոգումների խոստումը խթանեց խնդրին առնչվող՝ գավառական կյանքը ներկայացնող նոր հրապարակումների ալիքը: «Մասիս» և «Լրագիր» թերթերը հողվածներ տպագրեցին Մարաշի կառավարչի բռնությունների մասին, որ նա գործադրել էր տեղի հայ չքավոր բնակչության դեմ: Սրանք բանտարկվել էին հարկի մնացորդները (բեքայա) չվճարելու համար, մինչդեռ դրանք արդեն վերացվել էին սուլթանական հրովարտակի ուժով: Հանիրավի բանտարկվածները դիմել էին կառավարչին՝ ազատվելու համար, բայց մերժում էին ստացել¹⁶⁵: Այս կառավարիչը ամեն կերպ խրախուսում էր մահմեդականությունը ընդունած քրիստոնյաներին («հանդիսիվ ու տավուլ-զուռնայով հրապարակներեն կանցըրեն երեկիներուն տները՝ ղրկելով պարգև ստանալու») ¹⁶⁶: Խարբերդի, Վանի, Մուշի, Բաղեշի և այլ վայրերի օրինակով հայ մամուլը ցույց էր տալիս, որ 1875 թ. հաթթը ոչ մի նշանակություն չի ունեցել գավառական զանգվածների տնտեսական ու իրավական դրության բարելավման համար: Հարկերի հավաքումը կանոնավորելուն ուղղված՝ Բ. դուան որոշումների ամբողջ սնանկությունն էր վերհանում նաև «Մասիսում» տպագրված Բագրեանդի վանահոր նամակը: Բարենորոգումների փոխարեն, զրում էր նա, օրավուր սաստկանում են ան-

կարգություններն ու ավարառությունները: Տեղական կառավարությունը համագործակցում է քուրդ ցեղապետ Միրզայի հետ: Գյուղացիների բողոքը անտեսվում է տեղական իշխանությունների կողմից, իսկ բողոքողներին սպառնում է թալանչիների վրեժխնդրությունը¹⁶⁷:

Անհրաժեշտ է նկատել, որ այս բնույթի հրապարակումներով «Մասիսը» երբեք է արմատական նպատակներ չի հետապնդել, այլ սոսկ հետամտել է պատրիարքարանի և Բ. դռան ուշադրությունը հրավիրել անողորմ հարստահարումների վրա: Հայ գավառի վիճակի բարելավումը «Մասիսը» միշտ էլ առնչել է վարչական բարենորոգումների հետ և թշնամաբար վերաբերվել զինված պայքարի ու ապստամբության ամեն մի ծրագրի: Նրա խմբագիրը հավատում էր Թուրքիայի բարենորոգման հնարավորություններին, որ կատարվելու էր եվրոպական քաղաքակրթության ու քաղաքականության ազդեցության շնորհիվ: Այս իմաստով սկզբունքային տարբերություն կա «Մասիսի» և «Մեղվի» ու «Թատրոնի» միջև: Հ. Պարոնյանի պարբերականները չէին թաքցնում, որ ոչ մի պատրանք չունեն թուրքական բռնակալության թուլացման կամ բարվոքման ապագայի հանդեպ, և այս դիրքորոշումը նրանց էջերում արտահայտվում էր սատիրական մերկացումների միջոցով:

1876 թ. մարտ-ապրիլ ամիսներին տպագրական տեսչությունը ավելի հաճախադեպ դարձրեց պարբերականների խափանումները: Տպագրական վերատեսչի պաշտոնում Սայիդ Մեհմեդ բեյին փոխարինեց Համդի բեյը: Առաջինին Ա. Արփիարյանը բնութագրում է իբրև լիբերալ հակումների տեր մի պաշտոնյայի, որը ջանում էր «մամուլի շատ զգալի ընել չի տալ անոր վրա դրված լուծին ամբողջ ծանրությունը»¹⁶⁸: Իսկապես, նրան փոխարինած նոր վերատեսուչը իր մասն ունեցավ տպագրական տեսչության ցուցաբերած եռանդի մեջ: Հրապարակվեցին ազդեր՝ դարձյալ ուղղված մամուլի տեղեկատվական նախաձեռնության դեմ: Մարտին տպագրված մի ազդում հերքվում էին պարբերականների տեղեկությունները Սերբիայում բարձրացող ռազմական տրամադրությունների մասին: Այս նույն ժամանակից տպագրական տեսչությունը կայսրության տարածքում հրատարակվող թերթերի ու ամսագրերի հաճախ հակասական, գրեթե չվերահսկվող տեղեկատվությանը սկսեց հակադրել իր իսկ ստեղծած հորինածո լուրերը՝ պաշտոնական գեզինֆորմացիան: Բալկանյան ժողովուրդների ապստամբության և դրան հետևած՝ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին

տպագրական տեսչությունը լայնորեն կիրառում էր տեղեկատվության այնպիսի ձև, որը խեղաթյուրում էր հավաստի իրողությունները ռազմաճակատներում և ներկայացնում Բ. դռանը գոհացնող բովանդակությամբ:

Ոչ մի ժամանակ օսմանյան գրաքննությունը լիովին անգործության չի մատնվել. անգամ այն կարճ ժամանակահատվածներում, երբ տեսչությունը թվում է, դանդաղորեն էր արձագանքում մամուլի տրամադրություններին, այսուհանդերձ, պատժիչ մեքենան չէր դադարում գործելուց: Նույն 1876 թ. փետրվարին, գրաքննության համեմատաբար «անհողմության» ժամանակ խափանվեցին Ա. Ճեվահիրճյանի «Լուսինը» (հրատարակվում էր 1876 թ. հունվարից) և «Լրագիրը», ընդ որում, «Լուսինը» խափանվել է ընդմիջտ, մեզ անհայտ պատճառներով: Համենայն դեպս, «Լուսինը» հաստատուն կերպով չի սկսել իր լրագրական ուղին. «Մասիսը» գրում էր, թե այդ թերթը «արդեն ծագած օրեն կասկած կար բոլորովին խավարման հանդիպելուն»¹⁶⁹:

Հաջորդ ամսին տպագրական տեսչությունը հարվածն ուղղեց ընդդիմադիր թուրքական մամուլի վրա, որի էջերում վերստին ուժեղացել էր «նոր օսմանների» գաղափարական ազդեցությունը: Կառավարությանը անհաճո նյութերի տպագրության պատճառով խափանվեցին «Հեյալը», «Չայլակը» և «Իսթիկբալը», որոնք «անբարոյական ծաղրանկարներ» էին տպագրել¹⁷⁰: Իշխանությունները ակնհայտորեն ձգտում էին թուրքական մամուլը հրել դեպի հետ, խրատական-ուսուցողական այն ուղին, որով ընթացել էր նա տասնամյակներ շարունակ¹⁷¹:

Հայ մամուլի դեմ 1876 թ. գարնան սկզբին տպագրական տեսչությունը իր գործողությունները հիմնականում ծավալել է ազգային վարչության, մասնավորապես կղերական մարմինների միջոցով և սրա պատրաստակամության պայմաններում: Գաղափարական կյանքի ու իրականության, հարստահարությունների վերաբերյալ թղթակցություններին տպագրական տեսչությունը, որքան էլ զարմանալի թվա, այս ժամանակաշրջանում նայում էր մատների արանքով: Դա բացատրվում է Բալկաններում տերությունների քաղաքական միջամտություններին հակադրվելու գործելակերպով, որին դիմել էր կառավարությունը: Ապրստամբած դանուբյան վիլայեթներում տերությունների առաջարկած ինքնավարությանը Բ. դուռը շարունակում էր հակադրել ընդհանուր բարենորոգումների անիրական, բայց և ժամանակ շահելու տեսակետից իր համար չափազանց շահավետ գաղափարը¹⁷²: Հայ մամուլի էջերում գաղափարական հարստահարումների ցուցադրումը այս իմաստով Բ. դռան

համար կարող էր օգտագործվել իրեն փաստարկ՝ ընդհանուր բարենորոգումների օգտին: Արևմտահայաստանի թշվառ կացության ցուցադրումը, այս մտայնության համաձայն, պետք է համոզեր Բ. դուան քաղաքական ընդդիմախոսներին, որ բարենորոգումների կարիք են զգում ոչ միայն դանուրյան վիլայեթները, այլև կայսրության փոքրասիական տիրույթները: Դրանով իսկ պետք է ապացուցվեր ընդհանուր բարենորոգումների անհրաժեշտությունը, որ ձգտում էր հիմնավորել Բ. դուռը միայն Բալկաններում բարենորոգումներ պահանջող տերությունների առջև: Այս առթիվ Ա. Արփիարյանը նկատում է. «Հետաքրքրական երեւիլով էր, որ այն պլանին, երբ կառավարությունը չէր ուզեր որևէ լուրջ բարեկարգություն մտցնել Պուլկարիո մեջ, հայ մամուլին կթուլլատերվեր Հայաստանի համար ընդարձակ պահանջումներ ընել»¹⁷³: Կառավարության այս քաղաքականությունը բնութագրելիս Արփիարյանը նկատի ունի մասնավորապես 1876 թ. վերջը և 1877 թ. սկիզբը, երբ Կ. Պոլսում գումարվել էր դեսպանախորհուրդը՝ Բալկանների հարցը վճռելու համար, սակայն անվիճելի է, որ 1876 թ. սկզբից մինչև հոկտեմբեր, այնուհետև ընդհուպ մինչև 1880-ականի սկիզբը արևմտահայ մամուլն անընդհատ անդրադարձել է գավառի աղետներին:

1876 թ. մարտին տպագրական տեսչությունը «կրոնական ազատության արդար օրենքի» վկայակոչումով մամուլին արգելեց տպագրել հակակղերական բովանդակության նյութեր, ընդ որում՝ սպառնալով «մշտենքենավոր դադարմամբ», որ խիստ ծանր սպառնալիք էր և դրանով իսկ մատնում էր 1864 թ. մամուլի օրենքի ոտնահարման նոր իրողությունը: Այս որոշմամբ հպատակ ժողովուրդների մամուլը զգալի չափով հանձնվում էր ազգային վարչությունների հսկողությանը: Կ. Պոլսի հայ կղերը շահապաղեց օգտվելու իրեն ընձեռված այդպիսի հնարավորությունից: Մի քանի օր անց «Ղալաթիո օճախի» կղերականները, ինչպես և Հ. Տատյանը, վեց ամսով խափանել տվեցին Զմյուռնիայի «Արևելյան մամուլը»: Պատճառը հանդեսի փետրվարի համարում տպագրված Շահնուրի (Մ. Մամուրյան) հերթական թղթակցությունն էր, որտեղ խիստ դատապարտվել էին Խ. Նար-Պեյը, Խ. Ալըգյանը և Ամբրոսիոս եպիսկոպոսը՝ «ազգակուլ քաղաքականության» գործիք դառնալու համար¹⁷⁴: Ըստ երևույթի, Մամուրյանը սրանց մեղադրում էր կաթողիկոսից ներշնչումներ ստանալու կամ Ազգային վարչության ու պատրիարքի դեմ ոտնձգություններ անելու հարցում: Համենայն դեպս, Ն. Վարժապետյանին ևս Մամուրյանը կշտամբում էր նշված կղերականներին հանդուրժելու և նրանց հետ հաշտվելու համար: Վերջիններս, սա-

կայն, դրանից հետո բողոքեցին Բ. դռանը, որը շտապեց կատարել նրանց ցանկությունը՝ «Արևելյան մամուլին» ներկայացնելով «հայ ազգի կրոնական պաշտոնավորաց դեմ անպարկեշտորեն և հարձակողական ոճով նամակ» տպագրելու մեղադրանք¹⁷⁵։ Պարբերականը խափանված մնաց երեք ամիս՝ կրելով պատժաշափի միայն կեսը և վերահրատարակվելով հուլիսին։ Ժամկետից շուտ նրա վերահրատարակմանը նպաստել էին Գր. Օտյանը, Մ. Աղաբեկյանը և մի քանի այլ անձինք, որոնք, ըստ էության, պաշտպանում էին Մամուլյանի տեսակետը նշված հակասությունների մեջ։

Մ. Մամուլյանը նկատել էր տպագրական տեսչության մի գործելակերպը՝ մամուլի հսկողությունը մասամբ ազգային իշխանություններին հանձնելը, որը, նրա կարծիքով, «նորանշան երևույթ մ'է սահմանադրության հաստատութենն ի վեր (նկատի ունի արևմտահայերի ազգային սահմանադրությունը,— Ա. հ.)»¹⁷⁶։ Դիտողությունը ճիշտ չէր այն իմաստով, որ դեռևս 1860-ական թթ. թուրքական իշխանությունները քանիցս օգտագործում էին պատրիարքների, կրոնական ու քաղաքական ժողովների ջանախնդրությունը՝ հայ մամուլը ճնշելու համար։ Իրավական տեսակետից ևս Բ. դուռը կղերին լուրջ առավելություններ էր տալիս մամուլի նկատմամբ՝ վերջինիս վերապահելով բացառապես պատասխանողի դեր։ 1864 թ. դեկտեմբերի 31-ի մամուլի օրենքի 31-րդ հոդվածով նշվում էր, որ «տեղության մեջ պաշտված կրոնքներուն մեկի դեմ թշնամած դատաստանը նույն կրոնի վերաբերյալ կրոնական իշխանության կողմնե գանգատ եղած ժամանակ ի պաշտոնե պիտի հրամայվի»¹⁷⁷։ Ոստիկանական անվերապահ իշխանության պայմաններում այդպիսի վերաբերմունքը կարող էր մեկնաբանվել ցանկացած ձևով՝ հօգուտ կրոնական իշխանությունների կամ որ նույնն է՝ կրոնավորների։ Իրավացի էր «Մասիսում» «Հրանտ» ստորագրող զմյուռնացի հեղինակը, երբ «Արևելյան մամուլի» խափանման առթիվ նկատում էր, որ տպագրական տեսչությունը կրոնավորներին մամուլի քննադատությանից պատվարելով, քաջալերում է նրանց՝ անպատիժ շարունակել իրենց արատավոր գործերը¹⁷⁸։

«Արևելյան մամուլը» խափանելու պահին Խ. Նար-Պեյը պարբերականների դեմ պայքարի զգալի փորձ ուներ. դրանից առաջ նա տեական ժամանակ և անմաքուր միջոցներով պայքարել էր Հ. Պարոնյանի «Թատրոնի» դեմ։ Նույն՝ 1876 թ. փետրվարին նրան հաջողվեց երեք ամսով խափանել տալ «Թատրոնը», այն բանից հետո, երբ Պարոնյանը տպագրեց «Ամուսնական դատ մը և անոր պաշտպանը» ֆելիետոնը։ Այս-

տեղ երգիծաբանը մերկացրել էր Նար-Պեյի ինքնագլխությունը ամուսնական մի դատի առթիվ, եպիսկոպոսի՝ իբրև դատաստանական ժողովի անդամի կասկածելի համակրանքները այդ դատը կնոջ օգտին լուծելիս: Պարոնյանը ծանակում էր Նար-Պեյի ապօրինի գործելակերպը, արհամարհանքը կրոնական ու քաղաքական ժողովների որոշումների հանդեպ, սրանցից պահանջում էր արդարացի և գործուն միջամտություն՝ նրա կամայականությունների դեմ:

Իր սովորության համաձայն, Պարոնյանը շարունակեց մերկացումները մինչև վերջ: Մայիսի վերջին վերահրատարակելով «Քատրոնը», նա տպագրեց «Երեք ամիս դադարում» խմբագրականը, դարձյալ հարվածելով Խ. Նար-Պեյին. «Ինքզինքնիս արդարացնելու համար,—գրում էր Պարոնյանը,—երկար-բարակ բացատրությանց մտնելու հարկ չենք տեսներ, նախ՝ որովհետև պետք չունինք... Ուստի հորեն սրբազանի՝ հառն ժողովո որոշմանը դեմ գործած ապօրինի սովորությունն անգամ մ'ալ պաշտոնական գրերով ցույց տալով կշատանանք»¹⁷⁹: Եվ անդրդվելի երգիծաբանը բերում է փաստեր՝ կնահաճո կղերականի գործողությունների վերաբերյալ:

1876 թ. ապրիլի վերջին և մայիսի սկզբին տպագրական տեսչությունը լիովին արտահայտում էր մեծ վեգիր Մահմուդ Նեզիմ փաշայի նոր և խիստ վերաբերմունքը մամուլի նկատմամբ: Այս շրջադարձը պայմանավորված էր Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական դրության ծանրացումով: 1876 թ. ապրիլին Բուլղարիայում բռնկվեց ապստամբություն ընդդեմ թուրքական լծի, սպասվում էր Սերբիայի պատերազմի մեջ մտնելը Թուրքիայի դեմ և ի լրումն այս ամենի՝ պատրաստվում էր «Բեռլինի մեմորանդումը» (մայիսին, որը տերությունների կողմից պետք է պարտավորեցներ Թուրքիային, որպեսզի նա բանակցեր ապստամբների հետ)¹⁸⁰: Օսմանյան պաշտոնական գաղափարախոսությունը բարդացող իրադրությանը ոչինչ չէր կարող հակադրել, բացի կառավարության և կայսրության ժողովուրդների կարծեսյալ «միասնության և համաձայնության» հավաստիացումներից: «Կուրիեր դ'Օրիենտ» ասելով, կառավարության կողմից հատուկ ծանուցում էր հրապարակվելու «համընդհանուր եղբայրության» մասին և պատժի սպառնալիքով մամուլին կոչ էր արվելու հետևել այս տեսակետին: Կառավարությունը ավելի քան հակված էր խեղաթյուրելու երկրում տիրող իրական կացությունը: Հենց այս միջոցներին էր, որ Սալոնիկում պոռթկաց մահմեդական մոլեռանդությունը. ամբոխը սպանեց ֆրանսիական և գերմանական հյուպատոսներին, որից հետո տազնապահար տերությունները ռազ-

մանավեր ուղարկեցին Սալոնիկ¹⁸¹, Թուրքական մամուլը բռնեց բացահայտ շովինիզմի ուղին և հրահրում էր կրոնական ֆանատիզմը: Դրության բարդացումից ծայր աստիճան անհանգստացած Բ. դուռը մամուլին արգելեց խորհրդածություններ տպագրել «ներկա պարագաներուն և Բ. դռան քաղաքականությանը վրա»¹⁸²: Միմյանց հետևող սպառնալի ծանուցումներով տպագրական տեսչությունը հող էր նախապատրաստում մամուլի անկախության վերջին նշանները վերջնականապես ջախջախելու համար: Վերջին ազդի հրապարակումից մի քանի օր անց, մայիսի 11-ին մեծ վեզիրը մտքրեց ժամանակավոր նախնական գրաքննություն: Թերթերի արտոնատները պարտավոր էին նախքան տպագրությունը՝ փորձանմուշները ներկայացնել տպագրական տեսչություն: խախտողներին սպառնում էր անպայման խափանումը: Ծանուցման մեջ ընդգծվում էր «ներկա պայմանների յրջությունը» և պարբերական հրատարակությունները խիստ կարգուկանոնի ենթարկելու հարկը: Նախնական գրաքննություն էր սահմանվում ամբողջ կայսրության սահմաններում¹⁸³,

Որոշումը բռնեց վրդովմունք առաջացրեց խմբագիր-հրատարակիչների շրջանում: Տարերային այդ բողոքը դրսևորվեց անհատական ընդդիմության ցույցերով: Հայերեն թերթերից «Լրագիրը» հայտնեց, որ դադարեցնելու է իր հրատարակությունը, որովհետև օրաթերթի համար գրեթե անհնարին է փորձանմուշները նախապես Բ. դուռ տանել և տպագրվել՝ գրաքննության միջամտությունից հետո¹⁸⁴: Թուրքական թերթերի մի մասը որոշման հաջորդ օրը, մայիսի 12-ին լույս տեսավ իր ծավալի կեսի չափով, մի մասը՝ սպիտակ, շտպագրված էջերով, իսկ մյուս էջերում՝ միայն ծանուցումներ կամ գեղարվեստական գործեր: «Բասիրեթը» տեղեկացրեց, որ տպագրական մեքենայի պատճառով մի քանի օր չի հրատարակվելու¹⁸⁵: Բացահայտ բողոքը հայտնեցին հունական «Նեոլոգոս», «Թրակի», «Մոմոս» օրաթերթերը՝ դադարեցնելով իրենց հրատարակությունը:

Նախնական գրաքննությունը, սակայն, չհասցրեց գործողության մեջ մտնել՝ հուրախություն խմբագիր-հրատարակիչների և լրագրողների: Զինված սոֆիստների (մեղրեսների սովորողներ) ցույցը մայիսի 11-ին՝ ուղղված կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության դեմ, Աբդուլ Ազիզին հարկադրեց պաշտոնանկ անելու մեծ վեզիրին և շեյխուլ իսլամ Հասան Ֆեհմիին¹⁸⁶: Նոր մեծ վեզիր նշանակվեց Մյուլթերիմ Մեհմետ Ռյուշտյուն, որը վերացրեց նախնական գրաքննությունը: Զինված սոֆիստների ցույցը կայունացրեց «նոր օսմանների» դրու-

թյունը և նպաստեց նրանց քաղաքական ազդեցության աճին: Սրանց գործողությունների ակտիվացումը պայմանավորված էր Թուրքիայի ներքին գործերին տերությունների միջամտությունը կանխելու և երկրում սահմանադրություն հաստատելու լիբերալ ծրագրերով¹⁸⁷: «Նոր օսմաններին» համակիր թուրքական թերթերն ու եվրոպական մամուլը բացահայտորեն սկսեցին նյութեր տպագրել երկրում սահմանադրություն հաստատելու օգտին: Այդպիսի տրամադրություններ, են արտացոլվել նաև հայ մամուլում: «Լուրջ և օրինավոր շարժման» կողմնակից «Մասիսը»¹⁸⁸ և այլ թերթեր գոհունակությամբ ընդունեցին նախնական գրաքննություն վերաբերյալ որոշման վերացումը: Կամովին դադարած թերթերը մայիսի կեսին վերսկսեցին հրատարակվել¹⁸⁹:

«Նոր օսմաններին» աճող ազդեցությունը, սակայն, չէր նշանակում, թե օսմանյան պահպանողականությունը կորցրել է իր ուժն ու ներգործությունը քաղաքական կյանքում: Թուրք սահմանադրականները մի հայտնի չափով համագործակցում էին պահպանողական շրջանների հետ՝ երկյուղելով իրենց ծրագրերը ղեմկրթատական խավերի օգնությամբ իրականացնելու ուղուց¹⁹⁰: «Նոր օսմաններին» հուզող առաջնակարգ հարցերից մեկը երկրի ներքին գործերին տերությունների միջամտությունը վերացնելու խնդիրն էր: Դա էր պահպանողական վերնախավի հետ նրանց միավորող կարևոր ընդհանրությունը, որ միտում էր հեռուն. «Նոր օսմանները» համամիտ էին կայսրության ամբողջականությունը և անկախությունը պահպանելուն ուղղված՝ թուրքական հետադիմության ավանդական եղանակներին ու միջոցներին: Դա նշանակում էր երկրի ներսում լիովին ոչնչացնել ոչ մահմեդական ժողովուրդների ինքնավարության ձգտումները, պրոպագանդել մահմեդականության գերազանցությունը մյուս բոլոր կրոնների նկատմամբ և սրբագործել հպատակ ժողովուրդների ազգային ու տնտեսական ճնշումները: Օսմանյան պահպանողական վերնաշերտի և «Նոր օսմաններին» օրհնանքով էր, որ շարունակվում էր վաղեմի բռնապետական քաղաքականությունը նաև մամուլի հանդեպ: Անարգել ծավալվում էր մահմեդական մոլեռանդությունը՝ իրրև հայրենիքի պաշտպանության գրեթե միակ, տիրապետող զգացում: Սահմանադրական գաղափարների նկատմամբ հետևողական կամ հեղհեղուկ համակրանքը ժամանակի թուրքական մամուլի էջերում ուղեկցվում էր մահմեդականների անվիճելի գերազանցությունը հավաստող ելույթներով: Այսպես, «Բասիրեթի» կրոնական զգացումները նրան մղեցին բացահայտ ստախոսության. իբր, էնկյուրիի առաջնորդ Արիստակեսը տեղի երեւի հայ ընտանիքների կոնանց հետ Հաջի Բայ-

րամ մզկիթում մասնակցել է մահմեդական կրոնական արարողությանը¹⁹¹։ Եթե «Բասիրեթի» խմբագիր Ալի էֆենդին սուտը քողարկում էր «կրոնական համաձայնության և եղբայրության» երեսպաշտ դատողություններով, ապա «Մաբաճը» անցնում էր բացահայտ կեղծիքի, տեղեկացնելով, թե իբր Ճանիկի հայերը խռովությունների պատճառ են դարձել և նախահարձակ են եղել շերքեզների հետ ընդհարվելիս։ «Մասիսը» հերքում էր այդ ստահոգ լուրը¹⁹²։

Օսմանյան հետադիմությունը և Աբդուլ Ազիզը ընդդիմացան երկրի քաղաքական կյանքում որևէ փոփոխություն մտցնելու՝ սահմանադրական շարժման պահանջներին։ Այս պատճառով սուլթանը գահազուրկ արվեց և սպանվեց կամ ինքնասպան եղավ Զրադանի պալատում։ Մայիսի 30-ին գահ բարձրացավ Մուրադը, որի գահակալության հետ «նոր օսմանները» կապում էին իրենց ժրագրերի իրականացումը։ Նոր սուլթանը իր հրովարտական որոշակի խոստումներ էր տալիս երկրում սահմանադրություն հաստատելու վերաբերյալ՝ իր բռնելիք ուղեգիծը հռչակելով բոլոր հպատակների ազատության և երկրի առաջադիմության ապահովումը¹⁹³։

«Նոր օսմանների» անարյուն հեղաշրջումը, մասսաներից նրանց կտրված լինելը և տագնապը նույն սահմանադրական շարժման ծավալումից՝ զգույշ գործեակերպի մղեց նրանց։ Բնորոշ էր նրանց վերաբերմունքը նաև մամուլի նկատմամբ՝ Մուրադի գահ բարձրանալուց հետո։ Հավասարապես խստություններ կիրառվեցին և այն թերթերի դեմ, որոնք շտապեցին ողջունել հեղաշրջումը և քննադատել հին ռեժիմը, և նրանց դեմ, որոնք անբավականությամբ ընդունեցին սահմանադրականների հաջողությունը։ Հանրության, հասարակական կարծիքի հետ հաղորդակցվելիս «նոր օսմանների» վեհերոտ դիրքը պետք է դրսևորվեր նախ նրանով, որ «Մեդենիյեթ» և «էլ-ջեմալիք» թերթերը սպառնալի նախազգուշացում ստացան նախորդ եպարքոս Նեդիմ փաշայի դեմ թշնամական հարձակումների համար¹⁹⁴։ Ոստիկանությունը ձերբակալեց «Բասիրեթի» խմբագիր Ալի էֆենդուն՝ նախորդ արքունիքին լրտեսելու մեղադրանքով¹⁹⁵։ Մյուս կողմից, հունիսին երեքական ամսով խափանվեցին «Վաթըթը» և «Սադակաթը»․ առաջինը՝ հակասահմանադրական ոգով գրված հոդվածի համար։ Ընդ որում, «Բասիրեթը» և «Վաթըթը» ներկայացնում էին թուրքական լրագրողների այն մասը, որը տարուբերվում էր հին ռեժիմի հանդեպ ունեցած նախասիրությունների և անձնական բարեկեցության համար այդ նախասիրությունները զոհելու երկընտրանքի միջև։ Անսկզբունքայնությունն էր այս պարբերականների

ուղեցույցը, որի բերումով նրանք մի օր սահմանադրութիւնն էին պաշտպանում, մյուս օրը՝ պայքարում նրա դեմ: Դա ցույց է տալիս, որ թուրքական լիբերալ պարբերականների մի մասը ոչ միայն հեռու էր սահմանադրական գաղափարների հետևողական պաշտպանութիւնից, այլև աշխարհայացքի տեսակետից դեռևս հեղհեղուկ էր և անկայուն: Այսպես, իր հակասահմանադրական ելույթի պատճառով եռամսյա պատիժը չլրացած՝ ներում ստանալով, «Վաթրթը» այդ ներումը հատուցեց երեսփոխանական ժողովի եռանդուն պաշտպանությամբ: Հունիսին հակասական հողվածներ էր տպագրում «Բասիրեթը», որը նախ երեսփոխանական ժողով էր պահանջում, ապա հերքում էր իր իսկ պահանջը: «Բայց զարմանալին այն է,—գրում էր «Մասիսը»,—որ «Պասիրեթ»՝ երեսփոխանական ժողովը քրիստոնեից միայն օգտակար կհամարի, և այս պատճառով անոր դեմ կզինի»: Յույց տալով այդ թերթի մորթապաշտութիւնը, «Մասիսը» նկատում էր, որ նա ժամանակին Աբդուլ Ազիզի գահակալության տարեդարձի գիշերը բարձր է համարել կազմեցնելից (ուամազանի 27-րդ՝ նախասահմանության գիշերը, երբ Մուհամեդին, իբր, ի վերուստ, ուղարկվել էր ղուրանը), բայց և առաջիններից էր, որ գահընկեց արված սուլթանին կոչեց «Աբդուլ Ազիզ էֆենտի»¹⁹³:

Լիբերալ հովեր ցույց տվող թուրքական պարբերականները, որ հաջողությամբ կամ անհաջող խուսանալով էին «նոր օսմանների» և օսմանյան պահպանողականության սահանքների միջև, իրենց առավել ապահով էին զգում շարիաթը գնահատելիս: «Բասիրեթը» առաջիններից մեկն էր, որ օգտվեց շարիաթի հանդեպ թուրք սահմանադրականների ցուցաբերած տեսական ակնածանքից: Շարիաթի հմայքից երևակայության ամեն մի սահման ջնջած այդ թերթը պնդում էր, թե այն կարող է իրավական աղբյուր լինել նաև եվրոպական սահմանադրութիւնների համար, քանի որ կատարելապես երաշխավորում է անհատի իրավունքը և ապահովում արդարության գործադրումը¹⁹⁷: «Մշակը» ճիշտ էր նկատում, որ «Բասիրեթը» ի սկզբանե քարոզում է «կրոնական մոլեռանդութիւն և ատելութիւն դեպի եվրոպական ժողովուրդը և գիտութիւնը»¹⁹⁸: 1876 թ. հոկտեմբերին Ալի էֆենդին բացահայտորեն մահմեդական աշխարհին հրավիրում էր կրոնական պատերազմի՝ ընդդեմ ապստամբած Բալկան երկրի: Հ. Պարոնյանը «Թատրոնում» սպանիչ ծաղրի է ենթարկել այդ «պասիրեթճի ժեներալին»՝ հաշվի առնելով, որ նա ներկայացնում է թուրքական ծայրահեղ հետադիմական հասարակական ուժերի մաայնութիւնն ու ձգտումները: «Ալի էֆենտին,—գրում է Պա-

րոնյանը,— արդարև, կերակուրի ասպարեզին մեջ երևելի ժեներալ մ'է, որ արդեն միլիոնավոր բիլավներ յուր դգալին կեր տված է, բայց և այնպես խմբագրական ասպարեզին վրա պաշիպոզուիս զինվոր մը ըլլալով՝ շատ անիրավություններ գործած էր...»¹⁹⁹։ Հենց 1870-ականից էլ սկիզբ է առնում թուրքական մամուլի շովինիստական գրոհը հպատակ ժողովուրդներին, այդ թվում և արևմտահայ մամուլի վրա։ 1880-ականին այն պետք է սերտաճեր օսմանյան պետական քաղաքականության ուղեգծին՝ վերածվելով արևմտահայերի հայրենիք ունենալու և գոյության իրավունքի դեմ ուղղված պրոպագանդիստական միջոցի։

Ակներև է, որ երեսփոխանական ժողովի և սահմանադրության հարցերի քննարկումը «նոր օսմանները» վերապահում էին միայն օսմանյան վերնախավին՝ ձգտելով կասեցնել կամ կանխել հասարակական կարծիքի մասնակցությունը այդ գործին։ Այս պայմաններում ներքին հասարակության հետ իրենց ունեցած հարաբերությունների, ինչպես և երկրի ներքին ու արտաքին քաղաքականության հիմքը պետք է համարեին բռնության շարունակությունը, որ խոր արմատներ էր նետել օսմանյան ամբողջ պատմության մեջ։ Դրա վկայությունն էր այն, որ մայիս-հունիսին թուրքերը Բուլղարիայում ավերեցին 151) գյուղ²⁰⁰։ «Նոր օսմանների» կառավարության մեջ գտնվելու կամ դրա վրա ազդեցություն գործելու շրջանում, 1876 թ. հունիսից մինչև 1877 թ. փետրվարի սկիզբը ոչ միայն չթեթևացան, այլև առավել անտանելի դարձան հարևարահարումները Արևմտյան Հայաստանում։ Մամուլի անազատ վիճակը այս նույն ժամանակաշրջանի Թուրքիայում ոչնչով չէր տարբերվում նախորդ տարիներից, բացառությամբ սահմանադրության և երեսփոխանական ժողովի շուրջ տպագրված բազմաթիվ նյութերի, որոնցով ողողված էին Թուրքիայում հրատարակվող պարբերականները։ Հայ մամուլում շարունակվում էին տպագրվել Արևմտահայաստանի կացության լուսաբանությանը նվիրված թղթակցություններ, որոնց տպագրությունը այս ժամանակաշրջանում ևս դժվարություն չէր ներկայացնում խմբագիրների համար։ Մամուլի էջերում թափ առնող այս շարժման վրա ցնցուղի սառը ջրի տպավորություն պետք է թողներ պատրիարքի անսպասելի դիմումը՝ ուղղված Բ. դռանը։ Բուն հայ մամուլում տպագրված՝ գավառական դրության օրհասական վիճակը ներկայացնող նյութերը շրջանցելով, պատրիարքը յուրովի էր արձագանքում «միասնական հայրենիքի» դեկտրինային։ «Հայ ազգը,— հայտնում էր պատրիարքը իր շրջաբերականում,— չի կրնար անտարբեր մնալ տերության արդի ծանրակշիռ պարագաներուն մեջ և պարտավոր է անկեղծ օժանդակու-

թյուն մատուցանել: Վասնզի օսմանյան երկիրը պաշտպանել, Հայաստանը պաշտպանել ըսել է, նույն իսկ հայուն կրոնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը, պատիվն ու կյանքը պաշտպանել ըսել է»²⁰¹:

Հազիվ թե հավատարմական այս հավաստիացումները պատրիարքի զուտ սեփական նախաձեռնությունն արդյունքը լինեին: Ն. Վարժապետյանը բավականաչափ իրազեկ էր հայ գավառի աղետալի վիճակի, բնաշխարհի լիկող սոցիալական շարիքի, պանդխտության և դրա ազգային ու սոցիալական պատճառներին: Խրիմյանի պատրիարքության ժամանակ նա, ինչպես նկատեցինք իր տեղում, գլխավորել էր գավառական հարստահարությունների տեղեկագիր կազմող հանձնաժողովի աշխատանքը և յավ գիտակցում էր, որ նման երևույթները ամայացնում են Արևմտահայաստանը, սպառնում բուն ազգի գոյությանը: Շրջաբերականում, մինչդեռ, նա ժխտում է հարստահարությունների կործանարար նշանակությունը և դրանք համարում ոչ թե հոգուն, այլ միայն, «մարմնին վերաբերող» ոչ սպառնալի իրողություններ: Արևմտահայաստանի կացության նենգափոխումը, այլև արևմտահայերի ռուսական կողմնորոշման անգիտացումը շրջաբերականին տալիս էր կեղծ բովանդակություն: Ըստ երևույթին, պատրիարքի այս շրջաբերականի վրա ազդեցություն պետք է թողած լինեին 1876 թ. հունիսին ընտրված կրոնական ու քաղաքական ժողովների անդամները, որոնց մեջ քիչ չէին պետական շրջաններում դիրք և ազդեցություն ունեցող էֆենդիական դասի մարդիկ: Դիշտ է այն կարծիքը, որ սրանք լուրջ ազդեցություն ունեին Ազգային վարչության մեջ²⁰²: Զի բացառվում նաև, որ պատրիարքի վրա ապակողմնորոշող ազդեցություն թողած լինեին սուլթան Մուրադի 1876 թ. հունիսի 2-ի հրովարտակը՝ երկրում արդարություն և առաջադիմություն ապահովող վերափոխումներ անցկացնելու մասին: Բոլոր դեպքերում, պատրիարքի շրջաբերականը արտահայտում էր արևմտահայ աշխարհիկ ու կղերական վերնախավի հետադիմական այն մասին նախասիրությունները, որն իր սոցիալական ու հասարակական շահերը կապակցում էր օսմանյան պետականության հարատևման հետ: Շրջաբերականում ժողովրդի շահերի դավաճանությունը ընդգծվում էր այն իմաստով, որ հրապարակվում էր անտանելի կեղեքումների դեմ բալկանյան ժողովուրդների զինված պայքարի պայմաններում: Բնականաբար, թուրքական կառավարող շրջանները և մոլեռանդ մամուլը չվարանեցին շրջաբերականը որակել իբրև «ընդհանուր հայրենիքի» միասնականությունը նպաստող գործոն:

Պատրիարքի և էֆենդիական դասի հնազանդությունը դրսևորող այդ ակտը վրդովմունքի բուռն արձագանք գտավ արևմտահայ շեմոկրատական զանգվածների ու առաջադիմական մտավորականության մեջ: «Ժողովուրդը ինչ կուզե» հոդվածում²⁰³ Հ. Պարոնյանը ցույց էր տալիս, որ պատրիարքը կառավարությանը հաճույացել է արևմտահայերի վիճակը նենգափոխելու գնով, ծածկելով «այն եղենազորությունները, որոնցմով հայոց ստացվածքն, կրոնքն, կյանքն ու պատիվը բռնաբարված են և կբռնաբարվին»²⁰⁴: Հ. Պարոնյանը չէր հավատում հարստահարությանները վերացնելու գործում կառավարության ոչ միայն հնարավորություններին, այլև ցանկություններին: Այդ ճշմարտության մեջ էլ էա բացահայտում է շրջաբերականի տխուր դերը. եթե բռնությունները գործվում են կառավարության կամքին հակառակ, ապա պատրիարքը դրանով հաստատում է, որ այսուհետև ևս այդ կամքը հաշվի չեն առնվի և բռնությունները կշարունակվեն:

Տպագրական տեսչությունը չհապաղեց պատժել «Թատրոնը» Այս պարբերականի ելույթը խիստ անցանկալի դիտոնանս էր մայրաքաղաքի եվրոպական ու թուրքական թերթերի գոհունակ դիտողությունների մեջ. այդ թերթերը փութով թարգմանել և մեկնաբանել էին շրջաբերականը: Եվրոպական թերթերը կարող էին անդրադառնալ նաև «Թատրոնի» հոդվածին՝ անախորժ պատմություն ստեղծելով օսմանիզմի «հայրենակցության» կեղծ գաղափարը եռանդով շահարկող օսմանյան դիվանագիտության համար: «Թատրոնը» խափանվեց 1875 թ. հուլիսի 31-ից մինչև սեպտեմբերի 29-ը, շուրջ երկու ամսով, թեև պատժաչափը մեկ ամիս էր որոշվել: Հավանաբար, Հ. Պարոնյանը ի վիճակի չի եղել «Թատրոնը» ժամանակին վերահրատարակել²⁰⁵, թեև չի բացառվում, որ իշխանությունները ավելացրած լինեին պատժաչափը:

Արևմտահայ գավառի այդ օրերի առօրյան ինքնին յուրացրում էր պատրիարքի շրջաբերականի սնանկությունը: Կ. Պոլսի սահմանադրական կեղծ ոգևորությունից ու պիտակներից հեռու իրականությունը շարունակում էր անփոփոխ ընթացքը: 1876 թ. հունիսին «Մանգումեի էֆքյարը» տպագրեց Կեսարիայի էվերեք գյուղաքաղաքի հայ բնակչության մղձավանջները բացահայտող պատկերներ²⁰⁶: Դրությունը ոչ մի բանով չէր փոխվել նաև քաղաքաբնակ հայերի համար. հունիսին Կ. Պոլսում մի հայ փաստաբան ընդդիմացել էր թուրքական դատարանի սովորական կեղմանակալ ընթացքին, հիշեցնելով դատավորին, որ դեռևս չի չորացել արդարություն և հավասարություն հռչակող սուլթանական հրովարտակի մեխանը: Դատավորը զայրացել էր՝ «Բանտարկեցե՛ք սա շու-

ներ, որ մեր դեմ կհամարձակի բան ասել»։ Փաստաբանը տեղնուտեղը ձերբակալվել էր²⁰⁷։

Մահմանադրություն հաստատելու թեմայով թուրքական մամուլի աշխույժ քննարկումները, բնականաբար, չէին ազդում մահմեդական ամբոխի մոլեռանդության, քրիստոնյաների հանդեպ նրա ավանդական գերազանցության գիտակցության վրա։ Հունիսի սկզբին ամբոխը, միացած թուրք բեռնակիրներին, ծեծ ու ջարդ տվեց մի քանի տառնյակ հայ բեռնակիրների, ցանկանալով խել սրանց սպասարկած նավամատուցի նավերի բեռնաթափման գործը։ Վրա հասած ոստիկանությունը ձերբակալեց միայն տուժած հայ բեռնակիրներին։ Կ. Պոլսի հայ թերթերը չէին կարող բողոքել. ոստիկանությունը, որը Մահմուդ Նեդիմի վեզիրության ժամանակ ավելի էր ընդլայնել իր լիազորությունները մամուլի վրա, չէր հանդուրժի այդպիսի հանդգնությունը։ Իրողության մասին հայտնեց արեւելահայ մամուլը²⁰⁸։

«Նոր օսմանների» քաղաքական վերելքի ժամանակ մամուլի ծանր լծի թեթեացման պայմաններում որոշ թերթեր թույլ էին տալիս ծայրահեղություններ՝ չարաշահելով իրենց տեղեկատվական հնարավորությունները։ Շահատենչության գալթակղությանը չղիմացավ «Լրագրի» խմբագիր Ն. Թյուլպենտճյանը։ 1876 թ. հունիսին նա իր թերթում տպագրեց Կովկասում հայերի ապստամբության կեղծ լուրը, որն այնուհետև, իբրև սենսացիոն նորություն, տպագրեցին «Մեճմուայը հավատիսը», «Նորագիրը», «Հայրենիքը» և «Լույսը»։ Արևմտահայ լուրջ թերթերը մերկացրին այդ սուտը։ «Մասիսը» նշում էր, որ այդ հորինածո տեղեկությունը և նրա արձագանքները «ընդհանուր ծիծաղ շարժելու փառք ունեցան», և որ դրա հեղինակները ձգտել են «քանի մը լիբալ շահելու հույսով ազգին պատիվը, կյանքն ու արյունը խաբեության նյութ ընել»²⁰⁹։ Շահատենչ խմբագիրներին պախարակեց Կ. Փանոսյանն իր «Մանգումեի էֆքյարում»՝ «Ստախոս թերթեր», «Խելոք թշնամին հիմար բարեկամից լավ է» և այլ հոդվածներում²¹⁰։ Ընդ որում, Կ. Փանոսյանի թերթը ծանակել է ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշումներին հակադրվող հետադիմությանը։ Ի պատասխան Փանոսյանի այսպիսի դիրքորոշման, հուլիսի վերջին հետադիմականները խառնազուգում ցուցադրաբար այրեցին «Մանգումեի էֆքյարը» և հարձակում գործեցին թերթի խմբագրատան վրա։ Դեպքերին միջամտած ոստիկանությունը ձերբակալեց իրեն՝ Կ. Փանոսյանին, հուլմունք ու խռովություն հրահրելու մեղադրանքով։ Փանոսյանը և նրա հակառակորդները վեճը շարունակեցին դատարանում. «Մշակի» թղթակիցը հայտնում էր, որ Փանոս-

յանը «հաղթող հանդիսացավ իր ճշմարիտ գրությանց միջնորդությամբ» և անսպարտ ճանաչվեց դատարանի կողմից²¹¹։

Հ. Պարոնյանի «Թատրոնում» ևս տրված է կեղծ լուրի տարածման պատճառների բացահայտումը, իր «Լրագրավաճառի մը իրարանցումը», «Հավելված «Թատրոնի» ի Դանիել մարգարէ», «Կովկասյան խնդիր» և այլ հոգովածներում Պարոնյանը նշում էր երկու հանգամանք՝ թերթերի խաբեության զոհ դառնալը և ոսկի շահելու տենչը²¹²։ Հետաքրքիր է, որ այդ օրերին պատրիարքարանը վարանում էր հանդես գալու հերքումով. այս առթիվ Պարոնյանը սուր քննադատության ենթարկեց պատրիարքարանի անտարբերությունը՝ «Ժողովուրդը ինչ կուզե» հոգովածով²¹³։ Պետք է կարծել, որ կովկասյան մտաբանության ղեկավարի մասին թերթերը գրել են ոչ առանց էֆենդիական դասի ներշնչումների, որն իր հերթին ձեռնադրում է եղել կառավարությանը՝ շոշափելու արևմտահայերի ուսուսիրական տրամադրությունները։ Իսկ պատրիարքարանի լուրջունը խոսում էր լուրը տարածողներից սահմանազատվելու, բայց և դրան չհակադրվելով՝ պատրիարքի անվճարական դիրքորոշման մասին։ Արևմտահայ առաջավոր հասարակական կարծիքը վճարակասնորեն դեմ դուրս եկավ լրագրության մեջ դեզինֆորմացիայի փորձերին։

Տպագրական տեսչությունը հետաքննություն սկսեց նշված միջադեպի առթիվ։ Օգոստոսին մեկը մյուսի հետևից խափանվեցին «Լույսը», «Նորագիրը», «Լրագիրը», «Մեծմուշկը հավատիսը» և «Հայրենիքը»՝ կեղծ լուրեր տարածելու մեղադրանքով։ Որքան էլ զարմանալի լինե՞ր՝ նախադգուշացում ստացավ «Մանգումեի էֆքյարը»՝ հասարակաց կարծիքը գրգռելու համար²¹⁴։ Անկասկած, Բ. դռան մոտիկ կանգնած էֆենդիներից ոմանք դատարանում կրած պարտությունից հետո գոհացում էին պահանջել, որ և բավարարվել էր։ Մանավանդ, պետք էր հասկացնել տալ, որ կառավարությունը ոչ մի առնչություն չունի նշված խնդրի հետ։

Ուշագրավ է, որ տպագրական տեսչությունը անսովոր եռանդ ցուցաբերեց այս հարցում՝ խափանելով ընդհանրապես այդ լուրին անդրադարձող սլարբերականները։ Այսպես, «Լույսը» չի հաստատել կաթողիկոսի արքայի մասին կեղծ լուրը, ընդհակառակն, դրան վերաբերվել է թերահավատությամբ և հավատ չի բնծայել լուրը տարածող անծանոթ նամակաբերին, ինչպես ցույց են տալիս նրա տպագրած «Անհավատալի զրույցներ ս. էջմիածնա ամեն. հայոց վեհ. կաթողիկոսի վերա» և «Անցք վեհ. կաթողիկոսին» հոգովածները²¹⁵։ Պարոնյանի ծաղրն այս խնդրում վերաբերում է ոչ թե «Լույսին», այլ այն պարբերականներին,

որոնք հորինված կեղծիքը վերագրել են «Լույսին»²¹⁵։ Ակնհայտ է, որ Բ. դուռը ձգտում էր, որքան հնարավոր է, աղմուկ հանել այս հարցի շուրջ՝ ռուսական դեսպանի ուշադրությունը հրավիրելով իր երևութական անկողմնակալության վրա։

Ամբողջ 1876 թ. ամռանը տերությունների հետ դիվանագիտական հավասարակշռություն պահպանելու մտահոգությամբ՝ կառավարությունը ջանում էր կասեցնել ռազմական իրադարձություններին վերաբերող ոչ պաշտոնական լուրերի սպրդումը մամուլի էջերը։ Այս տեսակետից նրան տագնապ էին պատճառում թերթերի հավելվածները, որոնք մեծ մասամբ կաւ ամբողջովին ռազմական լուրեր էին տպագրում։ Կառավարությունը նախ փորձեց արգելել հավելվածներում նման լուրերի տպագրությունը։ Հուլիսին հրապարակված ծանուցման մեջ հայտնվում էր, որ այսուհետև ռազմական լուրերը պետք է հրապարակի ռազմական մինիստրության պաշտոնատունը²¹⁷։ Արգելվեցին ռազմական գործողությունների քննարկումը և դրանց շուրջ մղվող բանավեճերը²¹⁸։ Այս նպատակն էր հետամտում նաև օգոստոսին ծանուցված որոշումը՝ դադարեցնել թերթերի ու ամսագրերի հրատարակության արտոնության շնորհումը։ Այստեղ ասված էր. «Ներկա բացառիկ պարագաներն, որոց մեջ կգտնվի Լուկին և այն պարագաներն հառաջ եկած պարտականությունները չեն կրնար համաձայնիլ այն գրեթե անսահման դյուրությանց հետ, զորս նոր թերթ հրատարակել ուզողները կգտնեն լրագրական կանոնադրության տրամադրությանց մեջ։ Հետևաբար, որևէ նոր լրագիր հրատարակելու հրաման չպիտի տրվի, մինչև որ երկիրը վերստին հանդարտության և բարգավաճմանց կանոնավոր պայմաններուն մեջ մըտնեն»²¹⁹։

Վերը տեսանք, որ Թուրքիայում պարբերական հրատարակելը, մասնավորապես 1867 թ. «Ալիի որոշումից» հետո, կապված էր անսահման դժվարությունների, և ոչ թե «անսահման դյուրությանց հետ», ինչպես կեղծում էր իսկությունը տպագրական տեսչությունը։ Սակայն կեղծ փաստարկի վկայակոչումն ինքնին չարաշուշով էր։ Այս ծանուցմամբ 1864 թ. դեկտեմբերի օրենքը փաստորեն լուրջ աղարում էր գործելուց, քանի որ դրա ամբողջ երկրորդ մասը (պատժական հոգվածները, ինչպես և առաջին մասի 7-րդ հոդվածը, որը նույնպես պատժական մասին է վերաբերում) արդեն 1867 թ. փետրվարից զրկվել էր իրավական ուժից և փոխարինվել ոստիկանական իշխանությունների իրավասությամբ։ Վերահիշյալ որոշումով կասեցվում էր պարբերականների հրատարակության թույլտվության ու պայմանների հարցերը կարգավորող հոդվածները

րի իրավունակությունը (Ա մաս, 1—5 հոդվածներ): Որոշումը ուժի մեջ մնաց մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի վերջը. գոնե, հայ մամուլի վերաբերյալ փաստերը թույլ են տալիս այդ եզրակացությանը հանգելու: 1876 թ. օգոստոսից մինչև 1878 թ. արևմտահայ ոչ մի նոր պարբերականի արտոնություն չի տրվել³⁰:

Մամուլի քաղաքական ինֆորմացիան շարունակում էր դժգոհություն պատճառել կառավարությանը: Սերբիայի ռազմական պատրաստությունները, Թուրքիայի հետ պատերազմի մեջ մտնելու ակնառու նշանները և քաղաքական աճող դժվարությունները նոր կառավարության համար փաստարկ դարձան մամուլի գործողության շրջանակների հետագա սահմանափակման ուղղությամբ: Կառավարության մեջ գերիշխող դարձած պահպանողականության տրամադրությունները, ի հակակշիռ լիբերալների, ուղղվեցին նաև սահմանադրական հիմնարկների մասին տպագրվելիք հրապարակումների դեմ: «Մասիսի» խուսափողական ձեվակերպմամբ՝ «լրագրաց՝ Թուրքիո մեջ երեսփոխանական ժողով մը հաստատելու համար ըրած խորհրդածություններեն և տված լուրերեն ձանձրանալով», կառավարությունը 1876 թ. հունիսին երկու ժանուցում հրապարակեց: Դրանցից մեկն ընդհանրական բնույթի էր, որը փորձում էր սահմանափակել մամուլի ինքնուրույնությունը, իսկ մյուսը հասցեագրված էր «Ստամբուլ» թերթին: «Ընդհանրական ժանուցման» հրահանգները, որոնք ձևակերպված են 1867 թ. «ժամանակավոր որոշման» ոգով²²¹, սահմանում էին.

1. Տերության խորհուրդներուն մեջ տակավին վիճաբանության ներքև եղած անհիմն և անստույգ զրույցներ չհրատարակել:

2. Իրենց թերթին մեջ չժանուցանել այնպիսի եղելություններ, զոր չեն կրնար ի հարկին հաստատել:

3. Ստուգությունը չկրցած հաստատած լուրերու վրա տպագրական տեսչութենե տեղեկություն հարցնել:

4. Զանազան հասարակությանց վերաբերյալ խնդրոց մեջ մտքերը վրդովող ակնարկություններ զգուշանալ:

5. Իրենց թերթերը Թուրքիո ընդհանուր բնակչաց միասնական շահուն ստույգ թարգման ընել²²²:

Ծանուցումը մամուլին պարտադրում էր տպագրել միայն պաշտոնական լուրեր, նյութը համաձայնեցնել տպագրական տեսչության հետ և, ըստ էության, ավելի մեծ կախման մեջ ընկնել նրանից, ինչպես և չցուցաբերել որևէ նախաձեռնություն: «Ստամբուլին» արված նախազգու-

շացմամբ հերքվում էր երեսփոխանական ժողով (կամ խորհրդարան՝ շուրա-ի մեմալիթ) հաստատելու լուրը: Ծանուցումը փաստորեն վերսկսում էր Մահմուդ Նեդիմի հարձակողական ուղեգիրը մամուլի դեմ:

Դրան հետևեց թերթերի խափանումների նոր ալիքը. Անորոշ ժամանակով խափանվեց «Նորագիրը», որը տպագրական տեսչության հարմարագույն թիրախն էր դարձել Օ. Խոճասարյանի խմբագրական պոռթկուն խառնվածքի հետևանքով: Մեծ վեզիրի հրամանով դարձյալ «անորոշ ժամանակով» դադարեց թուրքական «Վաքըթը»՝ «հասարակության միտքը գրգռող» հոդվածների համար: Խափանվեցին «Իսթիկբալը» և երկու հունական թերթեր, որոնց հրապարակումները դուրս էին եկել վնդոհիշյալ պատվիրանների գծած սահմաններից²²³: Թուրքական թերթերը այս շրջանում անպատիժ հարձակումներ էին գործում Ռուսաստանի և նրա արտաքին քաղաքականության վրա, ընդ որում, առանց համաձայնեցնելու պաշտոնական տեղեկատվության հետ: 1876 թ. հուլիսին իր հակառուսական տրամադրություններով հայտնի «Բասիրեթի» խմբագիրը «պատվո դատ» էր բացել «Իսթիկբալի» տնօրեն-խմբագիր Բ. Կոսաբի դեմ՝ ի պաշտպանություն իր հակառուսական «արժանապատվության»²²⁴: Դատարանը արդարացրել էր Ալի էֆենդուն²²⁵: Պաշտոնական տեղեկատվությանը հավատարիմ մնալով՝ տպագրական տեսչության հրահանգները թուրքական մամուլը ըմբռնում էր յուրովի՝ հրապարակելով ոչ միայն անստույգ, այլև այնպիսի լուրեր, որոնք իրենց ամբողջ կեղծիքով հաճելի կարող էին լինել թուրքական պաշտոնական շրջաններին: Տպագրական տեսչության և թուրքական մամուլի այս համաձայնությունը որոշակիորեն ի հայտ եկավ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին և դրանից հետո:

Մամուլի ինքնուրույնության վրա հունիսին ծավալված հորձանքը փլվեց նաև հայ մամուլի վրա: Կառավարությունը երկար չէր հանդուրժելու գավառական կյանքի վերաբերյալ մերկացնող հրապարակումները: Առայժմ զգացվում էր նաև Բ. Դոան զգուշավոր դիրքը պատրիարքի նկատմամբ, որին իշխանությունները ջանում էին ամբողջովին ներգրավել ընդհանուր բարենորոգումների քաջքուկների մեջ: Հայ թերթերը արևմտահայ գավառի վերաբերյալ թղթակցությունները մեծ մասամբ տպագրում էին կամ պատրիարքարանի դիմանատան նյութերի հիման վրա, կամ էլ իրենց նյութերը համաձայնեցնելով վերջինների հետ: Դա մի հայտնի շահով նրանց ապահովագրում էր գրաքննական ծանր հետևանքներից, քանի որ այդպիսի գործելակերպը չէր հակասում ստույգ լուրեր հրապարակելու կամ լուրերի ստույգությունը ճշտելու մա-

սին տպագրական տեսչության հրահանգներին: Վերջինս, իր հերթին, դեռևս չէր խախտում պատրիարքարանի ինֆորմացիայի հանդեպ իր շեզոք վերաբերմունքը: Օգտվելով դրանից, հայ մամուլը շարունակում էր գավառական կյանքի թեմայի արծարծումը: Սեպտեմբերից արդեն կառավարությունը պետք է անսքող ցույց տար, որ մտադիր չէ հանդուրժել գավառական հարստահարությունները նկարագրող հոդվածներն ու այլ նյութերը: Տպագրական տեսչության համբերությունը չբացավ այն բանից հետո, երբ «նոր օսմանները» անգլիական դեսպատի «ղգույշ խրախուսանքով» Մուրադին հեռացրին գահից և նրան հաջորդեց Աբդուլ Համիդը²²⁶: Հոգեպես անհավասարակշիռ, անկայուն Մուրադ V-ի փոխարեն լիբերալները ստանում էին արտաքուստ բարեմիտ, բայց բռնակալի կրքերը խնամքով թաքցրած նոր սուլթան, որը կարճ ժամանակ անց կտրուկ հակադրվելու էր «նոր օսմանների» մտահոգումներին: Օսմանյան պահպանողականությունը, ընդհակառակն, նոր սուլթանի հայտնության մի քանի ամիսներից իր դիրքերը կառավարության մեջ: Ներքաղաքական այսպիսի իրադրության պայմաններում տպագրական տեսչությունը կտրուկ դիրքորոշում պետք է ցուցադրեր հայ գավառի իրական պատկերները բացահայտող մամուլի հանդեպ: 1876 թ. օգոստոսի 30-ին «Մասիսի» հավելված «Օրաթերթը» տպագրեց «Անատոլուի հայերի վիճակը» հոդվածը, որտեղ ներկայացվում էին թուրքական ռեզիդի և տեղական իշխանությունների սանձարձակ գործողություններն ու բռնությունները Յոզղատի հայ բնակչության նկատմամբ²²⁷: Հայկական մի գյուղում տեղակայվելուց և նրա բնակիչներին կողոպտելուց ու պատվազրկելուց հետո ռեզիդի պետերը գյուղի քյահյային ստիպում են անդորրագիր տալ այն մասին, որ զինվորները հատուցել են իրենց ստացած պարենի դիմաց: Բանակն իր կողոպտուղ ծածկում էր կեղծ փաստաթղթերով, մի գործելակերպ, որ լայնորեն պետք է կիրառվեր 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին:

«Օրաթերթը», հավանաբար, խիստ մեկնաբանություններով է նկարագրել Յոզղատում կատարված վայրագությունները: Տպագրական տեսչության հարվածից խուսափելու նպատակով Կ. Ությունճյանը հավաքել էր տվել «Օրաթերթի» համարները, սակայն արդեն ուշ էր, պարբերականի համարների մի մասը վաճառվել էր: «Մասիսը» տպագրեց «Օրաթերթի» խափանման որոշումը, որ ստորագրել էր հունիսին Համդի բեյին տպագրական տեսչության տնօրենի պաշտոնում փոխարինած Բլաբ բեյը²²⁸: Այստեղ «Օրաթերթը» մեղադրվում էր այն բանում, որ «Թուրքիո հայոց քաղաքական և ընկերական վիճակին վրա հրատարակած

մեկ հողվածին մեջ կջանա հայոց՝ անարդար և բռնավոր կառավարության մը լուծին ներքև ճնշյալ ներկայացնել... որ հիշյալ թերթն անտես կընէ տերութեան կողմն հայոց ազգին տրված այն ամեն շնորհներն ու արտոնությունները, որք այդ հասարակության համար ազատամիտ և հայրակաւն վառչություն մը սահմանած են»²²⁹,

Խափանված «Օրաթերթը» վերաբացվեց միայն 1877 թ. հուլիսին Հ. Հովվյանցի խմբագրությամբ, որը մինչ այդ խմբագրում էր «Մեծ-մուսլը հավատիսը»²³⁰:

Կ. Ությունյանն այս անգամ առավել տագնապած էր, քան երբեք. «Օրաթերթը» հրատարակվում էր նրա արտոնատիրությունամբ և «Մասիսի» այդ հավելվածի խափանումը անցանկալի միջադեպ էր շուրջ քառորդ դար գրաքննության խութերը հաղթահարած փորձառու լրագրապետի համար: Բուն «Մասիսում» նա տպագրում էր հայ գավառների թշվառ կացությունը բացահայտող նյութեր և այս իրադրության մեջ «Օրաթերթի» պատիժը կարող էր նաև «Մասիսի» վրա հրավիրել իշխանությունների ուշադրությունը: Այս պատճառով իր սովորական «օրինապատշաճ» ոճով «Մասիսը» պնդում էր, որ «Օրաթերթը» այդ հողվածը տպագրել է «տերության կամացն և օրինաց հակառակ գործված զեղծումներն ու անիրավությունները դատապարտելու մտք»²³¹: Տպագրական տեսչությունը, սակայն, այլ կարծիքի էր. իրողության մեջ նա նկատում էր մամուլի վտանգավոր միտումը՝ գավառական հարստահարությունների, քրդական վերնախավի բռնությունների մեջ էականը նշմարելը, այսինքն՝ կառավարության մեղսակցության բացահայտումը: Այս իմաստով տպագրական տեսչության կողմից «Օրաթերթին» հղած ծանուցումը միանգամայն տարբերվում է հայ մամուլին մինչ այդ արված ծանուցումներից: Իսկապես, երբեմն «չափազանցություններ», «ծայրահեղություններ», «հասարակական կարծիքը գրգռող նյութեր» և այլ որակումների փոխարեն կառավարությունը մամուլի այս բնույթի մերկացումները արդեն դիտում էր իբրև քաղաքական հանցանք: Դա շրջադարձային կետ էր հայ պարբերականների հանդեպ Բ. դռան վարած քաղաքականության մեջ, որ ի հայտ եկավ Աբդուլ Համիդի գահակալության հենց առաջին իսկ օրերից:

Յոգղատի հարստահարությունների հարցը լուսաբանեց նաև «Մանգումեի էֆթյարը»: Կ. Փանոսյանը սպագրեց «նամակ Յոգղատից» ընդարձակ թղթակցությունը՝²³² դարձյալ ռեդիֆի վայրագությունների վերաբերյալ: «Մանգումեի էֆթյարը» ուղղակի գրում էր, որ զորակոչիկներին խրախուսել են ոստիկանները և տեղական իշխանությունները:

Կ. Փանոսյանը կանչվեց տպագրական տեսչություն՝ բացատրություններ տալու: Յոգղատից ստացված նամակի արժանահավատությունը նա ապացուցեց պատրիարքարանի ստացած հեռագրով: «Մի մեծ սուտ» վերնագրով հոդվածում («Բյուրոք բիր յալան») Փանոսյանը մերկացրել է «Բասիրեթի» և «Հա թուրքիի» տպագրած հերյուրանքները, որոնց համաձայն, իբր Յոգղատի դեպքերը հայ թերթերի հորինածն են: «Բասիրեթը» պնդում էր, թե «Մանգումեն» և «Մասիսը» գրում են «բերանից եկածը» և որ նրանց նպատակն է Անատոլիայում ապրող ժողովուրդների մեջ սեպ խրելու: Թուրքական թերթը Բ. դուան ուշադրությունն էր հրավիրում հայ պարբերականների քաղաքական վտանգավոր վարքագծի վրա, պնդելով, որ այն «հակասում է հասարակական կարգուկանոնին»²³³:

Տպագրական տեսչությունը այս անգամ կոծկեց «Մանգումենի» հետունեցած միջադեպը: Գործին խառնվեց պատրիարքը, այն բանից հետո, երբ գավառական հարստահարությունների իսկությունը թաքցնել ճգնող թուրքական թերթերը «Մասիսն» ու «Մանգումեն» խափանելու նպատակով հայտնեցին, թե նրանց հրապարակումները մտացածին են և որ Յոգղատից պատրիարքարանի ստացած հեռագրի համաձայն, այնտեղ և ոչ մի բռնություն էլ չի եղել: Պատրիարքարանը հանդես եկավ հերքումով և հայտնեց, որ հայ մամուլի տպագրած տեղեկությունները հավաստի են²³⁴: Բ. դուռը ստիպված էր հետաձգել հայ մամուլից վրեժ լուծելը և բավարարվեց միայն «Օրաթերթի» խափանմամբ: Նույն՝ սեպտեմբերին ազգային վարչությունը քննարկում էր Չմշկածագի, Մալաթիայի և Արևմտահայաստանի այլ վայրերի հարստահարությունների հարցը: Պատրիարքը Բ. դուռ ներկայացրեց 7 կետից կազմված մի թագրիր՝ Արևմտահայաստանի բարենորոգումների (հայերի հողագրկում, քրդական վերնախավի ավարառություններ, Բ դուան կողմից հարստահարությունների խնդրով հանձնաժողով ստեղծելու առաջարկ և այլն) վերաբերյալ²³⁵: Եկեղեցիներում հավաքված Կ. Պոլսի հայ բնակչությունը քննարկում էր գավառի վիճակի հետ կապված հարցերը: Երեսփոխանական ժողովը սեպտեմբերի 17—20-ը դարձյալ անդրադարձավ բարենորոգումների անհրաժեշտության և այդ ուղղությամբ ազգային ժողովի բռնելիք դիրքին: Օ. Խոճասարյանի «Նորագիրը», որ տպագրել էր այդ նիստերի արձանագրությունը, խափանվեց²³⁶:

Իսկ տասխան պատրիարքական թագրիրի և երեսփոխանական ժողովի նիստերի, թուրքական մամուլը ավելի կատաղի դարձրեց իր հարձակումները արևմտահայերի վրա: Հայ թերթերին այս անգամ նրանք

մեղադրեցին ապստամբություն հրահրելու մեջ, իսկ «Բասիրեթը» ուղղակի գրում էր, թե պատրիարքարանը և հայերը օտար քաղաքականություն հլու գործիք են և դավ են նյութում պետության դեմ: 1876 թ. սեպտեմբերից սկսվում է թուրքական մամուլի մի բնութագրական ուղեգիծը՝ արևմտահայության դեմ ուղղված ստի և զրպարտության այն արշավը, որի նպատակն էր ամբողջ ժողովրդին ներկայացնել իբրև քաղաքականապես վտանգավոր և օսմանյան պետության թշնամի տարր: Այդ պրոպագանդը, ըստ էության, նախորդեց արևմտահայերի 1894—1896 թթ. և հետագայի զանգվածային ջարդերին ու կոտորածներին՝ ընդհուպ մինչև մեծ եղեռն՝ հող նախապատրաստելով դրանց գործնական իրականացման համար:

1876 թ. աշնանը, այս մտայնության ձևավորման ու խորացման ժամանակաշրջանում Բ. դուռը ճգնում էր եվրոպական դիվանագիտությունից սթոդել կայսրության փոքրասիական մասի ծայրահեղորեն անկայուն և վարչական իմաստով քայքայված վիճակը: Դրանից ելնելով, ինչպես և որոշ չափով հաշվի առնելով մայրաքաղաքի հայ բնակչության սրված տրամադրությունները, կառավարությունը որոշեց ձևացնել, թե մտահոգված է բարենորոգումների գործով: Նրա որոշմամբ նշանակվեց Յոզղատի հարստահարությունների գործը քննող հանձնաժողով, որի մեջ ընդգրկվեցին ինչպես կառավարության, այնպես էլ պատրիարքարանի ներկայացուցիչները²³⁷: Ըստ երևույթին, հանձնաժողովը ցրվել էր նույնքան արագ, ինչպես կազմվել էր: Վ. Ռամսեյը, նկարագրելով Յոզղատի դեպքերը (և դրանք վերագրելով 1877 թ.) նշում է, որ Բ. դուռը բանտարկել է տվել այդ դեպքերի հանցավորներին, բայց հայտնի չէ, թե նրանք որքան ժամանակ են կրել պատիժը²³⁸: Պատիժը կրելու մասին նրա կասկածը միանգամայն հիմնավոր էր. որպես կանոն, հարստահարությունների համար բանտարկվում էին ոչ թե դրանք կիրառողները, այլ իրենք՝ հարստահարվողները:

1875—1876 թթ. օսմանյան կայսրության ժողովուրդների մեջ տարածված ազատագրական պայքարը իր անմիջական ազդեցությունը թողեց երկրում հրատարակվող պարբերական մամուլի և դրա հետևանքով՝ գրաքննական քաղաքականության վրա: Հրապարակվեցին մամուլին վերաբերող մի շարք հրահանգներ: Խիստ վերահսկողության ենթարկվեցին թերթերի ռազմական հավելվածները և մամուլի քաղաքական բնույթի ինֆորմացիան: Պաշտոնական գաղափարախոսության

պարտադրումը ուղեկցվում էր սանկցիաներով, որոնց հետևանքով խափանվեցին նաև մի շարք հայ պարբերականներ:

Բալկաններում ազատագրական շարժումների ազդեցությամբ ուժեղացավ հայ մամուլի ելույթների քննադատական նպատակաուղղվածությունը՝ արևմտահայության անտեսական ու քաղաքական կեղեքված իրավիճակի դեմ: Նոր փուլ թևակոխեց գաղափարական թուրքական իշխանությունների ու քրդական հարստահարիչների մերկացումը: Գրաքննությունը այդպիսի նյութերի հրապարակումը թույլ էր տալիս շափավոր սահմաններում՝ ընդառաջելով երկրում ընդհանուր բարենորոգումները պաշտպանող կառավարության ցանկությանը: Այսպիսի դիրքորոշումը հետամտում էր համագելու տերություններին, որ երկրում պետք է անցկացվեն ընդհանուր բարենորոգումներ, և որ, հետևաբար, անխափստ է առանձին ռեֆորմներ անցկացնել Բալկաններում:

1875—1876 թթ., այս տեսակետից, երկրում համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին մամուլի օբյեկտիվ լուսաբանումների համար: 1876 թ. կառավարությունը փորձեց իր համար ծայր աստիճանի անցանկալի այդ կացությունը վերացնել ժամանակավոր նախնական գրաքննություն հաստատելով: Սակայն սուլթանական ռեժիմի դեմ ուղղված օպոզիցիայի աննախընթաց ակտիվացումը և «նոր օսմանների» քաղաքական ազդեցության աճը Բ. դռանը հարկադրեցին վերացնելու այդ սահմանափակումը: Այս պայմաններում Կ. Պոլսի Ազգային ժողովում և հայ մամուլում ուժեղացան արևմտահայ գաղառի վարչական բարենորոգումների պահանջն ու հրապարակումները դրա օգտին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

1. ՄԱՄՈՒԼ ՕՍՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Արևելյան հարցի ճգնաժամը իր բարձրակետին հասավ 1876 թ. դեկտեմբերին, երբ տերությունների ներկայացուցիչները Կ. Պոլսում դեսպանաժողով գումարեցին՝ Բալկանների գործերին իրենց միջամտությանը կոլեկտիվ լուծում տալու և ապստամբած նահանգների բարենորոգումների ծրագիրը թուրքական կառավարությանը ներկայացնելու համար։ Մինչ դիվանագետները նախապատրաստական հանդիպումներում մշակում էին այդ ծրագիրը, սուլթանը և սրան շրջապատած օսմանյան լիբերալները ակտիվացնում էին իրենց քաղաքական գործունեությունը։ Դեկտեմբերի 19-ին Միդհատ փաշան նշանակվեց մեծ վեզիր, իսկ նույն ամսի 23-ին, դեսպանաժողովի բացման օրը, հրետանային համազարկով հանդիսավորապես հռչակվեց օսմանյան սահմանադրությունը¹։

«Նոր օսմանների» հաջողությունը՝ սահմանադրության ընդունումը, հայտնի չափով պայմանավորված էր նրանով, որ թուրքական հետադիմությունը իր հերթին, լուրջ սպասելիքներ ուներ սահմանադրությունից և այս պատճառով չխանգարեց լիբերալներին։ Թուրքիան գրեթե մեկուսացած էր արտաքին քաղաքական ասպարեզում և թուրքական քաղաքագետները, անկախ հին, թե նոր օսմանների խմբակցություններին պատկանելուց, ենթադրում էին դիվանագիտական կապիտալ շահել. սահմանադրությունը հնարավորություն էր տալիս ներկայանալ իբրև սահմանադրական միապետություն, որը պատրաստ էր բարեկարգելու երկրի վարչատնտեսական հոռի վիճակը²։ Սահմանադրության թողած արտաքին քաղաքական տպավորությունը Թուրքիայի համար դառնում էր մոտավորապես այնպիսի մի միջոց, ինչպիսին Գյուլհանեի հաթթը

շերիֆն էր 1840-ական թթ.¹ Մուհամեդ Ալու դեմ մղվող պայքարում³։ Այս պայքարում համընկնում էին սահմանադրությանը հարկադրաբար համաձայնած սուլթանի ու պահպանողականության և «նոր օսմանները» դիտավորությունները։ Եթե առաջինները ճգնում էին բռնակալությունը փրկել սահմանադրական թզենու տերևով, ապա երկրորդները հարմար պահ էին գտնում իրենց ծրագրերի իրականացման համար։ Ընդ որում, նրանց կարծիքով ևս սահմանադրության ընդունումը տերություններին պետք է համոզեր երկրի վարչական բարենորոգումների հնարավորությունների մեջ, ինչպես և դառնալու էր խթան՝ արտաքին քաղաքական միջամտություններից Թուրքիան զերծ պահելու համար։

Բարենորոգումներ անցկացնելու հարցում կառավարության պատրաստակամությունը և կայսրության ոչ միասնական հպատակների նկատմամբ պետական քաղաքականության շրջադարձը ընդգծելու նպատակով Միդհատ փաշան դիմեց աննախադեպ քայլի՝ պաշտոնական այց կատարելով հայ և հույն պատրիարքներին և հրեական գլխավոր ռաբբիին։ Պատրիարքարանում մեծ վեճիրին ողջույնի խոսք հղած էր. նար-Պեյը խնդրեց հայերին ազատել հարստահարություններից⁴։

Դեսպանաժողովում թուրքական քաղաքագետները շտապեցին օգտրվել սահմանադրության թողած տպավորությունից. Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Սավֆեթ փաշան հայտնեց, որ սահմանադրության հռչակումը լիովին փոխում է իրավիճակը և ավելորդ դարձնում տերությունների ներկայացրած պահանջները Թուրքիայի նկատմամբ։ Սահմանադրական հիմնարկները, գավառների վարչության ապակենտրոնացումը այսուհետև ապահովելու են երկրում բարենորոգումների հաջողությունը, պնդում էր փաշան⁵։ Դեսպանաժողովը, սակայն, չհամաձայնեց թուրքական կողմի առաջարկին և շարունակեց ապստամբած նահանգների բարենորոգումների ծրագրի քննարկումը։ 1877 թ. հունվարի 15-ին տերությունները կառավարությանը վերջնագիր ներկայացրեցին, որով պահանջում էին այդ նահանգների ինքնավարությունը և Բալկաններում բարենորոգումները հսկող միջազգային հանձնաժողովների ստեղծում⁶։ Բ. դուռը մերժեց վերջնագիրը՝ Միդհատ փաշայի կողմից հունվարի 18-ին հրավիրված խորհրդակցական ժողովի պաշտպանությունից առավել հենվելով անգլիական պրեմիեր-մինիստրի խոստումների վրա⁷։ Հունվարի 20-ին դեսպանաժողովը դադարեցրեց իր աշխատանքները։ Ռուս-թուրքական պատերազմը դարձավ անխուսափելի։

Սահմանադրության մշակման և սահմանադրական կառավարման խնդիրների շուրջ սուլթանի և Միդհատ փաշայի տարակարծությունները

խիստ լարվածության հասան դեսպանաժողովի առաջարկները մերժելուց հետո: Աբդուլ Համիդի գործողությունների ազատությունը առավել անկաշկանդ դարձան քաղաքական այն անցքերից հետո, երբ միջազգային դիվանագիտության առջև գործի դրվեցին կայսրությունը անվթար պահելու բոլոր հնարավորությունները: Սուլթանը այս պայմաններում կարող էր գործել նաև առանց սահմանադրականների, որոնք արդեն բալաստ էին դարձել նրա միահեծանության ձգտումների համար: 1877 թ. փետրվարի 5-ին սահմանադրությունը փրկելու հուսահատական ճիգերից հետո Միդհատը պաշտոնանկ արվեց և արտաքսվեց կայսրության սահմաններից⁸: Նոր նշանակված մեծ վեզիր էդհեմ փաշան նրան մեղադրեց «սուլթանի բացառիկ իրավունքների և հասարակական անդորրի դեմ թշնամական ծրագրեր հղանալու մեջ»⁹:

Ասպարեզից վանելով սահմանադրականների առաջատարին, սուլթանը դեռևս պահպանելու էր այն երևութականությունը, որ իր կտրուկ վերաբերմունքը Միդհատի նկատմամբ թելադրված է եղել սահմանադրությունը ոտնձգություններից փրկելու անհրաժեշտությամբ: Սահմանադրությունը դեռևս պետք էր նրան՝ արտաքին ճնշման ներքո դիվանագիտական շահեկան կեցվածք ընդունելու համար: Իրականում Համիդը վճռել էր ձևանալ սահմանադրության պաշտպան՝ հենց նույն սահմանադրությունը ոչնչացնելու նպատակով: 1876 թ. հոկտեմբերին հրապարակած իրադեի ուժով ստեղծվեցին հանձնաժողովներ, որոնք պետք է համապատասխան նախագծեր մշակեին սահմանադրական մարմինների գործունեության համար: Գավառական հանձնաժողովների վերաբերյալ օրենքը նախապատրաստող հանձնաժողովը գլխավորում էր Զեդեթ փաշան, տպագրական օրենք մշակող հանձնաժողովը՝ Սերվեր փաշան (հանձնաժողովի անդամներ էին Նամըք, Սամի, Կանի փաշաները և ուրիշներ)¹⁰: 1876 թ. նոյեմբերի 26-ի և հետագա համարներում «Սաբահ» թերթը տեղեկություններ է տպագրել տպագրական հանձնաժողովի նիստերի աշխատանքների մասին¹¹: Մշակվելուց հետո մամուլի օրենքի նախագիծը պետք է հաստատվեր պետական խորհրդում:

Օրինագիծը շրջանառության մեջ էր մտցվում տպագրական ազատության նկատմամբ սուլթանի ակնհայտ թշնամական դիրքորոշման պայմաններում: Աբդուլ Համիդը համոզված էր, որ **օգտվելով Թուրքիայում մամուլին տրված «լայն ազատությունից», խմբագիր-հրատարակիչները այն ի շարն են գործադրում: Մամուլի «ծայրահեղությունների» դեմ իր բացահայտ տահնությունը նա դարձրեց հիմք՝ սահմանադրության հռչակած մամուլի ազատությունը գործնականում ոչնչել հավասարեցնելու համար: 1876 թ. սուլթանը խափանել ավելի օգտվելու և**

«Վաթըթ» թերթերը: Սրանցից առաջինը ակնարկել էր նրա հակասահմանադրական նպատակները, իսկ երկրորդը շեյխ-ուլ իսլամի ֆեթվան համարել էր վճռական ակտ՝ սուլթանների տապալման գործում¹²: Եթե մեկը կոահն էր Համիդի գաղտնի մտադրությունները, ապա մյուսը շարագուշակ հիշեցում էր անում նախորդ երկու սուլթանների անփառունակ վախճանի մասին («նոր օսմանները» շեյխ-ուլ իսլամ Հասան Հայրուլլահ էֆենդու ֆեթվաները օգտագործել էին իբրև իրավական հիմք՝ Աբդուլ Ազիզին և ապա Մուրադին գահընկեց անելու համար): Միաժամանակ, պաշտոնանկ արվեց տպագրական տեսչության տնօրեն Բլաքբլեյը՝ մամուլի հանդեպ լիբերալ թուլություններ ցուցաբերելու նկատառումով: Տպագրական տեսչության տնօրեն նշանակվեց Մաջիդ բեյը:

1876 թ. դեկտեմբերին Համիդը Միդհատ փաշային հրահանգեց շտապ ձեռնարկել տպագրական օրենքի նախագիծը մշակելուն: Նոր օրենքը, ինչպես ենթադրում էր սուլթանը, պետք է սահմանափակեր մամուլին տրված ազատությունը և մեկրնդմիշտ կաշկանդեր նրան պաշտոնական ուղեգծի սահմաններում¹³: Ազատ տպագրության և մամուլի դեմ սուլթանի հարձակումները, ըստ էության, նախորոշում էին նրա հետագա վերաբերմունքը սահմանադրության հանդեպ, որը ապացուցվեց իրադարձությունների հետագա ընթացքով: 1877 թ. հունվարի վերջին հանձնաժողովն արդեն հասցրել էր հետ ստանալ նախագիծը պետական խորհրդից՝ նոր խմբագրումներ մտցնելու համար¹⁴: Նախագծի մշակման շրջանի իրողությունները ցույց են տալիս, որ հանձնաժողովում գերակշռել են պահպանողական տրամադրությունները: Պետական խորհրդում նստած պաշտոնյաների վրա ակնառու էր տպագրական ազատության համոզված հակառակորդ Աբդուլ Համիդի ազդեցությունը: Այսպես թե այնպես, կողմերի միջև գրեթե համաձայնեցված նախագիծը 1877 թ. ապրիլի 21-ին մտավ խորհրդարան: Դրանից առաջ, 1877 թ. մարտի 19-ին, խորհրդարանի բացման օրը, Աբդուլ Համիդը իր գահակալական ճառում անդրադարձավ տպագրական օրենքին: Ծառի առաջին մասը վերաբերում էր տպարաններին, երկրորդը՝ մամուլին¹⁵:

Տպագրական օրինագիծը նախապես քննարկվեց պառլամենտական հանձնաժողովում, ապա խորհրդարանում: Այստեղ պարզ դարձավ դրա բացահայտ հետադիմական ոգին, որը բացառում էր մամուլի որևէ ազատություն: Ըստ նախագծի, անչափ խստացվում էին հրատարակության իրավունքի հետ կապված պայմանները: Հրատարակիչ-տնօրենները նախ պետք է մուծեին 500 լիրայի չափով դրամական երաշխավորություն («գլխավորապես կարող հայ խմբագիր մը չենք կարծեր, որ գտնվի»,—

հարում էր «Մասիսը»)¹⁶։ Այնուհետև, սուլթանի կամքին հնազանդ՝ արգելվում էր երգիծաթերթերի հրատարակությունը։ Երեսփոխանները իրավունք չունեին պարբերական հրատարակելու։ Առանձնապես ծանր էին պատժական հոդվածները՝ 1864 թ. դեկտեմբերի մամուլի օրենքի համեմատությամբ։ Դրանք ենթադրում էին 5—150 լիրա տուգանք, խմբագիր-հրատարակիչների երեք ամսից մինչև երեք տարի բանտարկություն, խափանումներ, արգելում և այլ տեսակի վարչական պատիժներ¹⁷։ Օրինագծի 40 հոդվածից քսանը պարունակում էին պատիժներ, իսկ մնացած կեսը խիստ սահմանափակում էր մամուլի ինքնուրույնությունը։

Պետլամենտական հանձնաժողովը բավական պահպանողական համարից օրինագիծը։ «Մասիսը» հուլյսեր էր կապում այն հենց վերջինի հանձնարարությամբ բարեփոխելու հետ և դրանով միանգամայն հստակ արտահայտում իր վերաբերմունքը օրինագծի նկատմամբ։ «Կըսվի,—գրում էր թերթը,—թե տպագրական նոր օրինաց ծրագիրը քննելու պաշտոն ունեցող երեսփոխանական հանձնաժողովն, որ թուրք և հույն անդամների կբաղկանա, լրագրաց դրամական երաշխավորության գումարը 50.000 զրուշեն 1.500 զրուշի իջուցեր է։ Հանձնաժողովի անդամներին ոմանք բոլորովին վերցնել կառաջարկեն եղեր։ Սիրելի է մեզ հուսալ, որ այդ դրամական երաշխավորության տրամադրությունը բոլորովին վերնա՝ իրր անհնարին թուրքիս լրագրաց ամենամեծ մասին համար»¹⁸։

Խորհրդարանի առաջին նստաշրջանում բանավեճ սկսվեց տպագրական օրինագծի շուրջ։ Դրա պաշտպանությամբ հանդես եկան տպագրական տեսչության տնօրեն Մաջիդ բեյը և ներքին գործերի մինիստրության փոխբարտուղար Կոստակի բեյը։ Երկրորդ անգամ զբաղեցնելով իր պաշտոնը (առաջին անգամ՝ 1868—1872 թթ., երկրորդ անգամ՝ 1877—1879 թթ., է. Բլաքից հետո)¹⁹, Մաջիդ բեյը մամուլը հալածելու ասպարեզում բավական փորձառություն ուներ։ Երգիծաթերթերը բնութագրելիս նա արտահայտվում էր տպագրական տեսչության՝ վերոհիշյալ սպառնալի նախազգուշացումների ու արգելքների ոգով, անբարոյական ու վնասակար էր համարում առհասարակ երգիծական թերթերը և մանավանդ, ծաղրանկարները²⁰։ Մաջիդ բեյը փորձում էր հիմնավորել մամուլի խիստ վերահսկողության անհրաժեշտությունը և արդարադրում էր կառավարության ջանքերն այս ուղղությամբ։

Տպագրական օրինագիծը խստիվ քննադատեցին հույն և հայ երեսփոխանները՝ Վասիլակի Սերագբյուտին (Կ. Պոլիս), Մ. Խարաճյանը (Մարաշ) և Սեպուհ Մաքսուտը (Կ. Պոլիս)։ Վասիլակին կարծում էր,

թե տպագրական օրենքը ազատ պետք է լինի՝ թեկուզ երկրի դանդաղ առաջընթացն ապահովելու համար: Նա հատուկ ուշադրություն էր հրավիրում պատիժների չափազանց խստության վրա, գտնելով, որ դրանք պետք է կիրառվեն ոչ թե մամուլի օրենքի, այլ քրեական օրենքների սանկցիաների ուժով²¹:

1877 թ. մայիսին խորհրդարանը մերժեց օրինագծի՝ թերթի կամ հանդեսի արտոնագրի դիմաց դրամական երաշխավորություն, ինչպես նաև երգիծաթերթերի արգելքը ենթադրող հոդվածները: Կառավարությանն առաջարկվեց վերացնել նաև թերթերի դրոշմի տուրքը²²: Լիբերալ տրամադրություններ ունեցող երեսփոխանական ժողովը ակնհայտորեն այլ կերպ էր դատում, քան պետական խորհրդում կամ մամուլի օրինագիծ մշակող հանձնաժողովում նստած՝ սուլթանի ձեռնասունները: Այս առթիվ «Մասիսը» գրում էր, թե «Օսմանյան երեսփոխանության այս ազատամիտ ընթացքը մեծ պատիվ կբերե իրեն լուսավորյալ աշխարհի առջև և ընդհանուր լրագրության գովությունն ու շնորհակալությունը կհրավիրե յուր վրա»²³: «Մասիսին» դեռևս ժամանակ էր հարկավոր՝ համոզվելու օսմանյան սահմանադրության գործունակության պատրանքային բովանդակության մեջ: Իրականում ամեն ինչ ընթանում էր նախապես մշակած սյուժեի համաձայն. սենատը հաստատեց խորհրդարանի առաջարկած նախագիծը, որից հետո այն պետք է ուսումնասիրեր օրինագիծ կազմող հանձնաժողովը՝ նախքան սուլթանի կողմից վավերացնելը: Հանձնաժողովը հանձնարարեց օրինագծի վերստին քննարկում խորհրդարանի երկրորդ նստաշրջանում, նշելով, որ սուլթանը չի ընդունի արված խմբագրումները: Իր հերթին, վերջինս ոչ մի զիջում չարեց՝ թույլ չտալով օրինագծի որևէ փոփոխություն իր սկզբնական տեսքից:

Մամուլի օրինագծի շուրջ այս քաշքշուկները գոհացնում էին սուլթանին, քանի որ դրանով երեսփոխանական ժողովը իր ժամանակը վատնում էր ոչ էական հարցերին վերաբերող վիճաբանությունների վրա: Զմյուռնացի լիբերալներից Ենիշեհիրլի Ահմեդը, նախքան մամուլի օրինագծի քննարկումը, մայիսին, պատերազմի ընթացքի վերաբերյալ բացատրություններ պահանջեց կառավարությունից: Նա հայտնում էր, որ պատերազմում թուրքերի պարտությունները հասել են աղետալի չափերի, մինչդեռ իրենք զբաղված են երկրորդական խնդիրներով²⁴: Խորհրդարանի երկրորդ նստաշրջանում միայն երեսփոխանները կարողացան ըստ ամենայնի հակադրվել կառավարությանը: Զմյուռնիայի պատվիրակը ըմբռնել էր սուլթանի դիտավորությունները:

Երգիծական մամուլի դեմ ուղղված հալածանքը չի կարելի բացատրել սոսկ սուլթանի ռեսակալությամբ: Հետապնդումները սկսվել էին դեռևս 1870-ականի սկզբից, երբ «նոր օսմանները»՝ Նամըք Քեմալը, Զիյա բեյը և էբյուզիան «Դիոթեն» ու «Հադիքա» երգիծաթերթերում քննադատական նյութեր տպագրեցին կառավարության դեմ: «Դիոթենի» խմբագիր Թ. Կասաբը՝ ազգությամբ հույն, չնայած իր աչքի ընկնող գործարարական հատկություններին (այդ թերթը նա հրատարակում էր նաև հունարեն, ֆրանսերեն, մի քանի համար տպագրեց հայատառ թուրքերեն)²⁵, չկարողացավ խուսափել Բ. դուռն հալածանքներից: Օսմանյան պահպանողականության մեջ սատիրայի ժանրը իր քաղաքական նպատակասլացությամբ արթնացնում էր հիվանդագին էմոցիաներ: 1873 թ. ապրիլին «նոր օսմանների» հրատարակությունների ջախջախումից հետո տպագրական տեսչությունը դժվարացրեց երգիծաթերթերի տպագրության արտոնությունը: Թշնամական նույն վերաբերմունքը տարածվեց «Մեղվի», «Եփրատի», «Թատրոնի», «Մամուլի» և մյուսների վրա: 1876 թ. հունվարին Մահմուդ Նեդիմ փաշայի վեզիրության ժամանակ հրապարակվեց երգիծաթերթերի դեմ ուղղված հրահանգ՝ մտքը վեց նախնական մասնակի գրաքննություն. ծաղրանկարները իրենց մակագրություններով պետք է ներկայացվեին տպագրական տեսչություն՝ տպագրության թույլտվության համար²⁶: Այս միջոցառումը հիմնավորվում էր նրանով, որ երգիծաթերթերը վնասակար ծաղրանկարներ են տպագրում կառավարության քաղաքականության, կրոնի և դավանանքի, անհատների պատվի ու արժանապատվության դեմ և քայքայում են բարոյականության հիմքերը: Մուրադ V-ի կարճատև գահակալության ժամանակաշրջանում ևս շարունակվեց երգիծական մամուլի դեմ ուղղված արշավանքը: 1876 թ. օգոստոսին «Վաթթը» հայտնում էր, որ կառավարությունը առաջիկայում այլևս երգիծական հրատարակությունների արտոնագիր չի տրամադրելու²⁷:

Բռնակալին հատուկ բուժ ատելությամբ Աբդուլ Համիդը սաստկացրեց երգիծաթերթերի հետապնդումները: 1877 թ. հունվարին սուլթանը խափանեց Թ. Կասաբի «Հեյալը», որը ծաղրանկար էր տպագրել օսմանյան սահմանադրությամբ երաշխավորված մամուլի «ազատության» դեմ՝ «Տպագրությունն ազատ է օրենքի շրջանակներում» մակագրությամբ: «Հեյալն» ընդմիշտ արգելվեց, իսկ Կասաբը ենթարկվեց երեք տարվա բանտարկության²⁸: Սուլթանի խստությունը այս դեպքում թերևս, ուներ անձնական բնույթի պատճառներ (Մուրադի ժամանակ Թ. Կասաբը Մուլիերի «Ժլատը»՝ «Ժլատ Համիդ» վերնագրով, թարգմանել

էր թուրքերեն և ապագա սուլթանը դրա մեջ իր անձի դեմ ուղղված ակնարկ էր նկատել)²⁹, սակայն նրա վերաբերմունքը տվյալ դեպքում լիովին համընկնում էր երգիծանքի հանդեպ գրաքննության ավանդական անհանդուրժող քաղաքականությանը:

1877 թ. մարտին սուլթանը հարձակման անցավ ընդհանրապես երգիծական մամուլի վրա: Մամուլի օրինագիծը դեռ խորհրդարանում չքննարկված՝ մեծ վեզիր էդհեմ փաշան ծանուցում հրապարակեց երգիծական թերթերի մասին: Երգիծաթերթերն այստեղ վերստին հռչակվում են հասարակական բարոյականությունը ոտնահարող հրատարակություններ: Հայտնվում էր կառավարության պատրաստակամությունը՝ սահմանափակելու երգիծական թերթերի հրատարակումը և օրենքի ամբողջ խստությամբ պատժելու դրանց մեղանշումները³⁰: Այս որոշմամբ կառավարությունը հող էր նախապատրաստում՝ արգելելու երգիծաթերթերի հրատարակությունը:

1877 թ. դեկտեմբերի 13-ին խորհրդարանի երկրորդ նստաշրջանի գահակալական ճառում սուլթանը անդրադարձավ մամուլի օրինագծի հաստատման հարցին: Շատ շանցած, 1878 թ. փետրվարին, խորհրդարանը արձակվեց և բռնապետությունը իր հարձակման թափի տակ ճզմեց ոչ միայն սահմանադրական հիմնարկներն ու հանձնաժողովները, այլ սրանց կազմած բոլոր օրինագծերը: Տպագրական օրինագիծը ևս արժանացավ նույն ճակատագրին: Սահմանադրական միապետի դերի մեջ մտած սուլթանը ժամանակ էր շահում լիբերալիզմը վերջնականապես ընկճելու համար: Միդհատից հետո Համիդը հարվածն ուղղեց «նոր օսմաններին» դեմ: 1877 թ. մայիսին աքսորվեցին պետական խորհրդի անդամ Ագյահ էֆենդին, «Քահթահա» երգիծաթերթի տնօրեն-խմբագիր Մուհիթ բեյը և ուրիշներ³¹:

Մինչ Օսմանյան խորհրդարանը նախապատրաստվում էր առևտրին նստաշրջանին՝ աչքի առաջ ունենալով նաև տպագրական օրինագիծը, սուլթանը արդեն սկսել էր հետապնդել կասկած հարուցող կամ արդեն օպոզիցիայի նշաններ ցույց տվող պարբերականներին: Հարվածի տակ ընկան այն թերթերը, որոնք բացահայտում էին երկրի քայքայված վարչակարգը, բողոքում էին բռնությունների դեմ կամ ինքնուրույնություն էին ցուցաբերում ռազմական լուրերի հրապարակման ու մեկնաբանումների մեջ: 1877 թ. մարտ-ապրիլին իշխանությունները դատի տվեցին հունական «Թրակի» թերթը, որը բողոքել էր մի հույն աղջկա տաճկացման դեմ³²: Դատի տրվեցին «Վաքըթը» և «Մուսավաթը»՝ ռազմական միևնույնության բյուջեի մասին «տհաճ ակնարկներ անելու» և ելմտից միևնույնի դեմ հողվածներ տպագրելու պատճառով³³:

Մամուլի դեմ իր հարձակումներից երեսփոխանական ժողովի ուշադրությունը շեղելու համար սուլթանը պատերազմի սկզբին ծանուցեց, որ ռազմական պայմանների բերումով 1864 թ. մամուլի օրենքը սառեցվում է և որ այսուհետև ամբողջովին պետք է ենթարկվի իշխանությունների տնօրինությանը³⁴։ Սուլթանն այս ժամանակաշրջանում հատուկ ուշադրություն է դարձրել ռազմական իրադարձությունների վերաբերյալ ինֆորմացիան ամբողջովին կառավարության իրավասությանը ենթարկելուն։ 1877 թ. ապրիլին լրագրավաճառներին արգելվեց փողոցներում բղավել մամուլի լուրերի մասին, երբ թերթերի ստերին, ի դեպ, լրագրավաճառները միացնում էին իրենց հատուկ երևակայությունը։ Որոշվել էր, որ խմբագիր-տնօրենների գիտությունամբ լրագրավաճառները ոստիկանությունից պետք է ձեռք բերեն թ և գ ր ե ռ և (վկայական), որով կարելի կլիներ վերահսկել նրանց գործը³⁵։

Այսուհանդերձ, առանց լրագրավաճառների միջամտության էլ թուրքական թերթերը շարունակում էին կրոնական մոլեռանդությունը հրամայելով հայրենասիրության փոխարեն։ Այս առումով Համիդի համար բավականաչափ առիթներ էին ներկայանում անցանկալի պարբերականներից վրեժխնդիր լինելու։ 1877 թ. ապրիլին տպագրական տեսչությունը հարվածի թիրախ ընտրեց «Վաքըթը»․ պաշտոնական ազդարարության մեջ հայտնվում էր, որ նա «այն հիմար կարծիքը կուղե հաստատել, որ Եվրոպա մեզի դեմ է և թե ներկա պատերազմը պարզապես քրիստոնեական խաչակրություն մ'է իսլամության դեմ։ Վերջապես,—շարունակվում էր հերքման մեջ,—տարակույս չկա, որ անհավատ (քյաֆիր) մ'է և յուր ըրածը՝ ոճիր («Վաքըթի» հեղինակինը—Ա. Խ.)»³⁶։

Ահաբեկող այս սպառնալիքից հետո «Վաքըթը» անցավ պաշտոնական տեսակետի անվերապահ պաշտպանությանը։ 1878 թ. հունվարին, որսալով երեսփոխանական ժողովի հանդեպ սուլթանի հակակրանքի ակնառու նշանները, այդ թերթը կծու հոգված հրատարակեց երեսփոխանական ժողովի դեմ, որով առաջացրեց տպագրական տեսչության տնօրեն Մաջիդ բեյի հիացմունքը․ սա գոհունակության նամակ ուղղեց թերթին, որն այն տպագրեց իր մեկնաբանություններով³⁷։ Անսկզբունք և շահատենչ, ուժի և իշխանության առջև պատրաստ՝ այրելու այն, ինչ պաշտում էր երեկ և պաշտելու այն, ինչ այրում էր երեկ—այսպիսին էր թուրքական այն ուտիլիտար մամուլի նկարագիրը, որի տիպիկ ներկայացուցիչներից էր «Վաքըթը» և որին այնպես դիպուկ է բնութագրել օպոզիցիոն երեսփոխաններից Ենիշեհիրլի Ահմեդ զադեն. «Իսկ թուրք լրագրաց խոսքը չեմ ըներ,—ասում էր նա,—ափեղցփեղութենե զատ

ուրիշ բան չեն գրեր և սուտե զատ ուրիշ բան չեն հրատարակեր: Շատ կսխալի կարծողը, թե այդ լրագրերը կարդալով կրնա կրթվիլ և ճշմարտությունն իմանալ»³⁸:

Մի հայտնի շափով այդ բնութագիրը վերաբերում էր ռազմական ինֆորմացիայի բնագավառին: Թուրքական թերթերը շարունակում էին ռազմական հավելվածներ տպագրել, որ թեև արգելվել էր դեռևս 1876 թ., սակայն «նոր օսմանների» քաղաքական վերընթացի ժամանակաշրջանում դուրս էին թողնվել իշխանությունների վերահսկողությունից: Հակասական ու խառնաշփոթ այդ տեղեկություններից շատերը լույս աշխարհ էին գալիս հենց խմբագրատներում և նետվում ամբոխին՝ ըստ հնարավորին գնորդներ հրապուրելու նպատակով: Մայիսին Բ. դուռն արգելեց թերթերի հավելվածների հրատարակությունը, արգելքից ազատ էին մնացել միայն պաշտոնական թերթերի հավելվածները, որտեղ տպագրվում էին կառավարության վավերացրած տեղեկությունները³⁹: 1877 թ. մայիսի 4-ին Կ. Պոլիսը և նրա արվարձանները դրվեցին ռազմական դրության մեջ, որով ռազմական իշխանությունների իրավասությունը տարածվեց նաև մամուլի վրա: Կառավարությունը տեղեկացրեց, որ «զինվորական իշխանությունը... կրնա խռովություն սերմանող և հասարակաց կարծիքը հուզիչ հոդվածներ հրատարակելու համաբժակող լրագրերը խափանել...»⁴⁰: Գրաքննությունը ուշադրությամբ հետևում էր մանավանդ, ռազմական մարմինների և բարձրաստիճան զինվորականների քննադատության կասեցմանը: Երեք ամսով խափանվեց թուրքական «Սելամեթ» թերթը՝ ռազմական մինիստրի դեմ «թշնամական հոդված» տպագրելու համար: Խմբագրի հետ միասին բանտարկվեց և դատի տրվեց այդ թերթի տնօրեն Ալ. Սարաֆյանը⁴¹: Դրան հետևեց «Լեվընդ հերալդի» խափանումը՝ դարձյալ քննադատական հրապարակումների համար: Հուլիսին տպագրական տեսչությունը նախազգուշացրեց բոլոր խմբագիրներին, որ դադարեն «զինվորական շարժմանց վրա խոսել և նպաստավոր կամ աննպաստ սուտ լուրեր հրատարակել»⁴²:

Ռուս-թուրքական պատերազմի տարիներին մամուլը ենթարկվեց երկշերտ հետտպագրական գրաքննության՝ ոստիկանական և ռազմական: Նախնական գրաքննություն, սակայն, դեռևս չկար: Սահմանադրության և երեսփոխանական ժողովի երևութականությունը պահպանելով մտահոգված Համիդը առայժմ ավելին անել չէր կարող՝ հաշվի առնելով օպոզիցիայի տրամադրությունները, որոնք պարզորոշ ուղղագծվեցին մամուլի օրինագիծը խորհրդարանում քննարկելու ժամանակ: Այդ օրինագծի հետագա վիճակը ներկայացնում էր սուլթանի և օպոզիցիայի միջև

ստեղծված հիվանդագին հավասարակշռությունը. խորհրդարանը շնորհու-
նեց սուլթանի ցուցումներով կազմված օրինագծի նախնական տարբե-
րակը, բայց և խորհրդարանի փոփոխությունները ևս շնորհունվեցին
սուլթանի կողմից: Դրության տերը, այսուհանդերձ, մնում էր Համիդը,
որին ոչ մի օրինագիծ կամ խորհրդարան չխանգարեց շարունակելու իր
հալածական քաղաքականությունը մամուլի նկատմամբ:

Արևմտահայ առաջադիմական հասարակական միտքը և հրապա-
րակախոսությունը շնայած սահմանադրության շուրջ թուրքական լի-
բերալների բարձրացրած աղմուկին, Թուրքիայում «նոր դարագլուխ»
ալեխող պաշտոնական ու անպաշտպան հայտարարություններին, ըմ-
բռնեցին դրանց իրական արժեքը: Թուրքիայում մամուլի ընկճված վի-
ճակի, սահմանադրության զուտ անվանական բնույթի և նրա անգոր-
ծունակության վերաբերյալ իր դեմոկրատական խոր տրամադրություն-
ներով առանձնանում է Հ. Պարոնյանի «Թատրոն» պարբերականը:

Օսմանյան սահմանադրության գնահատականը «Թատրոնում» զրո-
սեորվել է ոչ միայն զուտ հրապարակախոսական, այլև գեղարվեստա-
կան-սատիրական արտահայտչամիջոցներով, որով և այդ գնահատա-
կանը ստանում է առավել մեծ հասարակական արժեք: Հ. Պարոնյանը
հատուկ ուշադրություն է դարձնում օսմանյան սահմանադրության հա-
սարակական հիմքերին, նաև նրա կիրառման հնարավորությանը: Երկ-
րում ոչ մահմեդական ժողովուրդների վաղեմի իրավազրկությունն ու
հարստահարությունների հարատևումը երգիծաբանին միանգամայն հիմ-
նավորված բացասական դիրքորոշում էին թելադրում սահմանադրու-
թյան կիրառելիության նկատմամբ: «Թատրոնի» էջերում սահմանադրու-
թյունը համարվում է հասարակական ու քաղաքական իրականության
արդյունք, որ ենթադրում է քաղաքակրթության զարգացման որոշակի
աստիճան: Արևմտահայ հասարակական հոսանքների ներկայացուցիչ-
ները սահմանադրությունը, որպես այդպիսին, արժեքավորել են հենց
հասարակական զարգացման տեսակետից, սակայն նրանցից միայն
քչերն են հանգել հետևողական եզրակացությունների: Հ. Պարոնյանը
այդ ճշմարտությունը որոնում է իր կոնկրետության մեջ՝ ազատելով վե-
րացական պատկերացումներից, եթե հասարակությունը և պետությունը
չեն քաղաքակրթվել, չեն հրաժարվել հպատակների ճնշելու և ստրկաց-
նելու իրենց հնամենի քաղաքականությունից, ապա այդպիսի հասարա-
կության մեջ սահմանադրությունը օտարոտի իրավական ակտ է, ներ-

քին և արտաքին քաղաքական խաբեությունների միջոց: Մեծ երգիծաբանը մեկտեղված ձևով չի ձևակերպել օսմանյան սահմանադրության գնահատականը, սակայն «Թատրոնում» տարատեղված նյութերը բավարար հիմք են տալիս նման մեկնաբանության համար:

Ի սկզբանե Պարոնյանը սատիրական ժխտական կասկածով է ներկայացնում Թուրքիայի «սահմանադրական առաջընթացը»՝ սկսելով դրա վերաբերյալ երկդիմի հարցադրումով («առաջ կերթանք կոր, թե ետ, աջ կերթանք կոր, թե ձախ»): Ապա նա մեջբերում է 1819 թ. մի արևմտահայի թաղման հայտնի արտունագիրը՝ տրված ոմն Հաջի Սայիդ էֆենդու կողմից. հանգուցյալն այստեղ հիշվում է անարգական այնպիսի արտահայտություններով, որ փաստորեն բնութագրում է հայերի ստրկական վիճակը Թուրքիայում: Սատիրական զուգահեռներով հեղինակը հաստատում է այն ճշմարտությունը, որ արտոնագրի շրջանի և իր ժամանակի Թուրքիայի միջև ըստ էության, ոչ մի տարբերություն չկա արևմտահայերին հարստահարելու գործում. «Մենք այսօր ոչ թաղվելու հրամանագիր կառնեմք, ոչ ալ մեռնելու,—գրում է երգիծաբանը,—ամեն մարդ իրավունք և ազատություն ունի մեռնելու և ուզած տեղը թաղվելու»⁴³: «Մեռնելու ազատությունը» այստեղ համադրվում է սահմանադրական ազատության հետ և դառնում իսկ ժխտվում է սահմանադրության որևէ նշանակությունը արևմտահայերի կացության բարելոքման գործում: Սահմանադրության վերաբերյալ իր դատողություններում Պարոնյանը այն ժխտում է վերաբերմունքի զուգահեռ ընթացող երկու դրսևորումներով՝ հեգնախառն կասկած դրա հասարակական բովանդակության վերաբերյալ և բուն սահմանադրական կեղծիքի երգիծումը: Այսպես, սահմանադրության հռչակումը հայտնող լուրի հետ միասին «Թատրոնի» միևնույն համարում նա տպագրել է Սեբաստիայի հայկական եկեղեցում կատարված սրբապղծությունը բացահայտող տեղեկությունը⁴⁴: Մի քանի երգիծական նյութերում Պարոնյանը շեշտը դրել է թուրքական բռնակալության սահմանադրական պիտակի և իրականության սուր հակադրության բացահայտման վրա: Նա թափանցել է սահմանադրություն հռչակելու քաղաքական շարժառիթների մեջ, երգիծանքի օբյեկտ դարձրել դրա հրապարակումը դեսպանաժողովի գործունեությանը հակադրելու քաղաքական միտումը: «Նոր օսմանների» և Միդհատ փաշայի հոգևոր զավակը նա անվանել է «ոսկեզօծյալ սահմանադրություն», որը դեղահաբի փոխարեն հրամցվում է տերություններին: Պարոնյանի կարծիքով օսմանյան սահմանադրությունը կոչված է քողարկելու կայսրության ժողովուրդների անտանելի վիճակը, իսկ թուրքական

քաղաքագետները վաղուց ի վեր դրան են ձգտում: Հետևաբար, եզրակացնում է նա, եթե տերությունները չեն հավատում Թուրքիայի բարեկարգվելու նպատակներին, ապա կառավարությունը կարող է ցուցաբերել իր ողջ հնարավորությունները, այսինքն՝ «սահմանադրություն մ'ալ կհրապարակեմք, որովհետև... սահմանադրություն հրատարակելի զատուրիշ բան չենք կրնար ընել մենք»⁴⁵: «Թատրոնը» ժաղրուծանակի ենթարկեց օսմանյան խորհրդարանի ընտրությունները, որի առթիվ՝ օսմանցիության դոկտորինան: Կ. Պոլսի հունական և հայ բուրժուական թերթերի ընդհարումների առթիվ նա դիտում էր, որ վիճելու հարկ չկա, րանի որ «օսմանցի» ձևակերպումը ջնջում է ազգերի տարբերությունը⁴⁶: Երգիծվում է նաև սահմանադրության այն հոդվածը, որը թուրքերենի իմացությունը պարտադիր էր համարում երեսփոխանական ժողովի անդամի համար: Կենցաղային մի փոքրիկ զավեշտը վերածվում է քաղաքական մերկացման, երբ ցուցադրվում է թուրքերենի այբուբենը սերտող խոհարարի ջանախնդրությունը⁴⁷: Ակներև է, որ Պարոնյանը նկատի ուներ «օսմանլըլըքի» դոկտրինայի մեջ կարևոր նշանակություն ունեցող՝ թուրքերենի առավելության մասին արվող պնդումները: «Օսմանցիության» ձևակերպումները Պարոնյանը երգիծում է նաև այն ժամանակ, երբ անդրադառնում է զավառական ժողովների ընտրության սկզբունքներին, որոնք գործադրվում էին ի վնաս ոչ մահմեդական ընտրողների:

«Թատրոնում» զարմանալի իրազեկություն է նկատվում Արևելյան ձգնաժամի պատճառների քննության հարցում, որ վերածվում է մերկացման բացառիկ ուժ ունեցող սատիրայի, երբ բացահայտվում են այդ ձգնաժամի խորքում թաքնված՝ տերությունների քաղաքական ու դիվանագիտական խարդավանքները: 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին նախորդած քաղաքական իրադարձությունների երգիծական մեկնաբանություններով ցույց են տրվում տերությունների հակասությունները, որ ծայր էր առնում նրանց բոլորի համար միանշանակ՝ նվաճողական նպատակներից:

Օսմանյան սահմանադրության հանդեպ Պարոնյանի բացասական վերաբերմունքը դրսևորվել է մամուլի ազատության վերաբերյալ նրա սատիրական դիտողություններում, կարճ պատումներում և այլ ժանրի նյութերում, որոնցով այնքան առատ է «Թատրոնը»: Խորհրդարանը զբաղվում է մամուլի օրինագծի քննությամբ, այնտեղ կարող է խոսվել մամուլի ազատության մասին, որը և ոչ մի իրական բովանդակություն չունի: Խորհրդարանը վերածվել է շաղկրատանքի հավաքատեղիի, նրա պատերի ներսում ծավալվող բանավեճերը անգործունակ են և բովան-

դակազուրկ: Պարոնյանի մերկացումները ստանում են հասարակական ընդհանրացված արժեք մանավանդ այն ժամանակ, երբ երգիծաբանը ցույց է տալիս օսմանյան բռնակալության վրա սահմանադրական պատվաստի ողջ անհամատեղելիությունը: Տպագրական օրինագծի շուրջ կառավարության և երեսփոխանական ժողովի տարաձայնությունների, երգիծական հրատարակությունների նկատմամբ սուլթանի հալածական քաղաքականության ցուցադրմամբ ևս Պարոնյանը բացահայտում էր այն, թե ինչ արժեք ունի մամուլի ազատությունը «սահմանադրական» Թուրքիայում: Հ. Պարոնյանի վերաբերմունքն այս հարցում ըստ էության, ուղղվում է բռնապետության սահմանադրական խաղի մերկացմանը: Խորհրդարանը «Թատրոնի» սատիրական ենթատողերում ներկայացվում է իրրե բռնակալությանը զուտ ձեականորեն ընդդիմադիր ուժ: Խորհրդարանի և սուլթանական ռեժիմի կեղծ հակակշռության այդ երևույթականությունը Պարոնյանը կոնկրետ ցույց է տվել մամուլի իրավական դրության վերաբերյալ քանակով ոչ շատ, բայց խիստ տպավորիչ իր երգիծական նյութերում: Այսպես, «Թատրոնը» հայտնում է թերթերի լուրերը, թե երեսփոխանական ժողովը հաստատելու է տպագրական նոր օրինագիծ, որով, իբր, մամուլին տրվելու է լայն ազատություն, վերացվելու է դրոշմի տուրքը և այլն: Իր ամբողջ թերահավատությունը դրանկատմամբ Պարոնյանը արտահայտում է ուշագրավ ձևերի մեջ՝ այդ ցանկալի լուրերը նա հայտնում է այնպիսի ցանկությունների ընդհանուր շարքում, որոնք չէին կարող կարգավորվել երեսփոխանական ժողովի կողմից: Հնարավորը այստեղ լուծվում է անհնարինի մեջ և ընթերցողին միանգամայն պարզ է դառնում տպագրական օրենքի բարվոքման անհնարինությունը Թուրքիայում⁴⁸: Այդ նույն միտքը, արդեն երգիծական բոլորովին այլ հնարանքով, բացահայտվում է «Թատրոնի» պերսոնաժի՝ Խիկարի միջոցով: Երգիծաթերթերին սպառնացող արգելքի վերացումից հետո, նրա կարծիքով, այդ հրատարակություններին սպասում է ոչ այնքան շատ մխիթարական հեռանկար՝ երկու ամիսը մեկ անգամ խափանվելու սովորական առօրյան⁴⁹:

Մամուլի ազատության վերաբերյալ լուրերի անհիմն լինելը Պարոնյանը բացահայտել է հենց այդ ազատության դեմ ուղղված փաստական ապացույցներով: «Հեյալի» խափանումը և նրա խմբագիր Թ. Կասաբի երեքամյա բանտարկությունը նա դիտում է որպես երգիծական թերթերի դեմ համիդյան ռեակցիայի հարձակումների սկիզբ և իրավացիորեն եզրակացնում է, որ երգիծաթերթերի էջերից ծաղրանկարների վերացումը նշանակում է ընդհանրապես երգիծական թերթերի արգելման

նախանշան: Ահա երգիծական թերթերին սպասող ամենևին էլ ոչ երգիծական-չափազանցված մոտալուտ ապագան՝ ըստ Պարոնյանի.

— Աղեկ, որ ես ծաղրանկարները վերցուցած եմ եղեր...

— Հոգվածներուդ մեջ բան մը չեն կարող գտնալ:

— Հոգվածներն ալ կվերցունեմ՝ այնպես կհրատարակեմ. ինչընեմ, երեք տարի ով պիտի երթա հոն նստի⁵⁰:

Խորհրդարանի կողմից մամուլի իրավական բռնադատված վիճակը թեթևացնելու վերաբերյալ յուրերին Պարոնյանը հակադրել է տպագրական տեսչության հալածական նոր ձեռնարկների ճշմարտացի մեկնաբանությունը: 1877 թ. ապրիլին նա դարձյալ կռահում էր իրադարձությունների զարգացման իրական ընթացքը, այն, որ ծաղրանկարների վերացումից հետո հերթը հասնելու է քաղաքական սատիրայի արգելքին: «Դադարումն կսմիթներու» ֆելիետոնում Պարոնյանը առանձնապես շափազանցությունների կարիք չի զգում մամուլի վրա ծանրացող ոստիկանական բռնությունների նոր ալիքը ցուցադրելու համար: «Ով որ լրագրին չգոցվելու կփափաքի,—գրո՞ւմ է նա,—պետք է, որ իր ձեռքով դադրեցունե զայն»⁵¹:

Երգիծաթերթերի դեմ սանձազերծված արշավի, երեսփոխանական ժողովում Մաջիգ բեյի ծայրահեղորեն հետադիմական ելույթները խիստ ու անաչառ քննադատության արժանացան «Թատրոնի» էջերում, շատ ավելի սկզբունքային դիրքերից, քան երեսփոխանական ժողովում: «Զավեշտական թերթի մը վնասները» ֆելիետոնում երեսփոխանական ժողովի մեջ սուլթանի կամակատարի մտքերի քննադատությամբ դատապարտվում է երգիծաթերթերի հանդեպ գրաքննության խավարամիտ ու անհեթեթ վերաբերմունքը: Պարոնյանը բացահայտում է դրա պատճառը, այն, որ երգիծական մերկացումները կանխելով, կառավարությունը ցանկանում է վերջ տալ իր դեմ ուղղված քննադատությանը: Անբարոյականության հիմքի վրա բարձրացող սուլթանական ռեժիմը անբարոյական է համարում ամեն ինչ, այդ թվում և երգիծաթերթերը, որոնք կարող են ցույց տալ իր իսկական դեմքը: Խիկարի և նրա զրուցակցի երկխոսությամբ «Թատրոնն» ընթերցողին է ներկայացնում երգիծաթերթերի արգելքի վերաբերյալ երեսփոխանական ժողովում ծավալված բանավեճերի բովանդակությունը: Պարոնյանի քննադատությունից, ի դեպ, չեն վրիպում այն փոքրաթիվ երեսփոխանները (մահմեդական երեսփոխաններ), որոնք պաշտպանել էին տպագրական տեսչության տնօրենին և վնասակար համարել երգիծական հրատարակությունները: Ընթերցողին պարզ է դառնում նաև, որ երեսփոխանական ժողովում Մա-

շիղ բեյը շարունակում է օսմանյան գրաքննության ավանդական ուղե-
գիծը մամուլի և խմբագիր-հրատարակիչների նկատմամբ. այս անգամ
ևս, ինչպես միշտ, նրանք դիտվում են իբրև պատասխանող կողմ, իսկ
իրենք իրավունք չունեն պատասխանելու մեղադրանքներին։ Մամուլի
իրավազուրկ վիճակի դեմ բողոքելով, Պարոնյանը ցույց է տալիս, որ
սահմանադրությունը մեռած տառ է, քանի որ իրականում չի ապահովում
իր իսկ հռչակած՝ մամուլի ազատության իրավունքը։ «Չտեսանք
երեսփոխանական ժողովո ներքին կանոնադրությունը,—գրում է նա,—
որպեսզի հասկնայինք, թե հոն ամեն մարդ ազատ է խմբագիրները ու-
զածին պես լվալու. և թե այս խմբագիրները ըստ սահմանադրության
իրավունք պիտի չունենան իրենց դեմ եղած հարձակմանց դեմ բողոքե-
լով ինքզինքնին արդարացնելու. միայն սա տեսանք երեսփոխանական
ժողովո մեջ, որ այն լեզուն, զոր դրածած է վսեմափայլ Մաճիտ պեյ
զավեշտական խմբագրաց նկատմամբ, չեն գործածած մինչև հիմա զա-
վեշտական թերթերը, որոց խափանումը կխնդրե վսեմափայլ Մաճիտ
պեյ»⁵²։

Տելիետոնը հիմնավորում և հաստատում է երգիծանքի հասարա-
կական արժեքը, նրա դաստիարակիչ, բարոյական նշանակությունը, որ
կայանում է հասարակության թերությունները վերացնելու, այդ թերու-
թյունների պատճառների սատիրական ունչացման բարձր նպատակի
մեջ։ Բռնությունն ու անբարոյականությունը պատվարելով երգիծանքի
սլաքներից, օսմանյան կառավարությունը ինքն է փաստորեն հանդես
գալիս անբարոյականությունը տարածողի ու պաշտպանողի դերում —
այսպիսին է երգիծաբանի եզրակացությունը։ Գեղարվեստական սկզբունք-
ների կրթոտ պաշտպանությունը այստեղ վերածվում է բռնակալության
սուր քննադատության։ Ժանրի ազատության պաշտպանությունը Հ. Պա-
րոնյանին հասցնում էր մամուլի և ազատ խոսքի դեմոկրատական ա-
զատության հիմնավորմանը։

Այսպիսով, երգիծաթերթերի լինել-չլինելու, նրանց բարոյական,
թե անբարոյական բնույթի վերաբերյալ երեսփոխանական ժողովի վի-
ճաբանությունները երգիծաբանը գնահատում է բռնակալության և սա-
տիրայի փոխհարաբերության, նրանց գոյակցության տեսակետից։ Սուլ-
թանական ռեժիմը չի կարող համատեղել սատիրան իր կեցության հետ,
չի կարող հանդուրժել այդ ժանրը, որովհետև սատիրայի ուժը ամենից
առաջ քաղաքական բռնացումների ցուցադրումն է իրենց ամբողջ մեր-
կության մեջ։

Երեսփոխանական ժողովի կողմից երգիծաթերթերն արգելող հոդ-
վածի մերժումից հետո սուլթանը տպագրական օրինագծի քննարկումը

Հանձնարարեց խորհրդարանի երկրորդ նստաշրջանին, բայց մինչ այդ վճռական հարձակման անցավ երգիծական հրատարակությունների դեմ: «Թատրոնը» վերջնականապես խափանվեց 1877 թ. հունիսին՝ այլ երգիծաթերթերի հետ միասին⁵³: Խափանման միակ իրավական հիմքը, ըստ էության, ոչ այլ ինչ էր, եթե ոչ երգիծաթերթերի «հասարակական վնասակարության և անբարոյականացնող «զղեցության» տխրահույզ ձևակերպումը: «Թատրոնի» հրատարակության անհնարինությունը բացատրվում է ոչ միայն բոնակալության դեմ նրա վճռական օպոզիցիայով, այլև ընդհանրապես երգիծական մամուլի հանդեպ օսմանյան ռեժիմի թշնամանքի պատճառով:

Երեսփոխանական ժողովի 1878 թ. հունվարի 17-ի նիստում ընդդիմադիր երեսփոխանները հարձյալ քննարկման առարկա դարձրեցին մամուլի իրավական դրության հարցը⁵⁴: Պաշտպանելով մամուլի ազատությունը, նրանք ելնում էին այն իրողությունից, որ մամուլի ստրկամտության պատճառը նրա իրավազրկությունն է: Սակայն այս ջանքերը ևս գործնական նշանակություն չունեցան: Համեղոր պատրաստվում էր վերջ տալ սահմանափրությանը: Զհանդուրժելով Թուրքիայի ռազմական պարտությունների պատճառով հետզհետե առավել հանդգնացող օպոզիցիան և օգտվելով իր բացառիկ իրավունքից, 1878 թ. փետրվարին սուլթանն արձակեց խորհրդարանը:

Մամուլը դիտելով իրրե քաղաքական հակառակորդների ամբիոն, Արդու Համիդը իր գահակալության առաջին ամիսներից իսկ սաստկացրեց նրա հսկողությունը: Պարբերականների իրավական դրությունը բռնակալության պահանջներին հարմարեցնելու նպատակով սուլթանը փորձեց օգտագործել օսմանյան խորհրդարանը, որի գոյությունը հանդուրժում էր զուտ քաղաքական իրադրության պայմանների հարկադրանքով: Խորհրդարանում ուժեղացող ընդդիմադիր տրամադրությունները, սակայն, նրան հնարավորություն չտվեցին անցկացնելու իրեն ցանկալի տպագրական օրինագիծը: «Նոր օսմանների» պարտությունից և խորհրդարանի ցրումից հետո հետապնդվեցին բոնակալության դեմ ըմբոստացած թերթերն ու հանդեսները, առանձնապես խիստ հալածանք սկսվեց երգիծական մամուլի նկատմամբ:

Զնայած դրան, Հ. Պարոնյանի «Թատրոնում» սուր քննադատության ենթարկվեցին հետադիմության կամայականությունները: Երգիծանքի ժանրի պաշտպանությունը «Թատրոնը» օգտագործեց մամուլի և խոս-

քի ազատութեան սկզբունքների պաշտպանութեան համար: Երգիծական պարբերականների հետագա հալածանքի ժամանակ փակվեցին երկրում հրատարակվող մի քանի ազդեցիկ հրատարակություններ, այդ թվում և «Թատրոնը»:

1877—1878 թթ. գրաքննությունը ըստ հնարավորին սահմանափակեց մամուլի ռազմական լրատվության շահերը: Պարբերականներն ընկան ոչ միայն ոստիկանական, այլև ռազմական գրաքննության տակ: Լիբերալ-սահմանադրական գաղափարների հետապնդումներով և մամուլի բովանդակությունը սահմանափակող նոր որոշումներով սուլթանը հող էր նախապատրաստում բռնակալական գրաքննություն ստեղծելու համար:

2. ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Յոգդատի հարստահարությունների առթիվ Բ. դռան խստությունները «Օրաթերթի» և «Մանզումեի էֆքյարի» նկատմամբ՝ չկարողացան շեղել պարբերականների ուշադրությունը գավառական կյանքից: «Օրաթերթի» խափանումը առաջին պատժիչ գործողությունն էր, որով նոր սուլթան Աբդուլ Համիդին հլու տպագրական տեսչությունը նախազգուշացնում էր հայ պարբերականներին, թե կառավարությունն ինչպիսի դիրք է գրավելու նրան հետևող մյուս հրատարակությունների հանդեպ:

Ազգային վարչությունը, սակայն, շարունակում էր բողոքել գավառական հարստահարությունների դեմ: Դրան վերջ տալու նպատակով կառավարությունը փորձեց ներգործել պատրիարքի վրա, որ և անմիջապես արտահայտվեց Հ. Նուրջանի գրաված դիրքերոշման մեջ: Կառավարական շրջանների վստահությունը վայելող քաղաքական ժողովի այս անդամը Բ. դռանն ուղղված բողոքագրերն համարում էր «արդի պարագայից մեջ աննպաստ և անքաղաքագիտական»⁵⁵: «Քաղաքագետ» էֆենդին արտահայտում էր էֆենդիական դասի մտահոգությունը՝ համոզելու կառավարությանը, որ հայերը ապստամբական դիտավորություններ չունեն և անմոռնչ են կրում իրենց լուծը:

Պատրիարք Ն. Վարժապետյանը այս ժամանակաշրջանում իր գործունեությունը ծավալել էր երկու ուղղությամբ. նա շարունակում էր գավառական հարստահարությունների խնդրի արծարծումը Ազգային ժողովում, դիմումներ էր անում Բ. դռանը, և մյուս կողմից՝ հավաստում իր հավատը կառավարության բարենորոգչական անկեղծ մտադրությունների վերաբերյալ: Նրա կարծիքով հարստահարությունների հարցի անընդհատ առաջադրումը սուլթանին համոզելու էր բարենորոգումների անհետաձգելիության մեջ: Այսպիսի մտայնությունը ապահովում էր հայ

մամուլի համապատասխան բնույթի հրապարակումների անընդհատությունը: Արևմտահայ գրեթե բոլոր պարբերականները շարունակաբար տպագրում էին հարստահարությունների ցնցող դեպքեր Վանի, Կեսարիայի, Մուշի, Կարինի, Տիգրանակերտի, Տրապիզոնի և բազմաթիվ այլ վայրերի իրականությունից: Արևմտահայ գավառի կացություն վերաբերյալ տեղեկություններ էին տպագրում նաև մայրաքաղաքի եվրոպական հրատարակությունները՝ ավելացնելով բուլղարական հարստահարությունների խնդրի մեջ խրված կառավարության միջազգային տագնապն ու դժվարությունները: 1876 թ. մամուլում նկարագրված դեպքերը մեծ մասամբ կապվում էին ոչ թե քրդական ավագանու կամ թուրքական հարստահարիչների ինքնաբավ, մեկուսի գործողությունների հետ, այլ անմիջականորեն համադրվում էին այն փաստին, որ կառավարությունը ինքն էլ է մասնակցում այդ հարստահարություններին և ամեն կերպ խրախուսում է դրանք: 1876 թ. աշնանը դրությունը փոխելու վճռականությամբ՝ Բ. դուռը անցավ այդպիսի հրապարակումները կասեցնելու գործողություններին: Պատժի ու ոստիկանական հալածանքների մի ամբողջ արշավ սանձազերծվեց հայ մամուլի դեմ՝ այսպես կոչված «Շանայի հարստահարությունների» կապակցությամբ: Հարվածի տակ ընկան «Հայրենիք», «Արարատ» և «Մեծմուսյր հավատիս» թերթերը, որոնց էջերում նյութեր էին տպագրվել Տրապիզոնի Շանա գյուղում թուրքական կեղեքումների և տեղական իշխանությունների վայրենի կամայականությունների մասին: Իրողությունն այս երեք թերթերում պատմվել է ինքնուրույն, թերթերը միմյանցից աբստապություն չեն արել և այս հանգամանքի շնորհիվ ընթերցողը լայն տեղեկություններ էր ստանում գավառական կյանքի մասին: Շանայի չքավոր գյուղացիներին, որոնք չէին կարողացել վճարել պետությանը տրվող հարկի մնացորդները, (1876 թ. նախապես հավաքվում էր երկու տարվա հարկ)⁵⁶ թուրքական իշխանությունները տանջել էին ինչպես ստրուկների. «Մեծմուսյր հավատիս» թղթակիցը նշում էր, որ մեղանշած գյուղացիների դեմ ուղարկվել է պատժիչ ջոկատ՝ հարյուրապետի գլխավորությամբ: Տեղ հասնելով, սա «բազմաթիվ գյուղացիս խարազանով և սրո պատյանով անխղճաբար ծեծելն զկնի՝ փարավոնի գերյաց պես կարգավ այստեղ խրոյալ գերաններուն և ճցերուն կկապն և երկու-երկու, երեք-երեք սաստկապես կխարազանն և սոցանն ոմանց վրա ևս դուլլերով ջուր լեցնել կուտա և այսպես մինչ իրիկուն անոթի, ծեծելով միայն կանցունն և թողություն այն ժամանակ կշնորհն, երբ առնելիք հարկը ուրիշ մեկուն ձեռքով իրեն կբերվի»⁵⁷: Երբ գյուղացիները բողոքեցին Տրապիզոնի

թուրքական իշխանություններին, վերջիններս պաշտոնանկ արեցին այդ հարյուրապետին և նրա փոխարեն ուղարկեցին մի հազարապետի (մայոր): Շանայում իր նախորդի գործադրած դաժանություններից հրաժարվելու փոխարեն նա ավելի անտանելի խոշտանգումների ենթարկեց հարկը չվճարածներին, գյուղում «հինգ-տասն ցից ևս ինքն ավելացնելով»: «Հայրենիքի» նույն բովանդակությամբ հոդվածից երևում է, որ մարդկանց «խազրխի» կապելը սոսկ հարկը չվճարողների վրա չի տարածվել. գինվորները գանակոծել են ամբողջ գյուղը՝ տեղի տալով բռնություններ գործադրելու իրենց սովորական կրթերին: Հարկը չտվողներից «զոմանս բանտերու կմատնեն, ոմանց՝ սանը, կաթսան և կովը կամ եզը կես գնով ծախել տալով ուզած տուրքերնին կառնեն»,—գրում էր թերթը⁵⁸: Ինչպես գրեթե միշտ, այս անգամ էլ պաշտոնական բաշխեցուցիկները չէին մոռացել գյուղացիների կրոնական զգացումներն անարգելը, ծեծել և ստորացրել էին իբրև պատանդ վերցրած գյուղական քահանային:

Տպագրական տեսչությունը խափանեց այս երեք պարբերականները, որոնցից արդեն հասցրել էին արտատպություններ անել Կ. Պոլսի եվրոպական պարբերականները: Յոզղատի հարստահարությունների մերկացումից հետո սա երկրորդ դեպքն էր, երբ մի քանի հայ պարբերականներ բացահայտում էին կառավարության մեղսակցությունը հարստահարություններին: Այս պատճառով տպագրական տեսչությունը մասնավոր միջոցառումների դիմեց այս թերթերը պատժելու համար: Հոկտեմբերի 24-ին սրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին ծանուցումներ ուղղվեցին «հուզումներ տարածելու» մեղադրանքով, ապա հրապարակվեց ընդհանուր բնույթի ծանուցում՝ հայ թերթերի զրպարտությունների մասին: Բուն տեքստից իսկ երևում է, որ կառավարությունը ձգտում էր ահաբեկել հայ մամուլը և ստիպել նրան՝ հրաժարվելու գավառական հարստահարություններին անդրադառնալուց⁵⁹:

Այսուհանդերձ, հաշվի առնելով իրադարձության արձագանքները, Բ. դուռը մտավ անաչառ հետաքննողի դերի մեջ. վերոհիշյալ պաշտոնական ազդում հայտնվում էր մեծ վեզիրի հրամանը՝ երեք թերթերի խմբագիրներ Մ. Այվատյանին («Արարատ»), Հ. Մարգարյանին («Մեհմուդալը հավատիս») և Մ. Մելիքյանին («Հայրենիք») կառավարության երկու ներկայացուցիչների հետ Տրապիզոն մեկնել դեպքերի ստուգությունը քննելու նպատակով: Այստեղ աչքի էր զարնում հետևյալ հակասությունը. եթե թերթերը պատժվել էին, ուրեմն կառավարությանը ստույգ հայտնի պետք է լիներ նրանց հանցանքը, իսկ եթե պատժելուց հետո էր հարկավոր ապացուցել այդ հանցանքը, ապա դուրս էր գալիս,

որ կառավարությունը վարվել է կամայականորեն և կանխակալ: Ինչպես վերն ասվեց, Շանայի դեպքի մասին հայ թերթերի նյութերը արտատպվել էին Կ. Պոլսի եվրոպական լեզուներով հրատարակվող պարբերականներում, ուստի և կառավարությունը շտապում էր որևէ կերպ դուրս գալ իր համար տհաճ այդ պատմությունից:

Երեք թերթերի խմբագիրները կանչվեցին տպագրական տեսչության տնօրեն Բլաք բեյի, ապա մեծ վեզիր Ռյուշտյու փաշայի մոտ: Փաշան սրանց դիմավորեց լուտանքների տարափով և հենց այստեղ, ընդունարանում էլ խմբագիրները դաժան ծեծի ենթարկվեցին՝ տարվելով ոստիկանություն⁶⁰: Սաստիկ գանակոծված Մ. Ալվատյանը այդպես էլ չապաքինվեց և վախճանվեց 1876 թ. դեկտեմբերի 15-ին: Նրա հուղարկավորությունը վերածվեց թուրքական բռնակալության դեմ ուղղված բողոքի ցույցի⁶¹:

Կառավարության կազմած հանձնաժողովի հետ նոյեմբերի 9-ին Հ. Մարգարյանը և Մ. Մելիքյանը մեկնեցին Տրապիզոն: Հաստատվեց ոչ միայն դեպքերի ճիշտ լինելը, այլև բացահայտվեցին բռնությունների նորանբար փաստեր, որոնք դուրս էին մնացել մամուլի ուշադրությունից: Բ. դուռը ստիպված էր ազատ թողնել խմբագիրներին⁶²:

Լավատեղյակ Զ. Փոքեինը այս առթիվ գրում է. «Հիշյալ երեք լրագրերի հրատարակությունը արգելվեցավ, ինչպես որ մի ամիս նորանից առաջ արգելվել էր «նորագիրը»՝ իբրև սուտ լուրեր ու զրպարտություններ տարածող թերթեր: Հաճախ պատահում է, որ այդպիսի դեպքերում դրան պաշտոնյաները խուլ տեղերի անպաշտպան գյուղացիներին սպառնալիքներով ու անգթություններով ստիպում են ստորագրել մի թուղթ, որ սուտ է հանում նոցա անարդար վարմունքի վրա տարածված բոլոր համբավները»⁶³:

Գործն ավարտվեց նրանով, որ կառավարությունը հայտնեց նոր բռնություն անցկացնելու մտադրության մասին⁶⁴: Դրանից հետո միջադեպը մոռացվեց:

Սուլթանների փոփոխությունները նույնիսկ աննշմար չափով չէին փոփոխում հարստահարությունների առօրյան ու ընթացքը Արևմտյան Հայաստանում: Աբդուլ Համիդի գահակալության առաջին ամիսներին միայն Վասպուրականում քրդական ավարառուները ավերել էին 19 հայկական գյուղ, գյուղացիները կոտորածներից ազատվելու համար փախել-ապաստանել էին սարերում կամ ցրվել երկրով մեկ⁶⁵: Պատրիարքարանի բողոքներից հետո թուրքական իշխանությունները դիմեցին հետաքննություններ անցկացնելու երեսպաշտ եղանակին. ի վերջո հան-

ցավոր էին ճանաչվում հարստահարվող գյուղացիները, որոնց պատժի ենթարկելով՝ իշխանությունները ավարտում էին ու օրինականացնում կեղեքիչների կիսատ թողած գործը: 1876 թ. դեկտեմբերի 1-ին Վանում մահմեդական խուժանը և կանոնավոր զորքերը հարձակվեցին շուկայի վրա, թալանեցին հայերի խանութներն ու կրպակները և հրդեհեցին՝ հետքերը թաքցնելու համար: Սպանվեցին ու հալածվեցին իրենց ունեցվածքը պաշտպանող հայերը⁶⁶: Կողոպտուից փրկվեցին միայն թուրքերի խանութները⁶⁷: Բ. դուան հետաքննական ներկայացուցիչը այս անգամ ևս ավարտվեց նման սյուժեների համար սովորական դարձած հանգուցալուծումով. հանձնաժողովը իրողության գնահատականը տվեց այնպիսի ձևակերպումով, «որով թուրք հասարակության և զորքերն կարողարացներ և մինչև իսկ կողոպտուի գործն ալ հայերի վրա կձգեր»⁶⁸. Վանի կուսակալի հրամանով հայ բնակչությանն արգելվեց հրազեն պահել, որից հետո նա ապավինելու էր այդ նույն թալանչի զորքերի պաշտպանությանը: Դա բնակչության ըմբոստ տրամադրությունների դեմ ուղղված միջոց էր, որով հայերը ոչ միայն զինաթափվում էին, այլև դուրս էին բերվում որպես ընդհարումների նախաձեռնող⁶⁹: Սուլթանը արդեն 1876-ի վերջին արևմտահայերին դնում էր օրենքից դուրս վիճակում: Ռուս-թուրքական պատերազմի առաջին ամիսներին թուրքական զորքերը անարգել բռնություններ էին գործադրում և կողոպտում պատերազմի թատերաբեմ դարձած հայկական գավառները: Պարբերականները բազմաթիվ թղթակցություններ էին տպագրում գավառներում հաճախ ցող ալդպիսի դեպքերի վերաբերյալ: Օգտվելով պատերազմի դրության ընձեռած հնարավորությունից, Բ. դուռը անհապաղ խափանման սպառնալիքով մամուլին արգելեց լուրեր հաղորդել «ղինվորական շարժմանց վրա» (1877 թ. հուլիս): Այդ արգելքը փաստորեն «պետական գաղտնիք» էր դիտում թուրքական զորքերի և քրդական շեյխերի բռնությունների հրապարակումը⁷⁰:

1877—1879 թթ. արևմտահայ թերթերը գրաքննական արգելքները հաղթահարում էին հենվելով պատրիարքարանի թագրիրների՝ իբրև պաշտոնական աղբյուրի վրա: 1875 թ. սկսած ուշագրավ փոխհարաբերություն էր ստեղծվել հայ մամուլի և տպագրական տեսչության միջև. մամուլի ինքնուրույնությունը սահմանափակող ազդերը հետևում էին մեկը մյուսին, սակայն վերջինս շարունակում էր մերկացումները: Պաշտոնական բողոքագրերը արգելված չէին կառավարության կողմից, ուստի դրանց բովանդակած հարստահարությունների լուրերը բիզնակցությունների կամ նամականների ձևով, ըստ էության, օրինականություն

պետք է ապահովելին հայ մամուլի համար: Այս պայմաններում տպագրական տեսչությունը իր հետապնդումների օբյեկտ էր դարձնում այն պարբերականներին, որոնք տպագրում էին հարստահարությունների առավել ծանր դեպքեր կամ բռնապետության դեմ ուղղված քննադատական լիցք էին պարունակում: Առհասարակ պետք է նկատել, որ տպագրական տեսչությունը գաղառական իրականությունը բացահայտող հրապարակումներին միանշանակ գնահատական չի տվել և ուշադրություն է դարձրել մերկացումների ընդհանրացման ուժին, նյութերի քննադատական նպատակաուղղվածությանը: Այս իմաստով հետաքրքիր է այն վերաբերմունքը, որ տպագրական տեսչությունը ցուցաբերեց Հ. Դիմաքսյանի «Լույսի» նկատմամբ: Կրոնական այս թերթը բազմիցս անդրադարձել է հարստահարությունների խնդրին՝ իր հրապարակումները համաձայնեցնելով ն. Վարժապետյանի գործողություններին: Երբ Դիմաքսյանին կանչեցին տպագրական տեսչություն՝ բացատրություններ տալու շեյխ Զալալեդդինի և Ֆեթվա բեյի կողմից Արևմտահայաստանում կատարած շարագործությունների մասին, նա վկայակոչեց պատրիարքի համապատասխան թագրիրը: Վասպուրականում Զալալեդդինի գործի առթիվ, նկատում էր Դիմաքսյանը, «այս վերջին օրերս գործված ոճրույն համար արդեն ազգային պատրիարքարանի կողմանե մասնավոր թագրիր եղած է»⁷¹: Տպագրական տեսչությունում Դիմաքսյանին ցույց են տվել ներողամիտ վերաբերմունք և դա հասկանալի է դառնում նրա պարբերականի նյութերի բովանդակությունից: Գավառի թուրքական իշխանություններին քննադատելով հարստահարությունները չկանխելու և նույնիսկ խրախուսելու համար, «Լույսը» ընդգծում էր, որ անարդարությունները և անօրինականությունը կարելի է վերացնել միայն «բարեխնամ կառավարության» ջանքերով: Հայաբնակ գավառների մեջ գործված շարիքները «Լույսը» հակված էր բարդելու միայն քրդական վերնախավի վրա. «Գավառներուն տեղական կառավարության ժողովականներուն մեծագույն մասն քյուրտերու պեյերն են կամ... անոնց պարագլուխները,—բացատրում էր պարբերականը:—Ուստի, եթե հարստահարչալ մը բողոքելու համարձակի՝ անմիջապես ժողովականներն (գավառական մեջլիսի անդամներ—Ա. Խ.) այն բողոքը կխեղդեն կամ բողոքարկուն զրպարտիչ և ստախոս կդատեն և ժողովույն նախագահն ալ... աչքը կգոցե եղած զրկանքն շտեմնելու և այսպես անիրավ վճիռով մը կկնքեն դատաստանը»⁷²: Ինչ ասել կուզի՝ օսմանյան գրաքննությանը միանգամայն բավարարում էր այսպիսի եզրակացությունը, որտեղ հայ բնակչության հետ միասին իբրև քրդական վերնախավի զոհ էր ներկա-

յացվում թուրքական պաշտոնեությունը: Ընդհանրապես, «Լույսի» հրապարակումները համակված են կառավարության բարենորոգչական հնարավորությունների հանդեպ հույսի սպասելիքներով, և մյուս կողմից՝ բացառում են կեղեքվող ժողովրդի ընդդիմության ամենաանհիմար միտքն անգամ: Ընդդիմությունը «Լույսը» համարում է «ծայրահեղ հանդըգնություն» և միակ առաջարկը, որ նա անում է իշխանություններին՝ զենքի կապակցությամբ, դա քրդերին գենաթափելու կոչն էր⁷⁶: Ավետարանական առաքինությամբ և քրիստոնեական և համբերատարությամբ, որին կնախանձեին անգամ բողոքական քարոզիչները, «Լույսը» առաջադրում էր քրդերի զինված բազմություններին լուսավորելու մի աֆոդ ծրագիր, որի մեջ էլ սպառում էր Արևմտահայ առաքինի բարենորոգումների վերաբերյալ իր պատկերացումները⁷⁷: Այս պարբերականը անտեսում էր ոչ միայն իր նկատած հարստահարությունների և օսմանյան կառավարության միջև եղած անմիջական պատճառական կապը, այլև պատրանքներ սերմանում վերջինի բարի մտադրությունների վերաբերյալ: «Լույսի» այս անվնաս համբավն էր պատճառը, որ 1878 թ. մարտին աերությունների առաջիկա կոնգրեսին ներկայացուցիչ ուղարկելու հարցադրման համար տպագրական տեսչությունից նա սոսկ նախազգուշացում ստացավ⁷⁸:

«Մասիսը» ևս այս ժամանակահատվածում տպագրել է գավառական աղետալի իրականությանը վերաբերող բաղմաթիվ թղթակցություններ, նամակներ, հոդվածներ, խմբագրական խորհրդածություններ և այլ արտատպություններ եվրոպական մամուլից: Թերթը, սակայն, մինչև 1880 թ. տպագրական տեսչությունից նույնիսկ նախազգուշացում չի ստացել: Պատճառը Կ. Ությունյանի ծայր աստիճանի զգուշությունն էր կառավարության հասցեին քննադատական դիտողություններ անելուց: Իսկ եթե այդ զգուշությունը երբեմն լքում էր նրան (դա միշտ պահպանել հնարավոր չէր գավառի օրհասական վիճակի և անվերջ դժբախտությունների սլայմաններում), ապա փորձված խմբագրին փրկելու էր գալիս Բ. Դռան փափուկ կացությունը: Պատրիարքարանի ճանաչված օրգանը (որից արտատպություններ էին անում Կ. Պրլիս եվրոպական ու թուրքական թերթերը) խափանելը ձեռնտու չէր կառավարությանը: Դա նույնը կլիներ, ինչ բարենորոգումների վերաբերյալ պատրիարքարանի բողոքագրերի արգելումը կամ պատրիարքարանը պատժելը, որովհետև «Մասիսը» իր ինֆորմացիան կառուցում էր այդ բողոքագրերի և պատրիարքի գործողությունների շրջանակներում: Մյուս՝ ոչ համբավված կամ առաջադիմականի համբավ ունեցող պարբերականն

րը տպագրական տեսչությունը խափանում էր առանց այդ հանգամանքները նկատի առնելու: Այստեղից էլ այն իրողությունը, որ նույն բովանդակության նյութերի համար արևմտահայ այլ պարբերականները կարող էին պատժվել, իսկ «Մասիսը»՝ ոչ: 1875—1879 թթ. ընթացքում տպագրական տեսչությունը առաջնորդվել է «Ինչ կարելի է Զևսին, չի կարելի եզանը» հայտնի սկզբունքով և դրանից բխող վերաբերմունքով «Մասիսը» դրել շահեկան վիճակի մեջ:

Միանգամայն այլ էր Հ. Պարոնյանի «Թատրոնի» իրավիճակը: Դեմոկրատական այս պարբերականը մշտապես գործել է տպագրական տեսչության սևեռուն ուշադրության սյուլամաններում: Գրաքննությունը առիթը բաց չի թողել «Թատրոնը» խափանելու կամ նրա խմբագրի վրա ճնշում գործադրելու համար: «Մասիսում» երգիծաբանը գրել է. «Թատրոնիս» մեջ ոչ թե նախարարի մը, այլ օտաճիի մը դեմ եթե երկու խոսք ընեի՝ իսկույն ամիս մը կդադրեցնեին «Թատրոնը», իսկ եթե քիչ մը ծանր կոխեի՝ կխափանեին զայն»⁷⁶:

Հրապարակախոսական բարձր կուլտուրա ունեցող մի այնպիսի խմբագիր, ինչպիսին Հ. Պարոնյանն էր, կարողացել է պատռել գրաքննչակ: ուստայները և իր սեփական տեղեկատվությունն ու մեկնաբանությունները անցկացնել խիստ հսկողության պայմաններում: Երգիծաբանը չի ընկրկել «Թատրոնի» դադարեցման ու հետապնդումների իրական վտանգի առջև, որ առավել շոշափելի էր դառնում Աբդուլ Համիդի ընդհանրապես երգիծական հրատարակությունների նկատմամբ բնագրական ստեղծության պատճառով:

Հարստահարությունների պարոնյանական մերկացումները ամենից առաջ ինքնատիպ են իրենց ձևի՝ երգիծական գնահատանքի շնորհիվ: «Թատրոնում» գովառական իրականությունը արժեքավորվել է քաղաքական սատիրայի արտահայտչամիջոցներով ու նպատակասլացությամբ, որ բռնապետության հանդեպ իր անհաշտ վերաբերմունքով արդեն վերածվում է Թուրքիայի հասարակական-քաղաքական կարգերը մերժող որոշակի արժեքի: Երգիծաբանը կտրականապես մերժում է և բարենորոգումների շուրջ Բ. դուռն: տեսությունների քաղաքագիտական գերծողություններն ու կեցվածքը, ամեն մի հավասարաբեկորողությունների իրականացման վերաբերյալ: «Թատրոնը» հարստահարության արեւ իրողություն չի ներկայացնում սկզբնաղբյուրի, դեպքը առաջին անգամ ներկայացնողի հավակնությամբ: Դա սոսկ գրաքննական խտրություններից սլառվելու ղգուշություն չէր, թեև Հ. Պարոնյանը

չէր կարող հաշվի չառնել նաև այդ պարագան: Խնդիրը վերաբերում է նրան, որ կարևորն այստեղ բռնապետության անողոք դատավճիռն է, և ոչ թե փաստերը, որոնք մեկնաբանվում են սատիրական սուր անկյան տակ: «Թատրոնում» գավառական իրականության վերաբերյալ հարցադրումները հասցված են բացառիկ սեղմության. «փոքր տարածության» վրա անսովոր սեղմությամբ տեղավորվել են պրկված, բայց միշտ շարժուն մտքերը, որոնք թիրախը խոցում են ամենատարբեր տեսանկյուններից: Ահա Մուշում, Բաղեշում և Զեյթունում կատարված հարստահարությունների հիշատակումը, որոնց մասին, ինչպես հայտնում է երգիծաբանը, հրապարակել են հայերեն թերթերը: Հանրահայտ այս փաստերի վրա է հենվում սատիրական մեկնաբանությունը. «Կլսենք, թե մասնաժողով մը կազմված է այս դեպքերը խառն ժողովին գրած շրջաբերականին հետևյալ տողերուն հետ հաշտեցնելուն համար. «Վասն-զի օսմանյան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել բսկ է, նույն իսկ հայուն կրոնքը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը պաշտպանել բսկ է»⁷⁷:

Քննադատությունն այստեղ ստանում է բաղմաճյուղ նպատակաւալացություն. հարվածն ուղղվում է ոչ միայն հարստահարիչների, այլև պատրիարքի ու իւռն ժողովի բարեհպատակային կողմնորոշման դեմ, որի հասարակական ու քաղաքական շարիքը երգիծաբանը տեսնում էր ժողովրդին ապակողմնորոշելու, ժողովրդական զայրույթը լիցքաթափելու ձևակերպումների մեջ:

«Թատրոնը» մի քանի անգամ անդրադարձել է Տրապիզոնի Շանագյուղի հարստահարությունների առթիվ «Հայրենիքի», «Մեծմուսյր հավատիսի» ու «Արարատի» խմբագիրների նկատմամբ իշխանությունների հաշվեհարդարին: Եթե հայ մյուս բոլոր պարբերականներում նշված թերթերը հիշվել են հարստահարությունների մերկացման կապակցությամբ, ապա Պարոնյանը խմբագիրների հետագա ճակատագրի լուսաբանմամբ ընթերցողին բացահայտորեն հուշարկում է այն միտքը, որ հայ մտավորականությունը ևս ենթարկվում է նույն բարբարոսական բռնությունների, ինչպես Շանայում խազը խի կապված հայ թշվառ գյուղացիները: Երկդիմի ակնարկների ու հեռամետ հեզնանքի մեջ, ի վերջո, երգիծաբանը հայտնաբերում է շարիքի բուն աղբյուրը՝ բռնապետությունը. «Եթե պատժույն թեթևությանը ու ծանրությանը համեմատ պիտի որոշվին խազըխները, այն ատեն ահագին հաստությամբ խազըխներ պետք պիտի ըլլան սնանկացյալները կապելու համար և ուր պիտի գտնանք ասանկ խազըխներ»⁷⁸: Ժամանակի ընթերցողին միանգամայն

հաճեանալի այս ակնարկը վերաբերում էր Թուրքիան սնանկ հռչակելու ոչ վաղուցվա իրողության հետ:

Տպագրական տեսչության և ոստիկանության սնսանձ կամայականությունները շատ դիպուկ մերկացում են գտել Հ. Պարոնյանի «Ճամփորդություն խմբագրաց» համառոտ, բայց սատիրական ուժեղ շեշտերունեցող հաղորդման մեջ: Այստեղ միայն հայտնվում է, որ «Հայրենիքի» և «Մեծմուշկը հավատիս» խմբագիրները Բ. դոան հրամանով մեկնել են Տրապիզոն՝ իրենց հրապարակումների իսկությունը տեղում հաստատելու համար: Պարոնյանը մեկ-երկու դարձված է ավելացնում դրան.

«Եեեեթե ասոնց տված լուրը սուտ էր... էր... ա.. ասորեն իրենց խախա խափանմամբը...»

Ի՞նչուս պետք է իմին...»⁷⁹:

Վերը տեսանք, որ ոստիկանությունը այս դեպքի առթիվ գործել էր տպագրական տեսչության գործողություններից անկախ, թերթերը խափանվել էին, խմբագիրները՝ բանտարկվել և պատժվել, ուրեմն՝ մեղք գործած լինելու և այդ մեղքը ապացուցված լինելու համար: Երգիծաբանը մատնացույց է անում բռնակալության այդ քմահաճույքը, նաև այն, որ ինքը ազատ չէ առավել պարզ արտահայտվելու: Տրապիզոնի այս նույն դեպքի առթիվ «Թատրոնը» ծանր ապտակներ է հասցրել Թուրքական «Բասիրեթին», որը հերքում էր հայ գյուղացիներին խոշտանգելու փաստը: Պարոնյանը այդ թերթի բացահայտ ստախոսության մեջ հայտնաբերում է կարևոր մի ճշմարտություն, այն, որ «Պասիրեթի» այսպես խոսելովը ճշմարտությունը չհաղթվիր, այլ միայն հայ ժողովրդյան մեջ սա համոզումը կգոյանա, թե տպագրական տեսչությունը ճշմարտախոս հայ խմբագիրները կպատժե ու ստախոս Թուրք լրագրաց աչք կգոցե»⁸⁰: Տպագրական տեսչության ու Թուրքական լրագրության այս լռելայն դաշինքը՝ ընդդեմ հայ պարբերականների՝ առաջին անգամ բացահայտել է Պարոնյանը: «Մասիսը», «Օրագիրը», «Լույսը», «Փոնջը» և այլ պարբերականներ հաճախ են անդրադարձել Թուրքական մամուլի ստախոսությանն ու հրահրել: հրապարակումներին, սակայն չեն նկատել Թուրքական մասնավոր մամուլի և իշխանությունների այդ համաձայնեցված գործողությունները: Այսպես, «Մասիսը» քանիցս մերկացրել է «Բասիրեթի», «Սաբահի», «Վաքթի» և այլ թերթերի անսկզբունքայնությունն ու տգիտությունը, շովինիստական հարձակումները հայ մամուլի և նրա գործիչների վրա, սակայն խորամուխ չի եղել այն բանի մեջ, որ Թուրքական մամուլը մամուլը կատարում է բռնապե-

տության գաղափարական պատվերը: Միայն 1878 թ., երբ «Լույսը» նախազգուշացում ստացավ տպագրական տեսչությունից՝ թուրքական մոլեռանդ մամուլը քննադատելու համար, խմբագիր Հ. Դիմաքսյանը հասու դարձավ այդ փոխադարձ կապին: Իրողությունը նա տեսնում էր հրեշավոր շափերի հասած լինելուց հետո⁸¹, երբ թուրքական մամուլը, մանավանդ Բեռլինի կոնգրեսից հետո, ամենուրեք «դավաճանություն» ու «ապերախտության» մեջ էր մեղադրում արևմտահայությանը, որովհետև վերջինս հանդգնել էր բողոքել իր վրա ծանրացած անտանելի բռնությունների դեմ: Տպագրական տեսչության և ծախու լրագրության այդ դաշինքը Պարոնյանը ցույց էր տալիս իր «Գուշակությունը 1877 տարվույն համար» հրգիծական պատումի մեջ, ի շարս այլ անիրագործելի ցանկությունների՝ նշելով, թե «Պլաք պելը թուրք և հայ լրագրաց մեջ տիրող անհավասարությունը պիտի վերցունե»⁸²:

1876 թ. դեկտեմբերի սկզբին Վանում թուրքական զորքերի կատարած բռնությունները, հայերի խանութների հրդեհումը և նրանց ինչքի կողոպուտը սարկաստիկ մերկացում է գտել «Թատրոնի» էջերում: Հրդեհը՝ իբրև գործողության հետևանք, այստեղ նույնացվում է ավարառուների և իշխանությունների հետ, որի շնորհիվ բացահայտվում են շարագործության բուն հեղինակները: Երգիծաբանը եզրակացնում է, որ հրդեհը «ամբողջ շուկան մոխիր դարձունելեն ետքը շատ մը ապրանքներ առեր-փախեր է: Կրակին այրելու հասկությունը գիտեինք, բայց գողնալու հատկությունը չէինք գիտեր»⁸³: Վանի հրդեհին Պարոնյանն անդրադարձավ որոշ ժամանակ անց՝ այս անգամ պարզելով զորքերի և տեղական իշխանությունների մեղսակցությունը թալանչիների գործողություններին: Ընդ որում, Պարոնյանը խիստ անբավական էր հարստահարության այդ բիրտ դեպքը հոգեշահ քարոզներով կոծկել ջանացող մամուլից և էֆենդիական դասի մարդկանց համակերպությունից: Նրա սլաքներն ուղղվում են «Նոր դարի» այդ ոգով քարոզների և Հ. Նուրջանի համապատասխան գործելակերպի դեմ: Ո. Խոճասարյանին «Թատրոնը» խորհուրդ էր տալիս «աներևույթ եղած ապրանքներուն հոգվույն համար հոգվոցն հանգուցելոց» ասել, իսկ երկրորդին՝ սարկավագություն անել այդ արարողության ժամանակ⁸⁴: Հարկ է նշել «Թատրոնի» մի բնութագրական գիծը հարստահարությունների լուսաբանման ժամանակ, այն է՝ բոլոր հարստահարիչներին ընդդիմություն ցույց տալու (ըստ հնարավորին) գաղափարը: «Թատրոնում» այս մտայնությունը առանձնապես ընդգծված չէ և դա հնարավոր էլ չէր լեզավ լրագրության պայմաններում: Սակայն Պարոնյանը արիության այս խրախույսն անում է

իրեն տվյալ իրադրության մեջ անհրաժեշտ գործելակերպ՝ արտահայտելով այն երգիծական որոշ ձևի մեջ: Վանի վերոհիշյալ դեպքին վերաբերող տեղեկություններից մեկը Պարոնյանը այսպես է եզրափակում. «Վանեցոց գալով՝ ասոնց ալ խրատ կուտանք, որ չլան, այլ քաջ ըլլան, հփրախտության կուրծք տան և հաղթելու աշխատին: Անցյալեն օգուտ քաղելով՝ մեյ մ'ալ կրակին դոհ չըլլալու համար խանութինն թող ծովու վրա շինեն...»⁸⁵: Այս իմաստով ուշագրավ է Հ. Պարոնյանի դրվատական (վերաբերմունքը Ադրիանապոլսում հարստահարությաննեքին ընդդիմացող Գևորգ վարդապետի նկատմամբ, որը ոչ թե հուսահատական հեռագրեր էր ուղարկել պատրիարքարան՝ և ձեռքերը ծալած նստել, ինչպես շատ գավառների առաջնորդներ, այլ իր եռանդուն գործունեության շնորհիվ հասել էր մի թուրք մարդասպանի բանտարկությանը: Բողոքելը դեռևս քիչ է, ժողովուրդը և ազգային մարմինները պետք է չվհատվեն, այլ արիանան դժվարությունների առջև, հնարավորին չափ դիմադրեն հարստահարիչներին, եղրակացնում էր Պարոնյանը: «Կմաղթենք,— գրում էր նա,— որ գավառաց բոլոր առաջնորդներեն իրեն հետևող ըլլան և այն գործը, որ իրենց պարտքն է կատարել՝ պատրիարքարանի վրա չբեռնավորեն»⁸⁶: Հետագայում Պարոնյանը փոխել է իր վերաբերմունքը հիշյալ վարդապետի նկատմամբ, որը հրաժարվել էր «անչափ եռանդամբ սկսած դատից», բայց դա տվյալ դեպքում առավել ևս ընդգծում է, որ երգիծաբանը ընթերցող գավառացիների մեջ ձգտում էր սրել արժանապատվության, պատվախնդրության և շարիքին ուժով ընդդիմանալու գաղափարը: Իր՝ «Թատրոնի» խմբագրի նկարագիրը միանգամայն համապատասխանում էր այս սկզբունքին: Թուրքական բռնապետության, ազգային հետադիմության, եվրոպական իմպերիալիզմի գաղութային քաղաքականության կրքոտ ու հետևողական քրննադատության մեջ ի հայտ է գալիս բռնությունների դեմ անվհատ մարտունչող երգիծաբանը:

Պարոնյանը գրաքննական արգելքները հաղթահարում էր երգիծական արտահայտչամիջոցների ու բովանդակության ներդաշնակության համոզիչ ապացույցներով, ոչ սակավ դեպքերում կարողանում էր ասել ավելին, ինչ հնարավոր էր գրաքննության թողտվության պայմաններում: Արգելքը հիշեցնելու ձևով այն բարձրաձայն հայտնելու խաղը վերածվում էր սպանիչ սատիրայի: Այդպիսի սի իսկական գլուխգործոց է օսմանյան ձևական սահմանադրության պայմաններում մամուլի անազատ վիճակը ներկայացնող հետևյալ պատկերը. «Ինձի այնպես կուգա կոր, որ երթամ բաղամենթոյին ըսեմ, թե սա փուլը ինչու համար չեք վերց-

ներ կոր լրագիրներեն, սա Զեյթունի քայմաքամը ինչու չեք կախեր կոր, սա Վանը կրակի տվեղ ավազակները ինչու չեք պատժեր կոր. սա Մուշի քահանային ձեռքը շուն տվողները ինչու չեք բռնի կոր, բայց մեկն ի մեկ կուշաբերիմ կոր և Թուրքիո մեջ ըլլալս զգալով՝ այդ խոսքերը չեմ ընե կոր»⁸⁷:

Մեծ երգիծաբանի սատիրական գինանոցի անսպառ հարստությունը՝ հեգնախոսն բազմաթիվ ակնարկները, շրջասությունները, երգիծական զուգադրումները և այլն, որոնց ընկալման համար այսօր հատուկ ծանոթագրումներ են պետք, միանգամայն հասկանալի էին իր ժամանակակիցին և այն հատուկ միջոցն էին, որով նա կտրատում էր գրաքննական ցանցերը և կարողանում հաղորդակցվել իր ընթերցողին:

1877—1879 թթ. օսմանյան կառավարությունը լուելյան թույլ էր տալիս հարստահարությունների ու բռնությունների վերաբերյալ հրապարակումները հայ պարբերականներում ելնելով արտաքին քաղաքական կացությանից, ինչպես և արևմտահայությանը սիրաշահելու և բարենորոգումների խոստումով նրան իր քաղաքականության հունը ներգրավելու նպատակից: Չպետք է մոռանալ նաև հայկական հարցի միջազգայնացումը, այնպիսի իրավիճակը, երբ սուլթանը հարկադրված էր հետաձգել մամուլի հետ հաշվհարդար տեսնելու ժամանակը: Այս պատճառով նշված տարիներին սուլթանը և կառավարությունը հայկական հարստահարումների հարցում բռնել էին բարենորոգումների կողմնակցի դիրքորոշում: Պատրիարք Ներսեսին սուլթանը հավաստիացնում էր 1877 թ. օգոստոսին. «Վկա են երկինք, թե ես մրջյունի մը վրա կոխել չեմ ուզեր և երբեք չէի կամեր, թե այսչափ անմեղ արյուն հոսեր և աղետք հառաջ գային, բայց, դժբախտաբար, իմ բաղձանացս հակառակ, տեղի ունեցան, որով հրատարակված խաթթերուն մեջ առաջադրած բարեկարգություններս գործադրելու դեռ ժամանակ չունեցա, սակայն հույս մեծ ունիմ, որ ներկա պատերազմը վերջ գտնելուն պես անոնց ամենն ալ կատարելապես պիտի գործադրվին»⁸⁸:

Իրականում սուլթանը հրահրում էր և հնարավորին չափ խստացնում Արևմտահայաստանի բնակչության աղետները՝ կիրառելով իր որդեգրած հայաջինջ քաղաքականությունը: Չնայած հայաբնակ գավառներում Բուլքական զորքերի կատարած բազմաթիվ վայրագություններին, որի դեմ քանիցս բողոքել էին պատրիարքը և Ազգային ժողովը, կառավարությունը անկարգություններին վերջ տվող միակ հուսալի ուժը շա-

րունակում էր համարել բանակը: Երբ պատրիարքը անձամբ խնդրագիր էր ներկայացրել մեծ վեզիրին՝ Բաղեշի հարստահարությունների առթիվ, սա պատասխանել էր, որ ամեն միջոց կգործադրի՝ բնակիչներին կանոնավոր գործերով պաշտպանելու համար⁸⁹: Բ. դռան կեղծ անգիտության պայմաններում էր, որ շեյխ Զալալեդդինը շարունակում էր իր ասպատակությունները Վասպուրականում: 1877 թ. սեպտեմբերին ներքին գործերի մինիստր Զեդեթ փաշան կատարյալ անգիտություն էր կեղծում Զալալեդդինի գործողությունների մասին, հայտնելով, թե ինքը չգիտե՝ շեյխը դեռ Ալաշկերտի կողմերն է, թե վերադարձել է Դիարբեքի⁹⁰:

Չնայած իր՝ ընդհանուր առմամբ սպասողական դիրքին, կառավարությունը ի հայտ էր բերում խորին անբավականություն՝ հարստահարությունների փաստերը բացահայտող հայ մամուլի նկատմամբ: Գալստական թղթակցությունների և պատրիարքարանի շարունակական բողոքի պայմաններում տպագրական տեսչությունը մի անգամ ևս հարվածի թիրախ ընտրեց «Մանգումեի էֆթյարը»: 1877 թ. հունիսին Կ. Փանոսյանը թերթում տպագրել էր Բայազետից Վան քաղված թուրքական գործերի բարբարոսությունները ներկայացնող փաստեր, որոնք համադրվում էին Վան եկեռ Զալալեդդինի շարագործություններին⁹¹: Հեղվածը մերկացնում էր սուլթանի և Բ. դռան ստախոսությունն այն մասին, թե գավառի բնակչությանը հարստահարիչներից պաշտպանելու միակ հուսալի միջոցը բանակն է: Բանակի և շեյխերի թալանչիական գործողությունների նույնությունը, նույն անմարդկային վերաբերմունքը հայ բնակչության հանդեպ՝ ինքնին ցուցադրում էր այն ճշմարտությունը, որ կառավարությունը այդ վայրագությունների հրահրողն ու մասնակիցն է: «Մանգումեի էֆթյարը» խափանվել է, ըստ երևույթին, հողվածը տպագրելուց ոչ անմիջապես հետո, որովհետև, մինչ այդ, «Մասիսն» արդեն հասցրել էր արտատպել այն: Կ. Փանոսյանը ձեռքակալվում է, կանչվում ռազմական մինիստրություն և դատվում նրա ատյանի առջև: «Մշակին» ուղղած իր մի թղթակցության մեջ Մ. Փորթուզալյանը գրում է, որ «Մանգումեի էֆթյարի» այդ թղթակցության մեջ նշված էին, և այն էլ շատ զգուշավոր ձևով, Վանի հանրահայտ և ամենաթեթև տեսակի հարստահարությունները⁹²: «Մանգումեի էֆթյարը» խափանվեց երկու ամսով, թեև Կ. Փանոսյանը կարողացավ ապացուցել իր տեղեկությունների իսկությունը: Շանայի դեպքերի առթիվ «Հայրենիքի», «Արարատի» և «Մեծմուսյը հավատիսի», իսկ դրանից առաջ՝ «Թատրոնի» և «Մանգումեի էֆթյարի» բազմաթիվ խափանումները վկայում են, որ